6. *Սահմաններու վերջնական ճշդումը պիտի կատարուի միջազգային յանձնաժողովին կողմէ, որ իրաւասութիւն պիտի ունենայ նաեւ, կարգ մը բացառիկ պարագաներու մէջ, չորս պետութեանց յանձնարարելու սահմանափակ փոփոխումներ՝ առանց հանրաքուէի փոխանցելի չրջաններու ազգագրական հանգամանքի որոշման համար:*

7. *Պիտի հաստատուի նախընտրութեան իրաւունք մը (օփսիոն) բնակիչներու մասին՝ փոխանցելի երկրամասերուն մէջ մնալու կամ դուրս ելլելու համար: Այդ ընտրութիւնը պիտի գործադրուի վեց ամսուան պայմանաժամի մը մէջ, սկսելով ներկայ համաձայնութեան թուականէն: Գերմանիա չեխ յանձնաժողով մը պիտի ճշդէ այդ ընտրութեան մանրամասնութիւնները, պիտի քննէ անհրաժեշտ միջոցները դիւրացնելու համար բնակչութեանց փոխանակութիւնը եւ պիտի կարգադրէ այդ փոխանակութիւններէն ծագելիք խնդիրները:*

8. *Չեխական կառավարութիւնը ներկայ համաձայնութեան կնքումէն սկսելով, չորս չաբթուան ընթացքին պիտի արձակէ այն բոլոր Զուտէթեան Գերմանները որ կը գտնուին զինուորական կամ ոստիկանական կազմին մէջ եւ կ'ուզեն արձակուիլ: Միեւնոյն պայմանաժամին մէջ չեխական կառավարութիւնը պիտի արձակէ այն Զուտէթեան Գերմանները որոնք բանտարկուած են քաղաքական յանցանքներու համար:* (Ստորագրութիւններ):

Համաձայնութեան կցուած են չորս յաւելուածներ: Առաջին նով բրիտանական եւ Ֆրանսական կառավարութիւնները կը յայտարարեն թէ ի գօրու է 1938 սեպտեմբեր 19ի անգլօ-Ֆրանսական առաջարկներուն Երդ յօդուածը, որ կը տրամադրէ միջազգային եբրաշխաւորութեամբ ապահովել չեխոսլովաք պետութեան նոր սահմանները որ եւ է նախայարձակման դէմ:

Երկրորդ յաւելուածով չորս պետութեանց կառավարութիւնները կը յայտարարեն թէ Չեխոսլովաքիոյ լեհական եւ հունգրական փոքրամասնութեանց խնդիրը եթէ մինչեւ երեք ամիս կարգադրուած չըլլայ շահակից պետութեանց համաձայնութեամբ, պիտի քննուի չորս պետութեանց վարչապետներուն ուրիչ մէկ ժողովին մէջ:

Երրորդ յօդուածով փոխանցելի երկրամասէն ծագելիք բոլոր խնդիրները կը յանձնուին միջազգային յանձնաժողովին:

Չորրորդ յօդուածին տրամադրութեամբ, նախատեսուած մի-ջազգային յանձնաժողովը պիտի բաղկանայ Գերմանիոյ արտաքին նախարարէն, երեք պետութեանց Պերլինի դեսպաններէն եւ Չեխոսլովաքիոյ կառավարութեան նշանակած մէկ անդամէն:

*** Գերմանական զօրքը առաջին չրջանը մտաւ շաբաթ առտու հոկտեմբեր 1, գրաւումը չաբունակելով այսօր ալ: Այդ չրջանը կը գտնուի Չեխոսլովաքիոյ հարաւային մասին մէջ, Լինցի եւ Փասաուի (Աւստրիա) հիւսիսակողմը:

Այսօր, կիրակի եւ երկուշաբթի գերմանական զօրքը պիտի գրաւէ հիւսիսային շրջանը, Տրէզդէնի հարաւակողմը:

Երկուշաբթի, երեքշաբթի եւ չորեքշաբթի պիտի գրաւէ արեւմտեան շրջանը, *մէջն ըլլալով Քարլսպատը եւ Մարիէնպատը:*

Հինգշաբթի եւ ուրբաթ պիտի գրաւէ հիւսիսային շրջանի մէկ մասը, *որ սահմանակից է գերմանական Շլեզիոյ:*

Եւրոպական տագնապին հետեւանքները Լիբանանի եւ Սուրիոյ մէջ

Պէյրութէն կը հեռագրեն Թայմզի (29 սեպտեմբեր).—

Սուրիա եւ Լիբանան եւրոպական տագնապը կը դիտեն յարաճուն անձկութեամբ: Լիբանանի մէջ Ֆրանսական պինուորական իշխանութիւնները զօրացուցած են ծովեզերեայ պաշտպանութեան ամրոցները եւ հակաօդային մարտկոցները Պէյրութի, Տրիպոլոյ եւ ուրիշ կէտերու մէջ, արագօրէն չինած լրացուցած են զինուորական նոր օդակայան մը: Այս գործունէութիւնը ցոյց կու տայ, թէ հոգատար պետութիւնը յանկարծակիի չուզեր գալ եւ կ'ըմբռնէ թէ կեդրոնական Եւրոպայի մէջ պատերազմ մը չուտով կը տարածուի Միջերկրականի վրայ:

Սուրիոյ մէջ օտար յարձակման մը վտանգը աւելի քիչ է, բայց կառավարութեան տկարութիւնը ենթադրել կուտայ, թէ պատերազմի մը պարագային անջատողական ու յեղափոխական չարժումները կը զօրանան եւ կը տարածուին Դամասկոսէն, Հալէպէն, Համայէն ու Համայէն դուրս, այն վայրերու մէջ, ուր սուրիական պետութիւնը ուժեղ հեղինակութիւն չի կրնար գործ դնել: Ձէպիրէի չրջանը, որ կը գտնուի Եփրատի եւ Իրաքի ու Թուրքիոյ սահմաններուն միջեւ, խառնակ վիճակի մէջ է: Տուրք չի գանձուիր, քրտական հոծ բնակչութիւնը ըմբոստ է եւ կառավարական պաշտօնեաները չեն համարձակիր երթալ իրենց գործերունդլուիը անցնել: Ձէպէլ Տրուզը կեդրոնական կառավարութեան պաշտօնեաներու հրահանգներուն որ եւ է կարեւորութիւն չի տար: Կայ նաեւ խորունկ դժգոհութիւն Լաթաքիոյ Ալէվիներու մէջ:

Սուրիոյ տկարութիւնը պատճառ եղած է, որ Լիբանանի հանրային կարծիքը ուժ չտայ Սուրիոյ եւ Լիբանանի միացման տեսակէտին,— որ երբեք ժողովրդականութիւն գտած չէ Լիբանանի մէջ: Լիբանանցիները աւելի չուտ Սիոնականներու համակիր են: Անոնք չեն վախնար Հրեաներու առեւտրական մրցակցութենէն, որովհետեւ բաւականաչափ ուժեղ են առեւտրական ասպարէզի մէջ, եւ հետեւաբար չեն բաժներ այն հակահրէական ու հականգլիական տրամադրութիւնները, որոնք կը տիրեն Սուրիոյ մէջ: Ակռէ զատ՝ Լիբանանի մէջ քրիստոնեայ մեծամասնութիւնը այնքան ալ բարեկամաբար տրամադրուած չէ իսլամ փոքրամասնութեան հանդէպ 1936ի եւ անցեալ տարուան Պէյրութի դէպքերէն ասդին, իսկ Սուրիացիներու մէջ տիրող պատկերացումը պատճառ դարձած է, որ Սուրիոյ հետ միացումի հեռանկարը հաչտ աչքով չդիտուի Լիբանանցիներու կողմէ:

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՂԱՂՈՎ

ՅՈՐՀՐԴԱՑԻՆ ՀՊԱՏԱԿԱՒԻԹԵՆԷ ԶՐԿՈՒԵՑԱՆ 416 խաղախցիներ, որոնց 219ը կիներ են: Ուրիշ հրամանագրով մը եւս կ'առնուին 92 երեւելիներու տրուած չքանչանները, իրրեւ հետեւանք անոնց գործած ոճիրներուն: Այս չնորհազուրկներուն մէջ կը գտնուին դատական նախկին գործավարը՝ Կրիլէնկօ, Մարքս-Ինգէլս կաճառին նախկին անօրէնը՝ Ռիազանով, որ վտարուեցաւ 1931ին, Լորակիբանիչէ՝ Աճարիոյ կեդր. Գործադիր Կոմիտէին նախկին նախագահը եւ ուրիշներ:

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ 359 հոգի սպաննուած եւ 174 հոգի վիրաւորուած են սեպտեմբերի ընթացքին: Սպանեալներուն 246ը ահաբեկիչները են, 80 անզլիացի զինուորներ: Զեկոյցը կ'ըսէ թէ արաբ ահաբեկիչները բազմաթիւ ձիեր կը գողնան, իրենց մասնաւոր հեծելազօրքը կազմելու համար: Արդէն ձեռք անցուցած են 300 ձիեր, նժոյգները եւ ջորիները:

ԶՄԵՌՆԱՑԻՆ ԺԱՄԸ սկսաւ այս գիշեր (չաբաթ): Զմռռնաք մէկ ժամ եւս տանիլ ժամացոյցը:

ՊԵԼՃԻՈՑ կառավարութիւնը, որ զէնքի տակ առած էր վեց դասեր, որոշեց զանոնք ցրուել երեք-չորս օրէն:

ՄՈՍԿՈՒԱՑԻ թերթերը կը գրեն թէ պատերազմը պարզապէս յետաձգուած է եւ «անձնատուութիւն» կը կոչեն Անգլիոյ եւ Ֆրանսայի բռնած դիրքը: «Իզվեստիա» կ'ըսէ.— «Պատերազմը պարզապէս յետաձգուեցաւ եւ Ֆրանսա ու Անգլիա չատ աւելի տկար դիրք մը ունին այսօր քան առաջ»:

ԹՈՒՐՔԻՈՑ արտաքին նախարարը, Թ. Ր. Արաս, Պելկրատ հանդիպեցաւ առջի օր եւ երկար տեսակցութիւն մը ունեցաւ վարչապետին հետ:

Հ. Յ. Դ.

Փակ է

ՊԱՆԵԼՔՕ ՔՈՉԱՆԻ «ԱՐծիւ» ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները, 5 Հոկտեմբեր, Չորեքշաբթի երեկոյ ժամը 9ին, «կոբիւն» Ակումբին մէջ: կարեւոր օրակարգ:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ԵՐՈՒՍԱՂԷՄ, ԵՐՈՒՍԱՂԷՄ...

(ՎԻՊԵՐԳՈՒԹԻՒՆ)

ԳՐԵՑ՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Հրատարակութիւն Մարսէյլի Հայ Մշակութային Միութեան: Գեղատիպ հատոր մը, 200 օրինակը ապուած՝ վարդագոյն ազնիւ թուղթի վրայ:

Գին,— սպիտակ թուղթի վրայ տպուածները պիտի ծախուին 5 Ֆրանք միեւնոյն 30 Հոկտեմբեր, անկէ վերջ 7.50 Ֆրանք: Վարդագոյն թուղթի վրա տպուածները՝ 7,50 Ֆրանք: Ամեն մէկ հատորի ապսպրանքի համար դրկել փոստի ծախք 0,65 դրոշմարուղթ. Առաջանման 10 եւ 15 Ֆրանք (ըստ երկրի): Ղիմել՝ Հայ Մշակութային Միութեան գանձապահին

S. Diradourian 2 Rue Philippe de Girard, *Մարսէյլ:*

Տիկիններ եւ օրիորդներ

Հոկտեմբեր 20էն սկսեալ ՏԻԿԻՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ (մասնագէտ ձեւագիտութեան) ձեւագիտութեան գիշերային դասընթացքները տեղի պիտի ունենան երեկոյեան ժամը 8—11 Պաեէօ-Փաշանի, Իսի լե-Մուլինոյի եւ Ալֆորվիլի հայ Ակումբներուն մէջ:

Վեց ամսուան ընթացքին պիտի սորվին ձեւագիտութիւն (coupe parfaite) *ամենավերջին մեթոտով եւ պիտի ստանան վկայական: Փափաքողները դիմեն Տիկին Վարդանեանի, 12 Rue Saint Sulpice, (4րդ յարկ) Paris (6). Մէթրօ Օտէօն:*

ԵՓՐԱՏ ՆՈՒՐԱԳԱԽՈՒՄԸ

Ղեկավար Տ. ՕՆՈՍԵԱՆ

15, Rue du Pourtour, Clamart, Seine Tél. Observatoire 13 - 45

Հեռաձայնել երեկոները 8էն վերջ:

Հայկական, եւրոպական եւ կովկասեան եղանակներ: Միակ նուագախումբը հաճելի դարձնելու համար ձեր հանգէսները, հարսնիքները եւ հաւաքոյթները:

Ա. ՁԱՐԳԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԱԾ - ԱՏԱՄՆԱԲՈՑԱԾ

14 Rue Dunkerque (ՄԷԹՐՈ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՐԴ)

Tél. Tradaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20:

Աշաւօտները ժամադրութեամբ:

Եւրոպայի հնչակեան վաճառոյն գրատունը

ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ

Librairie H. SAMUEL

51, Rue Monsieur-le Prince, Paris (6e)

Հեռաձայն՝ DANTON 88 65 *Մէթրօ՝* ODÉON

Chèque-postale: Paris 1287—35

Հայերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ այլ լեզուներով գիրքեր:

ՀԱՃԱԽՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԻՒՆ:

Ապսպրանքները՝ կանխիկ: Ապառիկ ապսպրանքները նկատի չեն առնուիր:



"ՇԻՐԱԿ"

Արեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական: Անմրգոխի: Անհասարակ: Առաջնակարգ զօրացուցիչ ախորժակբեր, պատրաստուած գուսան չափիչ ջրով Հայ սուրբերական սեղանին գործ:

Ձաշարան "ԲԵՐԱ"


ՏՆՕՐԷՆ *ԵՐ. ՋԱՆԿԻԿ ՊԱԼԷՃԵԱՆ*

9 Rue Provence, Paris 9e. *(Առաջին յարկ)*

Մէթրօ **Le Peletier**

Արեւելեան եւ եւրոպական կերակուրներ՝ պատրաստուած տնարար իւղով:

Hommes **Dames**



15, Bld. Bonne Nouvelle

Métro Bonne Nouvelle Tél.: Gut. 93-70

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

Ձ ա ր ա ր ա ն Ֆ Լ Օ Ր Ի Ա

61, Rue Monsieur le Prince, Paris (6e)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ:



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ձեզ իսկապէս քաղցր եւ անխոտոր պատրաստուած հայկական օղին է *ՐԱՔԸ ՏԻՒԶ:* Զուրկ արուեստական օղիներէ որոնք ձեր ստամոքսը կ'այրէ եւ դիւրները ջուր կը նետեն եւ կը վնասէ ձեր առողջութեան: *Խմեցէք ՐԱՔԸ ՏԻՒԶ* ու կզգաք թէ ինչպէս կազդուրիչ եւ ախորժակ բացող է: Տաքեր ըլլալէ ետք ուտած է:

Dalakupeian 8 Rue Sufflot
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Զարուհի Պապօեան եւ աղջիկը՝ Օր Մայոտ, Տէր եւ Տիկին Ս. Գալէնտէրեան կը ծանուցանեն որ այս կիրակի, 2 Հոկտ. Փարիզի Հայոց եկեղեցիին մէջ, 15 Rue Jean Goujon, տեղի կ'ունենայ հեզհեզախտ իրենց ամուսնոյն, հօր եւ աներհօր՝ ողբացեալ ԼԵՒՈՆ ՊԱՊՕՆԵԱՆի մահուան տարելիցին առթիւ:

Կը հրաւիրուին ազգականները, բարեկամները եւ հանդուցեալին յիշատակը յարգողները:

ՀՈՒՇԱՏԻՏ

ՄԱՐՍԷՅԼԻ Հայ երիտասարդական ընկերակցութեան Հոկտ. 1ի ողջունի երեկոյթ պարահանդէսը յետաձգուած է, ցնոր ծնօրհնութիւն:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՍԵՒՐԸ

Մխիթարեան Հայրերու Սեւրի Մեծ բառեան վարժարանին դպրոցական 1938—1939 տարիշրջանը կը սկսի Հոկտեմբեր 1էն:

Արձանագրութիւններու պէտք է դիմել վարժարանին գրասենեակը ամէն օր ժամը 15էն 18ը, Rue Troyon-Sèvres (S. et O.):

Տեսուչութիւն

Le Gérant : H. STEPHAN

17, Rue Damrémont, PARIS (18) **A. DER (AGOPIAN)**

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹՕՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՑ	ԵՒԱՄՍԵԱՑ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ԵՐԵՔՇԱԲԹԻ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ MARDI 4 Octobre 1938

14րդ ՏԱՐԻ — 14e Année No. 3951

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒՔ ՔՐՕՄՔ

ՃԱՀՆ ՒԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Դեռ կը հնչեն ցնծութեան աղաղակները, քանի որ փարատեցաւ պատերազմի մղձաւանջը, այնքան ահաւոր եւ աննախատեսելի։ Եւ յորդահոսան բազմութիւնները կը շարունակեն երախտապիտութիւն յայտնել Հորս «մեծերուն», ինչպէս երբեմն արքաներուն։

Բուն իրականութիւնը այն է որ Հորս ջրջերը ուզեցին եւ խափանեցին պատերազմը, ուղղակի եւ անմիջական չահ մը չունենալով անոր մէջ։

Տարբեր պարագաներու տակ, դարձեալ անոնք էին որ պիտի հնչեցնէին մարտակոչը, մէջտեղ նետելով չոնդալից նշանախօսքեր, ինչպէս 1914ին։

Միւս կողմէ, կարելի չէ ժխտել թէ այսօր չատ աւելի զօրաւոր են խաղաղութեան աղղակները, քան 20 — 25 տարի առաջ, երբ քաղաւոր - կայսր մը կրնար կրակի տալ ամբողջ Եւրոպան, չահագործելով այս կամ այն պատրուակը։

Այսօրուան վարիչները սոսկալած են նկատի առնել ոչ միայն հանքային կարծիքը, այլ եւ այն միլիոնաւոր կազմակերպուած բազմութիւնները, որ կը կոչուին նախկին ռազմիկ, բանուոր կամ գիւղացի։

Երկկ աւելի դիւրին էր ճղմել այդ անհամար, տաբեբային զանգուածները, քան այսօր, հակառակ զանազան միջոցներու, որոնք ունին խոցելի կողմեր ալ, ինչպէս երկկուան ամենազօր կայսրութիւնները։

Կան ուրիշ պարագաներ ալ, օրինակ՝ մեծ պետութեանց ռազմական պատրաստութեանց անհատասարակշռութիւնը, որ մտածել կուտայ ճակատագրական պահուն։

Այսպէս կամ այնպէս, օրհնութիւն մը պէտք է համարիլ որ փարատեցաւ մղձաւանջը, — գոնէ երկար տարիի համար յետաձգուեցաւ պատերազմը, իր քամոնելի հետեւանքներով։

Արդ, ի՞նչ հեռանկարներ կը պարզէ աննախընթաց տագնապի մը այս մխիթարական ելքը, Եւրոպայի եւ առ հասարակ ամբողջ աշխարհի համար։

Ուրախութեան կանչերուն հետ, միջազգային մամուլը այս խնդիրն է որ կը քննէ, յանգելով խառնակ եզրակացութեանց։

Լաւատեսներու կարծիքով, Միւնիխի համաձայնութիւնը նոր չրջան մը կը բանայ, խաղաղութեամբ կարգադրելու համար մի - ջազգային կնճիռները։

Անոնք այլեւս անխուսափելի չեն դաներ պատերազմը, մինչեւ անդամ դիւրացած կը տեսնեն սպառազինութեանց կրճատումը, — կը բաւէ որ հինգ - վեց մեծ պետութիւնները միշտ պատրաստ ըլլան գլուխ գլխի տալու, փոխադարձ բարեացակամութեամբ։ Անչուշտ, միշտ ալ զոհելով տկարը։

Ուրիշներ, աւելի չոռետես կամ իրատես, կը կարծեն թէ խաղաղութեան քաղաքականութիւնը ոչ թէ չահեցաւ, այլ տուժեց, քանի որ Հիթլէրեան Գերմանիոյ անդամատումը կը սպառնայ վեր ի վայր չրջել ամբողջ կեդր. եւ Արեւելեան Եւրոպայի քարտէսը։

Այս տասնամեակը մանաւորապէս զգալի է Փարիզի մէջ, ուր չատ մը թերթեր Ֆրանսան նուաստացած, տկարացած կը դատնեն, իրրեւ հետեւանք Միւնիխի համաձայնութեան։

Արդէն իսկ անվիճելի են հետեւեալ իրողութիւնները.—

1. Կաշկանդելով եւ անդամատելով Հիթլերեան, ինքնին ջուրը ինկած կ'ըլլայ հաւաքական ապահովութեան քաղաքական նուիթիւնը, որուն այնքան մոլեռանդութեամբ կապուած էր Ֆրանսա։

2. Հաւաքական ապահովութեան հետ, վերջնապէս կը թաղուի նաեւ Ազգերու Դաչնակցութիւնը, քանի որ Եւրոպայի գործերը կը կարգադրուին քառանդամ դրութեամբ — Անգլիա, Ֆրանսա, Իտալիա եւ Գերմանիա — համաձայն երկու Առաջնորդներու կամքին։ (Սէն – Պոիս, Լը Ժուռնալ)։

3. Փոխադարձ աջակցութեան դաշինքներուն կը յաջորդեն պետութենէ պետութիւն կնքուած համաձայնութիւններ, ինչպէս կը պահանջէ Հիթլէր, սկիզբէն ի վեր։

4. Ամբողջովին կը խորտակուի Ֆրանսայի ղինակցութիւնները - րու ցանցը։ Չատ մը թերթեր դիտել կուտան թէ Հեկեսլովաքիոյ խորտակումէն վերջը, այլեւս ոչ մէկ պետութիւն պիտի վստահի Ֆրանսայի երաչխաւորութեան, նախընտրելով Գերմանիան։

5. Միեւնոյն պատճառով, եւ Գերմանիոյ ճնշումով, հաւանաբար Լուրն իյնայ նաեւ Ֆրանքեւխորհրդային ղինակցութիւնը։ Կարծողներ կան թէ Մոսկուա կրնայ նոյնիսկ մերձենալ փորձել Պերլինի հետ, իսկ Ռումանիա իր գլխուն ճարը նայիլ։

6. Գերմանիա Յուկս միլիոն ժողովուրդ եւ ահագին տարածութիւն եւս չահելով, կը դառնայ մօտաւորապէս 80,000,000 հոգինոց պետութիւն մը, դէմ դիմաց՝ Ֆրանսայի հետ որուն բնակչութիւնը այս համրանքին կէսն է։ Մանաւանդ մը չէ այս աոթիւ դիտել կուտայ թէ Գերմանիա կրնայ Աւստրիան, անդամատելով Չեխոսլովաքիան եւ խորտակելով Ֆրանսայի զինակցութիւնները, տրամադրելի կ'ունենայ աւելի քան 30 զօրաբաժին, ի հարկին ճակատելու համար։

Յառաջանալուն եղրակացութիւնն այն է թէ Ֆրանսա պիտի հարկադրուի նոր ելքեր փնտռել, պահելու համար իր դիրքը, իրրեւ մեծ պետութիւն, բայց պիտի հանդիպի անհնարին դժուարութեանց։ Այս պարագան անչուշտ պիտի անդրադառնայ միւս ժողովրդապետութեանց վրայ, որոնք նոյնքան մատնոդ են Գերմանիոյ եւ Իտալիոյ յարձակողականին։

Բայց այս պարագան իսկ ճամբայ չի՞ բանար աւելի հաստատուն վերակազմութեան մը, դաշնագիրներու ամբողջական վերաքննութեան, որուն անձկութեամբ կը սպասեն փոքր պետութիւնները։

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԼԵՀԵՐՆ ԱԼ ՍԿՍԱՆ ԳՐԱՒԵԼ ԻՐԵՆՑ ՊԱՀԱՆՋԱԾ ՀՈՂԵՐԸ

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ԿԸ ՏԵՂԱՓՈՐՈՒԻՆ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ

Ինչպէս հաղորդած էինք, լեհական կառավարութիւնը երրորդ եւ աւելի խիստ ծանուցագիր մը — վերջնագիր — ուղղեց Չեխոսլովաքիոյ, անմիջական պատասխան պահանջելով։ Չեխական կառավարութիւնը պատասխանեց չարաթ իրիկուն, պարզապէս տեղի տալով, ինչպէս Գերմանիոյ առջեւ։ Այս առթիւ հետեւեալ զեկոյցը հրատարակուեցաւ։

— « Մանրամասնօրէն քննելէ վերջ լեհական վերջնագիրը թէչէնի (Սիլզիի) չրջանի մասին, նկատի առնելով միջազգային կացութեան դժուարութիւնները եւ բռնադատուած՝ Միւնիխի որոշումներու հետեւանքներէն, կառավարութիւնը ուրիշ բան չի կրնար նախ քննել եթէ ոչ ընդունիլ լեհական պահանջները։ Կառավարութիւնը այս տաժանելի որոշման յանգեցաւ լիովին համաձայն քաղաքական կուսակցութեանց պատասխանատու վարիչներուն հետ։ Եւ այդ որոշումը տուաւ այն գիտակցութեամբ թէ ուրիշ որ եւ է վճիռ պատճառ պիտի դառնար աւելի ծանր բարդութեանց »։

Տրուած որոշման համաձայն, լեհական զօրքը թէչէնի չրջանը մտաւ կիրակի, 2 հոկտեմբեր, կէսօրէն վերջը ժամը 2ին։ Ամբողջ դրաւումը պիտի լրանայ մինչեւ հոկտեմբեր 10, ճիշդ գերմանական չրջանին պէս։ Նոր սահմանագլուխին ճշդումը պիտի կատարուի կարգ մը տեղական հանրաքուէներէ վերջ։ Ժողովուրդներու եւ գոյքերու փոխանցման հետ կապուած խնդիրները պիտի կարգադրուին երկու կառավարութեանց կողմէ։ Չեխական կառավարութիւնը անյապաղ ազատ պիտի արձակէ լեհ պաշտօնեաները, ինչպէս եւ քաղաքական բանտարկեալները։

**** Թէչէնի չրջանը Չեխոսլովաքիոյ կուտեցաւ Վերսայլի դաշնագրով, որովհետեւ իր հարուստ ածխահանքերը անհրաժեշտ կը համարուէին նորաստեղծ պետութեան համար։ Լեհերը զայն գրաւեցին 1919ին, բայց Չեխերը մէկ տարի վերջը եւս առին, Լեհաստան պատերազմի բռնուած ըլլալով։ Մրցութեան հետ։ Ատեն մը կը խորհէին հանրաքուէ կատարել, բայց մէկդի դրուեցաւ։ Երբ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԸ

ՀԵՂԻՆԱԿ ՊԱՐՈՆԵԱՆ

Տար, ատր, ատր...

(Տե՛ս նախորդ համարը)

Նոյեմբեր 1924-ին Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի ընտրութիւնների ժամանակ Ալաշկերտի գաւառի Ղարաքիլիսայի շրջանի ընտրական տեղամասում ընտրողների ցուցակները կազմելիս պարզուեց, որ գիւղերի մեծ մասի անունները գրուած են տարբեր ձեւերով։ Ընտրական յանձնաժողովը ստիպուած եղաւ ուղղագրական կանոններ մշակել, որպէսզի ընտրողների անունները միատեսակ գրուեն։

Ղարաքիլիսայի շրջանի գիւղերի անունները գրուած էին հետեւեալ ձեւերով՝ Ղարաքիլիսա, Ղարաքլիսա, Ղարաքլիսայ, Ղարաքլիսայի, Ղարաքլիսայում, Ղարաքլիսայից, Ղարաքլիսայ գիւղ, Ղարաքլիսայի գիւղ, Ղարաքլիսայում գիւղ, Ղարաքլիսայից գիւղ։

Ընտրական յանձնաժողովը որոշեց գրել միայն Ղարաքիլիսա

ՊՈՂՊԱՏՎԱԾ ՊԱՏԱՆԵԿԱՏՈՒ

«ՇԱՆԱՊԱՐՀ» ՊԱՏԱՆԵԿԱՏՈՒ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Ես ինձ միշտ արժանավոր եմ համարել ձեր վստահության, որովհետև ես ձեզ ինձնից ավելի եմ սիրում, ավելի, քան ինքս ինձ։ Ես ձեզ համար ամեն ինչի պատրաստ եմ, ամեն զոհողության։ Ես ձեզ համար ոչ միայն ինքնասիրությունս եմ զոհել, այլև ամեն ինչ, որ ինձ համար թանկ է եղել։ Ես ձեզ համար ոչ միայն ընտանիքս եմ լքել, այլև հայրենիքս, ինձ համար ամենասուրբ ամեն ինչ։ Ես ձեզ համար ոչ միայն ինքս եմ դարձել ստոր, այլև ուրիշներին ստոր դարձնելու պատրաստ եմ։ Ես ձեզ համար ոչ միայն ինքս եմ դարձել ոճրագործ, այլև ուրիշներին ոճրագործ դարձնելու պատրաստ եմ։ Ես ձեզ համար ոչ միայն ինքս եմ դարձել դավաճան, այլև ուրիշներին դավաճան դարձնելու պատրաստ եմ։ Ես ձեզ համար ոչ միայն ինքս եմ դարձել ստրուկ, այլև ուրիշներին ստրուկ դարձնելու պատրաստ եմ։ Ես ձեզ համար ոչ միայն ինքս եմ դարձել հանցագործ, այլև ուրիշներին հանցագործ

վերն ու երգերը կը թնդան ամէն կողմ: Զօրքին առջեւէն կ'երթան հրթիռական վաշտերը: Զեխական զեկոյց մը կը գնահատէ գերմանական զօրքին ընթացքը:

Հէնլայն կոչ մը ուղղելով իր հայրենակիցներուն, կ'ըսէ.— «Հինգ տարի պայքարեցանք մեր հայրենիքին ազատութեան համար: Առաջնորդը յաղթականօրէն վերջացուց մեր պայքարը: Սըրտանց չնորհակալ ենք»:

Միջազգային յանձնաժողովն ալ իր կարգին կոչ մը ուղղելով, կը յորդորէ կարգապահ մնալ, որպէսզի փոխանցումը կատարուի առանց միջադէպի:

*** 6000 զինուորներ պատրաստուած են Անգլիոյ մէջ, դրկուելու համար Զեխոսլովաքիոյ այն վիճելի շրջանները ուր հանրաքուէ պիտի կատարուի, համաձայն Միւնիխի որոշման:

*** Փիլզնի մէջ անձնասպան եղաւ չեխ բժիշկ մը՝ իր կնոջ եւ երկու աղջիկներուն հետ, երբ լսեց գերմանական զօրքին մուտքը: Իսկ չեխ սպայ մը, որ անտառի մը խորը ապաստանած էր; քանի մը գնդակ արձակելէ վերջ լուեց: Կը կարծուի թէ անձնասպան եղած կամ սպաննուած է:

*** Զեխոսլովաքիոյ Զուտէթեան շրջանի Գերմանիոյ կողմէ դրաւման հետեւանքով՝ Զեխերը պիտի կորսնցնեն ահագին հարստութիւն:

Բացի զինուորական կառուցումներէ, ամրոց եւն., Գերմանները կը տիրանան բազմաթիւ գործարաններու եւ առեւտրական հաստատութիւններու:

Միայն փոխանցուած ճարտարարուեստական մեքենաներու արժէքը կը գնահատուի քանի միլիոն սթերլին:

ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Կարեւոր յայտարարութեանց կը սպասուի

Այսօր, երեքշաբթի, բացառիկ նիստի հրաւիրուած է Ֆրանսայի խորհրդարանը, լսելու համար վարչապետին յայտարարութիւնները՝ Միւնիխի համաձայնութեան մասին:

Տեղական թերթերը կը գրեն թէ Պ. Տալատիէ պիտի գոհանայ կարճ զեկուցումով մը, խնդրելով յետաձգել հարցապնդումները: Վիճաբանութիւնները անխուսափելի են, բայց կը կարծուի թէ ի վերջոյ համաձայնութիւն պիտի գոյանայ, հինգշաբթի կամ ուրբաթ օրուան յետաձգելով օրակարգը:

Շատ աւելի կարեւոր յայտարարութիւններ կը սպասուի Անգլիոյ խորհրդարանին մէջ, որ բացուեցաւ երէկ, երկուշաբթի: Ի – րազեկներու կարծիքով, Պ. Չէմպըլէն պիտի չգոհանայ միայն Միւնիխի համաձայնութեան զեկուցումով, այլեւ պիտի պարզէ իր տեսակէտները՝ Սպանիոյ, անգլեւիտալական համաձայնութեան, Ֆրանքեւգերմանական ոչ - յարձակման յայտարարութեան մը, օդանաւային պայմանագրութեան եւ զինաթափութեան մասին:

*** Անգլիոյ վարչապետը հեռագիր մը ուղղելով Պ. Տալատիէի, իր «երախտագէտ գնահատումը» կը յայտնէ անոր ուղղած գործակցութեան համար, ինչպէս եւ «իր հիացումը այն քաջութեան եւ արժանաւորութեան համար» որով ներկայացուց «իր մեծ երկիրը»: Հեռագիրը յիշելով Հիթլէրի հետ ստորագրուած յայտարարութիւնը, յոյս կը յայտնէ թէ կարելի պիտի հռչակէ անգլեւիտալական համաձայնութիւնը, ճանչնալով Եթովպիոյ գրաւումը եւ Մուսոլինին ազատ ձգելով Սպանիոյ մէջ:

Հուսգարիան ալ կ'ուզապարէ

ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻԱ ՆՈՐԻՆ ՀԱՄԱԿԵՐՊԵՑԱԻ

Լեհաստանէն վերջը, կարգը եկած է Հունգարիոյ, իր բաժինը պահանջելու համար չեխական աւարէն: Մանաւանդ որ, Միւնիխի ժողովին մէջ, Մուսոլինի եւ Հիթլէր ջերմապէս պաշտպանեցին իր պահանջը:

Հունգարական կառավարութիւնը չուզեց վերջնագիր ուղղել, չգրգռելու համար Ռումանիան եւ Եուկոսլաւիան, որոնք նոյնպէս հունգար բնակչութիւններ ունին: Հունգարիոյ ընդհ. սպայակոյտին նախագահը հրաժարեցաւ առջի օր: Կ'ըսուի թէ պատճառը այն է որ կառավարութիւնը մերժած էր իր առաջարկը՝ վերջնագիր ղրկելու մասին:

Հունգարիոյ վարչապետ հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ մամուլին.

— «Միւնիխի համաձայնութիւնը անկասկած առաւելութիւն մը կը ներկայացնէ Հունգարիոյ համար, քանի որ չորս մեծ պետութիւնները կը հաստատեն մեր պահանջներուն օրինաւորութիւնը: Անշուշտ եղած չի կրնար գոհացնել մեզ: Հունգարական փոքրամասնութեանց խնդիրը կրնայ լուծուիլ միայն այն եղանակով որով լուծուեցաւ գերմանականը, այսինքն ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքով: Մենք պիտի զգուշանանք որ եւ է արկածախնդրութեան եւ պիտի չարունակենք մեր արդար իրաւունքները պահանջել բոլոր օրամաղրելի միջոցներով: Անհրաժեշտ է որ բոլոր Հունգարները մէկ մարդու պէս միացած, պատրաստ ըլլան կրելու ամէնէն ահաւոր զոհողութիւնները: Երկրին վարիչները գիտակից են իրենց պարտականութեանց, բայց պէտք է որ ժողովուրդը վստահութիւն ունենայ»:

Վարչապետը հեռագիր մը ուղղեց Մուսոլինիի, երախտագիտութիւն յայտնելով անոր ընծայած աջակցութեան համար:

*** Փրակայի հունգարական դեսպանը Զեխոսլովաքիոյ արտաքին նախարարին ներկայանալով, յայտնեց թէ իր կառավարութիւնը կը փափաքի որ անմիջապէս գործադրուի ազգերու ինքնորոշման իրաւունքը:

Փէշթայի չափաւոր թերթերը կը գնահատեն կառավարութեան դիւանագիտական մեթոտները, բայց ուրիշներ կը պահանջեն աւելի արմատական միջոցներ, դրաւելու համար հունգարական հողերը: Հիթլէրական թերթ մը կ'աղաղակէ.— «Զսպասենք որ Զեխոսլովաքիոյ նոր կացութիւնը ամրապնդուի, այլապէս պատմական վայրկեանը պիտի փախցնենք: Դիւանագիտական մեթոտը ինքնախարխուելի է»:

*** Զեխական կառավարութիւնը պատասխանելով Հունգարիոյ ծանուցագրին, պատրաստակամութիւն յայտնեց անմիջապէս կարգադրելու հողային խնդիրը, ուղղակի բանակցութիւններով: Ասոնց յանձնաժողով մը կազմուելու, ճշդելու համար փոխանցելի հողամասերը: Հունգարական կառավարութիւնը այլեւս կարգադրուած կը նկատէ խնդիրը:

ՀԱՆԱՍԱՆ ԼԻՒՐԻ ՓԱՆԻ ՍԸ ՏՎԱՒ

ՀՐԵԱՅ ԱՌԻՏՐԱԿԱՆ ՄԸ «կեցցէ՛ պատերազմը» գոչած ըլլալով Տիժոնի մէջ, ամբոխը աւարի առաւ իր խանութը:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐԸ հաւատարմութեան ուղերձ մը ղրկած էին ազգ. պաշտպանութեան նախարարին, պատրաստակամութիւն յայտնելով 10,000 կամաւորներ տրամադրելու: Այս առթիւ չնորհակալութիւն կը յայտնեն որ ճանչցուած է իրենց նախկին ռազմիկի հանգամանքը:

ՄԱՐԱԶԱՒՏ ԱՎԷՐԻՍԻՒ, Ռումանիոյ երբեմնի վարչապետը եւ ազգային հերոսը, մեռաւ կիրակի օր: 79 տարեկան էր: Իր մեծամտութեան չնորհիւ էր որ յաջողեցաւ կարող թագաւորին վերադարձը:

Հայ Լեգէոնականներու Միութեան Մարսէյլի Մասնաճիւղի վիճակախաղէն չահած են հետեւեալ թիւերը.— 76 լոթերի նասխոնալ, 316 ինքնահոս գրիչ, 1233 կնոջ հովանոց, 1479 օծու քոլոնները, 705 մէկ տարուան «Ռոպմիկ» թերթ, 1438 մէկ զոյգ կնոջ գուլպայ, 1421 վեց թաչկինակ, 336 մէկ փողկապ, 55 երեք հատ անուշահոտ օճառ, 1533 մէկ տուփ բրնձափոշի:

ԳԱՂԱՓԻ ՏԻՒՐԻ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Dareaune — PARIS (13)

Հ. Յ. Դ.

Փաւիլդ

ՊԱՆԵԼՈ ՔԱՇԼՈՆի «Ազօթ» ընթակումիտէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները, 5 շոկտեմբեր, Ջորեքշաբթի երեկոյ ժամը 9ին, «կորիւն» ակումբին մէջ: կարեւոր օրակարգ:

ԱՆԻԷՒ ՀՈՒՆԱՐԼՈՆի «Ազատ» ընթակումիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ գիշեր, 7 շոկտ., ժամը 8.30ին. ծանօթ հաւաքատեղին, նոյն օրակարգով:

1939 "ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ,,

Ժ.ՐԴ ՏԱՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Գ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ, ՄԱՐՍԷՅԼ

Մամուլի տատ է եւ չուտով լոյս կը տեսնէ 1939 տարուան «Գոյամարտ» Օրացոյցը, գեղեցիկ եւ չքեղ տպագրութեամբ:

Բովանդակութիւն.— Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնը, հեղինակ՝ Մ. Վարանդեան, Ազգային պատմական եւ յեղափոխական դէմքերու եւ դէպքերու մասին հակիրճ տեղեկութիւններ, մտածումի չիթեր, գրական հատուածներ, գիտական տեղեկութիւններ Հայաստանի եւ դրացի երկիրներու մասին, ասացուածքներ եւ առածներ: Ազգային եւ կրօնական տօները մանրամասնութեամբ:

Կողքին կեդրոնը զարդարուած է «Մայիս 28ի Ծնունդը» (նկար՝ Վ. Խնկէնէրեանի) եզերուած հայկական զոյգ եռագոյնով:

Երկու կողմերը նկարներ՝ Տիկին Արզուքեանի, Մարօի, Քրիս Ֆէնէրեեանի, Անդրէասեանի եւ երկու խմբանկարներ:

Թերթիկներուն տակը՝ Քրիստափորի, Զաւարեանի եւ Ռոստոմի նկարները ծուշարձանով:

Թերթիկներուն մէջ վեհեղուած են Մ. Վարանդեանի, Յ. Միքիաէեանի, Սէրէմճեանի, Վանարեանի, Թէրլէմէզեանի, Զօր. Սեպուհի, Պօղոյեանի եւն. նկարները:

Գինն է՝ Մարսէյլ 5 ֆրանք Ֆրանսա, Սուրիա եւ գաղութներ 5.50 ֆր., արտասահման՝ 6 ֆրանք:

Բացի մեր գործակալներէն՝ ապահիկները նկատի չեն առնուիր: Դիմել՝ մեր ընդհանուր գործակալ՝ Կայծակ Ճարայեանի,
Monsieur Gaïzak Djarayan, 5, Rue de l'Eclipse, Marseille, France:

ԱՐԱՐԱՑԻ ՏՈՐԵԴՍԱՐԶՐ ԼԻՈՆԻ ՄԷՋ

ՅՈՒՆԻ ԵՒ ՏՐՋԱՆՆԵՐՈՒ ՀԱՅ ԼԵԳԷՈՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Կը ծանուցանէ Արարատի հերոսամարտի 20րդ տարելիցը նաեւ Մթութեան դրօշին պաշտօնական յանձնումը,

կիրակի, 9 Հոկտեմբեր, կէսօրէ վերջ ժամը 2.30ին, երթերդ թաղապետարանի սրահին մէջ:

ՊԱՏՈՒԱՒՈՅ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԸՆԿ. Տ. ԹՈՒՔՈՒՆԵԱՆԻ ԿԸ ԽՕՍԻ Պ. Գ. ԽՄԻՏԵԱՆ

Հրաւիրուած են պետական եւ քաղաքային իշխանութիւնները, ինչպէս նաեւ հայ կազմակերպութիւնները եւ Ֆրանսական նախկին պատերազմիկներու Միութիւնը:

Գնդապետ Տաշէ հոն բաժին պիտի ունենայ Ֆրանսական Նախկին Պատերազմիկներու եւ Հայ Վետերանդամներու Միութեան 60 հոգինոց նուագախումբը (Harmonie U. M. A. C.):

Կ'երգուին Օր. ՕՒՒԻՆԱՐ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ (Լիոնի քօնսէրվատուարէն եւ Օր. ՍՐԲՈՒՀԻ ԼԻՒՆԷՃԵԱՆ:

Լուսարձակով պիտի ներկայացուի Մուսա Լերան քառասուն օրերու հերոսամարտէն դրուագներ:

ԱՐՇԱԿ ԵՐԿՐԱՑՔԻ

ԱՆԳԼԻԱՅԻ ՄԷՋ

Ամսագրին օգոստ.-սեպտ. միացեալ թիւը (7) հետեւեալ բովանդակութեամբ.

Ս. ՎՐԱՑԵԱՆ Էջմիածնի չուրջ եւ Էջմիածնի առթիւ: ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆ Արփիարեան հրապարակագիրը: ՎԱՀԷ - ՎԱՀԵԱՆ Հատուցում (քերթուած): Փ. ՍԱՆԱՍԱՐ՝ Ց. Գ. Մ բմբեան: ԱՐՔ. ՏՐԱՊԻԶՈՆի Մ չեցի Մ չակը (չարունակութիւն եւ վերջ): Ա. ԱՐԱԶԵԱՆ Հայագիտութեան կորուստները: Հ. Ա. ՔԻՊԱՐԵԱՆ «Կիւլիկիոյ Զարչարանքը»:

Չվճարող բաժանորդներէն կը խնդրուի փակել իրենց հաշիւները:

Բաժանորդագրութիւն Ֆրանսա 40, եւ արտասահման՝ 50 ֆրանք:

Դիմել՝ Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ, 30, Rue Drouot, Paris (9):

ԿԱՐԱՊԵՏ Յ. ԷՄԷՐԵԱՆ
Maison E. CHARLES հիմնուած 1863
29 rue Mathis, Métro Crimée
Autobus: AJ, AV, CP, 52, 50/71 Tel. Botzaris 12—60

Կը ծախենք գոհարեղէններ, ամէն տեսակ ժամացոյցներ մատանիներ եւն.: Նորոգութիւն ժամացոյցներու եւ գոհարեղէններու: կը գնենք թլաթին, ոսկի, արծաթ եւ գոհարնկէնները նպաստաւոր գիներով:

Մի մտածէք որ վստահելի չնուած ոսկերչի մը գոհարեղէնները անփոփոխ կը պահեն իրենց արժէքը:

Յաւատներէն եղած ապահովագրութիւններ կը կարգադրուին արագ եւ խղճմտօրէն:

ԱՀԱԳԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԿՆՈՑԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑԷՔ
Notre-Dame de Lorette մէթրոյին մօտիկ,
8 Rue Notre-Deme de Lorette ակնոցավաճառի խանութը

Աչքի ճշդիւ քննութիւն հայ եւ ֆրանսացի մասնագէտներու կողմէ:

Շաբաթ օրերը հայրենակիցներու համար ԿԱՐԵՒՈՐ ՁԵՂՉ

ՊԱՖՖԻ
Փարիզահայերու միակ վայելուչ ճաշարանը
ՏԷՐ եւ ՏՆօրէն Մ. Գ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆի
8, RUE MAUBEUGE, Paris (9).
Մէթրօ Cadet et le Peletier (Carrefour Chateaudun).
Հռչակաւոր գոնէք ԱՆԱՐԱՏ կարգադրով պատրաստուած Արեւելեան եւ Եւրոպական կերակուրներու հարուստ ճաշացուցակ մը
Ամէրցկի մաքրութիւն եւ անթերի սպասարկութիւն, անհամեմատ մատչելի գիներով:
Ամէն տեսակ հաշկերոյթներու, թէյասեղաններու եւ հաւաքոյթներու կը տրամադրուի սրահ:

Hommes Dames
NAZARDIAN
Tailleur
15, Bld. Bonne Nouvelle
Métro: Bonne Nouvelle Tél.: Gut. 93-70

ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆի ԵՒ ՈՒՏԵՍՏԵՂԷՆի ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ
Ունինք մեծ մթերք ֆրանսական, անգլիական եւ չեխոսլովաք կերպասներու. Փափաքողները կրնան ղրկել իրենց գնած ապրանքները. Ընտէրվուտ եւ Ռոյալ գրի մեքենաներ կը գնենք ու կը ծախենք օտար գրասենեակներ կը տեղադրենք ապրանքներու emballage եւ ապահովագրութիւն. Փոխադրութիւն ամէն տեսակ ապրանքներու եւ պատուժներու
Դիմել՝ American Lloyd, Paris (9). 7 rue Amber
Tél. Opéra 67 77

ÜN DUZE
MARQUE DÉPOSÉE
RAKI
40°
DUZE
Véritable Anisette Orientale
ÜZÜMDEN MAMUL HALİS RAKI
DISTILLERIE OTTOMANE ISTAMBOUL

ՐԱՒԻՂ ՏԻՒՂ
Ջուտ խաղալ քարտ եւ անիսոնով սպառող ուած հայ ակներ օդին ՐԱՒԻՂ ՏԻՒՂ: Զգուշացէք արհեստական օդիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գլխացաւը կը խանգարէ ձեզ առողջ եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն ՐԱՒԻՂ ՏԻՒՂ որուն անուշ, պատ. կազդուրիչ եւ անպատճառ ճաշակը ըլլալ ուած է:
Dalakupeian 8 Rue Sulfice
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ՐՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՑՄԱՆՆԵՐ :—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՑ	ԵՒԱՄՍԵԱՑ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	285 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՉՈՐԵՔՇԱԹԻ
5
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
5 Octobre
1938

ԻԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3852

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՆՈՐ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատերազմը խափանուեցաւ, բայց մտահոգութիւնները չեն զգրաած տակաւին :

Շատերու համար եղածը « վինաղուլ մըն է պատերազմական վիճակի մէջ», ինչպէս կը յայտարարէր Անգլիոյ աշխատաւորական կոնտակցութեան վարիչը, երեսփ. ժողովին մէջ :

Անշուշտ քաղաքական խաղերն ալ դեր ունին այսպիսի արտայայտութեանց մէջ :

Օրուան վարիչը միշտ պիտի քննադատուի, եւ փոխատացուքիւնները պիտի չարունակուին երկար ատեն, մինչեւ նոր փոխադրիչ մը, — նորէն միացեալ ճակատ կազմելու համար : Իսկ մարդկային յատկութիւնները սահման չունին, մանաւանդ երբ կարգը կուգայ ոչ թէ գործելու, պատասխանատուութիւններ ստանձնելու, այլ խօսելու, վիճելու, իմաստութեան գոհարներ թափելու :

Միեւնոյն երեւոյթն է որ կը պարզեն օրուան թերթերը կամ երեսփ. ժողովներու մէջ եղած վիճաբանութիւնները :

Ընդհանրապէս, բոլորն ալ գոհ են որ խաղաղութիւնը փրկուեցաւ: Ամէնէն թեթեւ ընդդիմադիրն ալ երախտագիտութիւն կը յայտնէ :

Եւ սակայն, վախը չէ փարատած : Թանձր մշուշ մը սեւ տեսնել կուտայ ապագան : Ինչպէս կապոյտ ապակիները կը նեսեմացնեն լոյսը, նոյնպէս դաւնաւոր ակնոցներ մարդ կամ աղօտ կը ցուցնեն հեռանկարը :

Ինչո՞ւ,— գլխաւորաբար այն պատճառով որ զինակառուցները կը զօրանան, եւ գաղտնի դիւանագիտութիւնը ի պատուի է նորէն :

« Ես որ եւ է գաղտնիք չունիմ»,— կը յայտարարէ Մեծն Բրիտանիոյ վարչապետը : «Ոչ մտանաւոր դաշինք մը կնքեցի Հիթլէրի հետ, ոչ ալ յանձնառութեան տակ մտայ»:

Այս յայտարարութիւնը բաւակա՞ն է, հանգստացնելու համար հասարակ մահկանացուն կամ քաղաքական գործիչը, որոնք կեղծ մէկ բան չեն գիտեր, չատ մը բաներ կը կռահեն, բնազդաբար :

Օրինակ, իրողութիւն է որ Պ. Չէյմպըրլէն կը խորհի նոր առնչութիւններ սարքել Հիթլէրի եւ Մուսոլինիի հետ : Վերջին պարագան մօտակայս կը համարուի արդէն, քանի որ կ'ըսեն թէ Անգլիոյ վարչապետը պատրաստ մը պիտի կատարէ Միջերկրականի մէջ, «հանդստանալու համար »:

Արդ, հանրային կարծիքը ե՞րբ ամբողջովին կը տեղեկանայ պետական վարիչներու մտածուած խորհրդակցութեանց եւ որոշումներուն, — երկու ըլլան անոնք թէ չորս :

Մտ մը բան կ'իմանայ, երբ չունդալիոյ դէպք մը պատահի : Իսկ մնացեալը կամ կարեւոր մաս մըն ալ՝ երբ այս կամ այն վարչապետին, նախարարին, դեսպանին յուշերը հրատարակուին :

Ցիշեցէք որ 20 - 25 տարի անցած է, եւ չատ մը գաղտնիքներ դեռ նոր կը պարզուին, Մեծ Պատերազմին նախընթաց պարագաներուն կամ հաշտութեան բանակցութեանց մասին :

Ուրեմն, ժողովրդավար երկիրները մտահոգ են որ դիկտատուրաները կը զօրանան, եւ Առաջնորդները իրենց կամքը, պայմանները կը պարտադրեն, ի հարկին պատերազմի սպառնալիքով :

Միւս կողմէ, այդ ժողովրդավար երկիրներուն մէջ ալ, պետական վարիչները հետզհետէ աւելի ազատ կը զգան իրենք զիրենք, նախաձեռնութիւններ, պատասխանատուութիւններ կը ստանձնեն: Ամուր կառչած՝ այս կամ այն ծրագրին :

Այդ է, օրինակ, Չէյմպըրլէնի պարագան :

Շատ աւելը՝ պահպանողական գերդաստանի մը որ այնքան վճռակամութեամբ հարթած է բրիտանական աշխարհակալութեան ճամբան, Անգլիոյ վարչապետը կը գործէ իրեն յատուկ մեթոտներով :

Անշուշտ ան չանտեսեր խորհրդարանը, ոչ ալ կը խափանէ տահմանադրութեան տրամադրութիւնները : Եւ սակայն, բռնած է ճամբայ մը որ եթէ այսօր խաղաղութիւն բերաւ, կրնայ փորձանքներ կամ անակնկալներ ստեղծել վաղը :

Չէյմպըրլէն համոզուած է իր բռնած ճամբուն օգտակարութեան, եւ այդպէս ալ պիտի չարունակէ, մինչեւ որ երիտասարդ մը յաջորդէ իրեն, ինչպէս կ'ըսէր երկուչարթի օրուան ճառին մէջ, տեսակ մը հեղնութեամբ :

Ի՞նչն է որ կը բաժնէ երիտասարդն ու ծերը, այս համաչխարհային տագնապին մէջ :

Կարդացէք ճառերը եւ պիտի տեսնէք որ երկու կողմերն ալ համաձայն են երկու բանի մէջ,— խաղաղութիւն եւ... վերազինում :

Հարց է այժմ, — խաղաղութիւնը ո՞րքան կրնայ դիմանալ, եթէ զինաբշաւը պիտի չարունակուի չդադրելինդ, նոյն խելագար թափով :

Անգլիոյ ծովային նախարարը նախընտրեր է հրաժարիլ, տեսնելով որ վարչապետը կ'երթայ կը բանակցի, փոխանակ ապարդիւ կարդալու Հիթլէրի : Բայց կը թուի թէ ինքն ալ չատ վստահ չէր բռունցքին հրաշագործութեան, քանի որ ճառը կը վերջացնէ ... վերազինում քարոզելով :

Վարչապետը նոյնպէս վերազինում կը պատուիրէ, — ամէն պարագայի մէջ, համաձայն չէ անոր թափը թուլցնելու, Միւնիխի համաձայնութենէն վերջն ալ :

Ուրեմն, Մեծն Բրիտանիա պատրաստ չէ տակաւին, ապարդիւ կարդալու համար: Եւ քանի որ սպառազինութիւնները պիտի չարունակուին, — մնացեալը դուք դատեցէք :

Սէտ թէ ինչո՛ւ մտահոգութիւնները չեն փարատած տակաւին, հակառակ այնքան բարեյաջող ելքի մը.— Միւնիխի համաձայնութիւն :

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՉԷՅՄՊՐԼԷՆ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ՄԻՒՆԻԽԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

«ՈՐ ԵՒ Է ՊԱՏՃԱՌՈՎ ՉՈՒՆԻՄ ԱՄՉՆԱԼՈՒ»

30 ՄԻԼԻՈՆ ԱՆԳԼ- ՈՍԿԻ ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻՈՅ

Անգլիոյ երեսփ. ժողովին երկուչարթի օրուան նիստին մէջ, ընդդիմադիրները քննադատեցին Միւնիխի համաձայնութիւնը, ուժ առնելով ծովային նախարարին հրաժարումէն եւ ուրիշ պատրագաներէ : Վարչապետը ջերմագէս պաշտպանեց իր վարած քաղաքականութիւնը, որ ապահովեց «պատուաւոր խաղաղութիւն մը», աշխարհը փրկելով անխուսափելի պատերազմի մը սարսափներէն :

Առաջին անգամ խօսեցաւ Պ. Տըֆ - Քուփըր, ծովային նախարարը, որ հրաժարած էր քանի մը օր առաջ :

« ՓՈՐՁԵՑԻ ԿԼԼԵԼ, ԲԱՑՁ ԿՈԿՈՐԴԻՍ ՄՆԱՑ »

Նախարարը մանրամասնօրէն պարզեց իր անհամաձայնութիւնը վարչապետին քաղաքականութեան դէմ՝ Հիթլէրի հետ կատարուած բանակցութեանց ընթացքին : Երկար ատենէ իվեր կը սպասէր որ վարչապետը բացորոշապէս յայտնէ Գերմանիոյ թէ Անգլիա պիտի պատերազմի, եթէ Գերմանացիները Չեխոսլովաքիա արշաւէին : Իրեն համար նպատակաւոր առիթ մըն էր Նիւրընպէրկի համագումարը, պարզելու համար Անգլիոյ դիրքը : Ցետոյ յուսաց թէ այդ ազդարարութիւնը պիտի ուղղուի Պէրխթէսկատէնի մէջ, վերջապէս Կոտըսպէրկի մէջ : Ինք անձնապէս կը յանձնարարէր զօրաշարժի ենթարկել բրիտանական նաւատորմը :

— « Վարչապետը Կոտըսպէրկէն վերադարձաւ վերջնագրով մը որուն պայմանները կրնար տուն տալ միայն անագորոյն եւ վճռիմդիր թշնամի մը, երկար պատերազմի մը մէջ պարտուած հակառակորդի մը : Փորձեցի կլլել Միւնիխի պայմանները, բայց կոկորդս մնացին : Հիմա որ զգեստած են զոհը, Գերմանացիները պիտի չզրկուին անոր աջացի տալու հաճոյքէն եւ գերմանական բանակը պիտի չզրկուի իր աւարէն : Մեծն Բրիտանիոյ արտաքին քաղաքականութեան մեթոտներուն չի համապատասխաներ անգլ-եւգերմանական յայտարարութիւն մը ստորագրել, առանց խորհրդակցելու դաշնիցին անդամներուն, մեր գինակիցներուն եւ դաղթապետութեանց հետ կամ առանց դիւանագիտական մասնագէտներու աջակցութեան : Վարչապետը իր յոյսը դրած է Հիթլէրի ուղղամտութեան վրայ : Ան կը յուսայ բանաւոր եղանակով մը լուծել առկախ մնացած բոլոր խնդիրները : Թերեւս իրաւունք ունի : Բայց որովհետեւ ես չեմ հաւատար, լաւ է որ քաշուիմ : Ես կը հրաժարիմ պաշտօնէ մը զոր կը սիրէի. թերեւս կը խորտակեմ քաղաքական ասպարէզս, բայց կարեւորութիւն չունի : Ես կը պահեմ բան մը որ մեծ արժէք ունի : Ես կրնամ աչխարհին երեսել ճակատս բաց » :

Նախարարը իր ճառին մէջ չեչտեց թէ անհրաժեչտ է զարկ տալ վերազինման, աւելի լայն ատիճանի մը վրայ, քանի որ Անգլիա յանձն առած է «սահմանադլուխ մը պաշտպանել կեդրոնական Եւրոպայի մէջ» :

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԷՐ...

Այս բացատրութենէն անմիջապէս վերջը խօսք առաւ Պ. Չէյմպըրլէն, որ ներողութիւն խնդրեց թէ այսօր պիտի չպատասխանէ Պ. Տըֆ Քուփըրի, «թէեւ ոչ ես առնելիք բան մը ունիմ, ոչ ալ ղղջալիք »:

Վարչապետը մանրամասնօրէն բացատրեց տագնապին ծանրութիւնը, պնդելով թէ պատերազմը անխուսափելի էր եւ ամբողջ աչխարհ խաղաղութիւն կ'ուզէր :

— « Ժամանակը կենսական ազդակ մըն էր : Բոլոր տարրերը կային պայթումի մը համար որ աղէտի մը պիտի յանգէր գահավիժօրէն : Հետեւաբար կենսական էր որ արագօրէն ձեռք բերէինք եղրակացութիւն մը՝ կարելի եղածին չափ չուտ կատարելու համար վտանգաւոր իրավիճակի մը վերածուած իրավիճակը » :

Ցետոյ բացատրեց Կոտըսպէրկի եւ Միւնիխի պայմաններուն տարբերութիւնը, ապացուցանելու համար թէ Միւնիխի համաձայնութիւնը աւելի մօտ է Պէրխթէսկատէնի քան Կոտըսպէրկի պայմաններուն : Ընդդիմադիրները չհամոզուեցան եւ սկսան աղաղակել,— «Ամօ՛թ, ամօ՛թ» :

Չէյմպըրլէն.— Ամչնալու որ եւ է պատճառ չունիմ : (Ծափեր) :

Վարչապետը չարունակելով իր ճառը, յայտնեց թէ Չեխոսլովաքիա 30,000,000 ոսկիի փոխառութիւն մը խնդրած է, վերակազմելու համար երկիրը եւ թէ Մեծն Բրիտանիա պատրաստ է տասը միլիոն վճարելու անմիջապէս :

Ընդդիմադիրները նորէն հեղնական կանչեր արձակեցին.

(Հետեւող շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԵԹԷ ՏԻՏՂՈՍՈՎ ԳՈՀԱՆԱՑԻՆ ...

« Փառք - Սուտ »ի մէկ աչխատակիցը պտոյտ մը կատարելով ժողովրդական խաւերու մէջ, հետեւեալ հարցումը ուղղած է :

— Ի՞նչ կ'ուզէիք տալ Պ. Տալատիէի, որ խաղաղութիւն բերաւ ձեզի :

Պատասխանները, որոնք հրատարակուած են անունները, հասցէներով եւ լուսանկարներով, կը պարզեն հոգեբանական պատկերը Փարիզի հասարակ մահկանացուներուն :

Այսպէս, լայնաճիտ կին մը, որ առնկի առեւտուրով կը զբաղի, պատասխաներ է.

— « Սիրով նուէր կ'ընեմ կողով մը լեցուն առնկ, զոր ես ինքս պիտի զատեմ ամէնէն ընտիրներէն» :

Կառապան մը կ'ըսէ.

— « Անշուշտ ան արժանի է ինչ որ ուզէ : Եթէ ընդունի, գաւաթ մը լեցուն *փէռնօ* կը հրամցնեմ, բայց ընտած, ոչ թէ ոտքի վրայ : (Նստած ատելի աւղ է, ինչպէս գիտէք) :

Թարմագեղ օրիորդ մը.

— « Անշուշտ կ'ընդունիմ թէ չեմ կրնար տալ բան մը որ համապատասխանէ իր կատարած գործին : Կ'ուզէի տալ համբոյր մը, փունջ մը ծաղիկ եւ, եթէ հանգանակութիւն կատարուի, մէկ օրուան վաստակս » :

Պատերազմի որբ մը.

— « Ես պատերազմի որբ մըն եմ : Միլիոնաւոր որբեր խնայուեցան եւ ես գիտեմ թէ ինչ կը նշանակէ այդ : Այս մարդը պէտք է փողոց մը կամ ծառուղի մը ունենայ Ֆրանսայի բոլոր բաղմաթիւներուն եւ աւանիներուն մէջ, ինչպէս եւ իր արձանը՝ դպրոցներուն մէջ» :

Հեծելաւուրդ մը.

— « Կարծեմ թէ հեծելանիւ նստած է ժամանակին, եւ շատ կը սիրէ մարզանիւը : Իմ հեծալանիւս շատ նոր չէ, բայց այդ է ամբողջ ունեցածս : Եթէ գիտնայի թէ հաճելի է, սիրով իրեն կը նուիրեմ զայն» :

Ինը տարեկան աղջիկ մը կը նուիրէ իր շիկը, մէկուկէս տարեկան : Քառասնամեայ մը կ'առաջարկէ հանգանակութիւն կատարել, Տալատիէի արձանը շինելու համար, տրամադրելով ըսաւ մը : Պատերազմի հաշմանդամ մը հարիւր ֆրանք նուիրելով, կը թելադրէ արձակուրդի կայաններ հաստատել մանուկներու համար եւն. :

— Մէ՞նք ինչ նուիրեմք, հարցուց լնքերցող մը :

Հարցումը միտքս ձգեց մեր տարաբախտ Մարզպետը :

1916ին, պատերազմի ամէնէն տաք շրջանին, մեր *ազբվիչ* ընկերը, որ գերմանի միսիոնարի, երբեմն ալ Արաբի տարազ հագած՝ Գոնիայէն Հալէպ կ'երթար, իմանալով անատոյգ պատերազմին ելեւէջները, ստիպողական նամակ մը կ'ուղղէր Պոլիս, հետեւեալ բովանդակութեամբ .—

Գրեցէք Թիֆլիս, բացատրեցէք առ ոչ անկ է, որպէսզի համոզեն Նիքոլա մեծ Դուքը որ գրաւէ ամբողջ բրիտանիան : Իրեն խոստացէք մեր երկրին փոխարէյութիւնը եւ ուրիշ ինչ որ կ'ուզէ : Մի՛ տնտնաք ...

Ինք ալ կը պատրաստուէր կռվկան երթալու, երբ, Մուսուլի մօտ, գիէն վար իյնալով մեռաւ, այնման վտանգներու մէջ ողջ մնալէ վերջ :

Եթէ Մարզպետ ողջ ըլլար, եւ որ եւ է հեռանկար տեսնէր ափ մը հող ստանալու, անշուշտ պիտի ուզէր մէկ - մէկ տիտղոս ծարել չորս ջոջերուն համար, կամ իւրաքանչիւրին գատ - գատ :

Օրինակ՝ «Իշխան վատպուրականցի», «Պարոն Կիլիկիոյ», «Բդեշխ Ծոփաց աչխարհի» կամ «Սեպուհ Տարոնոյ»..

Վ.Ա.Հէ

ԿՅՈՒՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ԼԻԱԶՕՐՈՒԹԻՒՆՆԵ՞Ր ՊԻՏԻ ՊԱՀԱՆՋԷ

Երեսփ. ժողովը բացառիկ նիստ գումարեց երէկ, լսելու համար կառավարութեան զեկուցումը Միւնիխի համաձայնութեան մասին : Այս առթիւ բազմաթիւ հարցապնդումներ պատրաստուած էին : Ամէնէն կարեւոր պարագան այն էր որ պետական գանձը նորէն տագնապալի մտնուած է, իբրեւ հետեւանք վերջին դէպքերու առթիւ ձեռք առնուած զգուշութեանց : (Լոնտոնի թերթերը 25 միլիոն ոսկի կը հաշուեն բացառիկ ծախքերը) : Այնպէս որ, կառավարութիւնը հարկադրուած է նոր լիազօրութիւններ պահանջելու, այլապէս դժուար պիտի ըլլայ վերահաստատել հաւասարակչռութիւնը : Տագնապին առթիւ մեծ գումարներ քաչուած էին խնայողական սնուցիչներէն : Միւնիխի ատեն գանձը ծախսած է տասը միլիառ ֆրանքի վարկը, որ սահմանուած էր Պանք տը Ֆրանսի կողմէ : Հարկ եղած է նաեւ զործածել երաչխաւորութեան գումարը, պահելու համար ֆրանքին գինը : (Անգլիականը 178·98 էր առջի օր, տոլարը՝ 37·29) :

Հիթլէր գրաւեալ շրջանը մտաւ զօրքի հետ

Չեխոսլովաքիոյ գերմանական Յրդ շրջանին գրաւումէն առաջ, Հիթլէր Էգլէր մտաւ յաղթական ցոյցերու մէջ : (Այս քաղաքը եղած է վառարանը հիթլէրական գործունէութեան) : Առաջնորդը երբեմնի չեխական սահմանադլուխը անցնելով, դիմաւորուեցաւ աննկարագրելի ցոյցերով : Յաղթական կամարներ չինուած եւ ծաղիկներ ցանուած էին ճամբուն վրայ, իսկ ժողովուրդը մոլեգին կանչեր կ'արձակէր եւ կը ծափահարէր : Հիթլէր ճառ մը խօսելով, յայտարարեց .

— «Կ'ողջունեմ ոչ միայն ձեզ, այլեւ ձեզմով ամբողջ Զուտէթեան երկիրը որ քանի մը օրէն ամբողջովին մաս պիտի կազմէ Մեծադոյն Գերմանիոյ : Այս շրջանը այլեւս երբեք պիտի չանջատուի մայր հայրենիքէն : Պէտք է բոլորս միասին ըլլանք եւ երբեք սխալ չհասկնանք իրար : Ձեր երջանկութիւնը երջանկութիւնն է 75 միլիոն հայրենակիցներու, ինչպէս որ ձեր վիշտը վիշտն էր, քանի մը օր առաջ, մեր բոլորին : Մեծադոյն Գերմանիոյ վրայ կը հսկէ զերմանական վահանը եւ գերմանական սուրը կը պաշտպանէ զայն : Բոլոր ընկերները պատրաստ են իրենց կեանքը զոհելու փառաբաժանը» :

Այնուհետեւ սկսան իրախճանքները, տեւելով մինչեւ գիչեր : Հիթլէր այցելեց նաեւ ուրիշ գրաւեալ քաղաքներ : Արդէն Գերմանիոյ կցուած են նչանակուած երեք շրջանները, մէկն ըլլալով Քարլսպատն ու Մարիէնպատը (Չերմուկներ) :

Լիոնի մէջ ձերբակալուեցան քսան բանթոդներ, որոնք փորձեր էին խանգարել ոստիկանական պահականոցի մը չինութիւնը :

ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐ — ՀԱՏՈՒԿ ԹԻՎ

Հեղ. Թ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ — Նկար. Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ

Մեծ ուրախությամբ հայտնում ենք մեր ընթերցողներին, որ «Ծիրանի» խմբագրությունը ստացել է Ռուբեն Հարությունյանի «Գլխավոր խնդիր — հատուկ թիվ» վիպակը։ Հեղինակը մեր հին բարեկամներից է։ Նրա հետ մենք միասին ենք անցկացրել ամառային արձակուրդները, նրա հետ միասին ենք ուրախացել ու տխրել։ Ռուբենը մեր ընթերցողներին ծանոթ է նաև որպես գրող։ Նրա «Ինչպես Ռուբենը դարձավ գրող» պատմվածքը մեծ հաճույքով կարդացին մեր ընթերցողները։

Ռուբենը մեզ ուղարկեց իր վիպակը ձեռագրի ձևով։ Ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ նա մեզ անակնկալի մատնեց։ Ռուբենը մեզ ուղարկեց ոչ միայն ձեռագիրը, այլև նկարները։ Ռուբենը ոչ միայն գրող է, այլև նկարիչ։ Նա ինքն է նկարազարդել իր վիպակը։

Ռուբենի վիպակը մեզ շատ դուր եկավ։ Մենք որոշեցինք հրատարակել այն «Ծիրանի» հատուկ համարում։ Ռուբենի վիպակը մեզ դուր եկավ ոչ միայն իր բովանդակությամբ, այլև իր ձևով։ Ռուբենը գրել է ոչ թե սովորական վիպակի ձևով, այլ ինչպես ասում են՝ ֆելիետոնի ձևով։ Ամեն մի գլուխ ավարտվում է հետաքրքրական մի դրվագով, որ ստիպում է ընթերցողին անհամբեր սպասել հաջորդ համարին։

Ռուբենի վիպակը մեզ դուր եկավ նաև նրանով, որ նա գրված է շատ կենդանի լեզվով։ Ռուբենը գրել է այնպես, ինչպես մենք ենք խոսում։ Նա չի օգտագործել գրական լեզվի ոչ մի հնարանք։ Նա գրել է ամենապարզ լեզվով։ Ռուբենի վիպակը կարդալիս ընթերցողը կարծես ականատես է լինում այն դեպքերին, որոնց մասին գրված է վիպակում

Հայկական սովետական վաշինգտոն

— Հասկանում եմ ձեզ: Հոգս եք ունենում, որպեսզի ձեր ընկերները ձեզ չհասկանան: Ես էլ եմ ձեզ հասկանում: Ես էլ եմ ուզում, որ ինձ չհասկանան: Ես էլ եմ ուզում, որ ինձ չհասկանան: Ես էլ եմ ուզում, որ ինձ չհասկանան

— «Ղեկմատնքի գին», բացագանչեց երեսփոխան մը։

— «Ձեր գրպանէն վճարեցէք», պոռաց ուրիշ մը։

— «Հարիւրին 8 տոկոս նշանակեցէք», ձայն տուաւ երրորդ մը։

Ուրիշներ վարչապետը կ'անուանէին «Հիթլէրի սուրհանդակը»։ Պ. Զէյմպրլէն ճառը չարունակել առանց ազդուելու այս նախատինքներէն։ Այս առթիւ չերմապէս պնդահատեց երեք վարչապետները։

— «Տաժանելի բաներ ըսուեցան Գերմանիոյ վարչապետին մասին. բայց կը կարծեմ թէ ժողովն ալ կը խոստովանի այն գործուարութիւնը ուր կը գտնուէր ան, եթե առնելու համար այնքան բացորոշ յայտարարութիւն մը։ Պէտք է խոստովանիմ որ, իր հանդուրժողութիւնը — հոգ չէ թէ վերջին պահուն — խորհրդակցելու ուրիշ պետութեանց հետ այնպիսի հարցերու մասին որոնց համար վճիռ արձակած էր միանգամ ընդ միշտ, իրական եւ չօչափելի ազդակցութիւն մը կը կազմէր խաղաղութեան։ (Ծափեր)։ Ինչ կը վերաբերի պ. Մուսոլինիի, անոր աջակցութիւնը անչուշտ կարեւոր եղաւ եւ թերեւս վճռական։ Իր թելադրութեանց վրայ էր որ 24 ժամ յետաձգուեցան զօրաշարժի վերջին գործողութիւնները, որ պէտք պատեհութիւն մը ունենանք կացութիւնը քննելու։ Կ'ուզէի աւելցնել թէ խորհրդակցութեանց ընթացքին, Դուչէն (Առաջնորդ) եւ իր արտաքին նախարարը մեծապէս օգնեցին մեզի։ Անոնք էին որ վիճաբանութեան սկիզբը ներկայացուցին այն յուշագիրը զոր պ. Տալատիէ եւ ես կրցանք ընդունիլ իբրեւ հիմ բանակցութեանց։ Կը կարծեմ թէ եւրոպա եւ ամբողջ աշխարհ պատճառներ ունին երախտագէտ ըլլալու Իտալիոյ վարչապետին, որ նպաստեց խաղաղ լուծման։ Կարգ մը տեսակէտներով, պ. Տալատիէ չատ աւելի դժուարին պարտականութիւն մը ունէր քան միւս երեք բանագնացները, նկատի առնելով այն մասնաւոր յարաբերութիւնները որ իր երկիրը կը կապեն Չեխոսլովաքիոյ հետ։ Պարտականութիւն կը սեպեմ ըսել թէ իր քաջութիւնը եւ պատասխանատուութեանց գիտակցութիւնը, իր հասկացողութիւնը եւ պարզութիւնը անգնահատելի արժէք ունեցան բանակցութեանց ընթացքին»։

Պ. Զէյմպրլէն նոյն չերմութեամբ գնահատեց նաեւ նախագահ Բոզվէլթը, որուն կոչերը, «այնքան վճռական այլ համոզիչ, հասատատեցին թէ աշխարհի ամենահզօր ազգին ձայնը կրնայ լսուիլ ակնկալուածէն 3000 մղոն հեռու, եւ ազդեցութիւն գործել եւրոպացիներու մտքին վրայ։ Իմ կարծիքով, բոլոր ժողովուրդներու խաղաղասիրական միաձայն զգացումն էր որ ամէնէն հզօր ազդեցութիւնը գործեց»։

Վարչապետը անդրադառնալով Հիթլէրի հետ ստորագրուած յայտարարութեան, բաւ.

— «Ձեմ հասկնար թէ ինչո՛ւ կասկածներ կրնան յարուցանել իմ խօսակցութիւններս պ. Հիթլէրի հետ։ Ես ոչ գաղինք մը կնքեցի, ոչ ալ յանձնաժողովի տակ մտայ։ Մեր խօսակցութիւնը թղթի նամական չէր որ եւ է ազգի հանդէպ։ Իմ նպատակս էր պարզապէս քիչ մը աւելի ընդլայնել այն անձնական չփումը զոր հաստատեր էի պ. Հիթլէրի հետ»։

Իրաւ եղրակացութիւն, պ. Զէյմպրլէն չէշտեց թէ զինաթափութիւնը միակողմանի չի կրնար ըլլալ։ «Պէտք չէ կարծել թէ Միւնիխի համաձայնութիւնը թոյլ կուտայ ակարացնել մեր վերազինման ճիգերը։ Բայց եւ այնպէս մեր առջեւ կը բացուի նոր հեռանկար մը դէպի զինաթափութիւն»։

ԻՆՉ ԿԸՍԵՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ

Վարչապետին ճառէն վերջը կարգով խօսք առին ընդդիմադիրները։ Աշխատաւորականներու վարիչը, Էթլի, յայտարարեց.

— «Հիթլէր ճշմարիտ յաղթանակ մը չտեսաւ։ Ժողովրդապետութեան եւ քաղաքակրթութեան դառը սոսկալի պարտութիւն մը կրեցին։ Չեխերն են որ փրկեցին Եւրոպայի խաղաղութիւնը։ Միայն անոնք են որ գոհողութիւն կատարեցին։ Իրականութիւնը այն է որ Եւրոպայի քարտէսը բոլի փոխուեցաւ Հիթլէրի պատերազմի սպառնալիքով։ Տագնապին սկիզբէն ի վեր Ս. Միութիւնը հաւատարիմ մնաց իր յանձնառութեանց, բայց իր կարծիքն անդամ չհարցուցին»։

Պ. Իրլն, նախորդ արտաքին նախարարը, խոստովանելով հանդերձ որ պատերազմին առաջքը առնուեցաւ եւ ամբողջ աշխարհ երախտապարտ է, ցաւ յայտնեց որ զոհուեցաւ պզտիկ եւ բարեկամ ազգ մը։ Ազատականներուն ներկայացուցիչը բացատրելով դիւանաւորներուն զօրացումը, յայտարարեց.

— «Մենք միայն Զուտէթեան չրջանները Գերմանիոյ չտուինք, այլ Գերմանիան յանձնեցինք Հիթլէրի, Իտալիան ալ Մուսոլինիի»։

Վիճաբանութիւնները չարունակուեցան երկու օր։

Ի՞նչ կը ներկայացնէ նոր Չեխոսլովաքիան

Չեխոսլովաքիան կ'անդամակցի յօգուտ Գերմանիոյ, Հունգարիոյ եւ Լեհաստանի։

Ան կը կորսնցնէ իր հիւսուածեղէնի ճարտարարուեստին 75 առ հարիւրը, իր հանքային ճարտարարուեստին կէսը, մետաղագործական ճարտարարուեստին մէկ երրորդը։ Ան կը պահէ իր հոգապօծութեան 90 առ հարիւրը։

Հակառակ այս կորուստներուն տակայն, ան դարձ կուգայ տպզնապէն միատարը, ապահովուած եւ կենսունակութեան ամէն տուեալներով օժտուած։

Չեխ վարչապետ Զօր. Եան Սիրովի յայտարարեց.

— Հակառակ այս բոլորին, մենք տակաւին մեռած չենք։ Նոր պետութիւնը կենսունակ է...

Նոր Չեխոսլովաքիան, անդամակցելէ ետք կը գտնայ ամբողջովին նոր պետութիւն մը, միատարը։ Պիտի ունենայ հարիւր հազար քառ. քիլոմեթր տարածութիւն եւ մօտ տասը միլիոն բնակիչ (որմէ 378,000 Գերմաններ եւ 150 – 200,000 Հունգարներ)։ Նախապէս ունէր 140,000 քիլոմեթր տարածութիւն եւ 14,726,000 բնակիչ։ Միւնիխի համաձայնագրով կը կորսնցնէ մօտ 40,000 քառ. քիլոմեթր հող եւ 4,700,000 բնակիչ։

Իր նիւթական եւ տեսակարական կորուստները պիտի կրնայ չուտով զարմանել տնտեսական սերտ կապեր ստեղծելով լեհական Լոզի հետ (Շլեզիա), Ռումանիոյ, Հունգարիոյ եւ Պալքաններու հետ, բարի դրացիական յարաբերութեանց վերահաստատումով։

Չեխոսլովաքիա, միացած Լեհերուն, Ռումէններուն, Հունգարներուն եւ պալքանեան պետութեանց, կրնայ տակաւին մեծ դեր կատարել Գերմանիոյ «դէպի արեւելք դրոհ»ին առջեւ։

ՉԱՆԱՅԱՆ ԼՈՒՐԵՐ ԲԱՆ ՄԸ ՏՂՈՎ

ԻՏԱԼԻԱ որոշեց հոկտեմբեր 10էն սկսեալ աստիճանաբար արձակել 1910ին եւ 1912ին ծնած պահեստեները, որոնք դէնքի տակ տնուած էին վերջերս։ Ինչպէս կ'երեւայ, Իտալիան ալ իր կարգին զգուշական միջոցներ ձեռք առած էր արագօրէն եւ լուկմինջիկ, գրօչի տակ հրաւիրելով պահեստեները, եւ հիմա կ'արձակէ։

ՋՕՐ. ԱՎԷՐԻՄՈՒ, որուն մահը ծանուցեր էինք երէկ, ծնած էր 1863ին, Պեսարապիա։ Թորինոյի զինուորական ակադեմիան աւարտելէ վերջ, փայլուն դիրք մը գրաւեց բանակին մէջ։ 1916ին հրամանատարն էր Քրայովայի առաջին զօրաբանակին եւ արդէն մեծ ժողովրդականութիւն չահած։ Բայց ամբողջ Ռումանիոյ համար առաւոպելական դէմք մը դարձաւ երբ 1917 յուլիսին Մորասթիի եւ Մորաէսթիի փայլուն յաղթանակները տարաւ մարշալ Մաքէնզէնի դէմ։ 1918 փետրուար 9ին հրաւիրուեցաւ գահլիճը կազմելու, եւ այնուհետեւ նուիրուեցաւ քաղաքական ասպարէզին։ Ինքն էր որ հիմնեց ժողովրդական կուսակցութիւնը։ Իր երկրորդ գահլիճը կազմեց 1920ին, իսկ երրորդը՝ 1926ին, պաշտօնավարելով մինչեւ 1927։ Այնուհետեւ հետզհետէ թուլցաւ իր դրաժանկութիւնը։ Երկար առեղծ ի վեր կը տառապէր սրտի ծանր հիւանդութենէ մը։

ԻՏԱԼԻՈՑ արտաքին նախարարութեան օրհանը մասնաւոր զեկոյց մը հրատարակելով, կը յանձնարարէ անմիջապէս կարգադրել Հունգարիոյ պահանջած հողերուն խնդիրը։ Ինչպէս հաղորդած էինք, չեխական կառավարութիւնը համակերպած է արդէն, եւ բանակցութիւններ կը կատարուին։

ՄԱՀԻՆՈՑԻ ԳԾԻՆ ՎՐԱՑ հասատատուած զինուորները առայժմ պիտի չարձակուին։ Շատ մը պահեստիներ կրնան տուն երթալ, բայց պիտի չարձակուին, մինչեւ որ գերմանական զօրաշարժը վերջանայ։ Սպարապետը, Զօր. Կամբէն, այդ չրջանը գնաց, քննական պատյա մը կատարելու համար։

140 ՀՈԳԻ ՍՊԱՆՆՈՒԵՑԱՆ պաղեստինի վերջին խռովութեանց ընթացքին։ Եաֆայի մէջ մեռան տասը Արաբներ, ական մը պայթած ըլլալով։ Երուսաղէմի մէջ մահուան դատապարտուեցաւ Հրեայ մը։

ԱՀՌԵԼԻ ՊԱՑԹԻՒՆ մը տեղի ունեցաւ Պուլվար Օատոյի (Մարսէյլ) խաղի զօրծարանին մէջ, ուր կ'աշխատին 1500 բանուորներ, նաեւ չատ մը Հայեր։ Մեռան չորս հոգի։ Վիրաւորներէ բուն թիւը կը հաշուուի 40 հոգի, որոնց մէջ կը գտնուի Հայ մը, Մաշտոց։ (Երեւան ուրիշներ ալ կան, կը սպասենք մեր թղթակիցներուն տեղեկութեանց)։

ԵՐԵՔ ԽԱՉԱԳՈՂՆԵՐ կեղծ ադամանդ մը քշած էին Ամերիկայի մը, 120,000 ֆրանքի։ Ամբաստանեալներէն երկուքին համար տեղական թերթերը կը գրեն թէ Իրանցիներ են (Հպատակ), Վահրամ Քալեան եւ Յովհաննէս Ղամբարեան։

Հ. Յ. Դ.

Փառիզ

ՊԱՆԵԼՈ ՔՈՇԵՒՆի «Արեւիս» ճաշակովթէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները, 5 Հոկտեմբեր, չորեքշաբթի երեկոյ ժամը 9ին, «կորիւն» ակումբին մէջ։ կարեւոր օրակարգ։

ԱՆԻԼՈ ՊՈՒԱԳՈՒԼՈՆԳի «Ազատ» ճաշակովութէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ գիշեր, 7 Հոկտ., ժամը 8.30ին. ծանօթ հաւաքատեղին, նոյն օրակարգով։

ԱՐԱՐԱՑԻ ՏՐԵԴԱՐԶԸ ԼԻՈՆԻ ՄԷՋ

ԼԻՈՆԻ ԵՒ ՏՐՁՆՆԵՐՈՒ ՀԱՅ ԼԵԳԷՈՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Կը ծօնուի Յունուարի հերոսամարտի 20րդ տարեդարձը ինչպէս նաեւ Միութեան գործին պաշտօնական յանձնումը։

Կիրակի, 9 Հոկտեմբերը, կէսօրէ վերջ ժամը 2.30ին, երրորդ թաղապետարանի սրահին մէջ։

ՊԱՏՈՒԻՐԱՒ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵՍՄԲ ԸՆԿ. Տ. ԹՈՔՔԷՆԵԱՆի ԿԸ ԽՕՍԻ Պ. Կ. ՄՈՒՍԵԱՆ

Ատօրէն արգիլուած է արիական . Իտալացիներու եւ Իտալուհիներու ամուսնութիւնը քամական, սեմական է ուրիչ ոչ արիական տարրերու հետ ·— Արգիլուած է պետական պաշտօնեաներու -- պինուոր թէ քաղաքացի --- ամուսնութիւնը օտար կիներու հետ, ինչ ազգի ալ պատկանին ·-- Հրեաները չեն կրնար անդամ ըլլալ Ֆաչական կուսակցութեան, գործի տէր կամ վարիչ դառնալ որ եւ է ձեռնարկի մէջ որ հարիւրէն աւելի մարդ կը բանեցնէ, 50 հէքթարէն աւելի հող ունենալ, պինուորութիւն ընել, խաղաղութեան թէ պատերազմի ատեն :

Բացառութիւններ ալ հաստատուած են : Տրուած որոշումները բաղդատաբար աւելի մեղմ են քան կը սպասուէր :

Անցեալ փետրուարին արտաքին նախարարութեան օրկանը, «էնֆորմացիոնէ Տիփլոմաթիք» յայտարարեց, թէ Ֆաչական կառավարութիւնը չի խորհիր քաղաքական, բարոյական ու անհատական միջոցներ ձեռք առնել Հրեաներուն դէմ, այլ խստութեանց պիտի ենթարկուին վարչաձեւին հակառակորդները միայն :

Անկէ իվեր չատ մը օրէնքներ հրատարակուեցան Հրեաներուն դէմ : Անոնց արգիլուեցաւ դպրոց յաճախել եւ ուսումնարաններու մէջ ուսուցչական պաշտօն վարել : Շատ մը փրօֆէսօրներ պաշտօնանկ եղան եւ Հրեաներու կողմէ գրուած դասագիրքերը վտարուեցան դպրոցներէն : Օտարածին Հրեաներուն հրամայուեցաւ հեռանալ Իտալիայէն մինչեւ 1939 մարտ :

Այժմ Իտալիոյ մէջ կան 70,000 Հրեաներ, որոնք կը վախնան թէ նոր խստութեանց պիտի ենթարկուին :

Նոր Զեխոսլովաքիան

Զեխական կառավարութիւնը ընդունուած ըլլալով Սլովաքիոյ ինքնավարութիւնը, անմիջապէս մասնաւոր կառավարութիւն մը հաստատուեցաւ նախագահութեամբ Եոզէֆ Թիսոյի : Նոր կառավարութիւնը կը բաղկանայ չորս նախարարներէ,--- կրթական, տնտեսական, հողագործական եւ ելմտական : Բոլոր սլովաք նախարարները մաս պիտի կազմեն Փրակայի կեդրոնական կառավարութեան, իսկ իրենց կեդրոնը պիտի ըլլայ Սլովաքիոյ Զիլինա քաղաքը կամ ուրիշ մը : Նոր նախարարները անմիջապէս իրենց երդումը կատարեցին Փրակայի մէջ վարչապետ զօր· Սիրովիի առջեւ, որ մեեւնոյն ատեն կը վարէ նախագահի պաշտօնը :

Այսպէս նոր Զեխոսլովաքիան կը վերակազմուի իրրեւ դաշնակցային պետութիւն, կեդրոնական կառավարութեամբ եւ Պոհեմիա - Մորավիոյ, Սլովաքիոյ եւ Կարպաթեան Ռուսիոյ կամ Ռութէնիոյ չրջանին կառավարութիւններով :

**** Լեհ եւ չեխ զինուորական իշխանութիւնները կը չարունակեն թէչէնի չրջանին սահմանագծումը, իսկ հունգարական չրջանի մասին բանակցութիւնները պիտի սկսին այսօր, կիրակի : Լեհերը եւ Հունգարները կը չարունակեն ճնշում բանեցնել, որպէսզի երկու երկիրները սահմանակից դառնան, նոր հողերու դրաւումով :*

**** Գերմանիա եւ Զեխոսլովաքիա բարեկամաբար որոշեցին փոխանակել քաղաքական բանագարկեալները , 24 ժամուան մէջ :*

**** Գերմանական զօրքը վերջացնելով չորրորդ չրջանին դրաւումը, մտաւ հինգերորդը, որու մասին բազմաթիւ ներկայացուցած է Փրակա :*

Հիթլեր կը վիրաւորուի ծաղկեփունջէ մը

Պերլինի հեռագրական գործակալութիւնը կը ծանուցանէ թէ Հիթլէր թեթեւապէս վիրաւորուած է, իր ինքնաշարժին վրայ նետուած ծաղկեփունջէ մը : Ձեկոյցը չըսեր թէ ո՛ւր է պատահած այս դէպքը :

Այս առթիւ կուսակցութեան վարիչ մարմինը հետեւեալ ազդը հրատարակեց, Առաջնորդին հրամանով · --

«Հակառակ կրկնակի հրատարակութեանց, որոնք կ'ազդարարէին թէ արգիլուած է ծաղիկներ կամ ուրիչ առարկաներ նետել Առաջնորդին կամ անոր հետեւորդներուն կառքին մէջ, վերջին օրերու ընթացքին քանիցս ծաղիկներ նետուեցան կառքին մէջ : Որպէսզի յառաջիկային այլեւս երբեք ծաղիկ չնետուի, կուսակցութեան եւ կուսակցական կազմակերպութեանց բոլոր վարիչները պարտաւոր են, Առաջնորդին անցքէն առաջ, հանդիսատեսներուն ձեռքէն առնել ծաղկեփունջերը : Շրջանային վարիչները եւ չրջանային վարչութեանց պետերը անձնապէս պատասխանատու են այս հրամանին գործադրութեան համար :

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԵԱՆ չարաթական տեղեկագրին համաձայն, հոկտեմբեր 1ին նպաստաբնակալ գործազուրկներու թիւն էր 339,816 հոգի, որոնց 235,294ը այր, 104,522ը կին : Նախընթաց չարաթուան թիւն էր 338,409 : Ուրեմն աւելցած են 1407 գործազուրկներ :

ԵՐԵՔ ԱՄԻՍ ԴԱԴԱՐՄԱՆ դատապարտուեցաւ «Խուռնակ ոչ Նասիոն» թերթը, Զուիցերիոյ մէջ, որ «խողագործներու ակումբ» կոչած էր Միւնիխի ժողովը :

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԱԿ - ԱՏԱՄՆԱԲՈՑԱԿ


44 Rue Dunkerque (ՄԷՋԸՐՕ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՑ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20։

Ընտանիները ժամադրութեամբ։

Hommes **Dames**



15, Bld. Bonne Nouvelle

Métro: Bonne Nouvelle Tél.: Gut. 93-70



Fourrures de St. Bernard

ՀԱՅՑՈՒՀԻ ՍԻՒԼՊՕՒԻԱՆ

Միակ վստահելի տունը ուր պիտի գտնէք տոկուն ապրանքներ՝ զեղչեալ գիներով : Բնտար արժանթէններ, իրական մորթեր, փէթուաններ, սկունսներ, օձիկներ, գարեր, վերարկուներ եւայլն :

Կը չինենք չափու վրայ մանթօներ՝ գնորդն տեսակ մուշտակներէ, վերջին նորաձեւութիւններով :

Կը տանձնենք մուշտակներու նորոգութիւնը, ձեւափոխութիւնը, ներկելը եւ քանաժը : Մուշտակները կը մաքրենք ձրի, կիրակի օրերը բաց է մինչեւ կէս օր :

24, Rue Affre կամ 8, Rue Cavé — PARIS - 18e

Մասնաճիւղ՝ 2, Rue de la Charbonnière —

Մէթրօ՝ La Chapelle — Barbès Roch. Tél. Montmartre 69-70

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

Ձ ա ր դ ա ր ա ն Ֆ Լ Օ Ր Ի Ա

61, Rue Monsieur le Prince, Paris (6e)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ :



“ ՇԻՐԱԿ ”

Արեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական, Անմրցելի, Անխարդախ: Առաջնակարգ զօրացուցիչ ախորժակբեր, պատրաստուած զուտ չամիչէ հիւթէ: Ձոյ: Հայ աւանդական սեղանին զարդ:

ՐԱՖՖԻ

Փարիզահայերու միակ վայելուչ ճաշարանը

Տէր եւ Տնօրէն Մ. Գ. Մ Ի Ր Ի Ճ Ա Ն Ե Ա Ն

8, RUE MAUBEUGE, Paris (9).

Մէթրօ Cadet et le Peletier (Carrefour Chateaudun).

Հռչակաւոր գանէք ԱՆԱՐԱՏ կարագով պատրաստուած Արեւելեան եւ Եւրոպական կերակուրներու հարուստ ճաշացուցակ մը։ Անմրցելի մաքրութիւն եւ անթերի սպասարկութիւն, անհամեմատ մատչելի գիներով։

Ամէն տեսակ ձաշկերոյթներու, թէյասեղաններու եւ չաքլամաներու կը տրամադրուի սրահ։

Ձ ա շ ա ր ա ն “ Բ Ե Ր Ա ”

ՏՆՕՐԷՆ՝ **ԵՐՋԱՆԻԿ ՊԱԼԼԵՃԵԱՆ**

9 Rue Provence, Paris 9e. *(Առաջին յարկ)*

Մէթրօ **Le Peletier**

Արեւելեան եւ եւրոպական կերակուրներ՝ պատրաստուած անարատ իւղով։



ՐԱՖԸ ՏԻՒՔ

Զուտ խաղողի քաղցրահամ եւ անիսոնով պատրաստուած հայկական օղի է: ՐԱՖԸ ՏԻՒՔ Զգուշացէք պատուհասական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գլխացաւերը չուր կը խմեցնէ եւ կը վնասէ ձեր ստամոքսին: Խմեցէք միայն ՐԱՖԸ ՏԻՒՔ որուն անոյշ համ, կազդուրիչ եւ ախորժակ գրգռիչ ճաշակը ամէնուն կը հաճեցնէ:

Ծախք կատարուի Dalakupeian 8 Rue Sulfero Dépôt: 7 Rue de la Paix, Marseille· Tél. Dragon 70—89.

Ղ. Յ. Դ.

Փարիզ

ԱՌՆՈՒԱԻԻԼ ԼԷ ԿՈՆՑԵՍԻՈՆ «վարդան» կոմիտէին ընդհ ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այսօր, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին ընկ.Արփիար Մարտիրոսեանի բնակարանը·

ՐԱՖՖԻ ԼՍԱՐԱՆի դասախօսութիւնը 13 Հոկտ., Հինգշաբթի երեկոյ Café Guillon, Փլաս տը լ'Օտէօն, մէթրօ Օտէօն· կը խօսի Պ. Վ. ԽՇԽԱՆԵԱՆ·

ՎԵՐԱՄՈՒՏԻ ՀԱՆԴԷՍ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԵԱՑ

ՄԻՈՒԹԻՒՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ Պ. ԱՐՇԱԿ ՋՕՊԱՆԵԱՆԻ

16 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 4էն մինչեւ կէս գիշեր· 8 Ռիւ Պօսիւէ, Փարիզ· Կը խօսին զոյգ Միութեանց ներկայացուցիչները· Գեղարուեստական բաժին եւ պար· Խնամուած պիւֆէ եւ օրքէսթր·

Մուտք 3 եւ 5 ֆրանք·

ՁԵԻԱՊԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Յառաջիկայ Հոկտեմբեր 25ին կը սկսի ձեւագիտութեան դասերը՝ **robe-d'après midi, robe du soir, ensemble, manteau, jusqu'au tailleur,** *ներմակեղէն եւ* **dessin croquis·** *Կը գաւառանդուի ամենապարզ եւ գործնական մեթոտով· Արձանագրուիլ փափաքողները կրնան դիմել* **modeliste-couturière CHRISTOFOR, 31 Rue Condercet, Paris (9)** *մէթրօ* **Anvers** *կամ* **Cadet·**

Դասախօսութիւնը տեղի կ'ունենայ հայերէն, յունարէն, ֆրանսերէն, անգլիերէն եւ ռուսերէն լեզուներով :

ԿԱՐԵՒՈՐ

ԿԸ ԼՆԴՐՈՒԻ սուիպղաբար Պ. Մվաճեանէ (նախապէս Maison Seva T. S F. 212 Fbg. St· Martin) *որ իր նոր հասցէն տեղեկացնէ Քենճ իս վարչութեան·*

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կրքնոպլի Հ· Յ· Դ· «Եօթնեղբայրեան» կոմիտէն իր խոր ցաւակցութիւնը կը յայտնէ Պ· Հայկ Սիմոնեանին, իր սիկնոջ՝ ԱՐՇԱԼՈՑՍի մահուան առթիւ, ինչպէս նաեւ ծնողքին՝ Տէր եւ Տիկին Թիւֆէնկճեաններուն եւ բոլոր պարագաներուն :

*** Կրքնոպլի Հ· Կ· Յաչի Մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Պ· Հայկ Սիմոնեանի, իր Տիկնոջ՝ ԱՐՇԱԼՈՑՍի մահուան առթիւ, ինչպէս նաեւ սիկնոջ ծնողքին՝ Տէր եւ Տիկին Թիւֆէնկճեաններու եւ բոլոր պարագաներուն :*

ՖՈՒԹՊՈԼ

Հ· Մ· Ը· Մ·ի Փարիզի Ա· խումբը այսօր, կիրակի, պիտի մրցի F. C. Mitryի առաջին խումբին հետ (Փարիզին 30 մղոն հեռու, դէպի հիւսիս - արեւելք) : Ժամադրութիւն 1.30ին, Կառ սիւ Նոռ : Մեկնում ժամը 14.05 : Պիտի ընկերանայ Մ· Թափալեանի խումբը, մրցելու Mitryի պահեստիին հետ : Ժամադրութիւն 12ին, մեկնում 12.35:

Պահեստի խումբը պիտի մրցի Esblyի Ա· խումբին դէմ (37 մղոն հեռու դէպի արեւելք) : Ժամադրութիւն 12ին, Կառ սը լ'Էսթ :

ԳԱՂՏՆԻ ՏԵՍՈՒԻ ԼԻՄԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17 Rue Demarne — PARIS (13e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ՝
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՑՄԱՆՆԵՐ.— ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	285 ֆրանք	150 ֆրանք	

ԵՐԵՔՇԱԲԹԻ
11
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MARDI
11 Octobre
1938

ՃԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3857

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՄՈԽԻՐԻ ՏԱԿ ԹԱՂՈՒԱԾ ԿԱՑԾԵՐԸ

Կը թուի թէ բոլորովին անլրաւ չեն անոնք որ «զինադուլ» կը կոչէին Միւնիխի համաձայնութիւնը :

Զարը խափանուեցաւ, ճակատագրական պահու մը, չնորհիւ չորս երեւելիներու փոխադարձ հասկացողութեան : Բայց, չարի՛ն արմատները խոր են եւ ծառալուն, հետեւաբար միշտ ալ նոր անակնկալներ կրնան պատահիլ, վրդովելով աշխարհի խաղաղութիւնը :

Օրուան վարիչները իրենք ալ չեն ծածկեր այս պարագան : Եւ, իրրեւ փրկութեան լաստ, ապաւինած են դասական խմաստութեան, --- սպառազինութիւն : Զինուէ՛ ինչքան որ կրնաս, միշտ արթուն կենալով եւ զրացիդ զերազանցելով :

Այս ճամբուն վրայ, նոր եւ աւելի հզօր ճիգ մը կատարելու վճիռն արձակած է Մեծն Բրիտանիա :

Վերջին լուրերը կը հաստատեն թէ՝ բրիտանական կառավարութիւնը բաւական չսեպելով մինչեւ հիմա կատարուած սպառազինութիւնները, կ'ուզէ բազմապատկել եւ փութացնել զանոնք, մասնաւորապէս օդանաւային ճակատին վրայ : (Այս միջոցին Փարիզ կը գտնուի Մեծն Բրիտանիոյ օդանաւային հրամանատարը, մասնագէտներու չքախումբի մը հետ, ուսումնասիրելու համար երկու պետութեանց օդանաւային զործակցութեան ծրագիրները) :

Լոնտոն ծրագիրներ կ'որոճայ նաեւ ցամաքային բանակի զօրացման մասին :

Անգլիացի ժողովուրդը բնազդօրէն կը խորշի պարտաւորիչ զինուորութենէն, եւ որ եւ է կառավարութիւն չէ համարձակած այդ օրէնքը առաջարկել, խաղաղութեան ատեն : Վերջին տագնապներուն առթիւ, անխուսափելի կը համարուէր պարտաւորիչ զինուորութիւնը, բայց վարչապետը ինք նորէն հերքեց : Եւ հիմա կը խորհին ուրիշ ծրագրի մը մասին, --- «ազգային ծառայութիւն», վերակազմելու եւ զօրացնելու համար ցամաքային բանակը :

Անգլիան, Գերմանիոյ մէջ, Հիթլէրի նոր ճառը եւ մանաւանդ նոր ամրութեանց չինութեան հրամանը այլապէս վրդովիչ ախտանշան մը կը մատնեն :

Ինչպէս կ'երեւայ, Գերմանիոյ Առաջնորդը չի հաւատար ժողովրդավար երկիրներու խաղաղասիրութեան : Ան պարզապէս կ'ըսէ, --- այսօր Չէմպըրլէնն է, վաղը ուրիշ մը կուգայ եւ պատերազմ կը սարքէ : Ուրեմն, արթուն կաց եւ զինուէ՛, նոր զոհողութիւններ պարտադրէ ժողովուրդին :

Բայց միայն մոլեգին զինարշաւը չէ որ անձկութեամբ կը համակէ ժողովուրդներն ու խաղաղասէրները :

Չեխոսլովաքիոյ անդամահատումով՝ վերը ի վայր չրջուեցաւ ամբողջ կեդրոն Եւրոպայի քարտէսը :

Առ այժմ, այդ երկրին զրացիները զբաղած են աւար բաժնելով :

Գերմանիա լիուլի առացաւ իր բաժինը, նոյնիսկ աւելին : Ինչ որ անվիճելի կը համարուէր եւ պիտի փոխանցուէր մինչեւ հոկտեմբեր 10, արդէն յանձնուած է, բոլոր պարունակութեամբ եւ հակայական ամրութիւններով : (Փաքտ կը դանդատի թէ անիրաւաբար գերմանական իշխանութեան տակ անցած են նաեւ 850,000 Չեխեր) : Իսկ մնացեալին յանձնումը պիտի կատարուի ժողովուրդային քուէարկութեամբ :

Լեհաստան ալ 24 ժամէն առացաւ իր պահանջած երկրամասը, Թէշէնի չրջանը, առանց կաթիլ մը արիւն թափելու :

Հունգարիա նոյնպէս խլեց ինչ որ կը պահանջէր, չնորհիւ «բարեկամական» բանակցութեանց, որոնք սկսան կիրակի օր եւ անմիջապէս յանգեցան համաձայնութեան մը :

Մատաղ ըլլար, այսքան դիւրին չէր բաժնուեր ... :

Բայց, միամտութիւն պիտի ըլլար կարծել թէ ամէն բան վերջացած է եւ Չեխերը պիտի յաջողին անարգել վերակազմել նոր պետութիւնը, Սլովաքներուն եւ Ռութէններուն հետ :

Լեհաստան եւ Հունգարիա չեն հրաժարած հիմնական ծրագրէ մը, --- սահմանակից զառնալ, ուրիշ հողամասեր ալ մկրատելով : Հունգարները մասնաւորապէս աչք ունին Սլովաքիոյ վրայ, որուն վերջին պահուն ինքնօրինութիւն չնորհեց Փրակա, նոր յօրինուածներէ խուսափելու համար : Մասնագէտներ կ'ըսեն թէ Գերմանիա պիտի չհանդուրժէ լեհահունգարական սահմանակցութեան, որպէսզի կարենայ բաց դուռ մը գտնել դէպի Ռումանիա : Ուրիշ խօսքով՝ դէպի Սեւ ծով եւ աւելի անդին :

Միւս կողմէ, չորս մեծերը խոստացած են երաշխաւորել նոր Չեխոսլովաքիոյ սահմանները :

Արդ, ի՞նչպէս կարելի պիտի ըլլայ հաշտեցնել այս յաւակնութիւններն ու խոստումները : Մանաւանդ որ, Գերմանիա քաղաքական - զինուորականէն վերջը, տնտեսական արշաւ մըն ալ կը փորձէ դէպի Պալքաններն ու Մօտաւոր Արեւելք : Վկայ՝ տնտեսական նախաքարերին չունդալից պաշարը Պելկրատէն էնկիւրի : (պիտի հանդիպի նաեւ Սոֆիա, Պուքրէշ եւ Աթէնք) :

Տակաւին չխօսեցանք Միջերկրականի եւ Իտալիոյ յաւակնութեանց վրայ, որոնք նոյնպէս մոխիրի տակ թաղուած կայծեր են : Լոնտոն կ'ուճապարէ կարճ կապել սպանիական պատերազմը, որպէսզի կարենայ սանձել Իտալիոյ ախորժակները :

Ամէն բան ըսած չեղանք այս հարեւանցի ակնարկով :

Քաղաքական եւ զինուորական արշաւներուն հետ զուգընթաց կ'երթան ընկերային խլրտումները : Երկու դիկտատուրաները, Պերլին եւ Հռոմ կառչած են նաեւ «գաղափարական» կամ վարդապետական պայքարին, իրենց եռեւէն քաշելով ճափոնը :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՀԻԹԼԷՐ ԿՐ ՓԱՌԱԲԱՆԷ ԻՐ ՇԱՀԱԾ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

110 ՀԱԶԱՐ ՔԱՌ. ՔԻԼՈՄԷԹՐ ՀՈՂ, 10 ՄԻԼԻՈՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ՆՈՐ ԱՄՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԻՏԻ ԾԻՆՈՒԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԽԻՆ ՎՐԱՅ

Խաղաղութիւնը փրկուեցաւ, բայց պատերազմը անկարելի չէ

Հիթլէր կիրակի օր Զաարպրուք երթալով (Հռենոսի վրայ), նշանակալից ճառ մը խօսեցաւ 200,000 ունկնդիրներու առջեւ : 75 մասնաւոր կառախումբեր հոն փոխադրած էին նացի կազմակերպութեան հետեւորդները, նոր թատրոնի մը բացման առթիւ : Նահանգապետը հանդէսին բացումը կատարեց հետեւեալ յայտարարութեամբ .

-- « Այս օրերս 500,000 այրեր եւ կիներ չարունակեցին աշխատիլ ամրութեանց չրջանին մէջ : Անոնք միշտ կ'ըսէին,-- «Առաջնորդը իրաւունք ունի » :

Հիթլէր իր ճառին մէջ փառաբանեց վերջին յաղթանակները, ինչպէս եւ Հռոմ - Պերլին առանցքին ամրապնդումը .

-- « Այդ առանցքը, զոր չատեր ծաղրեցին, ոչ միայն հաստատուն եղաւ, այլեւ զօրաւոր՝ ամէնէն տաժանելի պահերուն : Այս աշնան մենք յաջողեցանք պետութեան միացնել տասը միլիոն քաղաքացիներ եւ 110,000 քառակուսի քիլոմէթր տարածութիւն, առանց արիւնահեղութեան : Մենք յաջողեցանք հակառակ միջազգային դրդռիչներու եւ չահադէտներու ստայօդ պայքարներուն :

Հիթլէր այս առթիւ ներմակաչ գնահատեց «միակ ճշմարիտ բարեկամը», Մուսոլինին : Ցիշեց նաեւ այն միւս օտար վարիչները որոնք չկրցան խաղաղութեան ճամբան գտնել, «մեծ Իտալացի»-ին հետ : Ապա չարունակեց .

*-- « Մեր դիմացը կը գտնուին դիւանագէտներ որոնք նոյնպէս խաղաղութիւն կ'ուզեն : Բայց անոնք կ'իյնան այնպիսի երկիրներու մէջ որոնց ներքին կազմը կրնայ իրենց տեղը դնել ուրիշներ : Այսպէս, Անգլիոյ մէջ բաւական է որ Տըֆ Քուփըր մը (նախորդ ծովային նախարարը) կամ Իըն մը յաջորդեն Չէմպըրլէնի : Մենք չատ լաւ գիտենք որ այդ մարդիկը պատերազմ կ'ուզեն : Իրենք ալ չեն ծածկեր այդ նպատակը : Այս պարագան կը սպիպէ մեզ արթուն մնալ եւ խորհիլ պաշտպանութեան մասին : Ասկէ զատ, մեր դիմացն ունինք, ինչպէս առաջ, սա համաչխարհային թշնամին, միջազգային Հրեան, որ միշտ կը դաւէ եւ կը սպառնայ, որուն քաղաքական հիմը կը գտնուի համայնավարութեան մէջ : Մենք չատ լաւ գիտենք ուժը միջազգային մամուլի մը որ միայն սուտով եւ զրպարտութեամբ կ'ապրի : Մենք կը ճանչնանք այն քաղաքական նորանշան կառուցումները որ գոյութիւն ունին մեր չուրջը : Ահա թէ ինչու վճռած եմ աւելի ուժգնօրէն չարունակել մեր ամրութեանց չինութիւնը արեւմտեան սահմանին վրայ, ինչպէս ծանուցի Նիւրընպէրկի մէջ : Այդ չինութեանց մէջ պիտի առնեմ երկու նոր չրջաններ, Էքս-լա-Շափէլ (Ախէն) եւ Զաարպրուքէն : Դուք օգնեցիք ինծի, ընկերներ, ապահովելու խաղաղութիւնը : Ըլլալով հզօր պետութիւն մը, մենք ամէն վայրկեան պատրաստ ենք համաձայնութեան քաղաքականութիւն մը վարել : Մենք կրնանք այդպէս չարժիլ, որովհետեւ ոչինչ կ'ուզենք ուրիշներէն : Մենք պարզապէս խաղաղութիւն կ'ուզենք : Այդպէս է պարագան Անգլիոյ հետ : Լաւ կ'ըլլար որ Անգլիոյ մէջ մէկզի դնէին Վերսայլէն մնացած կարգ մը սովորութիւններ : Գերմանիա չի կրնար հանդուրժել որ խնամակալի (վարժուհի) դեր կատարեն իրեն հանդէպ : Անտեղի է անգլիացի վարիչներու կամ երեսփոխաններու հետաքրքրութիւնը գերման քաղաքացիներու ճակատագրի մասին : Մենք այդպիսի բաներ չենք հարցներ Անգլիոյ, օրինակ՝ Պաղեստինի դէպքերու մասին : Ամէն պարագայի մէջ, խորհուրդ կուտանք այդ պարոններուն որ իրենց դործերով զբաղին եւ մեզ հանդիստ ձգեն : Աչխարհի խաղաղութիւնը կը պահանջէ որ բոլոր պատասխանատու քաղաքագէտներն ու դիւանագէտները իրենց սեփական գործերով զբաղին եւ չխառնուին ուրիշ երկիրներու կամ ժողովուրդներու գործերուն : Մեր առջեւ կը դանուին հսկայական գործեր, մշակոյթի եւ տնտեսութեան դետնին վրայ : Ոչ մէկ ժողովուրդ այնքան պէտք ունի խաղաղութեան որքան մենք, բայց ոչ մէկ ժողովուրդ մեզի չափ պիտի թէ ի՛նչ կը նշանակէ տակաւ եւ զրպարտութեամբ կ'ապրիլ

ՀԱՅՈՑ ԱՐՎԵՍՏԻ, ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

ՕՐՄԱՆԵԱՆ ՂԱԶԱՐՈՍԻ ՀԵՏ

Մարտ 1898թ. Կիրակի էր, գաւառական մի փոքրիկ քաղաքում։ Ես ծանօթ չէինք այդ տեղի հետ, եւ ոչ ոք չկար, որ ինձ ներկայացնէր։ Ուստի ինքս ինձ ներկայացրի։ Ես ուզում էի տեղական մի թերթ հրատարակել։ Ինձ ասացին, որ տեղական մարդիկ չեն ուզում բաժանորդագրուել, որովհետեւ ամէն մարդ ունի իր սեփական կարծիքը, եւ ոչ ոք չի ուզում ուրիշի կարծիքը կարդալ։ Ես ասացի, որ ես ինքս կ՚ուզեմ կարդալ։ Ինձ ասացին, որ ես ինքս ինձ համար չեմ կարող թերթ հրատարակել։ Ես ասացի, որ ես ինձ համար չեմ ուզում, այլ ուրիշների համար։ Ինձ ասացին, որ ուրիշները չեն ուզում։ Ես ասացի, որ ես ուզում եմ։ Ինձ ասացին, որ ես չեմ կարող։ Ես ասացի, որ ես կարող

ԲԱՑԱԿ ԼԵԼԵՆ ԵՒ ՒՐ ՍԵՐՆԴԸ

Տաղանդաւոր մի կին, որ ամբողջ կեանքը նուիրեց իր ընտանիքին, իր ամուսնոյն ու զաւակներուն, որոնց համար ինքզինքը զոհեց, ինչպէս կ՚ընեն միայն մայրերը։ Ան ալ մայր մըն էր, որ ամբողջ կեանքը նուիրեց իր ընտանիքին, իր ամուսնոյն ու զաւակներուն, որոնց համար ինքզինքը զոհեց, ինչպէս կ՚ընեն միայն մայրերը։ Ան ալ մայր մըն էր, որ ամբողջ կեանքը նուիրեց իր ընտանիքին, իր ամուսնոյն ու զաւակներուն, որոնց համար ինքզինքը զոհեց, ինչպէս կ՚ընեն միայն մայրերը։

մը համաչխարհային փոխանակութեանց, բոլորովին տարբեր՝ այն քաղաքական վարկերէն զորս Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա տրամադրեցին հարաւային - արեւելեան Եւրոպայի մէջ»: Պերլինի սեղանաւորական օրհանը կը գրէ թէ Գերմանիոյ գործակցութիւնը հարաւային - արեւելեան Եւրոպայի տնտեսութեանց հետ՝ հիմնուած է բնական եւ աշխարհագրական օրէնքներու, ինչպէս եւ այդ շրջաններու կազմական տուեալներուն վրայ»:

Գերմանիա ծրագրած է արհեստական ճգնաժամ մը հաստատել Քէօթահեայի շրջանին մէջ, ինչպէս եւ հիւսուածեղէնի, ինքնաշարժի եւ ալիւմինիումի գործարանները՝ դանազան վայրերու մէջ:

ԻՏԱԼԻԱ ՀԱԻԱՆԵՑԱԻ ՍՊԱՆԻԱՑԷՆ ՔԱՇԵԼ 10,000 ԿԱՄԱՒՈՐՆԵՐ

Անգլիա աւելին կը պահանջէ

Իբրեւ արդիւնք Հռոմի բրիտանական դեսպանին տեսակցութեանց, իտալական կառավարութիւնը հաւանեցաւ Սպանիայէն եւս կանչել այն կամաւորները որոնք Զօր. Ֆրանքոյի դրօշին տակ ծառայած են առնուազն 18 ամիս: Այս համաձայնութիւնը կը հարթէ ճամբան, հետզհետէ լուծելու համար սպանիական կնճիռը:

Լուրը հաղորդուեցաւ պաշտօնական զեկոյցով մը որ կ'ըսէ թէ Զօր. Ֆրանքօ յանձն առած է ճամբել այդ կարգի կամաւորները, «նպաստելու համար միջազգային վստահութեան վերահաստատման»:

Իրազեկներու կարծիքով, տասը հազար Իտալացիներ ենթակայ են այս որոշման: Ամբողջ Իտալացիներու թիւը կը հաշուէն 40,000 (Զօր. Ֆրանքոյի բանակին մէջ):

Լոնտոնի մէջ գոհունակութեամբ արձանագրուեցաւ այս համաձայնութիւնը, բայց անգլիական կառավարութիւնը աւելի մեծ դիջումներու կը սպասէ, իրրեւ դին անգլ-իտալական պայմանագրին գործադրութեան եւ Եթովպիոյ դրաման ճանաչումին: Լաւատեղեակ աղբիւրներու համաձայն, Անգլիա կը պահանջէ.—1. Եթէ կանչել 30-40,000 իտալացի կամաւորները: 2. Եթէ կանչել բաւական թիւով իտալացի օդաչուներ, մասնագէտներ, մարզիչներ եւ հրետաձիգներ: 3. Եթէ քաշել որոշ քանակութեամբ զէնք եւ ռազմանիւթ, մասնաւորապէս թնդանօթներ, հրասայլեր, օդանաւեր, կամ Զօր. Ֆրանքոյի վոխ արուած սուզանաւեր եւ թորպիլանաւեր: Ուրիշ լուրի մը համաձայն, Անգլիա կը պահանջէ նաեւ որ Իտալիա նոր հաւաստիքներ տայ, պարպելու համար Մայորքայի օդակայանը:

Փարիզի եւ Լոնտոնի ձախակողմեան շրջանակներու մէջ մտահոգութեամբ կը հետեւին այս բանակցութեանց, դիտել տալով թէ չորս մեծերը կը փորձեն Միւնիխի համաձայնութիւն մըն ալ սարքել Սպանիոյ դիմաց եւ խեղդել զայն:

ԲՈՒՌՆՑՈՅՑԵՐ ՎԻԵՆՆԱՅԻ ՕՐՔԵՊ ՍԿՈՊՈՍԻՆ ԴԷՄ

«Մեզի յանձնեցէք այդ սեւ չուները»

Շաբաթ գիշեր հիթլէրական երիտասարդները բուռն ցոյցեր կատարեցին Վիէննայի արքեպիսկոպոսին, կարտինալ Իննիցէրի դէմ, խորտակելով անոր պալատին ապակիները: Այս ցոյցերուն պատրուակ ծառայած էին կարտինալին քարոզները: Ցուցարարները կը պոռային.

—« Մեզի յանձնեցէք այդ սեւ չուները: Կաոր կաոր պիտի ը-նենք զայն եւ բան պիտի չթողունք կեդրոնացման կայանը փոխադրելու համար »:

Ոտիքանութիւնն սկսան ժամը 8·30ին, երբ ցուցարարները արքեպիսկոպոսական պալատին առջեւ հասնելով, սանդուղ մը բարձացուցին, խորտակելով վերի յարկին ապակիները: Յետոյ սկսան մագլցիլ դէպի պալատը: Քանի մը վայրկեանէն ամբոխը պալատէն ներս մտած էր եւ ջարդուփշուր կ'ընէր ամէն բան: Երկու հազարի հասած էր ցուցարարներուն թիւը: Ամբոխը միշտ կ'ոռնար.

—Վա՛ր ըերէք Իննիցէրը: Մահ բոլոր քահանաներուն: Սպանեցէք սեւ չունը »:

Ներս մտնողները քանդեցին եղեկտրական կազմածները եւ պատերուն պատկերները քաշել հանելով փողոց նետեցին: Այսպէս դուրս նետուած առարկաները յետոյ կրակի տրուեցան, խարոյկ մը կազմելով պալատին եւ մայր եկեղեցիին միջեւ: Ոստիկանութիւնը հասնելով, ժամը 9·30ին յաջողեցաւ վերահաստատել բարեկարգութիւնը, իսկ հրշէջները մարեցին կրակը:

Հակառակ բոլոր հետապնդումներուն, կարելի չեղաւ գտնել կարտինալը:

Պաշտօնական զեկոյցը հաղորդելով այս ցաւալի դէպքը, կ'ըսէ թէ 15-20 տարեկան երիտասարդներ էին ցուցարարները, թէ կարտինալը չէ վիրաւորուած եւ թէ խիստ պատիժներ պիտի տնօրինուին խռովարարներուն դէմ: Գլխաւոր պատասխանատուները պիտի դատուին եւ իրենց պատիժը կրելէ վերջ մէկ տարի պիտի արգելափակուին կեդրոնացման կայաններու մէջ:

Ոստիկանութիւնը հակողութեան տակ առած է կարտինալը եւ անոր պաշտօնատունը: Հակառակ այս տնօրինութեանց, նոր ցոյցեր կատարուեցան կիրակի դիշեր: Քանի մը հարիւր հիթլէրական երիտասարդներ հաւաքուելով Ս. Մտեփաննոս եկեղեցիին չուրջը, սկսան պոռալ.

—« Օճ անդր յառա՛ջ, ընկերներ· կախեցէ՛ք Հրեաները: Զարկէ՛ք սա սեւ բահանաները »:

Պահեստիի ընբռնուելու կրկին սպառնալի...

Կացութիւնը երթալով կը ծանրանայ Պահեստիի մէջ: Անգլիոյ դաղթային նախարարը որոշեց նոր դիմումներ ղրկել, քանի հազարի բարձրացնելով բանակին թիւը:

Երուսադէմէն կը հեռագրեն թէ նոր ահարեկումներ կատարուեցան չարաթ եւ կիրակի: Բազմաթիւ զոհեր կան, երկու կողմէն ալ: «Տէյլի Մէյլ» կը գրէ թէ արաբ յեղափոխականները որոշած են մէկ անգլիացի մանուկ առեւանգել, ամէն անգամ որ Արաբ մը կախուի: Անգլիացի ընտանիքները խոր մտահոգութեան մատնուած են, այս սպառնալիքին հետեւանքով:

Իտալիոյ խորհրդարանը ջնջուեցաւ

Ֆաշական գերագոյն խորհուրդը հոկտեմբեր 8ի նիստին մէջ որոշեց լուծել խորհրդարանը, որ գոյութիւն ունէր 90 տարիէ ի վեր, եւ անոր տեղ հաստատել Ֆաշական կազմակերպութեանց եւ արհեստակցութեանց խորհրդարանը, որ չատոնց ծրագրուած էր:

Հ. Յ. Դ.

Փարիզ

ՓԱՐԻԶԻ «Եգիպտացւոյ» կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր շրջանի բոլոր ընկերները 12 հոկտ., շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, 6 ավենիւ տ'Իէնայի սրճարանին վերնայարկը, օրակարգ՝ շրջ. ժողովի պատգամաւորի ընտրութիւն:

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ «Զուարեան» կոմիտէն ընդհ. ժողովները հրաւիրէ «Վաճառ», «Մուրատ», «Գիշօ», «Սեթէմճեան» եւ «Արդուճեան» խումբերու բոլոր քնկերները 13 հոկտ., հինգշաբթի երեկոյ ժամը 8.30ին իր ակումբին մէջ: Օրակարգ՝ պատգամաւորի ընտրութիւն:

ՊԱՆԵԷՕ-ՔՈՒԼՈՒՆի «Արծիւ» ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները, 12 հոկտ., շորեքշաբթի երեկոյ ժամը 9ին, «Կորիւն» ակումբին մէջ: Օրակարգ՝ պատգամաւորի ընտրութիւն:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԿՐ ՏՕՆՈՒԻ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ.— 29 ՀՈԿՏ. ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ ԺԱՄԸ 8.30ԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՌԱՒՕՏ:

Դահլիճ

ԲԱՑԱԾ ԼՈՒԲԱՆի դասախօսութիւնը 13 հոկտ., հինգշաբթի եւ երեկոյ Café Cadet-ի մէջ, մէթրօ Cadet: կը խօսի Պ. Վ. ԻՇԽԱՆԵԱՆ, Նիւթ՝ «ԱԶԳ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ»:

Ա. Զօպանեանի յոբելեան Լիոնի մէջ

Տեղի կ'ունենայ 19 Նոյ., Շաբաթ երեկոյեան ժամը 8ին, Լիոնի Գ. Թաղապետարանի սրահին մէջ: Տեղական կազմակերպութիւններէն եւ միութիւններէն կը խնդրուի նկատի ունենալ սոյն թուականը:

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ:

էր:

Նոր խորհրդարանին անդամները իրենց աթոռները պիտի գրաւեն համաձայն իրենց վարած պաշտօններուն՝ փաշական խորհուրդին կամ արհեստակցութեանց մէջ: Այս պաշտօնեաները կը նշանակուին կամ ուղղակի Մուսոլինիի կողմէ եւ կամ կը հաստատուին արքայական հրովարտակով, իր խոկ յանձնարարութեամբ: Օրէնսդրական իշխանութիւնը պիտի կեդրոնանայ նոր խորհրդարանին կողմէ նշանակուած յանձնաժողովներու մէջ: Ընդհանուր նիստերու մէջ պիտի քննուին միայն սահմանադրական արտամադրութիւնները, ընդհանուր հարցեր եւ հաշիւները: Մուսոլինի իրեն վերապահած է նաեւ արքայական հրամանագրով վճռել բացառիկ միջոցներ, պատերազմի պարագային:

Ուրիշ մանրամասնութիւններ յաջորդով:

Հունգարիոյ ապ ատպան իրենց բաժինը

Չեխոսլովաքիոյ եւ Հունգարիոյ միջեւ կատարուած բանակցութիւնները, որոնք սկսած էին կիրակի օր, անմիջապէս յանգեցան համաձայնութեան մը: Չեխոսլովաքիա յանձն առաւ պարպել երկու սահմանամերձ քաղաքներ, մէկը՝ 24 ժամէն, միւսը՝ 36 ժամէն: Բանակցութիւնները չատ բարեկամական էին եւ Չեխերը հացկերոյթ մը սարքեցին: Այս առթիւ արձակուեցան նաեւ հունգար բանտարկեալները:

Հունգարները աչք ունին նաեւ Սլովաքիոյ կարգ մը մասերուն վրայ, որպէսզի սահմանակից ըլլան Լեհաստանի: Բայց Գերմանիա չատ ալ արամադիր չէ քաջալերելու այս չարժումը:

*** Սլովաքիոյ նոր կառավարութիւնը օրէնքէ դուրս հռչակեց համայնավար կուսակցութիւնը:

*** Լեհաստանի արտաքին նախարարը այցելեց Չեխոսլովաքիայէն եւս առնուած շրջանը, Թէշէն:

*** Չեխերը որոշեցին բանակցիլ Գերմանիոյ հետ, որոնք դուռ չեխական հողեր ալ գրաւած են, հիմնուելով 1910ի քարտէսին վրայ:

ՋԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՍԸ ՏՂՈՒՎ

ԼԻՈՆ, 8 հոկտեմբեր (Յառաջ).— Անոնք որ այս տարեշրջանին ինքնութեան թուղթերը նորոգած ժամանակ տուրք չէին վճարած, այժմ ոստիկանութենէն կը կանչուին, վճարելու համար: Ինքնութեան թուղթի տուրքէն ազատ են միայն անոնք որ լման զինուորութիւն, կամ 15 օրուան մարզանքի շրջան մը կատարած են:

Պ. ԱՐՇԱԿ ՋՕՊԱՆԵԱՆ, որ Պատուոյ լեգէոնի ասպետ էր, բարձրացաւ նոյն չքանչանի սպայութեան աստիճանին, իր վարձ իր զրական ծառայութենանց: Պատուանշան ստացաւ նաեւ Պ. Մարիս Շերվալիէ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏ սկսաւ երէկ, երկուշաբթի: Աւելի քան 40,000 աշակերտներ լեցուեցան Փարիզի հին եւ նոր լիսէները: Հակառակ վերջին տարիներու չինութեանց, մերժուեցան 4000 թեկնածուներ: Նախակրթարաններու մէջ կը հաշուէն 270,000 աշակերտներ, 11,000 դասարաններով: Կարգ մը վայրերու մէջ չինուած են գեղեցիկ դպրոցներ, օգտուն եւ ծաղկազարդ:

ԵԳԻՊՏՈՍԻ նախորդ վարչապետը, Նահաս փաշա, ծանրապէս վիրաւորուեցաւ, Ազեքսանդրիայէն վերադարձած ատեն, իրրեւ հետեւանք դանազան խռովութեանց: Վիրաւորներուն թիւը հարիւրի կը հասնի: Վիրաւորուեցան նաեւ ոստիկանութեան հրամանատարը, Բրնէլ փաշա (անգլիացի) եւ օդնականը:

ՄԱՐՍԷՅԼԷՆ կը գրեն թէ 1800ի կը հասնի թիւը այն քաղաքցիներուն որոնք յաջողած են ազատիլ գինուորութենէ, շնորհիւ դանազան խարդախութեանց: Կազմուած են 200 թղթածրարներ:

ԱՆԳԼԻՈՑ ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ Քանատա պիտի այցելեն յառաջիկայ տարի: Հաւանական է որ հանդիպին նաեւ Մ. Նահանգները:

ՃԱՓՈՆ Պերլինի դեսպան նշանակեց Զօր. Հիրոչի Օշիման, որ հեղինակն է հակաբոլշեւիկեան ուխտին եւ մտերիմը Գերմանիոյ արտաքին նախարարին:

ԳԵՐՄԱՆԻՈՑ ՀՐԵԱՆԵՐԸ այսուհետեւ անցագիր պիտի չունենան, այլ անձնագիր (ինքնութեան թուղթ), իրենց լուսանկարով եւ մատնադրոշմով: Նոր հրամանագիր մը անվաւեր կը հռչակէ Հրեաներու անցագիրները, որոնք պէտք է ձեռնհաս իշխանութեան յանձնուին երկու չաբաթէն: Այն Հրեաները որ գաղթել կ'ուզեն, նոր անցագիրներ պիտի ստանան, միմիայն արտաքսմանի համար:

Թէյատեղա

Հ. ԿԱՊՈՑՏ ԽՄԶԻ ԱԼՑՈՒՐՎԻԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

16 հոկտ., կիրակի ժամը 3ին, Հայ Ակումբին մէջ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՅԱՆՈՒՆ Շ. ՎԱՐԶՈՒԹԵԱՆ ՏԻԿ. Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Սահերու Միութիւնը կը բեմադրէ «ԾԱՌԱՑ ԹՈՐՈՍ» (գաւեշտ):

Գեղարուեստական բաժինին կը նուագէ Թատիսա ԳԱՐԵԳԻՆ

Մուտք 3 ֆրանք, փոքրերու 2 ֆրանք

ՍԱՄՈՒԻԼԻ ՏԱԿ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՖՐ. Կ. ԽԱՉԻ 1939 ՏԱՐՈՒԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

ՁՈՒԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Տեղեկութիւններ Հայոց պատմութենէն, աշխարհագրութենէն եւ վիճակագրութիւն արտասահմանի Հայոց, եւ Հայաստանի, հայ եւ մի ջազգային կ. Խաչերու մասին: Գատմական ամփոփ ակնարկներ, գրական, խոհարարական եւայլն բաժիններով, երեսունէ աւելի նկարներ՝ կ. Խաչի գործոցները, գամանատուններ եւ այլն, տեսարաններ Հայաստանէն: Խոբէն Ա. եպս. Տէր-Յովհաննէս, Մ. Վարուժան, Սիամանթօ, Դուրեան, Մեծարենց, Բակունց, Մահարի. Յ. Զորինեան եւայլն: Գեղարուեստական կողքով, 112 էջ: Օրացոյցը գործածելի վերջ կարելի է պահել իբրեւ գիրք, տպագրութիւնը յարմարցած ըլլալով այդ նպատակին:

Եւրոպայի ամենահին մասնաւոր գրատունը

ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ

Librairie H. SAMUEL

51, Rue Monsieur-le Prince, Paris (6e)

Հեռաձայն՝ DANTON 88 - 65 Մէթրօ՝ ODÉON

Chèque-postale: Paris 1287—35

Հայերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ այլ լեզուներով գիրքեր:

ՀԱՑԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԱՐԻԵՒԼԱԳԻՏՈՒԹԻՒՆ:

Ապսպրանքները՝ կանխիկ: Ապառիկ ապսպրանքները նկատի չեն առնուիր:

ԿԱՐԱՊԵՏ Յ. ԷՄՄԷՐԵԱՆ

Maison E. CHARLES հիմնուած 1869

29 rue Mathis, Métro Crimée

Autobus: AJ, AV, CP, 52, 50/71 Tel. Botzaris 12-60

Կը ծախենք գոհարեղէններ, ամէն տեսակ ժամացոյցներ մատանիներ եւլն: Որոգութիւն ժամացոյցներու եւ գոհարեղէններու: Կը գնենք՝ ըլլալին, ոսկի, արծաթ եւ գոհարեղէններ՝ նպաստաւոր գիներով:

Մի մտահոգուիք որ վստահելի ձեռքէ գնուած ոսկեղէն եւ գոհարեղէնները անփոփոխ կը պահեն իրենց արժէքը:

Դատառներէն եղած ապսպրանքները կը կատարուին արագ եւ խղճմտօրէն:

ՈՒՆ ՁՈՒԶԸ ԵՒ ԱԿՆՈՑԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԵՑԷՔ

Notre-Dame de Lorette մէթրոյին մօտիկ,

8 Rue Notre-Deme de Lorette-ի ակնոցավաճառի խանութը

Աչքի ճրի քննութիւն հայ եւ ֆրանսացի մասնագէտներու կողմէ:

Շաբաթ օրերը հայրենակիցներու համար ԿԱՐԵՒՈՐ ԶԵՂՉ

ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆի ԵՒ ՈՒՏԵՍՏԵՂԷՆի ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՄԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք ֆրանսական, անգլիական եւ չեխոսլովաք կերպասներու Փաթաքղները կրնան զրկել իրենց գնած ապրանքները, ուստէրվուտ եւ Ռոյալ զրի մեքենաներ: Կը գնենք ու կը ծախենք օտար դրամներ: Կը սահմանենք ապրանքներու emballago եւ ապահովագրութիւն: Փոխադրութիւն ամէն տեսակ ապրանքներու եւ պահեստաւորութիւն:

Դիմել՝ **American Lloyd, Paris (9). 7 rue Auber**

Tél. Opéra 67-77



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խառնուած քացախ եւ անիսոնով պատրաստուած ճշմարիտ օրիէնթալ *ՐԱՔԸ ՏԻՒԶԻ*, զգուշացէք արուեստական օրինակներէ: Մեր սուտմոքաք կ'ոչընչացնեն գիշերները ջուր կը խմէք եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք *ՐԱՔԸ ՏԻՒԶԻ* որուն անուշահոտ եւ ախորժաբեր կազդուրիչ եւ ախտահան ազդեցութիւնը ճաշերը ըլլալէ առաջ է:

Dalakupedian 8 Rue Saffren Dépôt: 7 Rue de la Paix, Marseille Tél. Dragon 70-80

ԿԱՐԵՒՈՐ

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ստիպողաբար Պ. Սվաճեանէ (նախապէս Maison Seva T. S. F. 212 Fbg. St. Martin) *որ իր նոր հասցէն տեղեկացնէ թեմիս վարչութեան:*

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Damesme — PARIS (13)

Հ. Բ. Ը. միութեան Հայերէնի դասընթացքներու շարքը կը սկսի 15 հոկտ., հինգշաբթի առաւօտ ժամը 8.30ին, 149 Bis Avenue d'Argenteuil, Asnières:

Այն ծնողքները որ կը փափաքին իրենց պզտիկները արձանագրել այս քարեհաճին դիմել հինգշաբթի օրերը ժամը 9—12, 149 bis, Avenue d'Argenteuil, ընկերվարականներու սրահը:

ՀԱՅՐԱՆԴ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 76
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ —

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ	
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանկ	75 ֆրանկ	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանկ	140 ֆրանկ	
Ուրիշ երկիրներ	225 ֆրանկ	110 ֆրանկ	

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
12
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
12 Octobre
1938

ՅԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3858

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՈՒՐԻՇ ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐ

Ըսինք թէ մոլեգին վինաբշաւի մը հետ գուգընթաց կ'երթան ընկերային խլրտումները, իւղ լեցնելով կրակին վրայ :

Երկու պիկտատուրաները, իտալականն ու գերմանականը, միայն քաղաքական տենչեր չեն սնուցաներ, այլեւ ընկերային :

Այսպէս, ամէն անգամ որ ճառ մը խօսի, Հիթլէր միշտ կը մատնանշէ «հասարակաց թշնամին»,— Հրեան եւ համայնավարութիւնը, երբեւ մէնեակ չարիքին երկու երեսները: Վերջին ճառին մէջ ալ չմոռցաւ այս պարագան, երբեւ դաւադիր հռչակելով «մի-ջազգային Հրեան» :

Միւսը, Մուսոլինի, աւելի զգոյշ է, ձեւականօրէն: Իսկ իրականին մէջ նոյն քաղաքականութիւնն է որ կը հետապնդէ, ինչպէս հռոմաեց ընդհանրապէս ցեղային, բայց մանաւորապէս հրէական նոր օրէնքով :

Տակաւին քանի մը ամիս առաջ, Հռոմի մէջ միշտ կը հերքէին որ եւ է հակահրէական տրամադրութիւն: Իսկ նոր օրէնքէն առաջ, հրամանագրութեան չարք մը անօրինութիւններ, որոնք սահման-ուած են ասպարէզէն քշելու Հրեաները :

Կարելի էր ըսել թէ իտալական անօրինութիւնը աւելի պէր-ճախօս է, քանի որ հազիւ 60 -- 70,000 Հրեաներ կը գտնուին Իտալիոյ մէջ, մինչ Գերմանիա մինչեւ 600,000 կը հաշուէր :

Յամոռանք ուրիշ յատկանշական պարագայ մը եւս, --- 1918էն վերջ Իտալիա հաստատուած Հրեաները պարտաւոր են հեռանալ մինչեւ 1939 մարտ, նոյնիսկ եթէ հպատակ ըլլան: Բացառութիւնները չատ քիչ բան կրնան փրկել :

Արդ, միայն արիականութեան կամ ցեղային պաշտպանութեան հոգը չէ որ տուն կուտայ այս վարչական անօրինութեանց եւ բացառիկ օրէնքներուն :

Ինչպէս Գերմանիոյ, նոյնպէս Իտալիոյ մէջ Հրեաները կը համարուին ընկերային չարիք: Թշնամի՝ հաստատուած կարգուսարքին: Դաւադիր եւ խռովայոյզ տարր: Մէկ խօսքով՝ չար ոգին ընկերային խաղաղութեան, իբրեւ հակագործութեամբ:

Այս ուեւտարանը քարոզած ատեն, Հիթլէր բառերը չի ծամ-ծմեր, մինչեւ իսկ «մանրէ» կամ «ժանտախտ» կոչելով հրէական-ութիւնն ու համայնավարութիւնը: Իսկ միտքը եթէ նոյն բառերը չի գործածեր, գործքով կ'ապացուցանէ թէ իր համոզումն ալ տարբեր չէ :

Այս խաչակրութիւնը բնականաբար հակազդեցութիւն յառաջ կը բերէ այն երկիրներուն մէջ ուր ազատ են մամուլը, ինչպէս հրապարակային ուրիշ արտայայտութիւններ :

Եւ ահաւասիկ նոր խմորումներ ու խլրտումներ, յանուն քաղաքակրթութեան, ընկերային յեղափոխութեան կամ խաղաղութեան :

Մանաւորապէս Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ, ուր ամէն կարծիք ազատ է, ճակատելու համար ֆաշականութեան եւ հիթլէրականութեան դէմ :

Այս չարժումին մէջ բնականաբար յառաջապահ դիրքերը կը գրաւեն բոլշեւիկները, որոնց համար նոր մարտակոչ մը գտած է Միւնիխի համաձայնութիւնը :

Կիրակի օր, Փարիզի համայնավար պաշտօնաթերթը չորրորդ էջը ամբողջովին յատկացուցած էր չունդալից յայտարարութեան մը,— « Ոճիր մը գործուեցաւ խաղաղութեան դէմ ».— Օգնել հանրապետական Սպանիոյ՝ կը նշանակէ պաշտպանել խաղաղութիւնը » :

Կոչին տակ առորագրած են Ֆրանսայի, Անգլիոյ, Սպանիոյ, Չեխոսլովաքիոյ, Մ. Նահանգներու, Գերմանիոյ, Իտալիոյ, Պելժիոյ, Զուիցերիոյ, Շուէտի, Քանատայի, Հոլանտայի համայնավար կուսակցութեանց ներկայացուցիչները, անշուշտ համաձայն Մոսկուայէն արձակուած ազդանշանին :

Քանի մը հատուածներ այդ կոչէն, գաղափար կազմելու համար պայքարին սաստկութեան մասին.

— « խաղաղութեան դէմ ոճիր մը գործուեցաւ անցեալ սեպտեմբեր 30ին, Միւնիխի մէջ, ուր Պ. Պ. Չէյմպրլէն եւ Տալատիէ Չեխոսլովաքիոյ անկախութիւնը եւ ժողովուրդներու ապահովութեան դատը զոհեցին ի փրկութիւն միջազգային փաշականութեան:

... Պ. Չէյմպրլէնի դաւաճանութիւնը ուղղուած է ոչ միայն Չեխոսլովաքիոյ դէմ որ յանձնուեցաւ Պ. Հիթլէրի, այլեւ ուղղուած է Ֆրանսայի դէմ, զոր միջազգային փաշականութիւնը կ'ուզէ մեկուսացնել, յետոյ զգետնելու համար: Ուղղուած է հանրապետական Սպանիոյ դէմ, զոր կ'ուզեն Չեխոսլովաքիոյ օրինակացնել: Ուղղուած է փոքր երկիրներու դէմ զոր գիշատիչ կառավարութիւններ կ'ուզեն ստրկացնել: Ուղղուած է ժողովրդապատութեան եւ ընկերային նուաճումներու դէմ, զոր կ'ուզեն ոչնչացնել ինչպէս Անգլիոյ, նոյնպէս Ֆրանսայի մէջ եւ այլուր: Ուղղուած է Խ. Միութեան դէմ, զոր բոլոր երկիրներու աշխատաւորները եւ վտանգուած փոքր պետութիւնները կը նկատեն միջնաբերդը աշխարհի խաղաղութեան » :

Դժուար չէ երեւակայել թէ մինչեւ ո՛ւր կրնայ տանիլ այս մարտակոչը, իր այնքան կրակոտ բառերով եւ սպառնալիքներով:

Ցայտարարութիւնը պարզապէս պատերազմ կը հռչակէ «Միեղիի դաւաճանութեան եւ խայտառակութեան դէմ», ամբողջ աշխարհի մէջ. ճիշդ այն պահուն երբ միլիոնաւոր բազմութիւններ կը կարծեն թէ խաղաղութիւնը փրկուեցաւ, եւ կ'օրհնեն չորս «դաւաճանները »...

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Արաբները կը սպառնան վերջագիր դրկել Անգլիոյ

Անցեալ շաբթուան վերջերը Պաղեստինի շուրջ խորհրդակցութիւններ տեղի ունեցան Անգլիոյ գաղթային նախարար Մաքտոնըլտի, Պաղեստինի մարզպան Սըր Հէրոլտ Մաք Մայքըլի եւ սպարակոյտ պետ գերկոմս Կորթի միջեւ: Այս խորհրդակցութեան մէջ էր, որ որոշուեցաւ զօրացնել անգլիական բանակը Պաղեստինի մէջ, զինուորական նոր առաքումներով, ինչպէս նաեւ Պաղեստինեան ջուրերու մէջ գործող մարտանաւերու թիւը հասցնելով 17ի :

Երբ Սըր Մաք Մայքըլ վերադառնայ Պաղեստին, պիտի յանձնայ արմատախիլ ընել ահաբեկչութիւնն ու խառնակութիւնները եւ վերահաստատել կարգ-կանոնը :

Մի քանի ամսուան խորհրդակցութիւններ կը կատարուին Պաղեստինի ապագայի մասին: Գաղթային նախարարը դարձեալ պիտի չօշափէ Արաբներու եւ ազգեցիկ Հրեաներու կարծիքները: Պիտի տեսակցի նաեւ Իրաքի արտաքին նախարարին եւ սիոնականներու պետ Տոքթ. Վայզմանի հետ:

Ընդհանուր կարծիքը այն է, թէ Պաղեստինի անջատման ծրագիրը մէկդի պիտի դնեն եւ իվերջոյ կանգ պիտի առնեն միասնական պաղեստինեան վարչութեան մը ծրագրին վրայ, ուր բոլոր քաղաքացիները պիտի վայելեն հաւասար իրաւունքներ :

*** Բուռն վէճեր ծագեցան Գահիրէի Իսլամական Համաշխարհային Որդրպաժողովի պատգամաւորներուն մէջեւ :

Սուրիոյ ղեկավար Ֆարէս Խուրի պէյ ներկայացուց առաջարկներ, որոնք կը պահանջեն 1· Դադրեցնել հրէական ներգաղթը դէպի Պաղեստին: 2· Մէկդի դնել հրէական տուն կազմելու ծրագիրը: 3· Պաղեստինի համար ստեղծել ահմանադրական կառավարութիւն մը, որուն մասնակցին Արաբներ ու Հրեաներ համեմատական քուէարկութեամբ եւ 4· Կնքել դաշնագիր մը նոր պետութեան ու Անգլիոյ ու Ֆրանսայի միջեւ, համանման անգլեւ իրաքեան դաշնագրին :

Այս առաջարկները, որոնց կ'ըսուի թէ համամիտ է մեծ մասը, զօրաւոր ընդդիմութեան բախեցան Իրաքի եւ Պաղեստինի պատգամաւորներու կողմէ :

Ուրիշ առաջարկ մը եւս ներկայացուեցաւ, որ կը տրամադրէ Պաղեստինը կցել Սուրիոյ, բայց այս ալ ընդդիմութեան բախեցաւ:

*** Լոնտոնի թերթերը կը հաստատեն թէ նոր ծրագրի մը համաձայն, Պաղեստինը պիտի վերածուի միացեալ պետութեան մը, բրիտանական հոգատարութեան տակ, ինքնավարութիւն տալով Արաբներուն եւ Հրեաներուն՝ իրենց բնակած քաղաքներուն եւ գիւղերուն մէջ: Այս մասին մանրամասն զեկուցում մը պիտի տայ գաղթային նախարարը, երբ խորհրդարանը վերաբացուի նոյեմբերին : Ամերիկայի հրէական կազմակերպութիւնները կը շարունակեն հետապիրներ տեղացնել Անգլիա, բողոքելով այս ծրագրին դէմ :

Վերջին մարզահամարի մը համաձայն, այժմ 900,000 Արաբներ եւ 400,000 Հրեաներ կան Պաղեստինի մէջ: Արաբները կը պահանջեն որ այս համեմատութիւնը --- մէկի դէմ երկու--- չխանգարուի Հրեաներու ներգաղթով՝ Գերմանիայէն, Իտալիայէն, Լեհաստանէն կամ ուրիշ երկիրներէ :

Անգլիա տրամադիր է կարդ մը զիջումներ չնորհելու Արաբներուն, բայց ոչ զէնքի սպառնալիքով: Ատոր համար ալ պատերազմական նախարարութիւնը կը չարունակէ նոր զինուորներ դրկել, հեծելազօրքով եւ թնդանօթներով: Երբ այս նոր ուժերը Պաղեստին հասնին եղիպտոսէն եւ Մալթայէն, անգլիական ուժը պիտի հասնի 14,000ի, որուն վրայ պէտք է աւելցնել նաեւ 6000 մասնաւոր ոստիկաններ: Անգլիացիները կը յուսան արաբական ըմբոստութիւնը սանձել այս 20,000նոց ուժով: Կը յուսացուի որ զինադադար մը կնքուի մօտերս, երբ Լոնտոն հասնի արաբական պատուիրակութիւն մը՝ բաղկացած՝ երեւելիներէ: Այս պատուիրակութեան մէջ պիտի գտնուի ապստամբութեան զեկավարին՝ մեծ մուֆթիին փոխանորդը: Եթէ նորէն համաձայնութիւն չգոյանայ, Անգլիա պիտի պահանջէ Ֆրանսայէն որ ձերբակալէ եւ Սուրիայէն արտաքսէ մեծ մուֆթիին :

Արաբները կը սպառնան Հրեաներուն

Պաղեստինի Արաբներու Պաշտպանութեան Կոմիտէն հեռագիր մը ուղղեց Սիոնականներու վարիչին՝ Վայզմանի: Հեռագիրը, որ առեսակ մը վերջնագիր է, կ'ազդարարէ .

— «Ձեր բռնած ընթացքը, պատմութեան ամէնէն ծանր ադէտները պիտի բերէ ձեր եւ Արեւելքի բոլոր Հրեաներու գլխուն: *Արաբները որ եւ է գնով թոյլ պիտի չտան որ դուք արաբական Պաղեստինի մէջ հաստատուիք եւ մեծամասնութիւն կազմէք:* Դուք եւ ամբողջ աշխարհի մէջ տարածուած ձեր կրօնակիցները պարտաւոր էք փրկել կեանքը ձեր այն կրօնակիցներուն որ արդէն Պաղեստին եւ ուրիշ արաբական կամ արեւելեան երկիրներ կը բնակին: Գոհացէք պահելով ձեր այն հայրենակիցները որ արդէն Պաղեստին կը գտնուին: Թող Արաբները իրենց երկրին մէջ ձեզ հանդիպ վարուին այնպէս ինչպէս կը վարուէր մեծն Իսմէր Պաղեստինի Արաբներուն հետ, որովհետեւ եթէ Մեծն Բրիտանիա

(Յուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱՆՓՈՓՈԽԵԼԻՆ

Տեղական թերթ մը կ'իմանայ թէ Բարեգործականը տարեկան ընդհ· ժողովը գումարած է հոկտ· 6ին, Փարիզ, Նուպարեան մատենադարանին մէջ :

Ներկայ եղեր են 19 ժողովականներ :

Այս վերջին տողը մեծ - մայրիկս ալ կը հասկնայ : Բայց յաջորդ մանրամասնութենէն շատ քան չհասկնալով, ըսյնուամենայնիւ կ'օրինակեմ .

— « *Տրուած բացատրութենէ հասկցայ, մասնակցող ժողովականները փոխանորդներու միջոցաւ կը ներկայացնէին 159 անձ, 293 ձայնով: Միութեան ներկայ կանոնները ժողովին մասնակցելու իրաւունք կուտան աւելի քան 1300 անձի, աւելի քան 1800 ձայնով* » :

Աւելի խորախորհուրդ յայտնութիւն մը :

Ժողովին ատենապետը, Պ· Տիգրան կամսարական, կը բացատրէ թէ ինչու չեն կրնար հիմնական փոփոխութիւններ կատարել .

— « *Հիմնական կանոնադրին մէջ հիմնական անյեղլի սկզբունքներ կան եւ 32 տարուան գործունէութեամբ նուիրագործուած աւանդութիւններ , զոր մեր հաւատոյ հանգանակը ըլլած ենք եւ զոր որ եւ է գնով թոյլ պիտի չտանք խախտել, առանց դժգոհելու մեր հաւատարմութեան երդումը* » :

Ուրիշ երկու ժողովականներ ալ հաստատելով թէ Միութեան դեկավարներուն մէջ *ոխքախնիւ* չկայ (գէթ՝ դիկտատուրա կամ դիկտատորութիւն), կը շեշտեն .

— « *Պէտք է զգուշութեամբ մօտենալ կանոնական փոփոխութիւններու խնդրին, որովհետեւ Հիմն· կանոնադրին յօդուածները մէկ մէկ դաշինքներ են նուիրատուներուն եւ Միութեան մէջեւ, առանձնապէս գոյացած պայմանագրութիւններէն զատ* » :

Ինչպէս կը տեսնէք, Բարեգործականի կանոնագիրը աւելի նուիրական է, տեւական եւ անձեռնմխելի, քան վերնագիրները, կամ ոչ-յարմարականը որ եւ է դաշինք :

Մե՛ղք որ Տոքթ· Պեհէշ չկրցաւ օգտուիլ մերոնց իմաստութենէն, հոգ մը պակաս կորսնցնելու համար :

Չար զուգադիպութեամբ մը, երբ այս ժողովին նկարագրութիւնը կը կարդայի, թղթաբերը յանձնեց ուրիշ ոամկավար թերթ մը, Ամերիկայի «*Պայքար*»ը, որ խմբագրական մը նուիրած է Բարեգործականի համագումարին :

Ոամկավար օրկանը վերջին վարչին կ'ենդրկ Բարեգործականի վարիչները, որոնք իրենց գիտցածէն չեն շեղիր , կ'արհամարհեն « համարատուութեան եւ օրէնսդրութեան սկզբունքը», խոշոր բար մը կը գլորէ .

— «*Կան ուրիշ երկու չատ ցայտուն կէտեր, որ նոյնիսկ հիմնական կանոնադրի հետ առնչութիւն չունին եւ չի կրնար ըսուիլ թէ «լուծում» սանձելու համար կանոնադրային դժուարութեան կը բախին* :

Առոնցմէ առաջինը Բարեգործականի վարչական մեքենային մեծաժախսութիւնն է չրջանակներուն մէջ եւ մանաւանդ կեդրոնին մէջ, որուն թոյլատրուած է ունենալ գործի պահանջէն աւելի թիւով պաշտօնէութիւն եւ ընել պերճանքի մօտեցող չոյլ ծախքեր :

Աւելի յայտնի այնքան ակնարկելի իրողութիւն է, որ ոչ ոք պէտք է փորձէ չքմեղացնել կամ բացատրել : Ամէնէն բարգաւաճ անհատական հիմնարկութիւն մը դժուար թէ կրնար այնքան անհոգ ըլլալ իր կեդրոնի վարչային մեքենայի ծախքերուն համար, որքան Բարեգործականը, որուն էոշումն իսկ կը պարտադրէ ունենալ ամէնէն համեստ եւ միայն գործի պահանջին համապատասխանող մեքենան ու ծախքերը » (22 սեպտ·) :

Ձախը կ'անցընէք, եղբա՛րք ամկավարք :

Մինչեւ հիմա դաշնակցական թերթերն էին որ ասանկ պատ, անհատ եւ սնվազա՛ր բաներ կը գրէին :

Իւղագի՞ծը պակսեցաւ, թէ հերոսացալ կ'ուզէք, «թշնամի» կոչուելով :

Վ.Ա.Հ.

Գերման նախարարը Թուրքիոյ մէջ

Էնկիւրիէն կը հեռագրեն *Տէյլի Թելէկրաֆի* (հոկտ· 10).—

Ամբողջ օտար դիւանագիտական չրջանակները զարմացան, իմանալով որ Գերմանիա 150 միլիոն մարքի (12,500,000 սթերլին) վարկ մը պիտի բանայ Թուրքիոյ :

Այս վարկը անսպասելի էր, որովհետեւ դեռ անցեալ մայիսին էր որ Անգլիա 16 միլիոն սթերլինի վոխատուութիւն մը ըրաւ Թուրքիոյ :

Այստեղ ուշադրութիւն գրաւեց այն-երոդութիւնը, որ գերման նախարար Հէր Ֆոնէք երկարատեւ տեսակցութիւն մը ունեցաւ անգլիական դեսպան Սըր Փըրսի Լօրէնի հետ :

Հէր Ֆոնէք իր մեկնումը դէպի Պուլկարիա յետաձգեց մինչեւ վաղը, որովհետեւ Տիկին Ֆոնէքի թեւը վնասուեցաւ արկածով մը, երբ էնկիւրիի տիպար ագարակը կ'այցելէր ձիաքարշ կառքով մը:

*** Էնկիւրիէն կը հեռագրեն թէ Թուրքիոյ անտեսական նախարարը ընդունած է Տոքթ· Ֆոնէքի հրաւէրը՝ Գերմանիա երթալու համար :

*** 150 *միլիոն մարքի փոխատուութիւնը զարմանք պատճառած ըլլալով, «Ճիմհուրիյէթ» լրագիրը, որ ընդհանրապէս զերմանասէր կը համարուի, կը բողոքէ ծուռ մեկնութեանց դէմ: Թուրք թերթը կ'ըսէ թէ գերմանական վարկը, ինչպէս նախապէս եղած անգլիական վարկը պարզապէս փոխադարձ վաճառութեան ապացոյցներ են չահակից երկիրներուն միջեւ եւ չունին որ եւ է քաղաքական հանդամանք: Տոքթ· Ֆոնէք ինք ալ հայկերոյթի մը պահուն հերքեց թէ Գերմանիա քաղաքական դիւտումներ կը սնուցանէ Թուրքիոյ հանդէպ եւ անհերթեթ հռչակեց այդպիսի ենթադրութիւնները :*

Աթաթիւրք նորին հիւանդ

Տէյլի Թելէկրաֆի մէկ աշխատակիցը կը գրէ (հոկտ· 19).—

Կ'իմանամ թէ Քէմալ Աթաթիւրքի առողջական վիճակը կը չարունակէ մտահոգութիւն պատճառել իր չրջապատին: Ժամանակ մը ի վեր, մանաւանդ անցեալ Ապրիլէն ասդին, երբ Փրանսացի մասնագէտ մը հրաւիրուեցաւ էնկիւրի, դարմանելու զայն, զրոյցներ յամառօրէն չրջան կ'ընեն, թէ Աթաթիւրք ծանրօրէն հիւանդ է, հակառակ պաշտօնական հերքումներու:

Տիրող ընդհանուր կարծիքը այն է, թէ Քէմալ Աթաթիւրքի մահէն եւս նախապահութեան պիտի կոչուի մարաջախտ Ճէվիդ Զագմաք, որ պիտի չարունակէ Թուրքիոյ արդի պետին քաղաքականութիւնը, մասնաւորաբար Մեծն Բրիտանիոյ հանդէպ բարեկամութիւնը :

ՉԼՅՈՒՔԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Հեղ. Բարբուսէ Ա. ՀԱՅԿԱԶՆԻ

Հայկազն մինչեւ իր մահուան տեղը ամէն տեղ ուրիշներէ աւելի ազնիւ ու պատուաւոր մարդ մը եղաւ։ Ինչպէս որ ամէն մարդ իր ընկերներուն մէջ ունի իր տեղը եւ իր դիրքը, նոյնպէս ալ Հայկազն իր ընկերներուն մէջ ունէր իր տեղը եւ իր դիրքը։ Ամէն ոք կը սիրէր զինք, կ՚ընդունէր զինք ուրախութեամբ, կը փնտռէր զինք ամէն տեղ։ Ամէն ոք կ՚ուզէր ունենալ զինք իր կողքին։ Ամէն ոք կ՚ուզէր խօսիլ անոր հետ, ինչ որ ալ ըլլար խօսակցութեան նիւթը։ Ամէն ոք կ՚ուզէր անոր կարծիքը իմանալ։ Ամէն ոք կ՚ուզէր անոր խորհուրդը հարցնել։ Ամէն ոք կ՚ուզէր անոր հետ ճաշել, անոր հետ ընթրել, անոր հետ զբօսնել։ Ամէն ոք կ՚ուզէր անոր հետ ծանօթանալ, անոր հետ բարեկամանալ։ Ամէն ոք կ՚ուզէր անոր հետ ընկերանալ։ Ամէն ոք կ՚ուզէր անոր հետ ամէն բան ընել։

Հայկազն ի՞նչ ունէր որ ամէն մարդ կը կպչէր անոր։ Ինչո՞ւ ամէն մարդ կը սիրէր զինք։ Ինչո՞ւ ամէն մարդ կ՚ուզէր անոր հետ ամէն բան ընել։ Ինչո՞ւ ամէն մարդ կ՚ուզէր անոր հետ ամէն տեղ երթալ։ Ինչո՞ւ ամէն մարդ կ՚ուզէր անոր հետ ամէն բան ընել։ Ինչո՞ւ ամէն մարդ կ՚ուզէր անոր հետ ամէն տեղ երթալ։

Հայկազն ունէր ամէն բան որ կրնայ մարդ մը սիրելի ընել։ Ունէր ազնիւ սիրտ մը, ունէր ազնիւ հոգի մը, ունէր ազնիւ միտք մը, ունէր ազնիւ ոգի մը, ունէր ազնիւ էութիւն մը, ունէր ազնիւ բնաւորութիւն մը, ունէր ազնիւ ներշնչում մը, ունէր ազնիւ ոգեշնչում մը, ունէր ազնիւ ներշնչում մը, ունէր ազնիւ ոգեշնչում մը

ԲԱՑԻՐ ԼԵԼԵՎ ԿԻ ՄԻ ՍԵՖՈՒՆ

ԱՊՐՈՒՄ

Ես ատոր կը հավատայի այդպես ալ, եթե ինքը չհամարձակեր ինձ ըսել։ Ես ատոր կը հավատայի, որովհետև ես ալ ինքս ալ նույն բանը կ՚ուզեի ընել։ Ես ալ կ՚ուզեի ինձ համար պահել այն ամենը, որ ինձ համար թանկագին է, որ ինձ համար սրբություն է։ Ես ալ կ՚ուզեի ինձ համար պահել այն ամենը, որ ինձ համար ուրիշներու հետ կիսելու չէ

պատերազմի դիմէ, ինքզինքը պաշտպանելու համար Պաղեստինի մէջ, պիտի չկրնայ ձեզ պաշտպանել Արեւելքի բոլոր արաբական երկիրներուն մէջ»։

*** Լոնտոնի մէջ կը կարծեն թէ Գահիրէի արաբական համագումարը վերջնագիր մըն ալ անգլիական կառավարութեան պիտի ուղղէ, պահանջելով դադրեցնել Հրեաներու ներգաղթը եւ սահմանադրական կառավարութիւն մը հաստատել, յարեւնման Իրաքի։ Համագումարը կը պահանջէ նաեւ ազատ արձակել բանտարկեալներն ու աքսորականները, եւ կը մերժէ Պաղեստինի բաժանման ծրագիրը, ինչպէս եւ Պալֆուրի յայտարարութիւնը ։

«Տէյլի Մէյլ»ի թղթակիցը, որ վերջերս Պաղեստին այցելած էր, կը գրէ թէ արաբ ժողովուրդը չատ լաւ կազմակերպուած է եւ կրնայ ի դերեւ հանել հոգւոյս ի բարւոք իշխանութեան ջանքերը։ Արաբ ղեկավարները իրենց կամքը սիրաբար կը պարտադրեն ամէն կեդրոնի մէջ։ Արաբները պետական դատարան չեն դիմեր, այլ կ'երթան ազգային դատարանները, որոնք հաստատուած են բլուրներու մէջ։ Անոնք ամուր կառչած են իրենց խէչալին եւ վճռած են ամէն վտանգ աչք առնել, զայն պաշտպանելու համար։ Ամբողջ արաբ ժողովուրդը կազմակերպուած է երկար դիմադրութեան մը համար ։

Պուլկարիոյ ապահաւեցը ապահովուեցաւ

Հոկտեմբեր 10ին, պատերազմական նախարարութիւն գացած ատեն, տարճանակով սպաննուեցաւ Պուլկարիոյ ընդհ. սպայակոյտին նախագահը, Զօր. Փէյչեւ։ Իր թիկնապահն ալ վիրաւորուեցաւ։ Ահաբեկիչը յետոյ անձնասպան եղաւ։

Թագաւորը իմանալով սպանութեան լուրը, վառնայէն մասնաւոր կառախումբ մը նստաւ, Սոֆիա վերադառնալու համար։

Մարզասպանը նախկին սպայ մըն է, Վասիլ Քիրով, որ երկու ձեռքը մէյ մէկ տարճանակ բռնած՝ ուղղակի պարպած էր զօրավարին եւ թիկնապահին վրայ։ Քիրով բանտարկուած էր վերջերս, եւ յետոյ ներման արժանացած։ Կը կարծուի թէ սպանութիւնը հետեւանք է անձնական վրէժխնդրութեան ։

*** Ուրիշ հեռագրի մը համաձայն, մարզասպանը մեռնելէ առաջ հարցաքննուած եւ խոստովանած է թէ ուզեց վրէժ լուծել, թշուառութեան մատնուած ըլլալով։ Կարգ մը ձերբակալութիւններ կատարուեցան ։

*** Զօր. Փէյչեւ 50 տարեկան էր։ Զինուորական կրթութիւնը ստացած էր Փեթերսպուրկի ակադեմիան, յետոյ Սոֆիայի զինուորական վարժարանին մէջ ։

Մարդասպան Հայը դատապարտուեցաւ

1937 Մայիս 27ին Ամերիկա ժ'իթալիի վրայ 30 տարեկան Հայ մը, Սողոմոն Ղազարեան սպաննած էր իր հարեւանը, Պաղտասար Պեհիկեան։ Նախ կռիւ մը տեղի ունեցած էր, որուն խառնուած էր նաեւ պատերազմի հաշմանդամ մը, Բարսեղեան։ Մարզասպանը դանակ մը խրած էր զոհին փորը, եւ Պեհիկեան մեռաւ հիւանդանոցին մէջ։

Այս առթիւ տեղական թերթերը կը գրեն թէ Սողոմոն խման եւ խաղամոլ մարդ մըն էր, որ գործազրկութեան նպաստ կը ստանար եւ վեց տարուան ընթացքին ստացած գումարը, 60,000 ֆր. մսխած էր կապելաներու մէջ, վոխանակ կնոջը եւ երկու զաւակներուն յատկացնելու։ Մինչդեռ տանն չարունակ դրամ կը պահանջէր Պեհիկեանէ, մանաւանդ որ խմացած էր թէ ան 100,000 ֆրանք չահած է ազգ. վիճակահանութենէն։ Պեհիկեան ձանձրանալով, այլեւս երես դարձուցած էր, եւ չարունակ կուիւ կը ծագէր երեք զրացիներուն միջեւ։ Դէպքին օրը Բարսեղեան ալ խառնուելով կուիւին, իր անցուդարձով զարկած էր Պեհիկեանի, իբրեւ թէ երկուքը իրարմէ բաժնելու համար ։

Եղեռնագործ Աճեանը առջի օր դատեց մարզասպանը, որուն թարգմանն էր Պ. Յանճեան։ Զոհին կնոջ եւ երեք զաւակներուն փաստաբանն էր հռչակաւոր իրաւագէտը, Մօրօ Ժիաֆէրի, որ հետեւեալ կերպով բացատրեց ոճիրին չարժառիթը ։

--- «Նախանձն էր որ պինեց մարզասպանին ձեռքը։ Պեհիկեան պարկեշտ եւ չամառ աշխատասէր մըն էր, եւ երջանիկ։ Կը գործերով իր ընտանիքին վրայ եւ 50·000 ֆրանք չահած ըլլալով ազգ. վիճակահանութենէն, համեստ բնակարան մը չինած էր քաղաքէն դուրս։ Իսկ Սողոմոն Ղազարեան ծոյլ եւ խաղամոլ մէկն ըլլալով, կը նախանձէր իր հարեւնակին երջանկութեան։ Ահա թէ ինչո՛ւ սպաննեց։

Ընդհ. դատախազը խիստ պատիժ մը պահանջեց։ Մարզասպանին փաստաբանը յուզիչ պաշտպանողական մը խօսեցաւ։ Երդուեալները ուշադրութեան չանձնեցին մեղմացուցիչ պարագաները, եւ մարզասպանը դատապարտուեցաւ հինգ տարի տաժանակիր աշխատանքի, տասը տարի ալ զրկուելով Ֆրանսա բնակելու իրաւունքէն ։

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

Զօր. ՖՐԱՆՔՈ յայտարարութիւն մը ուղղելով մամուլին, կը պահանջէ անմիջապէս ճանչնալ իր պատերազմիկի հանգամանքը, քանի որ հաւանած է ճամբել տասը հազար իտալացի կամաւորներ։ Այս առթիւ ազգայնական հրամանատարը վճռապէս մերժեց որ եւ է միջնորդութիւն։ «Քաղաքացիական պատերազմը կրնայ վերջանալ միայն այն ատեն երբ պարտեալը բացարձակապէս անձնատուր կ'ըլլայ յաղթականին»։ Զօրավարը 50,000 կը հաշուէ օտար կամաւորներէն անոնք որ սպաննուած են, իսկ 60,000 ոդջ մնացողները։ Իր յայտարարութեան համաձայն, կարմիրները 500,000 հոգի սպաննած են մինչեւ հիմա ։

ԼՈՆՏՈՆի գերմանական դեսպանատունը բացարձակապէս կը հերքէ այն լուրերը թէ մարաջախտ Պլիւխէր աչքէ ինկած և ձերբակալուած է։ Չեկոյցը կ'ըսէ թէ Մարաջախտը կը գտնուի իր բանակատեղին, Սիլեզիա ։

ՎԻԵՆՆԱՅի արքեպիսկոպոսին դէմ նոր յոյցեր կատարուած ըլլալով, Հիթլէր մասնաւոր պատուիրակ մը ղրկեց, որպէսզի քննութիւն կատարուի։ Հաւանական է որ Առաջնորդը ինք ալ Վիէննա երթայ մօտերս։ Կառավարութիւնը պաշտօնական դեկոյց մը պիտի հրատարակէ, պարզելով իր դիրքը։ Կարմիրներէն դէմ կատարուած յոյցերը մեծ յուզում պատճառեցին Վատիկանի մէջ ։

ՔԻԻՐՏ ՅԵՂԱՊԵՏ Հաճի Բաշիսի դէմ մահափորձ մը կատարուեցաւ Սաւրիոյ մէջ, հակառակորդ ցեղախումբի մը մէկ անդամին կողմէ, որ երեք գնդակ արձակեց ։

ՄԱՐՍԷՅԼի զինուորական խարդախութեանց առթիւ, ձերբակալուեցաւ Օլէմփիքի նախագահը եւ ուրիշ երեք անդամներ։

ԳՆԴ. ԼԻՆՏՊԷՐԿ աննպատակ կարծիքներ յայտնած ըլլալով խորհրդային օդանաւորդներու բարոյական կորովի մասին, Մոսկուայի թերթերը կատաղած են եւ «ֆաշիստ լաքէ» կը կոչեն ամերիկացի օդաչուն, որ անցեալ օգոստոսին Մոսկուա գացած էր։ «Փրաւդա» նամակ մը հրատարակած է, որ կ'ըսէ.--- «Լինտպէրկ Մոսկուա եկաւ Անգլիոյ յետադիմականներուն հրահանգով, խորհրդային օդագնացութեան ակարութիւնը հաստատելու եւ փաստեր ճարելու համար Ձէմպլէյնին, որպէսզի անձնատուր ըլլայ Միւնիխի մէջ»։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Ազգ. Խորհուրդը նիստ գումարեց Փարիզի մէջ, իբրեւ նախապատրաստական աշխատանք յառաջիկայ համագումարին։ Այս առթիւ բուռն վիճաբանութիւններ տեղի ունեցան արհեստակցական կազմակերպութեանց անկախութեան մասին։ Շատ մը պատգամաւորներ բողոքեցին բոլշեւիկներու ոտնձգութեանց դէմ ։

ԱԻԵԼԻ ԿԱՆ վեց Միլիոն աշակերտներ լեցուեցան Ֆրանսայի դպրոցները, վերամուտի առթիւ ։

ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻԱՅԷն երեք սահմանամերձ քաղաքներ գրաւեցին Հունգարները։ Դեռ ուրիշ հողեր ալ կը պահանջեն։ Գերմանացի – ները վերջացուցին իրենց գրաւումը, եւ այժմ կը սպասեն վիճելի շրջաններու հանրաքուէին ։

ՆՈՊԼԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ նախագահ Պենէչի տալ կ'առաջարկեն Լէոն Պլում, անգլիացի գրագէտ Ուէլս եւ ուրիշ մտաւորականներ, ինչպէս եւ ձախակողմեան մամուլը ։

ԵՐԵՔ ԿԻՆ ՕԴԱՉՈՒՆԵՐ, Պոլինա Օսիպէնկօ, Վէրա Լոմակա եւ Մարինա Ռասքովա յաջողեցան կոտրել կիներու հետեւութեան մրցանիշը, թռչելով Սեւաստափոլէն Արխանկէլ (1400 մղոն, ուղիղ գծով)։

ՔՍԱՆ ՀՈԳԻ ՄԵՌԱՆ Տիւսէլտորֆի մօտերը, երբ Պրեսլէ - Պերլին օդանաւը բռնկելով վար ինկաւ ջարդուփշուր ։

Հ. Յ. Դ.

Շարունակ

ՓՈՐԻՋի «Եգիպտացի» կոնիաէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր շրջանի բոլոր ընկերները 12 Հոկտ., ցորեքշաբթի երեկոյ ժամը 8.30ին, 6 Ավընիւ տ'Իթալիի արձարանին վերնայարկը, օրակարգ՝ Շրջ. ժողովի պատգամաւորի ընտրութիւն։

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅի «Զաւարեան» կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ «Վռամեան», «Մուրատ», «Ֆօօ», «Սեբէմեան» եւ «Արգուեանան» խումբերու բոլոր ընկերները 13 Հոկտ., Հինգշաբթի երեկոյ ժամը 8.30ին իր Ակումբին մէջ։ Օրակարգ՝ պատգամաւորի ընտրութիւն։

ՊԱՆԵԼՕ ՔԱՇԱՆի «Արծիւ» ենթակոմիտէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները, 12 Հոկտ., ցորեքշաբթի երեկոյ ժամը 9ին, «կորիւն» Ակումբին մէջ։ Օրակարգ՝ պատգամաւորի ընտրութիւն։

Դասախօսութիւն

ՐԱՖՖԻ ԼՄԱՐԱՆի դասախօսութիւնը 13 Հոկտ. Հինգշաբթի երեկոյ Café Cadet-ի վերնայարկը, մէթրօ Cadet։ Կը խօսի Պ. Վ. ԻՇԽԱՆԵԱՆ, նիւթ՝ «ԱԶԳ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ»։

ՎԵՐԱՄՈՒՏԻ ՀԱՆԴԷՍ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԵԱՑ
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ Պ. ԱՐՇԱԿ ՋՕՊԱՆԵԱՆի

16 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 4էն մինչեւ կէս գիշեր։ 8 Ռիւ Պօսիւէ, Փարիզ։ Կը խօսին զոյգ Միութեանց ներկայացուցիչները։ Գեղարուեստական բաժին եւ պար։ Խնամուած պիւֆէ եւ օրքէսթր։ Մուտք 3 եւ 5 ֆրանք։

ՅԱՒԱՋ կը ծախուի Սաւրիւի շրջանին մէջ

42, Rue des Petits Carreaux-Փարիզ Mr. Pierre Marchal-ի խանութը։

Հ. Բ. Ը. Միութեան հայերէնի պատգամաւորութեան շաբաթը կը սկսի 13 Հոկտ., Հինգշաբթի առաւօտ ժամը 8.30ին, 149 Bis Avenue d'Argenteuil, Asnières

Այն ծնողքները որ կը փափաքին իրենց պզտիկները արձանագրել ս.ալ բարեգործին դիմել Հինգշաբթի օրը ժամը 9–12, 149 bis, Avenue d'Argenteuil, ընկերվարականներու սրահը։

ՓԱՄԱԳՅԻՒՂԻ եւ գոհարեղինաց
ՉԻՒՂ ԱԱՐԳԻՒԵԱՆ
Մէթր: Louis Blanc et Jaurès
281, Rue du Fbg. St. Martin

La Gérant : H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17 Rue Dunoyer — PARIS (13)

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

«Մատենաշար Ռազմիկի թիւ 2

ԼԵՌ ԱՑԻՆ ՊԱՏՏԵՐԱԶՄԸ

Գրեց՝ ՀՐԱՆՏ ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ
Հրատարակութիւն Հայ Կամ. եւ Մարտիկներու Միութեան

Գինը՝ Ֆրանսա, Սուրիա եւ Պալքանեան 10 ֆրանք, միւս երկիրներ 15 ֆրանք։

Ստանալու համար դիմել.— Փարիզեան շրջանի համար՝ 9 Rue Thénard, Paris։ Գաւառի համար՝ մեր տեղական վարչութիւններուն։

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱՒՈՒԹԻՒՆ - ԱՑԱՄՆԱՒՈՒԹԻՒՆ
44 Rue Dunkerque (ՄԷԹՐՕ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՌ)
Tél. Trudaine 42—69
Կ'ընդունի ամէն օր ժամը 14–20։
Աւտօմոպիլը ժամադրութեամբ։

ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Յառաջիկայ Հոկտեմբեր 25ին կը սկսի ձեւագիտութեան դասերը՝ **robe-d'après midi, robe du soir, ensemble, manteau, jusqu'au tailleur**, ճերմակեղէն եւ **dessin croquis**։ Կը դասաւանդուի ամերիկապարտ եւ գործնական մեթոտով։ Արձանագրուիլ փափաքողները կրնան դիմել՝ **modeliste-couturière CHRISTOFOR, 31 Rue Condercet, Paris (9)** մէթրօ **Anvers** կամ **Cadet**։

Դասախօսութիւնը տեղի կ'ունենայ հայերէն, յունարէն, ֆրանսերէն, անգլիերէն եւ ռուսերէն լեզուներով ։



Fourrures de St. Bernard

ՀԱՅԿՈՒՀԻ ԿԻԼՊՕՐԼԵԱՆ

Միակ վստահելի տունը ուր պիտի գտնէք տարուն ապրանքներ՝ զեղչեալ գիներով։ Ընտիր արժանիքներ, իրական մորթեր, փթիւռաններ, սկունսներ, օձիքներ, զարեր, վերարկուներ եւայլն։

Կը չինենք չափու վրայ մանթօներ՝ դանազան տեսակ մուշտակներէ, վերջին նորաձեւութիւններով ։

Կը տառնձնենք մուշտակներու նորոգութիւնը, ձեւափոխութիւնը, ներկելը եւ քանաժը։ Մուշտակները կը մաքրենք ձրի, կիրակի օրերը բաց է մինչեւ կէս օր ։

24, Rue Affre կամ 8, Rue Cavé — PARIS - 18e
Մասնաճիւղ՝ 2, Rue de la Charbonnière —
Մէթրօ՝ La Chapelle — Barbès Roch. Tél. Montmartre 69-70

Կ'ԱՒՏՈՒՆ՝ մաքուր կար կարող լաւ ափրէսէօր մը։ Տեւական գործ. լաւ վճարում։ Ներկայանալ Նմայշով Dalex, 241 Rue de la Croix Nivert, Paris (15e.) մէթրօ Porte de Versailles, օթոպիւս 89, 93, AC, PC։

Ճաշարան "ԲԵՐԱ"

ՏՆՕՐԷՆ՝ **ԵՐՋԱՆԻԿ ՊԱԼԼԵԱՆ**
9 Rue Provence, Paris 9e. (Առաջին յարկ)
Մէթրօ **Le Peletier**

Արեւելեան եւ եւրոպական կերակուրներ՝ պատրաստուած անարատ իւղով։

ՐԱՖՖԻ

Փարիզահայերու մեծ վայելուչ ճաշարանը
Տէր եւ Տնօրէն Մ. Գ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆի
8, RUE MAUBEUGE, Paris (9).
Մէթրօ Cadet et le Peletier (Carrefour Chateaudun).
Հռչակաւոր գոնէք ԱՆԱՐԱՏ կարագով պատրաստուած Արեւելեան եւ Եւրոպական կերակուրներու հարուստ ճաշացուցակ մը։
Անմրցելի մաքրութիւն եւ անթերի սպասարկութիւն, անմոռանալի մատչելի գիներով։
Ամէն տեսակ ձաշկերոյթներու, Թէյասեղաններու եւ Շալափոյթներու կը տրամադրուի սրահ։



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ձուլտ իւաղոդէ ջուղուն եւ անիսոնով պատրաստուած ռաքի հայկական օդին։ ՐԱՔԸ ՏԻՒԶը, ջուղուդէի պատուեստական օդիներէ ոչ ալ ձեր սառոյցով կ'այրէ եւ պիշեաները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան։ Խմեցէք ՐԱՔԸ ՏԻՒԶը որուն անոյշ համ, կազդուրիչ եւ աւիշաստեղծ յատկութիւններ կան։ Ժարեք ըլլալը ուշադրութիւն դարձուցէք։

Dalakupeian 8 Rue Sulliers
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89



AGENCES: ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

LYON: ԼԻՈՆ — *M. Francis COTTON, 68 Avenue Galline; à Villeurbanne, près Lyon. Téléph. Lalande 64-10.*

MARSEILLE, ՄԱՐՍԷՅԼ — *M. SIMONDI, 17 Allées des Primevères à Marseille.*

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ՐՐԹԵՒԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ամբողջ երկիրները	215 ֆրանք	120 ֆրանք	

ՀԻՆԳՇԱԲԹԻ
13
ՀՈԿՏԵՄԲԵՐ
JEUDI
13 Octobre
1938

ԺԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3859

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒՆ ԽՕՍՔ

... ԾԱՌԱՅ ԵՄ ՋԱՅՆԻՒ

Ի զո՛ւր կը մաղենք « Ա. Հայաստան »ի սիւնակները, որ եւ է տեղեկութիւն վճռաբեկով արտաքին յարաբերութեանց մասին : Ը – անկ կ'ուզենք՝ Երեւանի եւ Հայկական Արտաստմանի կապերու մասին :

Շատոնց խզուած են այդ կապերը : Անոնք որ քիչ - շատ յար - մարութիւն ունէին պարբերաբար թղթակցելու, ամէնէն աւելի անձրկած կ'երեւան այսօր :

Օրինակ՝ Բարեգործականը : Այդ Միութեան վերջին ընդհ. ժողովին առթիւ, նախագահը կը խոսուռվանէր .

— « Տարիէ մը ի վեր որ եւ է լուր չունինք Հայաստանէն : Կը յուսանք որ այս կացութիւնը պիտի պարզուի մօտիկ ապագային եւ Միութիւնս պիտի կրնայ, ինչպէս անցեալին, շարունակել իր բարեսիրական գործունէութիւնը Հայաստանի մէջ » :

Աւելի բախտաւոր եղած չէ հանդուցեալ Հօկը : Բոլոր տեղեկութիւնները կ'ապացուցանեն որ այդ « ոսկի կամուրջը » չատոնց քանդուած էր, նոյնիսկ իր լուծումէն առաջ, ինչպէս Հաստատութիւնն իր իսկ անդամները, հին թէ նոր :

Մնացեալը դիտենք արդէն, — երկու նամակներ էջմիածինէն, եւ Արտաստմանի անցած - գչուած - հարիւրաւոր հայրենակիցնե – րու ինչպէս եւ օտարազգիներու վկայութիւնները, որոնք հրատարակուեցան Դաշնակցական մամուլին մէջ :

Ուրեմն « ազգովին » անճրկած ենք, ուղղակի, անմիջական եւ վաւերական տեղեկութիւններ քաղելու համար մեր հայրենիքէն , խմանալու համար անոր չարն ու բարին :

Եւ նորէն Դաշնակցութիւնն է որ յաճախ անկարելին կը փոր - ձէ, մօտաւորապէս ծանօթացնելով անցուդարձը, — մեծ մասով մռայլ, միօրինակ, այլ մանաւանդ վրդովիչ : Մի՛ սներըը, անոնք որ բարեկամ կը համարուին, կարծես հրաշքի մը կը սպասեն, փոխանակ իրենց կարգին ճեռնարկ մը փորձելու եւ նոր լոյս մը ճարելու :

Առաջարկուեցաւ դիմել Փարիզի խորհրդային դեսպանատան, մօտաւորապէս տեղեկութիւններ առնելու համար այն չարա - չար դէպքերու մասին, որոնց զոհ գացած են բազմաթիւ գործիչ - ներ, կուսակցական թէ պետական վարիչներ եւ զրագէտներ, ինչպէս եւ կաթողիկոսն ու երկու կամ աւելի վարդապետներ եւ եպիսկոպոսներ :

Կատարուա՞ծ է այդ ճեռնարկը, որքան ալ պարզամիտ երեւայ :

Տեղեկութիւն չունինք : Եւ կը կարծենք թէ ամէնէն լաւատեսներն ալ սկսած են մմամալ հիմա, հակառակ իրենց կանխակալ կարծիքներուն :

Առ նուազն չարաչուք է այս լուռթիւնը, իսկ անորակելի՝ այդ առթիւ ցոյց տրուած անհոգութիւնը : Ի վերջոյ հարցը մեր հայրենիքի՞ն կը վերաբերի, թէ Ուրուկուէյ - Փարակուէյի :

Հայրենասիրութեան ո՞ր տարրական կանոնին կը համապատասխանէ աչք - ականջ պինդ փակել Դաշնակցականներու ճարած լուրերուն առջեւ, նոյնիսկ անճոռնի ճամարտակութիւններ փորձել զանոնք անվաւեր հռչակելու համար, եւ ճեռնածալ յօրանջել :

×

Սպասելով « ազգասիրական » ճեռնարկի մը, փորձենք աչք մը նետել « Ա. Հայաստան »ի վերջին թղթաբերին վրայ :

Ամբողջ էջեր — կո՛չ՛ը — ուսումնասիրելու բոլշեւիկեան կուսակցութեան պատմութիւնը : Երեւանի պաշտօնաթերթին վերջին քանի մը թիւերը կը յորդին այդ առթիւ հրամանագրուած դիտելիքներով , — ամբողջ դասընթացք մը, որուն մանրամասնութիւններն անգամ դլխու պտոյտ կը պատճառեն :

Ցեղոյ խմբագրականներ, կոչեր եւ մրցակցութեան հրաւէր – ներ՝ տարածելու համար « ռուսաց լեզուն », ինչպէս եւ ռուս մեծ ազգի պատմութիւնը :

« Ա. Հայաստան » սեպտեմբեր 29ի խմբագրականին մէջ նորէն կ'արծարծէ այս հարցը, դպրոցական վերամուտին առթիւ .

— « Հայկական ԽՍՀ լուսժողկոմատի դեկավարութեան մէջ ապրող ժողովրդի թշնամիները երկար տարիներ հսկայական վնաս են հասցրել մեր ժողովրդական կրթութեան գործին : Այժմ Հայաստանի կուսակցական կազմակերպութիւնները, Լուսժողկոմատը մասնաւորապէս ճեռնամուխ են եղել վնասարարութեան հետեւանքները լիկվիտացիայի ենթարկելու գործին :

Յայտնի է որ ժողովրդի թշնամիները ձախողում էին Ռուսաց լեզուի դասաւանդման գործը : Ժողովրդի թշնամիների կողմից տարուում էր վնասարարական բաղաճականութիւն՝ մեր երեխաներին հեռու պահելու հոկտեմբերի, Լենին - Ստալինի լեզուից, մեր ընկերներին կտրելու ռուս ժողովրդի հարուստ կուլտուրայի գանձերին հաղորդակից լինելու հնարաւորութիւնից » :

Թերթը աւելորդ լուրեր ալ կը հաղորդէ, իբրեւ եզրակացութիւն .

— « Հայկական ԽՍՀ լուսժողկոմատն այս տարի ճեռնարկեց Ռուսաց լեզուի 200 նոր եւ 500 հին դասատուների պատրաստման եւ վերապատրաստման շնորհակալ աշխատանքին : Այս տարի երեւանում եւ Լէնինականում սկսում են գործել ռուսական մանկավարժական ուսումնասատունները, որոնք Ռուսաց լեզուի դասատուական նոր կատրեր կտան Հայաստանի դպրոցներին : Այս տարի Հայաստանի դպրոցներն ստանում են Ռուսաց լեզուի 400 նոր դասատուներ » :

Պատկերը այնքան խօսուն է, որ կը վարանինք որեւ է խորհրդածութիւն կցել :

Շ.

ՀՐԴԵՀ ՄԸ ԿԸ ՓԱՅԱՅՆԷ «ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ ԵՒ ՏՊԱՐԱՆԸ

Յաւով կ'իմանանք թէ սեպտեմբեր 29 - 30 լուսնալու գիշերը հրդեհ ծագած է « Հայրենիք »ի շէնքին մէջ, անգործածելի դարձնելով զայն : Այս պատճառով թերթը լոյս չէ տեսած սեպտեմբեր 29ին, իսկ յաջորդ օրը հրատարակուած է երկու էջ, ցնոր տնօրէնութիւն :

Մեր տեղեկատու ընկերը կը գրէ . —

Հրդեհին պատճառը չէ ճշդուած տակաւին : Թերեւս էլեկտրական հոսանքի խանգարումէն ծագած է : Դուրսը երեք սեռեակ վարձած ենք, գործերը շարունակելու համար : Շէնքը եւ մեքենաները ապահովագրուած էին, բայց ոչ համապատասխան արժէքով : Մեր տունը վառեցաւ, բայց ընկերները պատրաստ են ամէն զոհողութեան, աւելի փառաւորը հաստատելու համար :

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԱՊՍՏԱՄԲՆԵՐԸ ՏԻՐՈՒԲԱՐ ԿԸ ԳՈՐԾԵՆ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Առաբական համագումարին վերջնագիրը

« Տէյլի Թելեգրաֆ »ի թղթակիցը կը հեռագրէ Երուսաղէմէն . — Քսան տարի ընդհանրապէս Մօտաւոր Արեւելք եւ մասնաւորապէս Պաղեստին դանուած ըլլալով, կրնամ ըսել թէ երբեք չէի տեսած այսքան ծանր կացութիւն կամ իշխանութեան անձնատուութիւն : Մինչ հիւսիսային շրջանը, որ գրաւուեցաւ անցեալ ամառ, կը պահուի բացի Տիբերիայէն եւ Նազարէթէն, գրեթէ ամբողջ հարաւային շրջանը մինչեւ Եգիպտոսի սահմանագլուխը կը դանուէր ապստամբներու ութրապետութեան տակ, անցեալ ամսու : Զափատութիւն չէ ըսել թէ՝ բացի երկրին կարգ մը մասերէն ուր զինուորներ դիրք բռնած են, Պաղեստինի կառավարական իշխանութիւնը ամփոփուած է Երուսաղէմի, Թել Աւիվի եւ Հայֆայի սահմանիներուն մէջ :

Բեթղեհէմ եւ Բեթսահէլ, զորս ապստամբները գրաւեցին օրը ցերեկով, նորէն զինուորական իշխանութեան ճեռքն անցած են, կ'ըսուի, բայց քաղաքային իշխանութիւններէն ոչ մին կը գործէ : Ջերմոնի եւ Ռամալլահի պէս կարեւոր կէտեր ապստամբներուն ճեռքն են իրենց շրջականերով : Նոյն վիճակին մէջ է նաեւ Նաբլուս, բացի փոքր մասէ մը ուր զինուորները տեղաւորուած են : Կառավարական դատարաններ կը գործեն միայն վեց քաղաքներու մէջ : Ամբողջ դատարաններ կրակի տրուած են բոլոր տեղապրութիւններով : Ապստամբները ունին իրենց շրջանային դատարանները, որոնք վերաքննութիւն կը կատարեն կառավարական դատարանները, ոնց վճիռներու դէմ : Դէպի Եգիպտոս ամենօրեայ հաղորդակցութիւնը վերածուած է չարաթը երեք օրուան, այն ալ ցերեկ տեղն եւ ընդհսկողութեամբ :

Արաբ ոստիկանները, որոնք չատ լաւ կը ծառայէին սկիզբ – ները, զինաթափ եղած եւ ուրիշ աշխատանքներու կապուած են : Կառավարական պաշտօնատուները եւ գլխաւոր գերդերը կը պահպանուին անգլիացի եւ հրեայ ոստիկաններու կողմէ, թիւով 8000 :

Ճանգատուները լեռնային դատարանները կ'առաջնորդուին մասնաւոր բանբերներու միջոցաւ : Ամէնէն ծանր յանցանքներէն մէկն է աւազակութիւնը, որուն համար խիստ պատիժներ կը տնօրինուին, իրրեւ վարկաբեկիչ ազգային դատին համար : Երբեմն գուարճալի բաներ ալ կը պատահին : Նաբլուսի մէջ, երեւելի մը սրճարանը նստած՝ կը հեղնէր մեծ միւֆթիին, ըսելով թէ ան յարմար է միայն պաղպաղակ ծախելու Դամասկոսի փողոցներուն մէջ : Քիչ վերջը երկու Արաբներ մօտենալով ուսին դպան եւ հրամայեցին որ դուրս ելլէ : Երեւելին հնազանդեցաւ եւ երկու օր հետոյ որ դուրս ելլէ : Երեւելին հնազանդեցաւ եւ երկու օր հետոյ կը գտնուէր Եգիպտոս, երբ իր բարեկամները ափ ի բերան մնացին , տեսնելով որ ... պաղպաղակ կը ծախէ փողոցներուն մէջ, համաձայն կոմիտէի հրամանին :

Կը նշանակէ թէ հրաշալի կը գործէ լրտեսական մեքենան : Կառավարութեան վարկը չատ ինկած է : Եթէ անհրաժեշտ միջոցները ձեռք առնուած ըլլային վեց ամիս առաջ, ոչ ապահովութիւնը այսքան խանգարուած, ոչ ալ կառավարութեան վարկը կոտրած պիտի ըլլար : Ոչ միայն բրիտանական հեղինակութիւնը խորապէս ինկած է Արեւելքցիներու աչքին, այլեւ Անգլիոյ հանդէպ արհամարհանքը այնպիսի ասպիճանի մը հասած է որ տարիներ պէտք են, այս վէրքը դարմանելու համար :

Կը պատուաստի ոտքի հանել բոլոր Արաբները

Գահիրէի արաբական համագումարը վերջացաւ, հետեւեալ բանաձեւը քուէարկելով .—

Համագումարը չեղեալ կը համարի Պալֆըրի յայտարարութիւնը, որ կը խոստանար օգնել եւ ազգային տուն մը ստեղծել Պաղեստինի Հրեաներուն համար :

Կը պահանջէ անմիջապէս դադրեցնել հրէական ներգաղթը :

Կը մերժէ որ եւ է ձեւով բաժնել երկիրը :

Կը պահանջէ սահմանադրական կառավարութիւն մը հաստա-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ՊԻՏԻ ԹՐԳԱՆԱՄ ...

« Փարի - Մաթ » թերթին տնտեսական բաժնի խմբագիրը կը նախանձի Թուրքիոյ, որ խոռվակոծ Եւրոպայի կողքին՝ հէյեթաթային օրեր կ'ապրի :

Սկիզբէն ի վեր, կ'ըսեն, դրամատեղիները Թուրքը կը տրտնջայ թէ բակը պակսած է, (ատոր համար բանդեց հայկական օջախները՝ ոսկի փնտռելու համար աւերակներուն մէջ, ջարդեց Հայերն ու Հայուհիները՝ ոսկի փնտռելու համար անոնց աղիքներուն մէջ), կը տրտնջայ նաեւ այսօր՝ ճարտարարուեստական երկիր եւ բաղաքակրթութեան օրրան կոչուելու համար իր թեկնածութիւնը դնելով ատեաննաօրէն :

Բայց շա՜տ բախտաւոր է մեր փեսացուն, որ ամուր բռնած է Սեւ ծովու բանալիները : Ամէն կողմէ դրամ կը թափեն գլխուն : Երէկ Անգլիան էր որ 30 միլիոն սթերլին տուաւ, — « խարշլրխ» ըրէ՛ եւ « էէփ»դ նայէ , երբ Իատնի, լուր ըրէ, ըսաւ ձոճ Պուլ :

Ետեւէն հասաւ Տոքթ . Ֆուանիը :

— Ա՛ռ էեզի 150 միլիոն մարք, պէտք կ'ուենենաս Բամազանի Պայրամին ...

Թուրքերը կատղած կը թուին : Ռոովեւետ նայիլիճ պատիւ կ'ընե՞ն ամէն մարդու որ դրամ տան իրենց, չեն ուզեր ամէն մարդու շնորհել այդ պատիւը : Խոճա Թուրքին դրամ տալն իսկ պատիւ դարձած է հիմա, եւ դրժուար է արժանանալ այդ պատիւին : Օրինակ Ֆրանսացիները եւս շատ կ'ուզեն դրամ տալ, օր առաջ տալ, բայց Թուրքը կը մերժէ : Այսպէս որ էրթայ, Թուրքին դրամ տալու պատիւը շահիլ ուզողները պուչ պիտի կապեն : Դեռ կան անասկներ, ինչպէս կարմիր Ռուսերը, որոնք անգամ մը դրամ տուին, բայց նորէն տալ կ'ուզեն :

Անշուշտ, այս կացութիւնը ունի իր բարիքը գէթ մեզի համար, — այսուհետեւ կրնանք վստահ ըլլալ որ Թուրքերը չեն ջարդեր մեզ՝ աչէ տնկելով մեր դրամին, կամ չեն ճանդեր մեր օջախները՝ աչէ տնկելով մեր ոսկեղէն զարդերուն : Բայց եղերականօ՞ն չէ եւրոպացիներուն համար՝ որ շուտով պիտի ստիպուին կոիւ ընել իրարու հետ, մէկը միւսէն առաջ եւ աւելի դրամ տալու համար Թուրքին : Օրի - նակ, Ֆրանսացին, որ մոռցած է թէ սխատերազմէն առաջ իրենց տուած դրբամով գինեց Թուրքը իրենց իսկ դէմ, վաղը կրնայ պատերազմ յայտարարել Գերմանիոյ դէմ, ամբաստանելով զայն թէ արգելէ կ'ըլլայ Թուրքին հիչ մըն ալ ֆրանսական դրամ տուուելուն :

Ճիշդ է որ մեր մէջ ալ կան անվարուիներ, որոնք պատրաստ են անօթի մնալու՝ բայց իրենց խնայողութիւնը Թուրքին երկնցնելու ծնրադիր, — չէ՞ք տեսներ ձեր շուրջը հայկական ժպիտները, որ կը ծաղկին ապուշցած աչէրու մէջ :

Այս ի՜նչ բախտաւորութիւն, այս ի՜նչ բախտաւորութիւն : *Լոթըրին* կը գարնէ ամէն օր Թուրքիոյ հաշուոյն :

Բայց չեղա՜ւ, չեղա՜ւ, բախտի չար աստուածդ դու ,— *Լոթըրին* տոմսակը ե՛ս կը գնեմ ամէն ամիս, շահողը Թո՛ւրքն է միշտ :

Եթէ ասանկ երթայ, տիկի՛ն բախտ, կը բրխանամ, Աստուած վկա՛յ , կը բրխանամ (այս բայր հասկնալ հայկական իմաստով) :

ԱՐԱՋ

ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐԸ ԱԶԳ. ՓՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ

Ֆրանսայի նախկին ռազմիկներու չորս ընկերակցութիւնները , որոնք համապատասխան 2ուկէս - 3 միլիոն անդամ կը ներկայացնեն, յայտարարութիւն մը հրատարակեցին, պահանջելով ազգային փրկութեան դահլիճ մը հաստատել լայն իրաւասութիւններով, մինչեւ 1940ի նոր ընտրութիւնները : Այս առթիւ մանրամասն բացատրութիւններ հաղորդեց Պ. Անռի Փիշօ, նախկին ռազմիկներու Դաշնակցային Միութեան նախագահը (ամենամեծ ընկերակցութիւնն է այս) :

Յայտարարութիւնը ձաղկելով խորհրդարանական եւ կառավարական ձգձգումները ելմտական, անտեսական եւ արտաքին գործերու մէջ, կը բացատրէ թէ հարցերը սոխպղոական լուծում կը պահանջեն : Վեց միլիոն ընտրողներ արդէն հաւանութիւն յայտնած են այս ծրագրի էական կէտերու մասին : Ազգային փրկութեան դահլիճը պէտք է կազմուի այնպիսի քաղաքացիներէ որոնք հանրածանօթ են իրենց իմաստութեամբ, վարչական կարողութիւններով եւ մաքուր նկարագրով, առանց կուսակցական կաշկանդումներու : Եթէ ներկայ խորհրդարանը մերժէ այս ծրագիրը, նախկին ռազմիկները պիտի պահանջեն լուծել խորհրդարանը եւ անմիջապէս ճեռնարկել նոր ընտրութեանց, որոնց մէջ գործօն դեր պիտի կատարեն իրենք :

Նախկին ռազմիկները վստահութիւն յայտնելով Տալատիէի դահլիճին, կը խնդրեն օգտուիլ լիազօրութեան 45 օրերէն, գործադրելու համար այս ծրագիրը :

— « Հարցը երեք ամիս ժամանակ չտեւելու խնդիր չէ, այլ Ֆրանսան փրկելու խնդիր : Զորս հարցեր կան սեղանի վրայ .— 1. Ֆրանսա ելեւմտացոյց չունի այլեւս : 2. Իր դրամը կը չարունակէ իյնալ : 3. Ահռելի տուրքին կէսը կը ծառայէ վճարելու յետնեալ պարտքերը : 4. Իսկ ամէնէն կարեւորը՝ աշխատանք, որմէ կախում ունին միւս երեք խնդիրները : Ֆրանսացիները իրարու հետ կը կռուին 40 ժամուան հարցի մասին, մինչդեռ մեր երկրին արտադրութիւնը իջած է 1913էն ալ վար : Ազգային տնտեսութիւնը կը ծիւրի, եւ սպառումը ինքնին պիտի դադրի, առ ի չգոյէ սպառողներու : Անցեալ տարիին հրատարակուած 400 հրամանագիրներէն օրէնքները պարզապէս մեղմացուցին չարիք մը որ երթալով կը ծանրանայ » :

Տեղական թերթերը մեծ կարեւորութիւն կ'ընծայեն այս յայտարարութեան, իրրեւ ժամանակի նշան :

Անգլիական մրցակցութիւնը Թուրքիոյ մէջ

Պերլինի « Պէօրսէն Ցայթունկ » թերթը, խօսելով գերման տնտեսութեան նախարար Հէր Ֆունքի բանակցութեանց մասին Պալքանեան երկիրներու հետ, կը գրէ . —

— « Անգլիական առեւտուրը Հարաւ - արեւելեան Եւրոպայի երկիրներուն հետ այնքան մեծ եղած չէ , որ Մեծն Բրիտանիա պարտաւորուի պաշտպանողական միջոցներու դիմել, վերջին քանի մը չարաթներու իրադարձութեանց պատճառով : Անգլիոյ նետրածումի չուկաները ուրիչ տեղեր կը գտնուին » :

ՅԵՐԵՎԱՆԻ ԱՂՋԵՐ

Հեղ. Բարխուդ. Ա. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ

Օրիորդը շատ ձեռք չէր տալիս նրան, մանավանդ որ հյուրընկալ տանտիրուհին միշտ ներկա էր լինում նրանց հանդիպումներին և ամեն րոպե ինչ-որ պատրվակով ներս էր մտնում։ Ջահել տղան ուրախ էր, որ գոնե այդ կերպով կարողանում է տեսնել իր սիրելի էակին և մի քանի խոսք փոխանակել նրա հետ։

Մի անգամ, երբ նրանք միայնակ էին մնացել, տղան որոշեց օրիորդին հարցնել, թե ինչպես է նա նայում իր հանդեպ։ Նա ուզում էր իմանալ, թե արդյոք նրա սերը փոխադարձ է, թե ոչ։ Բայց նա չգիտեր, թե ինչպես սկսի խոսակցությունը։ Ամեն անգամ, երբ նա ուզում էր բացել իր սիրտը, նրա լեզուն կապվում էր, և նա ոչ մի խոսք չէր կարողանում արտասանել։

Վերջապես, հազիվ կարողանալով տիրապետել իրեն, նա դողդողալով ասաց.

— Ներեցեք, որ ես ձեզ անհանգստացնում եմ, բայց ես ուզում եմ ձեզ մի հարց տալ։

— Ի՞նչ հարց, պարոն Ալֆրեդ, — հարցրեց օրիորդը։

— Ես ուզում եմ իմանալ, թե ինչպես եք դուք նայում ինձ վրա։

— Ես Ձեզ հարգում եմ, պարոն Ալֆրեդ, ինչպես ընդունակ երիտասարդի, որ ապագայում մեծ մարդ կդառնա։

— Ներեցեք, օրիորդ, ես ուզում եմ իմանալ, թե դուք ինձ չե՞ք սիրում։

— Ես Ձեզ սիրում եմ, պարոն Ալֆրեդ, ինչպես ազնիվ

ՊԵՏՔԻ ԼԵԶԵՆ ԵՒ ՊԱՏՄԱ

1933 • ԱՊՐԻԼ

Ու Տնաբերդը Ելիզն ալ, Տէտէն ալ, Տիկին Ելիզան ալ, Տիկին Ելիզան ալ, Տիկին Ելիզան

տել եւ դաշնագիր մը ստորագրել Անգլիոյ եւ Արաբներուն միջեւ :

Կը յայտարարէ թէ այս պահանջներուն գոհացումը կը կազմէ միակ կարելի լուծումը տագնապին. այլապէս բոլոր արաբ ժողովուրդները պիտի հրաւիրուին բրիտանական հպատակները եւ Հրէաները նկատել թշնամիներ, բոլոր տրամաբանական հետեւանքներով, — ընկերային, քաղաքական եւ տնտեսական :

Կը պահանջէ բոլոր արաբական երկիրներու կառավարութիւններէն ուժ տալ այս պահանջներուն, զանոնք հաղորդելով Մեծն Բրիտանիոյ եւ Ազգերու Դաշնակցութեան : Կ'առաջարկէ մնայուն յանձնաժողով մը կազմել Գահիրէի մէջ, հսկելու համար այս որոշումներուն գործադրութեան :

**** Անգլիական կառավարութիւնը որոշեց որ եւ է բանակցութիւն չկատարել Արաբներուն հետ, ցորչափ անոնք չեն դադրեցուցած ահաբեկչական գործունէութիւնը : Տիրող կարծիքը այն է թէ եթէ ապստամբութիւնը չդադրի անյապաղ, թշնամութիւնները պիտի ծաւալին, քանի որ Անգլիա նոր զօրագունդեր ղրկած է : Մարզպանը , որ Լոնտոն եկած էր, Պաղեստին պիտի վերադառնայ նոր լիազօրութիւններով :*

**** Երեքշաբթի օր երկու բուռն ճակատամարտներ տեղի ունեցան անգլիական զօրքին եւ Արաբներուն միջեւ, մէկը՝ Երուսաղէմի հիւսիսային չրջանին, միւսը արեւմտեան մասին մէջ : Զօրս ռումբեր նետուեցան երիքովի ճամբուն վրայ, երբ կառքով կ'անցնէր Երուսաղէմի ոստիկանական տեսուչը :*

ԹՈՒՐՔԵՐԸ ՆԵՂ ԿԸ ԳՏՆԵՆ ՍԱՆՋԱՔԸ

Սուրիոյ թերթերը կը գրեն. —

Թուրքերը գոհ չեն Սանճաքի հարցին մէջ իրենց գտած յաջողութենէն եւ Հաթայի ներկայ սահմաններէն : Անոնք կ'ուզեն որ ընդարձակուին Սանճաքի սահմանները ի վնաս Սուրիոյ եւ աւելի սանճարձակ ըլլան իրենց չարժումներուն մէջ :

Անտիոքէն եկած բարեկամ մը հաղորդեց թէ Թուրք եւ Ֆրանսացի սպաներ Անտիոքի մէջ ժողով մը գումարեցին՝ ճշդելու համար Սանճաքի սահմանները : Ժողովը, սակայն, չկրցաւ արդիւնաւոր գառնալ, որովհետեւ Թուրքերը պահանջած են տասնեակներով սուրիական գիւղերու կցումը Հաթայի : Անոնք առարկած են թէ անբնական են Սանճաքի ներկայ սահմանները եւ անհրաժեշտ է բարեփոխում մը :

Ֆրանսացիները ընդդիմացած են Թուրքերու պահանջներուն , աւելցուց մեր լատաեղեակ բարեկամը, յայտարարելով թէ Թուրքեւ-Ֆրանսական վերջին համաձայնութեամբ ճշդուած են արդէն սահմանները :

Սպաները բաժնուած են առանց համաձայնութեան գալու : Զինք գիտեր սակայն թէ մինչեւ ո՞ւր կ'երկարին Թուրքերու պահանջած սահմանները :

**** Անտիոքէն ղրկուած պաշտօնական տեղեկագիրներուն մէջ հետեւեալ ձեւով նկարագրուած է վաս յարձակումը, որուն գոհ գնաց տեղակալ Շապօ .—*

Տեղակալ Շապօ զօրանոցէն մեկնելով պաշտօնի կ'երթար կամուրջին միւս կողմը : Զօրանոցէն հազիւ հեռացած, կը հանդիպի քանի մը Թուրք զինուորներու, որոնք —հակառակ Ֆրանքեւ-Թուրք համաձայնութեամբ ճշդուած պարտադրութեանց — ոչ միայն չեն բարեւեր, այլեւ արհամարհական վերաբերում մը ցոյց կուտան : Ջաղաքավարի դիտողութիւն մը ուղղելէ վերջ, տեղակալը կը շարունակէ ճամբան եւ կը հասնի քանի մը հարիւր մէթր հեռաւորութեան վրայ գտնուող կամուրջը :

Այդ միջոցին, Թուրք զինուոր մը եւ չաւուշ մը կը մօտենան տեղակալին եւ առանց բան մը փոխանակելու կ'ապտակեն զայն : Տեսնելով որ ծանր միջադէպի մը պատճառ պիտի տրուի, տեղակալը կ'ուզէ խուսափիլ եւ կ'ուղղուի դէպի կամուրջ : Թուրք չաւուշը, սակայն, գոհ չի մնար Ֆրանսացի սպային պատարիւնութենէն եւ այդ վերաբերումը նախատինք կը նկատէ իրեն հանդէպ : Կը հանէ ատրճանակը եւ կը սկսի կրակել Շապոյի եռեւէն : Երեք գնդակները կը դպին անոր եւ կը փռեն գետին :

Ոճրագործ չաւուշը կը յանձնուի Թուրք զինուորական ատեանին :

ՀՈՒՆԳԱՐՆԵՐԸ ՆՈՐ ՀՈՂԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ

Դերմանիոյ տնտեսական տիրապետութիւնը Կեդրոնական Եւրոպայի մէջ

Հունգարական կառավարութիւնը գոհ չէ իր ստացած բաժինէն եւ նոր հողեր կը պահանջէ Չեխոսլովաքիայէն : Բանակցութիւնները անելի մը յանգած են : Հունգարական կառավարութիւնը կը հիմնուի 1910ի մարդահամարին վրայ, որուն համաձայն Հունգարները Սլովաքներէն աւելի են իր պահանջած չրջաններուն մէջ , իսկ չեխական կառավարութիւնը իր ձեռքն ունի 1930ի մարդահամարը : Հունգարները կ'ըսեն թէ Մեծ Պատերազմէն ի վեր բազմաթիւ ազգակիցներ Սլովաքիոյ միւս մասերը գաղթեցին, իրենց տեղերը ձգելով Սլովաքներու, Չեխերու եւ Գերմաններու : Իրենց մէջին ճամբայ , Սլովաքները այժմ կ'առաջարկեն 1880ի մարդահամարը : Եթէ Հունգարիոյ պահանջները ընդունուին, միայն երկու միլիոն Սլովաքներ պիտի մնան Սլովաքիոյ մէջ, իսկ 750,000 ազգակիցներ պիտի մտնեն Հունգարիոյ տիրապետութեան տակ : Կան չրջաններ եւ քաղաքներ ուր Սլովաքները 60-90 առ հարիւր կը կազմեն : Հունգարիա այդ չրջանները կը պահանջէ ոչ թէ ազգագրական, այլ տնտեսական նկատումներով : Սլովաքները չեն ուզեր յանձնել նաեւ չրջան մը որ արմտիքի գլխաւոր աղբիւրն է ոչ միայն Սլովաքիոյ, այլեւ Պոհեմիոյ համար :

Բանակցութիւնները կը չարունակուին :

**** Գերմանական կառավարութիւնը սկսած է բանակցութիւններ վարել Չեխոսլովաքիոյ հետ, բարեկամական յարաբերութիւններ հաստատելու համար : Իր գլխաւոր պահանջներէն մէկն է բոլչեւիկեան կուսակցութեան լուծումը : Չեխոսլովաքիոյ արտաքին նախարարը Պերլին կը սպասուի այսօր, հինգշաբթի :*

Հոկտեմբեր 11էն սկսեալ գերմանական դրամը կը գործածուի դրաւեալ չրջաններուն մէջ, մէկ չեխական քրոնը հաչուելով 12 ֆէննինկ : Այս սակը նպաստաւոր է Զուտէթեան Գերմաններուն համար, քանի որ մինչեւ հիմա 8·60 մարք կը վճարուէր 100 քրոնի համար :

Գերմանիա ազդ մը արձակած է Չեխոսլովաքիոյ վրայ, ուր գերմանական ազգեցութիւնը արագօրէն կը տարածուի հարաւային - արեւելեան Եւրոպայի մէջ : Եուկոսլավիա միջոցներ կը

Հ. Յ. Դ.

Ժողով

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ «Ջ ուլարեան» կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ «վ.ռամեան», «Պուքատ», «Բիջօ», «Պերէվճեան» եւ «Արդուճեան» խումբերու բոլոր ընկերները *13* Հոկտ., Հինգշաբթի երեկոյ ժամը *8.30*ին իր ակումբին մէջ: Օրակարգ՝ պատգամաւորի ընտրութիւն:

Գանձապետ

ՍԷՆ ՄՈՐԻՍի «ցառաջ» խումբի ընդհ. ժողովը *15* Հոկտ., շաբաթ կէսօրէ վերջ ժամը 3ին, սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

Դասախօսութիւն

ՐԱՖՖԻ ԼՍԱՐԱՆի դասախօսութիւնը 13 Հոկտ., Հինգշաբթի երեկոյ Café Cadetի վերնայարկը, մէթրօ Cadet: կը խօսի Պ. Վ. ԻՇԽԱՆԵԱՆ, նիւթ՝ «ԱԶԳ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ»:

ՀՐԱԺԵՇՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԻՍ

«ՍԻՐՈՒՇ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ Յ. ՂԱԶԱՐԵԱՆԻ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԿԱՐՈՂ ՈՒԺԵՐՈՒ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ 15 ՀՈԿՏ., ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ ԺԱՄԸ 9ԻՆ ՍԱԼ ՄԱՔԶՐՆԱՑԻ ՄԷՋ. 88 ՌԻՒ ՏՕՊԱՆԵԸ Մարսէյլ

16 ՀՈԿՏ., ԿԻՐԱԿԻ ԿԷՍՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՄԸ 3ԻՆ ՎԱՐԱՆԴԵԱՆ սրահին ՄԷՋ. 10 ՊՈՒԼՎ. ՏԷ ՄԱՐԿՐԻԹ, Պօմօն

ԱԿԱՄԱՑ ԲԱԽՇԿԸ

Իրենց ժամնակցութիւնը կը բերեն ՏԻԿԻՆ Մ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ եւ ՕՐ. ԱՆԺԱԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ:

ՁՍՈՒՆՋ կը ծախուի Սէրթիէի չորեքշաբթի

42, Rue des Petits Carreaux, Փարիզ Mr. Pierre Marchalի խանութը:

ՅՈՒՇԱԼԱՏՈՒԿ

ԻՍԻ-ԼԷ-ՄՈՒԼԻՆՈՅԻ Հայ կամաւորներու եւ Մարտիկներու Միութեան ընդհ. ժողովը, 15 Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին «Արիմեան» սրահին մէջ: կը հրաւիրուին բոլոր մարտիկները:

ՓԱՐԻԶի Թոքատ Հայրենակցական Միութեան ժողովը տեղի պիտի ունենայ 16 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 2—4, Պ. Թրավէսեանի բնակարանին մէջ, 13 Rue Charles Calmus, Paris (13): Բոլոր հայրենակիցները կը խնդրուի ներկայ գտնուիլ, Հ. Թրավէսեան, Ե. Դանիէլեան Ս. Գապիկեան:

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demesme — PARIS (13)

ՀԱՆԳԱՄԱՆԱՒՈՐ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ընդհ. սպայակոյտի նախագահին՝ Զօր. Փէյեւի սպանութեան խնդիրը լրջօրէն կը զբաղեցնէ կառավարութիւնը: Զրոյցի մը համաձայն, ահաբեկիչը, Քիրով, որ վերաւորուած էր, խոստովաներ է թէ 200 տոլար (40 անգլ. ոսկի) առացած է զօրավարը սպաննելու համար: Քիրով մերժած է յայտնել իր մեղսակիցներուն անունները, միայն ըսած է թէ Մակեդոնացի էին : Բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուեցան :

ԻՏԱԼԻԱ չորս շոգենաւ ղրկեց Սպանիա, հետզհետէ պարպելու համար 10,000 կամաւորները, ինչպէս խոստացած էր Անգլիոյ: Այս քայլը պիտի նպաստէ վաւերացնելու անգլ-իտալական համաձայնութիւնը, մինչեւ նոյեմբեր :

ՏՈՔԹ. ՊԵՆԷՇ, Չեխոսլովաքիոյ հրաժարեալ նախագահը, հաւանած է վերառեւուչ ընտրուիլ Կլասկոյի համալսարանին մէջ (Սկովտիա): Նախորդ նախագահը 54 տարեկան է եւ ուսած է Փրակայի, Փարիզի, Տիժոնի եւ Լոնտոնի համալսարաններուն մէջ: Ամերիկայէն ալ պաշտօն առաջարկած են :

ՊԵԼԺԻՈՑ Ալպէռ պինուոր – թագաւորին արձանին բացումը տեղի ունեցաւ երէկ, Քոնքորտի հրապարակին անկիւնը, մեծ հանդիսաւորութեամբ: Ներկայ էր իր որդին, Լէոփոլտ թագաւորը, բազմաթիւ երեւելիներու հետ :

ԳԵՐՄԱՆԻՈՑ աշխատանքի նախարին առաջնորդը, Տոքթ. Լէյ, որ Սոֆիա գացած եւ ունկնդրութեան ընդունուած էր Պորիս թագաւորէն, Պուքրէշ գնաց, Պերլին վերադառնալէ առաջ :

ԱՇԽԱՏԱՆՔԻ Դաշնակցութեան ազգ. համագումարը վերջացաւ Լէոն Ժուհոյի զերադոյն կոչով, որ կը պահանջէր զոհողութիւններ կատարել, արհեստակցական միութեանց անկախութիւնը եւ միասնականութիւնը պաշտպանելու համար: Այս առթիւ չարադէտ համարելով Միւնիխի համաձայնութիւնը, առաջարկեց միջազգային խորհրդաժողով մը գումարել, Մ. Նահանգներուն մասնակցութեամբ. «այլապէս մինակ պիտի մնանք »:

235 ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐ ձերբակալուած կամ բանտարկուած են վերջին մէկ չարթուան ընթացքին: Առջի օր ոստիկանութիւնը հետապնդումներ կատարելով Փարիզի զանազան թաղերուն մէջ , ձերբակալեց ուրիշ 27 « անկանոն » օտարականներ : Մարսէյլի մէջ ալ ձերբակալուեցան 83 կասկածելի մարդիկ, մեծ մասով տեղացի :

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ կառավարութիւնը ցուցակագրած է ութսուն վեց անհատներ ու հիմնարկութիւններ, որոնք կը զբաղին օտար կառավարութեանց եւ առեւտրական մեծ տուներու պրոպագանդով եւ փոխարէն կը ստանան որոշ վճարում :

ԵՐԵՔ ԼՐՏԵՄՆԵՐ, որոնց երկուքը այր եւ կին են, դատապարտուեցան քանակական տարի բանտարկութեան: Քսան տարի այ իրաւունք չունին Ֆրանսա բնակելու : Տասը օր առաջ ալ բնանկիզի մը չորս անդամները դատապարտուած էին քանակական տարուան, միեւնոյն յանցանքով: Բոլորն ալ ձերբակալուած էին գերմանական սահմանին վրայ :

Թ ե յ ա ս ե ղ ա ն

Հ. ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ԱԼՖԱՐՎԻԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

16 Հոկտ., կիրակի ժամը 3ին, Հայ Ակումբին մէջ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՅԱՆՈՒՆ Շ. ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ՏԻԿ. Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Սահերու Միութիւնը կը բեմադրէ «ՇՈՒՌԱՑ ԹՈՐՈՍ. (պատկեր)

Գեղարուեստական բաժնին կը նուագէ Թաւիսա ԳԱՐԲՑԻՆ:

Մուտք 3 ֆրանք, փոքրերու 2 ֆրանք

ԿԱՐԴԱՑԷՔ ԵՒ ՏԱՐԱԾԵՑԷՔ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ, ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ («Հայաստանի գրականութիւն», հին ուղղագրութեամբ), Փարիզ, 1938, 7·50 ֆր.: *ԱՇԽԱՐՀԻ ԼՈՑՄՆ Ի ՀԱՑՍ*, Գաբեգին եպս. Տէրպէտոնի, 25 ֆր.: *ԱՊՏԻՒ ՀԱՄԻՏ ԵՒ ՇԷՐԼՕՔ ՀՈԼՄՍ*, եր. Օտեան 40 ֆր.: ԱՐԻՒՆ ՀԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Հ. Գ. Բ.), Ա. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՐՈՂՆԵՐ, Փարիզ 1939, 25 ֆր.: *ԱՐԾԻՒԸ ԻՐ ԲՈՑՆԻՆ ՄԷՋ*, Ա. Թէրզիպաշեան, Փարիզ 1938, 15 ֆր.: *ԱՐՇԱԿ ՁՕՊԱՆԵԱՆ* կենսագրութիւն, 10 ֆր.: *ԲԱՐԵԿԱՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՑ Ա.ԶԳ.* ԵԿԵՂԵՑԻՒ, Մ. Սերուեան, 1938, 15 ֆր.: ԵՐԳԻՉԱԿԱՆ, Ն. Պէշիկթաշլեան, 15 ֆր.: ԵՐԿՈՒՆՔ , Շէրենց, 20 ֆր.: *ԹՒՆՈՏՈՒՈՍ ՌՇՏՈՒՆԻՆ*, Շէրենց, 20 ֆր.: *ԽԱՉԱԳՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ*, Բաֆֆի, Գահիրէ, 25 ֆր.: *ՇԱՂԱՐԱՆԿԱՐՆԵՐ*, Ն. Պէշիկթաշլեան, 20 ֆր.: ԿԱՑԵՐ, Բաֆֆի, Ա. եւ Բ. մասին, 50 ֆր.: *ԿԱՐՄԻՐ ԴՐՈՒԱԳՆԵՐ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ՝ 1915 - 1918*, Ա. Մ. Քէչեան, Պուքրէշ 1938, 20 ֆր.: ՀԱՑԵՐԷՆ ԵՐԳԻՉ, ձայնագրեալ պատկ. երգարան, Գ. Աճէմեան, Ա. հատոր 7 ֆր.: Բ. 7 ֆր.: *ՀԱՑ ՄՇԱԿՈՑԹԻ ՕՐԸ*, պատկ. 10 ֆր.: *ՀԱՑԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ*, Յ. Պապէեան, 10 ֆր.: *ՄԱՅԻՍ 28* (1918 - 38, քառամեակ) 5 ֆր.: *ՄԿՐՏԻՉ ԵՕՆ ՆԵՂԲԱՑՐԵԱՆ*, Յ. Հիսարեան, 8 ֆր.: *ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ* 40 ՕՐԵՐԸ, Ֆ. Վերֆէլ, 2 հատոր, 70 ֆր.: ՆԱՐԵԿ, աշխարհաբար, Գաբեգին եպս. Տէրպէտոնի, լաթակազմ, 30 ֆր.: ՆՈՐ ՔՆԱՐ, ձայնագրեալ եւ պատկ. ընդհ. երգարան, 50 ֆր.: *ՍԱՄՈՒԷԼ*, Բաֆֆի, *ԱՓԷՆՔ*, 50 ֆր.: *ՐԱՖՖԻ*, կեանքը, Փարիզի 1937, 10 ֆր.: *ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԸ*, Ա. Զարըգ, 15 ֆր.:

LE ROLE DES ARMÉNIENS DANS LA CIVILISATION MONDIALE, avec 17 illustrations Prof. V. Totomiantz, Belgrade 1938, 40 fr., LA BELLE ANAHITTE, A. Sumenian, Toulon, 1938, 15 fr.:

ԴԻՄԵԼ՝ ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ

51 Rue Monsieur le Prince, Paris (6): CHÈQUE POSTAL: PARIS 1278-35. Tél. DANton 88-65, Métro Odéon :

Գրատունէն հարիւրին տասը, արտասահմանէն հարիւրին 15 առաքման ծախք աւելցնել ապսպրանքներու գումարին վրայ , զոր կանխիկ պէտք է ղրկել :

ԵՓՐԱՏ ՆՈՒԻԳԱԼԻՈՒԻՐ

Ղեկավար Տ. ՕՆՈՍԵԱՆ

15. Rue du Pourtour, Clamart, Seine **Tél. Observatoire 13-43**

Հեռաձայնել երեկոները 8էն վերջ :

Հայկական, եւրոպական եւ կովկասեան եղանակներ : Միակ նուագախումբը հաճելի զարճնելու համար ձեր հանգէսները, հարսնիքները եւ հաւաքոյթները :

ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ ԵՒ ՈՒՏԵՍՏԵՂԷՆԻ ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք Ֆրանսական, անգլիական եւ չեխոսլովաք կեռպասներու Փոփաքոցները կրնան ղրկել իրենց գնած ապրանքները: Ուսնէէվուտ եւ Թոյալ գրի մեքենաներ կը գնենք ու կը ծախենք օտար դրամներու կը տոհմներ ապրանքներու emballage *եւ ապահովագրութիւն: Փոխադրութիւն ամէն տեսակ ապրանքներու եւ պահածներու:*

Գիմել American Lloyd, Paris (9). 7 rue Auber

Tél. Opéra 67-77



“ ՇԻՐԱԿ ”

Արեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական, Անմրցելի, Աչխարհաբար Առաջնակարգ զօրացուցիչ ախորժակ բերէ, պատրաստուած զուտ չամիչի ջրովի: Հայ առեւտրական սեղաններէն զարդ:

Կ'ՈՒԶՈՒԻ *մաքուր կար կարող լաւ ափիէսէօր մը: Տեւական գործ, լաւ վճարում: Ներկայանալ Նամյշով* Dalex, 241 Rue de la Croix Nivert, Paris (15e.) *մէթրօ* Porte de Versailles, *օթոպիւս* 89, 93, AG, PC.

ՀԱՑ ԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԸ

Ճաշասրան Ֆլօրիա

61, Rue Monsieur le Prince, Paris (6e)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ :



ԲԱՂՔԸ ՏԻՒՔ

Ջուտ իսաոդէ քաղաքի եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է: ԲԱՂՔԸ ՏԻՒՔ, ջուտ օղին՝ սառուեւտական օդինեւէ ազատ ձեր ստամոքսը կ'ուժէ գլխցաւերը ջուր կը խմեցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան խմեցէք միայն ԲԱՂՔԸ ՏԻՒՔ օրուն անուն, կազդուրիչ եւ ախորժակ բացող, քաղցրահամ ժաքեր ըլլալու համար է:

Dalakupeian 8 Rue Sullier, Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70-89

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՑ	ԵՒԱՄՍԵԱՑ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՕՐ 14
ՀՈԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
14 Octobre
1938

ԺԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3860

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՖՐԱՆՍԱՆ Կ'ԵՓԻ ԻՆՔՆ ԻՐ ՄԷՋ

Պատերազմի մղձաւանջը հազիւ փարատած, հոսանքները նո-
րէն իրար կը խաչաձեւեն, այս երկրին մէջ։

Ահաւասիկ չարք մը նոր երեւոյթներ, որոնք անդամ մը եւս
կ'ապացուցանեն թէ Ֆրանսա չէ գտած իր ներքին հանգիստը, ա-
նալի վճռականօրէն գործելու համար միջազգային ճակատի վրայ։

կարգայիք նախկին ռազմիկներու կոչը, որ պարզելով տեւա-
կան տագնապի մը զանազան երեսները, կը պահանջէ ազգային
փրկութեան դաշինք մը կազմել, մինչեւ 1940ի երեսփոխանական
ընտրութիւնները։ Այս տաքիւ ծրագիրը մըն ալ մշակած են, եւ եթէ
ներկայ խորհրդարանը մերժէ զայն, պիտի պահանջեն լուծել
երեսփ. ժողովը եւ նոր ընտրութիւններ կատարել, փոխանակ
սպասելու մինչեւ 1940։

Առաջին անդամ չէ որ տապարէզ կը նետուին նախկին ռազմիկ-
ները, իրենց տեսակէտները արժեցնելու համար։ Անոնք մինչա ալ
զգացուցած են իրենց ներկայութիւնը, պարբերական տագնապ –
ներու առեն։

Բայց, կը թուի թէ այս անգամ աւելի զօրաւոր է չարժումը եւ
կը դնուի աւելի նպաստաւոր պարագաներու մէջ. քանի որ իս-
կապէս մաղ մնացած էր պատերազմի պայթելուն եւ այս տաքիւ
անդամ մը եւս պարզուեցան Ֆրանսայի ներքին տկարութիւնները։

Հոգեբանական պահէն գատ, նախկին ռազմիկները ինքնավս-
տահ կ'ներեւան նաեւ իրենց ներկայացուցած համբանքով, — վեց
միլիոն ընտրողներ՝ 11 միլիոնի վրայ։

Ուրիշ յատկանշական պարագայ մը,— ժողովրդական ճակա-
տին ճաքռտումը, որուն առաջին պաշտօնական խոստովանու-
թիւնը կը ներկայացնէ արմատականներու վարիչ մարմնին բա-
նաձեւը։

Ձեւականօրէն, ճակատը կը տեւէ տակաւին, քանի որ պաշ-
տօնական լուծում կամ խզում կատարուած չէ։ Իսկ իրականին
մէջ, ճակատը չատոնց տեղի տուած է օրուան դէպքերու ճնշու-
մին, քանի որ անոր երեք թեւերէն իւրաքանչիւրը կը նախընտրէ
գործել համաձայն իր հայեցողութեան։

Այս պարագան յայտնապէս չեչտուեցաւ ֆինանսական տագնապին
առեն, երբ ընկերվարական կուսակցութիւնը իր անվստահութիւ-
նը կը յայտնէր Պ. Տալատիէի արտաքին քաղաքականութեան
հանդէպ, իսկ համայնավարները խնայելէ պայքար մը կը մղէին, իրենց թերթերով եւ հրապարակային ժողովներով։

Ձեղքը աւելի խորացաւ, երբ, խորհրդարանի բացառիկ նիս-
տին մէջ, ընկերվարականները ձեռնպահ մնացին, իսկ համայնա-
վարները դէմ քուէարկեցին, կառավարութեան պահանջած լիա-
զօրութեանց առթիւ։

Միութիւնի համաձայնութենէն ի վեր, համայնավարները այլ-
եւս աջ-ձախ չեն նայիր, հարուածելու, վարկաբեկելու համար
Տալատիէի կառավարութիւնը, հրապարակաւ պահանջելով անոր
հրաժարումը։

Պայքարին գլուխն անցած է կուսակցութեան կեդր. կոմիտէն,
որուն ընդհ. քարտուղարը, Մորիս Թորէզ, բուռն ճառ մը կը խո-
սէր հոկտեմբեր 7ին, ամեռնային մարզարանին մէջ, ամէնէն ծանր
մեղադրանքներն ուղղելով։

Ինչպէս ամէն տեղ, Ֆրանսայի համայնավար կուսակցու-
թիւնն ալ նոր ազդանշան մը կը հնչեցնէ,— Ձէմմպրլէն եւ Տալա-
տիէ խորտակեցին խաղաղութեան ճակատը, օդնութեան թռչելու
համար (ըսել կ'ուզէ օդանաւով) Հիթլէրի եւ Մուսոլինիի ...

Թորէզն է որ կ'աղաղակէ, ջղագրգիռ բազմութեան մը առջեւ.
— « Միւնիխը հետեւանքն է 1936 մարտ 7ի, երբ Պ. Ֆլանտէն
անձնատուր եղաւ Հիթլէրի առջեւ։

Միւնիխը հետեւանքն է ոչ-միջամտութեան չարաշուք նա-
խածեռնութեան զոր ստանձնեց մեր ընկերը՝ Լէոն Պլում։

Միւնիխը հետեւանքն է անշլուսին, Աւստրիոյ կցումին, որ
կատարուեցաւ Ֆրանսայի եւ Անգլիոյ հաւանութեամբ, թէեւ եր-
կուքն ալ երաշխաւորներն էին Աւստրիոյ անկախութեան։

... Այո, այո՛, այո՛, դո՛ւրս Տալատիէ – Պոնէն, դո՛ւրս ...

Մնացեալը ինքնին կը հետեւի,— քշել օրուան վարիչները, եւ
հաստատել «կառավարութիւն մը որ արժանի ըլլայ Ֆրանսայի»։

Օրէ օր կը դունաւորուի այս ազդանշանը, եւ տակաւին առջի
օր նոյն հոսանքին ճառախօսները կը թելադրէին չհնազանդիլ, ե-
թէ կառավարութիւնը հարկ դատէր զինուորական նոր զգուշու-
թիւններ ձեռք առնել։

Այս մթնոլորտին մէջ է որ, արմատական կուսակցութիւնը
բացառիկ ժողով կը գումարէ, ճշդելու համար իր դիրքը։

Ո՞ւր կրնայ յանգիլ այս խմորումը։

Հարցումին պատասխանը գտնելու համար, անհրաժեշտ է
պարզել այլապէս ուշադրաւ երեւոյթներ, մանաւանդ ընկերվար-
կան կուսակցութեան դիրքը, որ կրնայ վճռական դեր կատարել։

Ուրիշ ազդակ մը եւս, Աչխատանքի Դաշնակցութիւնը, կոչ-
ուած է ազդելու կացութեան վրայ, իր հինգ միլիոն կազմակեր-
պուած անդամներով։

Այդ կազմակերպութիւնը դեռ նոր գումարեց իր ազգային
խորհուրդը, եւ օրուան ճառախօսները արհեստակցականէն աւելի
քաղաքական հոգեվով պրպտեցին, տեսակէտներ պարզեցին եւ
պահանջներ դրին։ Այս տաքիւ քաւէարկուած բանաձեւն ալ ինքնին
ազդանշան մը կը կազմէ, թէ ներքին եւ արտաքին գործունէու-
թեան տեսակէտով։

Այսպէս կամ այնպէս, Ֆրանսան կ'եփի ինքն իր մէջ, չատ
աւելի վախուկ պայմաններու տակ։

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՐԾՍԻԼ ԴԷՊԻ ՊԱԼՔԱՆԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ

Տէյլի Թէլէկրաֆի Պերլինի թղթակիցը կը գրէ (հոկտ. 12).—
Թէեւ ոմանես նախարարութեանէ պատկային առաջին փուլը զուգա-
դիպեցաւ Զեխոսլովաքիոյ տագնապին եւ այս պատճառով արժանի
արձագանգը չգտաւ մամուլի մէջ, բայց այժմ արդէն պարզ է, որ
անոր առաքելութիւնը նախապատրաստել մըն է գերմանական տե-
րակալութեան հաստատման՝ Հռենոսէն Սեւ Ծով։

Երբ Հէր Ֆոնէք մեկնեցաւ Պերլինէն սեպտեմբեր 18ին, կոտրա-
ւած էր իր խորհրդակցութիւնը տակաւին կատարուած չէր Հիթլէրի
եւ Ձէմմպրլէնի միջեւ։ Բայց իրեն տրուած հրահանգը հիմնուած
էր այն հաւանականութեան վրայ, թէ Գերմանիա չուտով պիտի
գրաւէ սիրական գիրք Պոհեմիոյ եւ հետեւաբար կեդրոնական Եւ-
րոպայի վրայ։

Ձուտէթեան հողամասերու գրաւումով այժմ Գերմանիա ի վի-
ճակի է զօրացնելու իր քաղաքական ու տնտեսական ճնշումը հա-
րաւ-արեւելեան Եւրոպայի վրայ, որովհետեւ Չեխոսլովաքեան
ճարտարարուեստի մրցակցութիւնը վերջ գտած է։

Աչխատելի լուրջ սպառնալիք չեն նկատեր անգլ-ֆրանսական
տնտեսական հակայարձակողականը, որ տեղի կ'ունենայ հարաւ-
արեւելեան Եւրոպայի երկիրներուն վարկեր բանալու ձեւով, որ-
պէսզի իրենցմէ ապրանք գնեն։ Անգլիա կրնայ պարբերաբար յո-
րէն գնել Ռումանիայէն, բայց Գերմանիան է որ ի վիճակի է ա-
ռեւտրական դաշինք կնքելու եւ ամէն տարի կանոնաւորաբար ան-
կէ գնելու երկրագործական արտադրութիւններ։

Եթէ Անգլիա եւ Ֆրանսա շարունակեն փորձել «գողնալ» այն առեւտուրը, որ, ըստ գերման հայեցողութեան, կը պատկանի գերման պետութեան, Գերմանիա մէկ երկու տարուան ընթացքին ի վիճակի պիտի ըլլայ, արեւմտեան սահմանագլուխի վրայ իր ամրութիւնները աւարտելէ ետք, յայտարարել այն վարդապետութիւնը, թէ կեդրոնական եւ հարաւ-արեւելեան Եւրոպայի առեւտուրը բացառապէս իրեն կը պատկանի։

Հէր Ֆոնէք իր ճամբորդութեան առաջին մասը անցուց Պել-
կրատի մէջ։ Ան մեկնեցաւ կազմելէ ետք խառն կոմիտէ մը,
որ պիտի մշակէ գերման-եուկոսլաւ նոր դաշնագիրը։ Այս դաշ-
նագրով Գերմանիա գրեթէ մենաշնորհը պիտի ստանայ եուկոսլա-
վիոյ ներածումին եւ արտածումին։

Գերմանիոյ նաւաճողական մտադրութեանց թափանցել կարե-
նալու համար բաւական է յիշել այն ճառը, զոր խօսեցաւ Հէր
Ֆոնէք Պելկրատի մէջ։ Ան պատկերացուց այն հսկայական ծրա-
գիրը, ըստ որու պիտի վերակառուցուի Եուկոսլաւիոյ հաղորդակ-
ցութեան ցանցը եւ զարկ պիտի տրուի երկրագործական արտա-
դրութեանց, Գերմանիոյ անմիջական համագործակցութեամբ։

Կը մնայ տեսնել, թէ ինչքան ուժեղ պիտի բախին գերման եւ
իտալական շահերը Պալքաններու մէջ։ Այստեղ որոշ կասկած կայ,
թէ Իտալիա կը պաշտպանէ Լեհաստանի ու Հունգարիոյ սահմա-
նակցութիւնը, որ կրնայ Պալթիկէն մինչեւ Ադրիական ծով ուղիղ
գծով պատուար քաշել գերման տնտեսական ծաւալականութեան
առջեւ։

Քանի որ Գերմանիա ընդհանուր ծաւալականութեան ծրագիր
կը հետապնդէ, ուստի հաւանական է որ ժամանակաւորապէս հաշ-
տուի արդիւնքը Իտալիոյ հետ բաժնելու մտածումին հետ։ Բայց
անդամ մը որ Գերմանիա տեղաւորուի, այնուհետեւ ասպարէզ
պիտի չթողու որ եւ է մրցակցութեան։

Հէր Ֆոնէքի մեծագոյն յաղթանակը եղաւ այն համաձայնագիրը, զոր կնքեց Էնկիւրիի մէջ եւ որուն համաձայն Գերմանիա 12,500,000 սթերլինի վարկ կը բանայ Թուրքիոյ՝ ճարտարուեստական ու զին. պէտքերը զարգացնելու համար։ *Պերլինի առեւտրական շրջանակները կը կարծեն, թէ միւս երկիրները, ուր պիտի այցելէ Հէր Ֆոնէք, չատ աւելի դիւրաւ պիտի իյնան Գերմանիոյ գիրկը, քանի որ Թուրքիան, ուր անգլիական ազդեցութիւնը դեռ ահռելի էր, տեղի տուաւ։*

Երբ մօտիկ ապագային Թուրքիոյ տնտեսութեան նախարար Շաֆիր Քէսիպիր այցելէ Պերլին, իրեն ցոյց պիտի տան ռազմական ու ճարտարարուեստական գլխաւոր հաստատութիւնները, եւ վերջնական կարգադրութիւն պիտի ընեն վերոյիշեալ վարկի մասին։

Էնկիւրիէն վերջ Սոֆիա, յետոյ Պուխրէշ եւ Աթենք

Գերմանիոյ տնտեսութեան նախարար Հէր Ֆոնէք Պոլսէն Սո-
ֆիա հասնելով երկար տեսակցութիւն մը ունեցաւ վարչապետին
հետ։

Պոլսէն մեկնելէն առաջ նախարարը յայտնեց, թէ հրաւէր ըս-
տացած է ռումէն եւ յոյն կառավարութիւններէն այցելելու Պուք-
րէշ ու Աթէնք։ Ինք ուրախութեամբ ընդունած է այս հրաւէրները,
բայց յետաձգած է այցելութիւնը, որովհետեւ նախ կ'ուզէ Պերլին
վերադառնալ։

Հէր Ֆոնէք Սոֆիայէն անմիջապէս պիտի անցնի Պերլին, ուր
կարգ մը խնդիրներ ծագած են, Ձուտէթեան հողամասերու
դրաւումով։

Հէր Ֆոնէք յայտարարեց, թէ գերման-պալքան տնտեսական
յարաբերութիւններու կանոնաւորումը տեղի պիտի ունենայ փո-
խադարձ դաշնագիրներով, որոնք հիմնուած պիտի ըլլան արտա-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. Էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ՐՈՊԵՐԻ ՔՈԼԷՃԻ «ՓԻՎԱԻ»Ը ԵՒ ՓՐՈՖ. ԱԲՐ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ

Պոլսոյ թերթերէն ցաւով կ'իմանամ թէ հոկտեմբեր 7ին մեռեր է փրոֆ. Աբրահամ Տէր Յակոբեան, բազմավաստակ ուսուցչապետը։

Ծնած՝ **1855**ին, եւ հիւանդ՝ երկար ատենէ ի վեր, բանի մը տարի առաջ փարիզ ալ եկած եւ գործողութեան մը ենթարկուած էր։

Բայց ես իր կենսագրականը չէ որ պիտի ներկայացնեմ այստեղ։

Ոչ աշակերտ եղած եմ իրեն, ոչ ալ ընթերցող՝ իր փիլիսոփայական եւ հոգեբանական ուսումնասիրութեանց։

Իրեն հետ առաջին եւ վերջին հանդիպումս եղած է արկած մը, որ կրնայ... եղերական - կատակերգական կոչուիլ։

1915ին էր, ընդհանուր ձերբակալութիւններէն անմիջապէս վերջը։

Օրուան հետապնդումներէն խուսափելով, անցեր էի Բերա։ Ընկերները ամէն գիշեր տեղ փոխել կուտային, ցնոր տնօրինութիւն։

Գիշեր մըն ալ ինֆզինֆս գտայ Րոպերթ-Քոլէճի ընդարձակ ճաշարանը, ուր կը ծառայէր մեր Արփիարը, այժմ Առնուվիլ։

Կարծեմ ժամը տասն էր, եւ մարդ չկար ճաշարանին մէջ։

Արփիար փառաւոր *փիլաւ* մը եւ ուրիշ ուտելիքներ շարած՝ սեղանին վրայ, կը խնդրէր որ շուտ վերջացնեմ։

Մէկ ալ հեռուէն՝ ստուերին մէջ ենթւցաւ դէմք մը, զոր մէկ - երկու սնգամ հազիւ տեսեր էի։

Փրոֆէսէօր Աբր. Տէր Յակոբեանն էր։ Սեղանի մը առջեւ նստած՝ կը պատրաստուէր ճաշել ուրիշի մը հետ։

Մեր աչքերը իրարու հանդիպեցան։ Ուսուցչապետը, միշտ ժպտուն, կարծես հաճութեամբ կը բարեւէր զիս, իբրեւ հպածական թուչուն մը։

Դո՛ւ միայն կաս յերուսաղէմ ...

Բանի մը վայրկեան վերջը Արփիարը եկաւ, ինչ մը գուսան, եւ բաներ մը փսփսաց ականջիս։

Փիլաւը կէս ձգելով, հետեւեցայ իրեն։ Անցանք ոլոր - մոլոր ընթացքներէ, դէպի աջ, դէպի ձախ, ա՛յս նղոմէն, ա՛յն կողմէն,— եւ առաջնորդուեցայ թախտոց մը, չեմ գիտեր ո՛ւր։

Ամէն պարագայի մէջ, Քոլէճը եւ փրոֆէսէօրը ազատած էին մեծ «փորձանք»է մը։

Մտածումս անմիջապէս գնաց Արփիարին։ Հապա եթէ ան փորձանքի հանդիպած ըլլար, իմ պատճառով...

Բարեբախտաբար կարճ տեւած էր «միջադէպ»ը։ Եւ փրոֆ. Աբրահամ Տէր Յակոբեան, միշտ զգոյշ եւ բարեմոյն, ծայրայեղութեան չէր գացած։

Բանի մը տարի վերջը, **1919**ին, այս խեղօթիկ մարդն էր որ պատգամաւոր նշանակուեցաւ Փարիզի Ազգ. Համագումարին, պաշտպանելու համար հայկական պահանջները։

Հանգիստ իր... հեռատեսութեան։

Վ.Ա.Հէ

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ԱՐԿԱԾՔ

Ինչպէս հաղորդած էինք երէկ, հրդեհ մը անգործածելի դարձուցած է *Հայրենիքի* խմբագրատունը (Գոսքըն)։

Թերթը լոյս տեսած է Սեպտ. 30ին, արկածէն բանի մը ժամ առաջ։ Յաջորդ համարը հրատարակուած է հոկտեմբեր 4ին, միայն երկու էջ։ Խմբագրատունը առժամապէս փոխադրուած է նախորդ շէնքին մօտ, Կ. Խաչի գրասենեակին կից։

Պ. ՏԱԼԱՏԻԷԻ ՀԵՐՔՈՒՄԸ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՄԸ ՄԱՍԻՆ

Աչխատանքի Դաշնակցութեան ազգային կոմիտէի վերջին ժո-
ղովին մէջ, ընդհ. քարտուղարը, Պ. Լէոն Ժուհօ, հետեւեալ պատ-
մութիւնը պատմած էր, Պ. Տալատիէի հետ եղած խօսակցութեան
մը առթիւ.

— «Խօսակցութիւնը դարձաւ Զեխոսլովաքիոյ վրայ եւ Պ. Տա-
լատիէ ըսաւ մեզի. — « Այո՛, դաշնագիրներով կապուած ենք Զե-
խոսլովաքիոյ հետ, բայց դաշնագիրները ենթակայ են մեկնու-
թեանց»։ Ես պատասխանեցի.— « Ֆրանսա մեկնութեան չենթար-
կեր իր սառրագրութիւնը»։ Ան առին վարչապետը ըսաւ ինծի.

— « Լսեցէք, ձեզի պիտի կարդամ զօր. Կամլէնի մէկ տեղեկա-
գիրը»։

« Տեղեկագիրը սեղանին վրայ էր եւ կարդայ առաջին էջը, որ
կ'եղրակացնէր — աւելի ճիշդ կը հաստատէր — այն դժուարու-
թիւնները ուր կը դանուէինք, իբրեւ հետեւանք Սարի չբջանին
Գերմանիոյ միացման, Հռենոսեան չբջանին վերազինման եւ Աւս-
տրիոյ կցման։ Սպարապետը կը բացատրէր այս բոլոր դժուարու-
թիւնները։ Ան առին ըսի վարչապետին.— Մենք ալ գիտենք այդ
դժուարութիւնները. չկայ մէկը, ինչքան ալ անտեղեակ ըլլայ, որ
չըմբռնէ ներկայ դժուարութիւնները, Զեխոսլովաքիոյ օգնու-
թեան հասնելու համար։ Բայց, ի՞նչ կ'ըսէ Զօր. Կամլէն իր եզ-
րակացութեանց մէջ»։ Եւ մեզի կարդաց եղրակացութիւնները, որ
կ'ըսէին.— « Հակառակ այս բոլոր դժուարութեանց, պէտք է մի-
ջամտել »։

Այս պատմութիւնը նոյնութեամբ հրատարակուած ըլլալով
Աչխատանքի Դաշնակցութեան օրկանին մէջ, վարչապետութիւնը
անմիջապէս մամուլին յանձնեց պաշտօնական դեկոյց մը, որ «բո-
լորովին անճիշդ» կը հռչակէ Պ. Տալատիէի վերագրուած խօս-
քերը։

2,300,000,000 ֆրանք եւս ազգ. պաշտպանութեան համար

Նախարարական խորհուրդը 2,300,000,000 ֆրանքի բացառիկ
վարկ մը սահմանեց ազգ. պաշտպանութեան, չորեքշաբթի օրուան
նիստին մէջ։ Այս գումարին 1,420,000,000 ֆրանքը պիտի գոր-
ծածուի բանակին եւ օդանաւային ուժերուն համար, իսկ
887,500,000ը օգտագործիլին համար։

**** Նախարարական խորհուրդը նոյն նիստին մէջ նշանակեց*
հետեւեալ դեսպանները, սպասելով պատկան կառավարութեանց
հաւանութեան,— Հռոմի համար՝ Պ. Ֆրանսուա Փոնսէ (Պերլինի
դեսպանը), Էնկիւրիի համար՝ Պ. Մասիլի, արտաքին նախարա-
րութեան քաղաքական գործերու վարիչը, Պերլինի համար՝ Մո-
կուայի դեսպանը, Պ. Քուլոնտր։

ՀԱՅՐԱՊԱՏԻԿ ԱՂՋԻԿ

Հեղ. Բարթ. Ա. ՀԱՍԻԼԱՆ

ՀԱՏՎԱԾ ՊԵՏՔԻ ՄԵՔՆԱՆ

— Ճիշտ ուզածդ, բայց ոչ ամենքն են հավատում։ Ես ինքս էլ ուզում եմ հավատալ, որ ինձ ոչ ոք չի կրնա սպանել, մինչև որ իմ ժամանակը չհասնի։ Ես ոչ մի վտանգից չեմ վախենում, որովհետև գիտեմ, որ ինձ չեն սպանի։ Ես ոչ մի վտանգ չեմ տեսն

ԲԱՑԱՌ ԼԵԼԵՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՐՀԸ

1920 • 1921

Ի.

— Բ՜ո՛ւշ... Բնկեր նայէ՛ր, ինչ կ՚ըսէ... Ինչպէ՛ս կրնայ ան ալ ըսել... Ինչպէ՛ս կրնայ ան ալ ըսել... Ինչպէ՛ս կրնայ ան ալ ըսել...

դրութիւնները փոխանակելու դրութեան վրայ: Նախաբարբը ըսաւ նաեւ թէ Թուրքիոյ յատկացուած վարկը վճարելի է տասը տարիէն եւ աւելի նպաստաւոր պայմաններ կ'ընծայէ Թուրքիոյ, բան անգլիական 10 միլիոն սթերլինի վարկը:

Գերման նախարարը Պուլկարիոյ մէջ ալ մասնաւոր ուշադրութիւն պիտի դարձնէ հանքային հարստութեանց օգտագործումին վրայ:

Պուլկար թերթերը ընդարձակ հրատարակութիւններ կ'ընեն Հէր Ֆունքի այցելութեան առթիւ: Կառավարութիւնը կը բաղձայ, որ գերման նախարարը յատկապէս ուսումնասիրէ գերման ճարտարարուեստին հետ կապուած կազմակերպութիւնները, որոնք արդէն ուսումնասիրուած են Տոքթ. Էյլի պատուիրակութեան 30 մասնագէտներու կողմէ: (Այս մասնագէտները չարաթ մը առաջ Սոֆիա գացին օդանաւերով):

Գերմանիոյ առեւտուրը Պուլկարիոյ հետ կը զարգանայ ոչ թէ քայլ առ քայլ, այլ ոստումներով, մինչ անգլիան ու անգլիական ընկերութիւնները անտարբեր կը մնան:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՁԱԿԱՏԸ ԿԸ ԼՈՒԾՈՒԻ՞

Աւմաստական կուսակցութեան ծանրակշիռ վերադարձիները

Աւմաստական կուսակցութեան վարիչ մարմինը (Բիւրօ) առջի օր բացառիկ նիստ մը գումարելով, զրաղեցաւ քաղաքական խընդիրներով: Այս առթիւ ժողովականները խստօրէն դատապարտեցին համայնավարներուն ընթացքը:

Երկար վիճաբանութիւններէ վերջ, ներկայ քսան անդամները, բացի երեքէն, միաձայնութեամբ քուէարկեցին բանաձեւ մը որ կ'ըսէ·

— «Աւմաստական ընկերվարական կուսակցութիւնը միշտ ուզած է խուսափիլ բանավէճերէ որոնք կը ակարացնեն երկիրը: Վերջին ատգնապին առեն, նախագահ Տալատիէ վայելեց երկրին բանիմաց աջակցութիւնը: Ժողովուրդին հանդարտութիւնը եւ զօրաշարժի ենթարկուած զինուորներուն վճռականութիւնը ատոր վկայութիւն ապացոյցը կը կազմեն, իսկ խորհրդարանին քուէն ալ՝ անոր անժխտելի նուիրագործումը:

Կուսակցութիւնը միութեան կոչը կը կրկնէ օրուան այս ժամուն ալ երբ երկիրը, որ հաստատեց իր խաղաղասիրութիւնը, պարտի ապացուցանել իր նիւթական եւ բարոյական ուժը, ապահովելու համար այդ խաղաղութեան պահպանումը: Բայց այդ միութիւնը չի կրնար իրականանալ երկպիմութեամբ: Միութիւնը կարելի չէ այն անպատասխանատու մարդոց հետ, որոնք, ինչպէս նախկին վարչապետ մը, ուղղակի հաղորդակցութիւն հաստատած են օտար կառավարութեանց հետ եւ ջանացին, քարոզչական բոլոր ձեւերով, խափանել ազգային պաշտպանութեան միջոցները, ճիշդ այն պահուն երբ դժուարին բանակցութիւններ կը կատարուէին կառավարութեան կողմէ, բուն իսկ Ֆրանսական չահերուն պաշտպանութեան համար:

Բանագնացներուն աշխատանքը նոյնքան չյաւուեցաւ եւ կը չյաւուի այն մարդոց կողմէ որոնք կը փորձեն ընկերային խլրտումներ յարուցանել եւ խեղաթիւրել կառավարութեան գործունէութեան իմաստը, որոնք այդ իսկ նպատակով կը բազմապատկեն ամէնէն կոչտ վիրաւորանքները, նախատինքները եւ սուտերը: Այդ յարձակումները կը հասնին ոչ միայն կառավարութեան պետին եւ այն քաղաքական կուսակցութեան զոր կը ներկայացնէ եւ որ միաձայնութեամբ կանգնած է իր կողքին, այլեւ այն կուսակցութենց որոնք իրենց քուէներով նուիրագործեցին կառավարութեան քաղաքականութիւնը եւ գրեթէ ամբողջութիւնը ազգին որ ուղեց աչքարձի առնել արտայայտել Ֆրանսայի վճռականութիւնը, ինչպէս եւ խորունկ խաղաղասիրութիւնը:

Խորհրդարանին մէջ իսկ, համայնավար խմբակցութիւնը այդ ընդդիմութիւնը արտայայտեց երկու թշնամական քուէարկութիւններով: Այսպէս միաժամանակ, հանրային կարծիքին եւ խորհրդարանին առջեւ, այդ խմբակցութիւնը գիտակցօրէն հաշուեցաւ այն հաղաքական խմբաւորումէն որուն միշտ ալ կուսակից կը հռչակէ ինքզինքը: Աւմաստական - ընկերվարական կուսակցութիւնը կ'արձանագրէ այս կացութիւնը, որուն մէջ որ եւ է պատասխանատուութիւն չունի, եւ չի վախնար երկրին դատաստանէն: Այդպիսի լեզու մը գործածելով, կուսակցութիւնը համոզուած է թէ թարգմանը կը հանդիսանայ ժողովրդական զանգուածներուն, թէ կը պաշտպանէ բանուորներուն եւ գիւղացիներուն ճշմարիտ չահերը: Ետքապէս վարած՝ հանրապետական հաստատութեանց, ազատութեան եւ խաղաղութեան խէմային, աւմաստական - ընկերվարական կուսակցութիւնը պիտի չարունակէ ամուր հաստատ - քով ծառայել հայրենիքի եւ ժողովրդապետութեան նուիրական չահերուն»:

Նախկին ռազմիկները կը գործեն

Ինչպէս հաղորդեր էինք երէկ, նախկին ռազմիկները գործի ձեռնարկած են, յաջողցնելու համար ազգ. փրկութեան դահլիճի մը կազմութիւնը:

Շարժումը երթալով կը ծաւալի: Նախկին ռազմիկներու Դաշնակցութեան ծրագրին հաւանութիւն յայտնեց նաեւ Վեթերաններու Ազգ. Միութիւնը, որ աշակողմեան կազմակերպութիւն մըն է եւ մեծ մասով կը բաղկանայ նախկին սպաներէ եւ ենթասպաներէ, աւելի քան 900,000 անդամներով: Ուրիշ երկու խմբակցութիւններ ալ միացան շարժման, որ այժմ կը ներկայացնէ 6,000,000 ընտրողներ, 11 միլիոնի վրայ: Ուրեմն, ամէն մի - ջոց պիտի փորձուի, որպէսզի Ֆրանսա զօրաւոր կառավարութիւն մը ունենայ մինչեւ 1940ի ընտրութիւնները, կամ աւելի առաջ:

Իտալիա կը ջանայ ինքնաբաւ դառնալ

Իտալիոյ ինքնաբաւութեան Գերագոյն Խորհուրդը ժողով գումարեց, նախագահութեամբ Մուսոլինիի, քննելու համար մինչեւ հիմա ձեռք բերուած արդիւնքները:

Իտալական թերթերը կը գրեն թէ կարելի պիտի ըլլայ 80 միլիոն կենդինարի հասցնել ցորենի տարեկան արտադրութիւնը, չորս տարուան մէջ, եւ յետոյ 90 միլիոնի, բաւելու համար բոլոր պէտքերուն, միշտ նկատի առնելով բնակչութեան աճումը: Այս առաջադրութեամբ, պիտի բնդարձակուին մշակելի հողերը, անոնց տարածութիւնը հասցնելով 5 միլիոն հէքթարի: Ասկէ զատ, պիտի գործածուին հատընտիր հունտեր, որոնց չնորհիւ կարելի եղած է 1921ի 11·5 կենդինարը 16ի բարձրացնել 1938ին (իրաքանչիւր հէքթարի վրայ):

Եգիպտացորենի արտադրութիւնն ալ պիտի աւելցուի, ընդարձակելով մշակելի գետինները:

Գալով մխին, կը նախատեսուի ամէն տարի ներածել 800,000 կենդինար, լեցնելու համար երկրին արտադրութեան եւ պէտքերուն անհատասարակչռութիւնը. միեւնոյն ատեն զարկ պիտի տրուի խոտի արտադրութեան: Կարեւոր արդիւնքներ ձեռք բերուած են հողագործական արտադրութեանց արտածման մէջ: Գերմանիա ամէնէն կարեւոր յաճախորդն է այս ճակատին վրայ եւ կը գնէ 39 առ հարիւրը:

Կը յուսացուի նաեւ աւելցնել ձկթի, մղում տալով արտադրութեան որ կայուն վիճակ ունի 1885էն իվեր, — տարեկան երեք միլիոն կենդինար:

Հունգարիա կը պնդէ...

Հունգարիոյ եւ Չեխոսլովաքիոյ բանակցութիւնները երթի մը չեն յանգած տակաւին: Հունգարիա կը պահանջէ իրեն յանձնել երկրամաս մը ուր կը գտնուին 840,000 Հունգարներ, 175,000 Սլովաքներ եւ 57,000 Գերմաններ: Իսկ Չեխերը կ'առաջարկեն ինքնավարութիւն չնորհել այդ չրջանին, կամ յանձնել միայն այն երկրամասը ուր 700,000 Հունգարներ կը գտնուին: Վերջին պահուն բանակցութեանց խաւնուեցան նաեւ Ռութէնները, որոնցմէ եւս հող կը պահանջէ Հունգարիա, հիմնուելով Միւնիխի համաձայնութեան վրայ: Հունգարները առաջարկեցին հանրաքուէ կատարել ամբողջ Ռութէնիոյ մէջ, բայց այդ ինքնավար չրջանին կառավարութիւնը վճռապէս մերժեց:

ՁԱՆԱԶԱՆԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՒ

50,000 ՁԱՓՈՆԱԿԱՆ ՁԻՆՈՒՈՐՆԵՐ ցամաք եւան Հոնկ Քոնկի մօտերը, կարելու համար Ձինացիներու պաբենաւորման միջոցները: Կը կարծուի թէ մինչեւ 200,000ի պիտի բարձրանայ այս բանակին թիւը: Անգլիա օդնական զինուոր ղրկեց, Հոնկ Քոնկի պաշտպանութեան համար: Ձինացիները մէկ միլիոն զինուոր կեդրոնացուցած են գլխաւոր ճակատին վրայ եւ կռիւները կը չարունակուին մոլեգնօրէն:

ԿԻՐԻԼ ՄԵԾ - ԴՈՒՔԸ, որ Ռուսաստանի ցարական գահուն ժառանգորդը կը համարուէր, մեռաւ Փարիզի մէկ դարմանատան մէջ: 62 տարեկան էր: Ռուս միապետականները ժողով պիտի գումարեն, նոր գահաժառանգը ընտրելու համար: Կան երկու թեկնածուներ.— Հանգուցեալին զաւակը, Վլատիմիր մեծ դուքսը, 21 տարեկան, եւ Դմիտրի մեծ - դուքսը, որ ներկայ եղած է Ռասփութինի սպանութեան:

Ա. ՄԻՈՒԹԵԱՆ Լոնտոնի դեսպանը բողոքեց Անգլիոյ նախարարներէն լորտ Ուինթըրթընի դէմ, որ ճառի մը մէջ բսած էր թէ Ա. Միութիւնը որոշ խոստումներ չէր տուած Չեխոսլովաքիոյ օգնելու համար, իր զինուորական պարտութեան պատճառաւ: Անգլիացի նախարարը նոր ճառ մը խօսելով, պնդեց թէ իր յայտարարութիւնը բացարձակապէս ճիշդ է եւ այս առթիւ նոր մանրամասնութիւններ հաղորդեց:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ազգ. խորհուրդը երկար վիճաբանութիւններէ վերջ քուէարկեց իր բանաձեւը, որ կը թելադրէ համաչխարհային խորհրդաժողով մը գումարել հրաւիրելով բոլոր պետութիւնները, առանց նկատի առնելու անոնց վարդապետութիւնները կամ քաղաքական կարգուսարքը:

ԱՆԳԼԻՈՑ ԱՓՐԻԿԵԱՆ ԳԱՂԹԱՎԱՃԵՐԸՐՈՒՆ մէջ մտահոգութիւն կը տիրէ, թէ Գերմանիա կրնայ իր նախկին գաղթավայրերը եւս պահանջել: Տընպարի մէջ հանրաքուէ կը ժողվեն, պահանջելով որ տիրիկեան ո եւ է հողամաս չվերադարձուի նախկին տիրոջը: Այս չարժումը օրէ օր կը զօրանայ հարաւ - արեւմտեան Աֆրիկէի եւ Թանկանիքայի մէջ:

ԳԵՐՄԱՆ ԲԱՆԱԿՆԵՐՈՒ զօրացուցումը պիտի սկսի հոկտեմբեր 19ին եւ պիտի աւարտի մէկ ամիսէն: Կը կարծուի, թէ բանակի բարձր հրամանատարութեան մէջ փոփոխութիւններ պիտի կատարուին:

Հ. Յ. Դ.

Գաւառ

ՍԷն ՄՈՐԻՍԻ «Յառաջ» խումբի ընդհ. ժողովը 15 չոկտ., շաբաթ կէսօրէ վերջ ժամը 3ին, սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԿՐ ՏՕՆՈՒԻ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ.- 29 ՀՈԿՏ. ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ ԺԱՄԸ 8.30ԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՌԱՒՕՏ:

ԸՆԿԵՐԱՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԽՆՃՈՑՔ

Հ. Յ. Դ. վիէեի կոմիտէն կազմակերպած է ընկերահամակրական խնճոյք մը, 15 Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին «Մաժակ» ակումբին մէջ: Պիտի ըլլան արտասանութիւններ, խմբերգներ եւն.: Կը հրաւիրուին ընկերներ եւ համակիրներ, Ճոխ պիւֆէ:

ՀՐԱԺԵՇՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

«ՍԻՐՈՒՇ" ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ԼԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ Յ. ՂԱԶԱՐԵԱՆԻ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԿԱՐՈՂ ՈՒԺԵՐՈՒ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ 15 ՀՈԿՏ., ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ ԺԱՄԸ 9ԻՆ

ՍԱԼ ՄԱՔԶՐՆՈՑԻ ՄԷՋ, 88 ՌԻԻ ՏՕՊԱՆԼԸ Մարսէյլ

16 ՀՈԿՏ., ԿԻՐԱԿԻ ԿԷՍՕՐԵ ՎԵՐՋ ԺԱՄԸ 3ԻՆ

ՎԱՐԱՆԴԵԱՆ սրահին մէջ, 10 ՊՈՒԼՎ. ՏԷ ՄԱՐԿՈՐԻԹ, Պօսթն

ԱԿԱՄԱՑ ԲԺԻՇԿԸ

Իրենց համակրութիւնը կը բերեն ՏԻԿԻՆ Մ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ եւ ՕՐ. ԱՆԾԷԼ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ:

ԹԷՅԱԹԵՂԱՆ

Հ. ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԱՍՆԱՒԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

16 Հոկտ., կիրակի ժամը 3ին, Հայ Ակումբին մէջ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՅՈՆՈՒՆ Շ. ՎԱՐԶՈՒԻԹԵԱՆ ՏԻԿ. Շ. ՄԻՒԱՔԵԱՆ

Սաներու Միւքթիւնը կը բեմադրէ «ՅՈՒՌԱՑ ԹՈՐՈՍ», (պատեչա) Գեղարուեստական բաժնին կը նուագէ Թառիստ ԳԱՐԻՆԳԻՆ:

Մուտք 3 ֆրանք, փոքրերու 2 ֆրանք

ՍԱՄՈՒԻԼԻ ՏԱԿ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ՖՐ. Կ. ԽԱՉԻ 1939 ՏԱՐՈՒԱՆ ՕՐԱՑՈՑՑԸ

ՁՈՒԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Տեղեկութիւններ Հայոց պատմութենէն, աշխարհագրութենէն եւ վիճակագրութիւն արտասահմանի Հայոց, եւ Հայաստանի, հայ եւ մի ջազգային կ. խաչերու մասին: Պատմական ամփոփ ակնարկներ, գրական, խոհարարական եւարլեն բաժիններով, երեսունէ աւելի նկարներ՝ կ. խաչի դպրոցները, դամբանատուները եւարլեն, տեսարաններ Հայաստանէն: Խոսքէն Ա. կաթողիկոս, Մ. Վարանդեան, Վարուժան, Սիամանթօ, Դուրեան, Մեծարենց, Բակունց, Մահարի, Յ. Զարիֆեան եւարլեն: Գեղարուեստական կազմով, 112 է.: Օրացոյցը գործածելի վերջ կարելի է պահել իբրեւ գիրք, տպագրութիւնը յարմարցուած լուսաշարով այդ նպատակին:

ՎԵՐԱՄՈՒՏԻ ՀԱՆԴԷՍ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻՆԵՑ ՄՈՒԻԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ Պ. ԱՐՇԱԿ ՁՕՊԱՆԵԱՆԻ

16 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 4էն մինչեւ կէս գիշեր: 8 Ռիւ Պօսիէ, փարկ: Կը խօսին զոյգ Միւքթեանց ներկայացուցիչները: Գեղարուեստական բաժին եւ պար: Խնամուած պիւֆէ եւ որ քան: Մուտք 3 եւ 5 ֆրանք:

ՑՕՌՔ կը ծախուի Սարթիհի շրջանին մէջ

42, Rue des Petits Carreaux փարիզ Mr. Pierre Marchal ի խանութը:

Ա. ՁԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ - ԱՏԱՄՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

44 Rue Dunkerque (ՄԷթրՈ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՒ)

Tél. Trudaine 42-69

Ընդունելութիւն առաւօտեան 9էն օր ժամը 14—20

Ձառայողները ժամադրութեամբ:

ՁԵԻԱԴԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Յառաջիկայ Հոկտեմբեր 25ին կը սկսին ձեւագիտութեան դասերը՝ **robe-d'après midi, robe du soir, ensemble, manteau, jusqu'au tailleur**, հերմակեղէն եւ **dessin croquis** կը դասաւանդուին ամենապարզ եւ գործնական մեթոտով: Արձանագրութիւնները կրնան դիմել՝ **modeliste-couturière CHRISTOFOR, 31 Rue Condercet, Paris (9)** մէթրօ **Anvers** կամ **Cadet**:

Դասախօսութիւնը տեղի կ'ունենայ հայերէն, յունարէն, ֆրանսերէն, անգլիերէն եւ ռուսերէն լեզուներով:



Fourrures de St. Bernard

ՀԱՅԿՈՒՀԻ ԿԻԼՊՕԼԵԱՆ

Մեկ վստահելի տունը ուր պիտի գտնէք տոկուն ապրանքներ զեղչեալ գիներով: Ընտիր արժանիքներ, իրական մօրթեր, փիթուաններ, սկունաներ, օձիքներ, գաբեր, վերարկուներ եւարլեն:

Կը չինենք չափու վրայ մանթօներ՝ զանազան տեսակ մուշտակներէ, վերջին նորաձեւութիւններով:

Կը սանձնենք մուշտակներու նորոգութիւնը, ձեւափոխութիւնը, ներկելը եւ թանաքը: Մուշտակները կը մաքրենք ձրի, կիրակի օրերը բաց է մինչեւ կէս օր:

24, Rue Affre կամ 8, Rue Cavé — PARIS - 18e

Մասնաճիւղ՝ 2, Rue de la Charbonnière —

Մէթրօ՝ La Chapelle — Barbès Roch. Tél. Montmartre 69-70

ՕՆ DUZE. MARQUE DÉPOSÉE RAKI 40 DUZE

Véritable Anisette Orientale

ՋՈՒՏ ԻԱՂԼԻՔ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ՕՂԻ - زوزه مصول خالص راقی

DISTILLERIE OTTOMANE ISTAMBOUL

ՕՂԻՔԸ ՏԻՒԶ

Ջուտ իսպղոյե քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է: ՕՂԻՔԸ ՏԻՒԶՈՒ ՋԱՐԻՆ ԱՐԱՒԱՏԱԿԱՆ օղիներէ աւելի ձեր ստամոքսը կ'պահէ եւ ձեր վիշերները ջուր կը խլէ եւ կը մնասէ ձեր ստամոքսին: Խմեցէք ՕՂԻՔԸ ՏԻՒԶՈՒ որուն համ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալէ զատ ստամոքսը կ'պահէ:

Dalakupeian 8 Rue Sutter Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—

ՏՈՒԺԱՏԵՏՐ

ԻՍԻ-ԼԷ-ՄՈՒԼԻՆՈՑԻ Հայ կամաւորներու եւ Մարաիկներու Միութեան Ընդհ. ժողովը, 15 Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը 8·30ին «Արմէնեան» սրահին մէջ: Կը հրաւիրուին բոլոր մարաիկները:

ՓԱՐԻԶԻ Թոքաբոյժ Հայրենակցական Միութեան ժողովը տեղի պիտի ունենայ 16 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 2—4, Պ. Թրավէրսեան բնակարանին մէջ, 13 Rue Charles Colmus, Paris (13): Բոլոր հայրենակիցները, նեղէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Հ. Թրավէրսեան, ե, Գասիլեան Գապիկեան:

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demesme — PARIS (11e)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵԼԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	120 ֆրանք	

ՇԱԲԱԹ 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ SAMEDI 15 Octobre 1938

ԺԹ ՏԱՐԻ — 14e Année No. 3861

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ՎԱՂՈՒԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Ուրեմն, Ֆրանսա կը գտնուի նոր ալեկոծութեան մը առջեւ, իրեւ հետեւանք ներքին խմորումներու եւ խլրտումներու :

կը թուի թէ բոլորն ալ համակերպած են երեսփ. Ժողովին լուծման : Ե՛ւ այը Ե՛ւ ձախը :

Լէոն Պլում իր մէկ խմբագրականին մէջ յուզելով այս հարցը, կը խօսի նաեւ անոր հետեւանքներու մասին :

Իր կարծիքով, այդ պարագային ընկերվարականները ու ձախամտածները մէկ ճակատ պիտի կազմեն, աւելի ջախջախիչ յաղթանակ մը շահելու համար :

Անոնք փոխադարձ զիջումներ պիտի կատարեն, որպէսզի կարելի եղածին չափ շատ քուէ, հետեւաբար եւ աթոռ շահին : Եւ այդմէն առաջադրութիւն կը յայտնեն ուրիշ ձախակողմեան հոսանքներու թեկնածուներն ալ յաջողցնելու, ուր որ կարելի է :

Երեսփ. Ժողովին լուծումը անհրաժեշտ կը դառնէ, անշուշտ, պաշտպանութեան հոսանքները, գլուխ բերելով «Թան »ը, որ ուրիշ ելք չի գտներ երկրին վերակազմութեան համար : Իսկ Թունդ ազգայնական տարրերը կը պահանջեն ոչ միայն լուծում , այլ եւ «չէֆ» մը, այն ալ զինուորական (մարեշալ Փէթէն) :

Այս պայմաններուն մէջ, ո՞ւր կրնայ յանգիլ Ժողովրդական ճակատին ապագան :

Երէկ հրատարակեր էինք արմատական կուսակցութեան վարիչ մարմնին բանաձեւը, որ հրապարակային ամբոստանութիւն մը կը կազմէ համայնավար կուսակցութեան դէմ :

Ընկերվարականները առ այժմ վերապահ դիրք բռնած են այս մասին : Իրենց օրկանը երէկ հրատարակած էր համայնավար կուսակցութեան Բ. քարտուղարին՝ Ժաք Տիւքլոյի մէկ յայտարարութիւնը, որ կ'ըսէ թէ իրենք հաւատարիմ կը մնան Ժողովրդական ճակատի ուխտին եւ կը սպասեն համագումարի մը : Իսկ «իմաստնութեան» երկրորդական աշխատակցի մը առորոշութեամբ նորէն կրակ կը տեղար Պ. Տալատիէի դէմ, զայն կոչելով «չարաչուք » մարդ եւ ամբողջ ամբաստանագիր մը կազմելով :

Անշուշտ կացութիւնը չի կրնար պարզուիլ ոչ լրագրական փոխադրութիւններով, ոչ ալ ճառերով : Արմատականները ընդհ. Ժողովի կը պատրաստուին : Նոյնպէս Աշխատանքի Դաշնակցութիւնը : Միւսներն ալ իրենց կարգին : Եւ այն ատեն է որ կարելի պիտի ըլլայ եզրակացութեան մը յանգիլ :

Շ.

ՆԱՆՍԷՆԵԱՆ ՕՓԻՍԻՆ ԶԵՒԱՓՈԽՈՒՄԸ

Ժրնեւի կեդրոնը կը փոխադրուի Լոնտոն

ՄՄԲ.— Ազգերու Դաշնակցութեան որոշումով, այս տարի դեկտեմբերին պիտի լուծուի Ժընեւի Նանսէնեան օֆիսը, եւ անոր տեղ պիտի գործէ ուրիշ կազմակերպութիւն մը, Լոնտոնի մէջ : Այս առթիւ, ընկեր Ա. Խատիսեան հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ մեզի.—

Յայտնի է որ Ազգերու Դաշնակցութիւնը չատ սուղ կը գտնէր Նանսէնեան օֆիսը : Միւս կողմէ կարգ մը պետութիւններ կ'ուզէին ջնջել զայն, քաղաքական նկատումներով : Երկու տարի չարունակ ջնջել զայն, քաղաքական նկատումներով : Երկու տարի չարունակ զանազան յանձնախումբեր ելք մը կը փնտռէին այս անորոշ կացութեան : Վերջապէս այս աշնան Ազգերու Դաշնակցութիւնը մշակեց նոր ծրագիր մը, որուն գլխաւոր կէտերն են.—

1. *Փոխանակ Օֆիսի նշանակել գլխաւոր վերատեսուչ մը, սահմանափակ պաշտօնէութեամբ : Այդ վարիչը նշանակուած է արքունական, Անգլիացի մը, Սըր Հըրպըրթ Էմըրսըն : Կեդրոնը պիտի ըլլայ Լոնտոն : Վարիչին օգնականը՝ տարբեր ազգէ :*

2. *Ելմտացոյցը կրճատել : (Նախապէս մօտ 1ուկէս միլիոն ֆր. Ֆր.ի փոխարէն 100,000 զուիցերիական ֆրանք (մօտ 800,000 ֆրանսական ֆրանք) :*

3. *Նոր տեսչութեան (քոմիսարիա) ներկայացուցիչները զանազան երկիրներու մէջ եւ պաշտօնեաները չեն կրնար զաղթականները ըլլալ : (Առաջ օրինակ Ցունաստանի եւ Պուլկարիոյ մէջ հին ռուս զաղթականներ էին) :*

4. *Նոր տեսչութեան իրաւասութիւնը նոյնն է ինչ որ էր Օֆիսինը :*

Այս նոր կազմակերպութիւնը գործադրելի է 1939 յունուար 1էն : Տեղական կազմակերպութիւնները կը մնան անփոփոխ (Ցբրանսայի մէջ՝ Պ. Փանի օֆիսը, հայ եւ ռուս զաղթականներու գրասենեակները եւն.) :

Ի՞նչ է առհասարակ այս փոփոխութեան իմաստը : Ինչպէս ըսի, կարգ մը պետութիւններ կ'ուզէին ջնջել Օֆիսները, բայց չէին ուզեցան : Իսկ Ազգերու Դաշնակցութիւնը կ'ուզէր կրճատել ծախքերը, որոնք չատ ծանր կուգային : Արդ, նոր դրութեամբ ծախքերը կրճատուած են գրեթէ կէս առ կէս : Եւ վերջապէս, չատեր կ'ուզէին որ զաղթականները ներկայացուցիչներ չունենան կեդրոնական վարչութեան մէջ : Այդ ալ կատարուած է : Գալով զանազան երկիրներու մէջ հաստատուած Օֆիսներուն (Փարիզի մէջ 71 ավրքիւ Ռիէպէռ և 15 ռ. ժան Կուժոն) և անոնց իրաւասութեան, կը մնան անփոփոխ : Փարիզի մէջ անոնց գոյութիւնը եւ կարգադրքը հիմնուած են Ֆրանսական կառավարութեան որոշումներուն վրայ, վաւերացուած՝ նախագահական հրովարտակով : Անփոփոխ կը մնան նաեւ Նանսէնեան դրամագլուխները եւ անոնց եկամուտին բաշխման եղանակները :

Նոր վերատեսուչին պաշտօնավարութեան չրջանն է հինգ տարի, տարեթոշակը՝ 2200 անգլ. ոսկի : Նոր կազմակերպութիւնը պիտի կոչուի «Գաղթականներու տեսչութիւն», առանց Նանսէնի անունին :

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Ի՞ՆՉ ԲԱՆԻ ՊԻՏԻ ԳՈՐԾԱԾՈՒԻ ԹՈՒՐՔԻՈՑ ՏՐՈՒԱԾ 150 ՄԻԼԻՈՆ ՄԱՐՔԸ

Գերմանիոյ տնտեսական աշխատը պիտի հասնի մինչեւ Իրաք եւ Աֆղանիստան

Պերլինի թերթերը կը գրեն թէ Գերմանիոյ կողմէ Թուրքիոյ տրուած 150 միլիոն մարքը (12,500,000 անգլ. ոսկի) պիտի դործածուի հետեւեալ նպատակներուն.—

Վոսփորի վրայ նաւակայաններ շինել, կառուցանել 28 առեւտրական նոր նաւեր, ինչպէս եւ կղմինտրի, շաղախի, ջրածինի, շամաթի եւ ապակիի գործարաններ, բամպակի մանարան մը փոքր Ասիոյ մէջ եւ արհեստական բարիւղի գործարան մը :

Հէր Ցունք Թուրքիոյ հետ կնքած է նաեւ ապրանքի փոխանակութեան պայմանագիրը մը, որուն համաձայն Գերմանիա պիտի առնայ Թուրքիայէն ծխախոտ, ատաղձ, չամիչ, բամպակ, եւ փոխարէն պիտի տայ մեքենաներ ու ճարտարարուեստական ապրանքներ : Գերմանեւթուրք առեւտուրը անցեալ տարի հասած էր քսան միլիոն սթերլինի :

Ռումանիա, *իր քարիւղով ու ցորենի դաշտերով, ամէնէն կարեւոր մէկ օղակն է այն չղթային, զոր Գերմանիա կը հիւսէ հարեւանցի Եւրոպայի մէջ : կը հաւատան թէ Գերմանիա կրնայ ապահովցնել Ռումանիան, թէ ինք պիտի գնէ միշտ անոր քարիւղը եւ փոխարէն պիտի օգնէ, որ նոր նաւթահորեր բացուին :*

Այստեղ ալ, դարձեալ, Գերմանիա կրնայ չլատել անգլիական առեւտրական ջանքերը : Ռումանիոյ բարիւղին տիրանալը Գերմանիոյ համար պիտի նշանակէ զերծ ըլլալ, պատերազմի մը պարագային, պաշարումի վտանգէն :

Հէր Ցունքի չրջագայութեան եաեւ կը տեսնուի Գերմանիոյ նախապատերազմեան ծրագիրը՝ յառաջ դէպի Մերձաւոր ու Մի – ջին Արեւելք : Գերմանիոյ ձգտումը չի սահմանափակուիր միայն Թուրքիայով, այլ կ'երկարի մինչեւ Իրաք, Իրան, Սուրիա եւ Աֆղանիստան :

Այսպէս Գերմանիա դէմ դիմաց կուգայ բրիտանական կայսրութեան կենսական չահերուն :

*** Էսէնի « Նացիոնալ Ցայթունկ » թերթը (մարաջախտ Կէօրինկի օրկանը) կը գրէ Անգլիոյ կողմէ Թուրքիոյ բացուած վարկին առթիւ .

— « Արդարացում չունի այս վարկը անգլեւթրքական առեւտրական յարաբերութեանց մէջ, որովհետեւ Թուրքիոյ արտածումներու միայն 44 առ հարիւրը զացած է Անգլիա 1937ին : Երբ երկիր մը վարկ կ'ընդունի, զայն վճարելու համար պարտաւոր է աճեցնել իր արտածումը դէպի վոխատու երկիրը : Այս պայմանը կը պակսի անգլեւթրքական առեւտրական յարաբերութեանց մէջ :

ՄԱՍՆԱՒՈՐ ՊԱՏՄԻՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԷՆ ԿՈՂՄ

Տէյլի Թլէկրաֆի Պերլինի թղթակիցը կը գրէ (հոկտ. 13).—

Հարաւ-արեւելեան Եւրոպայի մէջ գերման տնտեսական «պատերազմ»ի պատրաստութիւնը առաջ կը տարուի արտակարգ եռանդով : Պայքարը յաղող ելքի մը հասցնելու համար չարժման մէջ սկսած են դնել գերման տնտեսական ու ճարտարարուեստական ապրանքի լաւագոյն ներկայացուցիչները :

Բազմամարդ պատուիրակութիւնները կը ղրկուին այժմ դէպի Պալքանեան ու Մերձաւոր Արեւելքի երկիրները : Գերման ճարտարարուեստի մէջ ծառայող երիտասարդ տարրերուն սկսած են առթ-վեցնել ռումաներէն, թուրքերէն, յունարէն եւ ուրիշ լեզուներ : Եւ այժմ որոշ է որ «յարձակողականը» պիտի հասնի մինչեւ Իրան, Աֆղանիստան եւ Ալպանիա :

Այս երկիրներու մէջ Գերմանները կը հաստատեն մեծ պահեստներ, ուր կը ցուցադրեն մրցակցութեան չարմար ամէն տեսակ ապրանքներ :

Սեպտեմբերին Գերմանիա դուրսէն գնած է 50 առհարիւր աւելի ցորեն քան գնած էր օգոստոսին եւ 25 առ հարիւր աւելի քան գնած էր տարուան անցեալ սեպտեմբերին : Այս գնումները կատարած է միայն հարաւ-արեւելեան Եւրոպայի երկիրներէն :

Նացիներու պաշտօնական օրկանը, «Վոլքիշէր Պէոպախթէր » կը հերքէ թէ Հէր Ցունքի կատարած այցելութիւնները որ եւ է կապ ունին Զուտէթեան հողամասերու գրաւման հետ, բայց կը խոստովանի թէ Գերմանիա մեծ յարձակողականի մը անցած է արեւելեան երկիրներու մէջ, տնտեսական գետնի վրայ :

ՀԱՆՐԱՔՈՒԷ ՊԻՏԻ ՉԿԱՏԱՐՈՒԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԾՐՋԱՆԻՆ ՄԷՋ

Հուսգարները իզնցին քանակցութիւնները

Պերլինի դեսպանախորհուրդը հոկտեմբեր 13ին նիստ գումարելով, որոշեց հանրաքուէ չկատարել Չեխոսլովաքիոյ այն չրջաններուն մէջ որ վիճելի կը համարուէին : Այս մասին զեկոյց մը հրատարակուեցաւ, իսկ Չեխոսլովաքիոյ արտաքին նախարարը , Տոքթ. Չվալովսկի, Միւնխէն գնաց, Հիթլէրի ներկայանալու համար : Պերլինի չեխական դեսպանն ալ Գերմանիոյ արտաքին նախարարին այցելելով, երկու ժամուան տեսակցութիւն մը ունեցաւ անոր հետ :

Պաշտօնական զեկոյցը հաստատելով գերմանեւչեխական նոր

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. Էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՉԿԱՑ

Անցեալ յոպիսին, Քլինկ, որ թոյլ - ներու մասնագէտ մըն է եւ Փարիզի բաղաքապետութեան թունաքանական աշխատանոցին տնօրէնը, Բժշկ. Ա - կադեմիայի առջեւ կարդաց գիտական զեկոյց մը, որ մեծ յուզում պատճառեց, — ծանօթ թունաքանը կ'ըսէ թէ խայծդանով (գաթրան - goudron) պղոտուածները եւ խնուղիները պատելը պատեան կը դառնայ թոխային խլիրդի (քանհէր) : Ապացուցուած է որ խայծդանը գետին կը պատրաստէ խլիրդի, բայց ոչ ոք միտքէ կ'անցընէր թէ ճամբաներու շինութեան համար գործածուած խայծդանը կրնայ վնասել եաեւ շուննչի ճամբաներուն : Տոքթ. Քլինկ փորձեր կատարելով մուկերու վրայ, տեսած է որ ճամբաներու շինութեան յատուկ խայծդանին հետ շփման մէջ դրուած մուկերը 66 առ հարիւր թոխային խլիրդ կ'ուտեն : Սարսափը բռնեց ամէն մարդ : Ալ ի՞նչպէս անցնիլ խնուղիներէն, որոնք սեւամորթի պէս կը փռուին դաշտերու կանանչին մէջ,— արեւին շողը կը սպաննէ, կը շոգիացնէ եւ ճամբէն անցնողը, ծծելով այդ խայծդանի հոտը, ի վերջոյ կ'ենթարկուի խլիրդի : Առէջ ձեզի նոր փորձանք մըն ալ : Ալ ո՞վ կը համարձակի ճամբորդել բեռները փաթթելով, կամ անցնիլ սեւ - ւապատ փողոցներէն՝ ձեռքերը կոնակին :

Խլի՛րդը, *քանհէր*, խեչեփարի ետեւկերը կը մնրճէ մարմինիդ մէջ, կը բանկոտէ, կ'արիւնէ, արիւն փսխել կուտայ կամ ցաւէն պառակ :

Սովորական մարդոց հետ, հնճնա - շարժի ճարտարարուեստինվարիչներն ալ յուզման մատնուեցան :

Վերջապէս հրապարակ իջաւ Փրոֆ. Ռուսի, որ մասնագէտ մըն է խլիրդի : Փրոֆէսէօրը չուրանար Տոքթ. Քլինկի կատարած փորձերուն արժէքը , բայց կ'ուեւելցնէ որ եթէ խլիրդի դէպքերը շատցած են, պատճառը միայն խայծդանը չէ,— խլիրդի դէպքերուն աւելնալը ճշմարտուած էր՝ երբ դեռ սովորութիւն չէր խայծդանով պատել ճամբաները : Ցետոյ Տոքթ. Քլինկի փորձերը կատարուած են փիչ թիւով մուկերու վրայ : Եւ վերջապէս մուկերը աւելի շատ ենթակայ են խլիրդի, քան մարդը : Հանիերու մէջ աշխատող, կամ խայծդան գործածող բանուորները խլիրդ կ'ունենան երկար եւ երկար տարիներ այդ աշխատանքին մէջ մնալէ վերջ : Պէտք է խոստովանիլ որ ամէն մարդ խլիրդի ենթակայ չէ, ոչինիկ եթէ խայծդանի հետ է գործը : Եթէ Տոքթ. Քլինկի մուկերը խլիրդով վարակուեցան, պատճառն այն էր որ խայծդանով ծեփուած էր ամենց մորթը : Մինչդեռ ճամբորդներու, կամ հիմնաշարժ իշոդներու կըլլած խայծդանի շոգին կամ փոշին այնքան փիչ է, որ չի կրնար խլիրդ պատճառել :

Փրոֆ. Ռուսի տեսակէտը պաշտպանեց Օպէրլինկ : Իսկ Տոքթ. Քլինկի տեսակէտը պաշտպանեց Տոքթ. Սամսոնով :

Կարելի չեղաւ եզրակացութեան մը յանգիլ : Ակադեմիան կազմեց յանձնախումբ մը, որ պիտի ուսումնասիրէ թէ իրապես ճամբաներու խայծդանը խլիրդ կը շինէ՞ :

Ինչ որ ալ ըլլայ, մեծ յուզում պատճառած է գիտական այս վիճաբանութիւնը :

Ալ հասկցուեցաւ, խաղաղութիւն չկայ : Պատերազմի սարսափէն գիւղերն ու դաշտերը կը փախչին մարդիկ,— ի՞նչ օգուտ, ոչնչաճան սարսափելի չէ՞ խլիրդով վարակուիլ ճամբաներուն վրայ : Փորձանք փորձանքի վրայ, օր մը Ստալին, ուրիշ օր մը Հիթլէր, հիմակ ալ բանսէր :

Ո՛վ խաղաղութիւն, *ես* կարելի է գտնել միայն հայրենի գիւղիս մէջ , ափսո՛ս որ հիմա հոն ալ Թուրքը կայ, — աւելի մեծ քանհէր :

Ա.ՐԱՋ

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՇԷՆՔԻՆ ՀՐԱՒԷՐ

« Հայրենիք »ի մէջ կը կարդանք (30 սեպտ., միայն երկու էջ).—

Հինգշաբթի, սեպտեմբեր 29ի գիշերը, լոյս ուրբաթ, ժամը մէկուկէսին, « Հայրենիք »ի չէնքին վերի՝ երկրորդ յարկէն հրդեհ ծագած է : Ժամը երկուքին, երբ հրշէջ խումբը արդէն հասած էր եւ ձեռնարկած կրակը մարելու գործին, չէնքին վերնայարկը բոցերու մէջ էր : Հրշէջներու ջանքերով հազիւ կարելի է եղած առաւան ժամը հինգուկէսին դադրեցնել կրակը :

« Հայրենիք»ի չէնքին ներքը մասամբ այրած եւ մասամբ ծուխն ու վրայ եղած է կրակը մարելու աշխատանքներէն :

Վնասը տասնեակ հազարաւոր տոլարներու կը հասնի : Շէնքը ներկայիս բացարձակապէս անգործածելի դարձած է :

Մի քանի ձեռք առնուած են ապահովելու «Հայրենիք»ներու կանոնաւոր հրատարակութիւնը :

« Հայրենիք »ի չէնքը եւ գոյքերը ապահովագրուած են :

Ստեղծուած պայմաններու տակ «Հայրենիք»ներու տպագրութեան եւ առաքման գործի մէջ հաւանական անկանոնութիւններու համար կանխաւ մեր ընթերցողներուն ներողամտութիւնը կը խնդրենք :

Հրդեհի պատճառը առայժմ ստուգել հնարաւոր եղած չէ :

«Սանճաքի մկկոտը ալ չի կրնար վերադառնալ»

« Ենի Կիւն » (4 հոկտեմբեր) կը գրէ թէ Սանճաքի նախագահ Թայֆուր Սէօքմէն Գրըք Խան այցելած է հոկտեմբեր 2ին եւ զրոյցի ամէնէն տարիքոտ մարդոցը հետ տեսակցելով ըսած է.

— « Հաթայի մէջ չկան Թուրք, Հայ, Ցոյն եւ Արաբ անունով առանձին տարրեր, այլ կայ միայն «Հաթայցի» : Ամէն մարդ հասարակաց պիտի օգտուի այն մեծ բարիքէն ու երջանկութենէն որուն արժանացաւ Հաթայը » :

Նախագահը հարցուցած է քաղաքապետութեան տարեկան հասոյթը, եւ երբ իմացած է որ 10,000 ոսկի է, դիտել տուած է թէ չատ քիչ է եւ յանձնարարած է աւելցնել մասնաւորաբար անուղղակի տուրքերը :

Ամէնէն վերջը, նախագահը հարցուցած է թէ գիւղաքաղաքէն տակաւին գաղթողներ կա՞ն, եւ աւելցուցած է .

— «Անոնք որ, չհաւատալով կառավարութեան հաւատիքներուն, ասկէ վերջ կը մեկնին, բացարձակապէս չպիտի արժանանին վերադառնալու : Առանց կրօնքի եւ ազգի խարութեան, Հաթայցիները եղբայր են : Մասնաւորաբար Թուրքերը եւ Հայերը նոյն արմատէն (քէօք) եւ նոյն ցեղէն սերած են, ինչ որ այսօր այլեւս աբեւի պէս պայծառ դարձած է : Թուրքիոյ մէջ եղածին պէս, հոս ալ ամէն մարդ եղբօր նման պիտի ապրի : Իսկ օրէնքին չհնազանդողները, որոնք ալ ըլլան, ամենածանր պատիժներու պիտի ենթարկուին : Ասոնք հաղորդեցէք ժողովուրդին » :

ՀԱՅՐԱԿԱՆ ԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱՍՐԱՀ

Նկար. Թ. Պարսեղյանի. Ա. ՀԱՅԿԱԿԱՆԻ

«ՊՈՒՀ ԳԼԽԻՑ ԲՐԱԽԵԼ»

ՎԵՊ

ՀԱՅԿ ՀԱՅԿԱԿԱՆԻ

1938ի հուն իմ վիճակս ալ տարուան վերջերուն ծանր եղաւ։ Հիւանդացայ դժուարին թոքաբորբով մը։ Ամիսներ շարունակ ես ու մահը իրար հետ մրցեցանք։ Ես ալ ամէն ինչ ըրի, որ չպարտուիմ։ Ամէն ինչ ըրի, որ չմեռնիմ։ Ամէն ինչ ըրի, որ ապրիմ։ Ապրիմ, որովհետեւ ես ալ ուզեցի ապրիլ։ Ապրիմ, որովհետեւ ես ալ ուզեցի ապրիլ։ Ապրիմ, որովհետեւ ես ալ ուզեցի ապրիլ։

Ես ալ ուզեցի ապրիլ, որովհետեւ ես ալ ունէի ապրելու իրաւունք։ Ես ալ ունէի ապրելու իրաւունք, որովհետեւ ես ալ ունէի ապրելու իրաւունք։ Ես ալ ունէի ապրելու իրաւունք, որովհետեւ ես ալ ունէի ապրելու իրաւունք։

Ես ալ ունէի ապրելու իրաւունք

ԲԱՑԱԿ ԼԵԼԵՂ ԿԻ ՄՆԱՑԱՎ

1888 • 1938

Ես այդ օրերուն ուրախ էի, որ ինձ ոչ ոք կը ճանչնար։ Ես կ՚ուզէի ամբողջ աշխարհէն ծածկուիլ, որպէսզի ոչ ոք կարենար ինծի հարցնել, թէ ինչո՞ւ ես այդպէս տխուր եմ

սահմանագիծը, կ'ըսէ թէ ի հարկին փոփոխութիւնները կրնան կատարել, հիմնուելով Միւնիխի համաձայնութեան 6րդ յօդուածին վրայ: Այս պայմաններուն մէջ, յանձնաժողովը որոշեց թէ անհրաժեշտ չէ հանրաքուէ կատարել, քանի որ գերմանական եւ չեխական կառավարութիւնները համաձայնած են անմիջական սահմանագծման մասին: Միեւնոյն ատեն որոշուեցաւ գերմանեւչեխ յանձնաժողով մը կազմել, ժողովուրդներու փոխանակութեան համար, իւրաքանչիւրին կամքին ձգելով միանալ այս կամ այն պետութեան:

Նոր սահմանագիծին համաձայն, գերմանական զօրքին գրաւած հինգ անկատ գօտիները մաս պիտի կազմեն Գերմանիոյ: Այսպէս Զեխոսլովաքիոյ գերմանական խնդիրը կարգադրուած կ'ըլլայ այնպիսի եղանակով մը որ կը գերազանցէ գերմանական ակնկալութիւնները:

*** Մինչ այսպէս խաղաղօրէն կը լուծուէր գերմանական խնդիրը, նոյն օրն իսկ բանակցութիւնները խզուեցան Հունգարիոյ եւ Զեխոսլովաքիոյ միջեւ: Հունգարները մերժեցին ընդունիլ սլովաքեան եւ ռութէնեան պատուիրակներուն նոր առաջարկները, եւ որոշեցին դիմել չորս մեծ պետութեանց:

Ինչպէս կը յիշուի, Միւնիխի համաձայնութեամբ, Գերմանիա, Ֆրանսա, Անգլիա եւ Իտալիա որոշած էին նոր ժողով մը գումարել, եթէ մինչեւ երեք ամիս կարգադրուած չըլլային Լեհաստանի եւ Հունգարիոյ հողային պահանջները, ուղղակի բանակցութիւններով: Արդ, Լեհաստան զոհացում ստացաւ անմիջապէս գրաւելով Թէշէնի շրջանը: Հունգարիա եւս խաղաղօրէն բանակցութեան ձեռնարկեց անցեալ կիրակի, Բոմարնօ քաղաքին մէջ, որ կը գտնուի Հունգարիոյ եւ Սլովաքիոյ սահմաններուն վրայ: Առաջին օրերը բարեկամական էին բանակցութիւնները, բայց անելի մը յանգելով խզուեցան: Հունգարները կ'առարկեն թէ Սլովաքիոյ եւ Ռութէնիոյ պատուիրակները բոլորովին կ'անտեսեն ազգագրական ազդակը, եւ կ'ուզեն իրենց պահել մեծամասնական նկատումներով: Անոնք մասնաւորապէս կը մերժեն բաժնուիլ իրենց մեծ քաղաքներէն, որոնք հունգարական եղած են թէ ազգագրական եւ թէ պատմական տեսակէտով:

Բանակցութիւնները խզուեցան հունգարական պատուիրակութեան կողմէ, կառավարութեան հրահանգով:

Զեխական աղբիւրներու համաձայն, Սլովաքները եւ Ռութէնները հաւանած են Հունգարիոյ ձգել 55,000 քառ. քիլոմեթր տարածութիւն, 318,000 Հունգարներով: Այս ծրագրով 300,000 Սլովաքներ եւ Ռութէններ կ'անցնին Հունգարիոյ տիրապետութեան տակ, իսկ նոյնքան Հունգարներ կը մնան Զեխոսլովաքիոյ մէջ: Սլովաքները առաջարկած են ինքնավարութիւն չնորհել մնացեալ Հունգարներուն, բայց հունգարական կառավարութիւնը գոհ չէ մնացած:

Պաշարման վիճակ Ռութենիոյ մէջ

Հոկտեմբեր 13ին պաշարման վիճակ հրատարակուեցաւ Ռութէնիոյ կարգ մը շրջաններուն մէջ, ուր հարիւրաւոր հունգար ահաբեկիչներ երեւցած են, խռովութիւններ յարուցանելու համար: Պաշարման յայտարարութիւնը հրատարակեց Ռութէնիոյ ինքնավար իշխանութիւնը, չեխական կառավարութեան վաւերացումով: Տրուած որոշման համաձայն, զինուորական տեսանները կրնան մահավճիռ արձակել ըմբոստութեան, սպանութեան, զինեալ յարձակման, ապստամբութեան կամ հաղորդակցութեանց խանգարման յանցանքներու համար: Կ'ըսուի թէ ըմբոստները, որոնք զինուած են գերմանական հրացաններով, արդէն սպաննած են կարգ մը ոստիկաններ, զինուորներ եւ չոգեկառքի պաշտօնեաներ, ինչպէս եւ կամուրջներ օդը հանած, հեռագրի եւ հեռաձայնի թելեր խորտակած են: Ընդհարումներու ընթացքին սպաննուած են չատ մը ահաբեկիչներ:

Կ'ըսուի թէ Իտալիա կը պահանջէ որ Կարպաթեան չրջանը Հունգարիոյ կցուի ամբողջութեամբ, նկատի առնելով թէ հունգար բնակչութեան մեծամասնութիւնը եւ թէ այդ երկրամասին տնտեսական հանգամանքները:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ՍՈՖԻԱՑԻՆ կը հեռագրեն թէ հոկտեմբեր 13ին բոլոր քաղաքացիները հրաման ստացան իրենց տուներէն դուրս չելլելու ամբողջ օրը, որպէսզի խուզարկութիւններ կատարուին բոլոր տուներուն մէջ, իբրեւ հետեւանք զօր. Փէչեւի սպանութեան: Այս առթիւ հեռագրի եւ հեռաձայնի հաղորդակցութիւնները ալ խզուեցան: Կ'ըսուի թէ դաւադրութիւն մը սարքուած էր, կառավարութիւնը տապալելու համար: Բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուեցան:

ՊԱՂԵՍՏԻՆԻ մարզպանը, որ Լոնտոն կը գտնուէր մէկ չաբաթ լուր, Երուսաղէմ վերադարձաւ Ջօզանատով մը: Ռուվու-թիւնները կը չարունակուին ամբողջ երկրին մէջ: Երուսաղէմի մէջ զինեալ ուեւանգուեցաւ արաբ ղեկավարներէն Սըտըր Ճայանի, ազգայնականներուն ներկայացուցիչը: Ճաշօրդ առաու իր դիակը գտնուեցաւ քաղաքէն քանի մը քիլոմեթր հեռու: Սպանուած էր առաճանակով: Գրեթէ նոյն ժամուն անգլիական զօրաբանը մահուան կը դատապարտէր երեք Արաբներ, որոնց պաշտպան փաստաբանն եղած էր սպանեալը: Ապստամբները կրակի տուին ծխախոտի մեծ մթերանոց մը, որ կը պատկանէր անգլիացի ընկերութեան մը եւ կը գտնուէր Երուսաղէմի եւ Եաֆայի ճամբուն վրայ: Վնասը 95,000 ոսկին կ'անցնի: Ապստամբները ուեւերեցին նաեւ չափազանց Արաբներու վարձին նաբնչենները, ոչնչացնելով 2000 ծառեր: Եւ այսպէս բազմաթիւ դէպքեր:

ՎԻԵՆՆԱՑի արքեպիսկոպոսը, կարծնալ Իննիցէր, միշտ

Հ. Յ. Դ.

Գաւառ

ՍԱՆ ՄՈՐԻՅԻ «ՅուսաՏ» խումբի ընդհ. ժողովը 15 Հոկտ., շաբաթ կէսօրէ վերջ ժամը 3ին, սովորական դահլաքատեղին: կարեւոր օրակարգ:

ԸՆԿԵՐԱՀԱՄԱԿՐԱԿԱՆ ԽՆՃՈՅՔ

Հ. Յ. Դ. Վիէնի կոմիտէն կազմակերպած է ընկերահամակրական խնջոյք մը, 15 Հոկտ., շաբաթ երեկոյ ժամը 8.30ին «Ժաժակ» ակումբին մէջ: Պիտի ըլլան արտասանութիւններ, խմբերգներ եւն.: կը հրաւիրուին ընկերներ եւ համակիրներ՝ ձոխ պիւֆէ:

ՅԱՌԱՋ կը ծախուի Սանթիէի շրջանին մէջ

42, Rue des Petits Carreaux, Փարիզ Mr. Pierre Marchal ի խանութը:

Ա. ՅՈՎԻԿԵԱՆ

Իրաւագէտ վկայեալ Փարիզի համալսարանէն

22, Rue de Maubeuge Paris (9) Metro: Cadet եւ N.-D. de Lorette

Մասնագէտ վաճառականական, քաղաքային եւ միջազգային խնդիրներու: Պաշտպանութեան դատարաններու առջեւ: Յամբագրութիւն պաշտօնաթուղթերու:

Արկածի դաաեր առանց կանխավճարի:

Խորհրդակցութեան ժամը 11-12 եւ 5 -- 7 եւ ժամադրութեամբ:

Շաբաթ եւ երկուշաբթի օրերը խորհրդակցութիւն 10 ֆր.:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ - ՊԱՏԱՐԱԳ

16 Նոյեմբեր, կիրակի օր ՍԷՆ ԺԱՆ ՕՍՓ եկեղեցիին կառուցման հինգերորդ տարեդարձին եւ Ս. Թարգմանչաց տօնին առթիւ պիտի պատարագէ եւ քարոզէ Տ. Զգօն վարդապետ ցեղի պիտի ունենայ հոգեհանգիստ եկեղեցիին կառուցման սա տաթգիներու ննջեցեալներու յիշատակին:

ՍԵԾ ՍՐԱՀ

ՔԱՂԱՒԻՆ ԿԵԴՐՈՆԸ

ՎԱՐԶՈՒԻ ԿԸ ՑՈՒՑԻ ՀԱՐՍԱՆԻՔ ՆԵՐՈՒՍ ՀԱՄԱՐ:

ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆ.

SALONS JUVENIA.

51 Rue Saint Ferréol. MARSEILLE

Նեբճնայարկ՝ Tél.: DR-74 - 07

ԳԱՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ամէն ժամ, ժամադրութեամբ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17 Rue Demarne — PARIS (13e)

հակողութեան տակ է եւ պաշտօնատունէն դուրս չելլեր: Առջի օր հազարաւոր Նացիներ նորէն թշնամական ցոյցեր կատարեցին, իսկ նահանգապետը բուռն ճառ մը խօսեցաւ կղերին եւ մասնաւորապէս եպիսկոպոսներուն դէմ, ըսելով թէ անոնք «դիւահար» մը նկատեն Ատոլֆ Հիթլերը:

ՌՈՒՄ ՄԻԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԸ հոկտ. 13ին ժողով գումարելով, գահաժառանգ ընտրեցին Վլատիմիր մեծ դուքսը, որդին Հանդուցեալ Կիրիլի:

ԱՊԱՀՈՎԻԹԵԱՆ տեսչութիւնը ձերբակալեց ինը օտարականներ եւ Ֆրանսացի մը, որոնք անձնագիրներ կը ճարէին խարդախութեամբ, մինչեւ չորս հազար ֆրանք վճարելով: Ֆրանսացին, Մարչնօ, հոչակաւոր Սթավիցքիի արբանեակներէն է, 33 տարեկան:

ԱՆՁՆԱՍՊԱՆ ԵՂԱՒ Փրակայի «Թակլաթ» թերթին խմբագրապետը, Ռուտոլֆ Թոմաս, Թոյն առնելով իր կնոջը հետ: 43 տարեկան էր, գերման ընկերվարական: 18 տարեկանէն կ'աչխատէր նոյն թերթին խմբագրութեան մէջ:

ՍՊԱՆԻՈՑ քաղաքացիական պատերազմին սկիզբէն մինչեւ 1938 հոկտեմբեր 10 իտալական կորուստներու թիւը եղած է 12137, որոնցմէ սպաննուած են 227 սպաներ եւ 2,430 զինուորներ, իսկ վիրաւորուած են 687 սպայ եւ 8161 զինուոր: Գերի բռնած են 3 սպայ եւ 351 զինուոր: Վիրաւորներէն մօտ 2000ը մշտնջենական հաշմանդամներ են: Հիւանդութենէ մեռած են 278 հոգի:

ՍՈՒՐԻՈՑ հանրապետութեան նախագահը հեռագիր մը ուղղելով Պ. Չէմպըրլէնի, յերմապէս չնորհաւորեց անոր խաղաղասիրական ջանքերը եւ խնդրեց միջամտել, վերջ տալու համար Պալեստինի ժողովուրդին տառապանքներուն: Անգլիոյ վարչապետը պատասխանեց թէ կառավարութիւնը ուշադրութեամբ կը հետեւի կացութեան եւ չանք պիտի չխնայէ, արդար լուծում մը գտնելու համար:

ՏԱՐԱԳԻՐ ՉԵԽԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ հանդանակութիւնները կը շարունակուին ամէն կողմ: Լոնտոնի մէջ հաւաքուած է 50,000 ոսկի, որուն կէսը լորտ - քաղաքապետը անձամբ տարաւ Փրակա: Փարիզի մէջ «Թան»ի հանդանակութիւնը հասած է մօտ կէս միլիոն ֆրանքի: Ուրիշ թերթեր ալ սիւնակներ բացած են: Արմատական օրկանը 25,000 ֆրանք տրամադրեց: --- Զեխերը կը վաստաին Լեհաստանի կցուած հողերէն: Պայմանաժամ սահմանուած է մինչեւ նոյեմբեր մէկ: Գերմանիան ալ կը պահանջէ եւս դրկել անոնք որ հեռացած են Գերմանիոյ կցուած չրջաններէն:

Թէյասենեակ

Հ. ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ԱԼՃՈՐվԻԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

16 Հոկտ., կիրակի ժամը 3ին, Հայ Ակումբին մէջ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՅԱՆՈՒՆ Շ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԻԿ. Շ. ՍԻՍԱՔԵԱՆ

Մասներու Միութիւնը կը բեմադրէ «ՇԱՌԱՑ ԹՈՐՈՍ» (գաւեշտ) Գեղարուեստական բաժնին կը նուագէ Թաւիսա ԳԱՐԵԳԻՆ:

Մուտք 3 ֆրանք, փոքրերու 2 ֆրանք

ՀՐԱՇԵՑՏԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄԸ

«ՍԻՐՈՒՇ» ՔԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ Յ. ՂԱՋԱՐԵԱՆԻ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԿԱՐՕՂ ՈՒԺԵՐՈՒ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ 15 ՀՈԿՏ., ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ ԺԱՄԸ 9ԻՆ

ՍԱԼ ՄԱՋԸՆԹՑԻ ՄԷՋ, 88 ՌԻՒ ՏՕՓԱՆԵԸ Մարսէյլ

16 ՀՈԿՏ., ԿԻՐԱԿԻ ԿԷՍՕՐԷ ՎԵՐՋ ԺԱՄԸ 3ԻՆ

ՎԱՐԱՆԴԵԱՆ սրահին մէջ, 10 ՊՈՒԼՎ. ՏԷ ՄԱՐԿՐԻԹ, Պօսան

ԱԿԱՄԱՑԻ ԲԺԻՇԿԸ

Իրենց մասնակցութիւնը կը բերեն ՏԻԿԻՆ Մ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ եւ ՕՐ. ԱՆԺԷԼ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ:

ԵԴՈՒԱՐԴ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

ԴՐԱՄԱՏՈՒՆ, 48 rue de la République, Marseille

Tél. Colbert 74—51, 47—22

Ծառը գրաւներու փոփոխութիւնս ձեզմէ կը տեսնէ, ամէն երկուքի հաճար: կը գնենք եւ կը ծախենք ոսկի դրամներ:

ՀԱՅ ՊԱՅՄԱՆԱՒՈՐ

ՏԻԿԻՆՆԵՐ, ՕՐԻՈՐԴՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՆՆԵՐ

ՕԳՏԱԻԵՑԵՔ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹԷՆ

ՁԵՒԱՊԻՏՈՒԹԵԱՆ ԳԻՇԵՐՈՑԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Հոկտեմբեր 20էն սկսեալ ՏԻԿԻՆ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ (Մասնագէտ ձեւագիտութեան), պիտի ունենայ Պանէօ-Քաշանի, Իսի եւ Ազիթվիլի մէջ ձեւագիտութեան գիշերային դասընթացքներ, շաբաթը մէկ գիշեր, ժամը 8էն 11, հայ ակումբներու մէջ, գիւրութիւն տալու նմանց որ ցերեկները կ'աշխատին: Պիտի տրուին վեց ամսուան մէջ, անոնց որ կ'աշխատին եւ կը հետեւին կանոնաւորապէս: Հին. տղաները պիտի տրուին կատարեալ ձեւել (coupe parfaite) ամենավերջին մեթոտով եւ պիտի տանուան իրենց վկայականը: Մանրամասնութեանց համար փափաքողները դիմեն 12 Rue Saint Sulpice, (4րդ յարկ) ՏԻԿԻՆ վարժուհիին, Paris(6). Մէթրօ Օտէօն:

Հաշուապահութիւնը յաղթած է վիճակահանութեան

Երկու տարուան աշխատութեամբ ստեղծած իմ հաշուական պարզ գրութիւնս մը որ հնարաւորութիւն կուտայ շահելու վիճակահանութենէն 6էն 9րդ շերտի վիճակահանութիւնէն շահած են իմ ցոյց տուած ձեւովս 165 միլիոն, որուն ապացոյցները կը գտնուին մօտս: Այս հաշուական գրութիւնը ստանալու համար պրկել մանուփոստով 50 ֆրանք հետեւեալ հասցէին՝

J. Allan, Manoir de Vallongue, Saint Clair du Rhône, Isère.



"ՇԻՐԱԿ"

Արեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական ընտրութիւն, ընտիր հաւաքման արդիւնք, պատրաստուած զուտ չամիչի ձեթ, պատրաստուած ըստ հին հայկական ոճի, ինչպէս կը սիրեն Ձեզ ամենքդ հայ աւանդական սեղանին վրայ:

ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ ԵՒ ՈՒՏԵՍՏԵՂԷՆԻ ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՄԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք ֆրանսական, անգլիական եւ չեխոսլովաք կերպասներու: Փոփաքոշները կրնան զրկել իրենց գնած ապրանքները ընտրելու եւ նոյնպէս դրկելու համար: կը գնենք եւ կը ծախենք օտար դրամներ: կը տանձնենք ապրանքներու emballago եւ ապահովագրութիւն: Փոխադրութիւն ամէն տեսակ ապրանքներու եւ պատժներու:

Դիմել American Lloyd, Paris (9). 7 rue Auber

Tel. Opéra 67-77



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Զուտ խաղող եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է ուած հայկական օղիներէ պ արուեստական օղիներէ պ ձեր ստամոքսը կ'պղծէ գիշերները ջուր կը խմէ եւ կը փսաք ձեր ստամոքսը կ'այրէ: ՐԱՔԸ ՏԻՒԶ սրտի, կազդուրիչ եւ պարարտ ըլլալէ զատ է.

Dalakupeian 8 Rue Sallustre Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—59

PHÉNIX

anis distillé

Agent General : Mr Albert Bacri . 19. rue Turbigo PARIS 2e Tel: Cent: 83-17.

ՐԱՔԻ ՓԷՆԻՒՔՍ

AGENCES: ԳՈՐԾ ԿԱԼՈՒՄ

LYON: ԼԻՈՆ — M. Francis COTTON, 68 Avenue Galline; à Villeurbanne, près Lyon. Téléph. Lalande 64-10.

MARSEILLE, ՄԱՐՍԵԼ — M. SIMONDI, 17 Allées des Primevères, à Marseille.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ԿԻՐԱԿԻ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ DIMANCHE 16 Octobre 1938

Դ. ՏԱՐԻ — 14e Année No. 3862

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՅՍ ՆՈՐ ՁԱՄԲԱՆ...

Լուսաւոր երեւոյթ մը,— երիտասարդ սերունդէն անոնք որ այսպէս կամ այնպէս կապուած են հանրային կազմակերպութեան մը, հետզհետէ կ'ըմբռնեն թէ հասած է ժամը, բաղձանքները իրականութեան վերածելու : Խօսքէն գործի անցնելու :

Մեծ թիւ մը չեն կազմեր այդ «չրջանաւարտները», եթէ չհաշուենք անոնք որ անդամագրուած ըլլալով քաղաքական հոսանք - ներու, արդէն գործի ձեռնարկած են, համաձայն իրենց կարողութեան :

Կուսակցական կեանքը դպրոց մըն է, ուր մարդիկ աւելի չուտ չրջան կը բոլորեն, քան եթէ հանրային գործունէութեան հետեւած ըլլային իրենք «ամաթէօր»:

Անշուշտ ամէն մարդ կուսակցական չի կրնար ըլլալ, ինչպէս ամէնուն արուած չէ լրացուցիչ դասընթացք մը բոլորել, նախա - կրթարանէն մինչեւ բարձրագոյն ուսումնարան :

Շատեր կուսակցական կեանքէն կը խրտչին իրենց խառնուածքով: Ուրիշներ նախապաշարուած են, մակերեսէն դատելով իրե - րը: Կան ալ որ դուրսէն աւելի օգտակար կ'ըլլան, քան թէ ներս մտնելով :

Այս բոլորը տարբերական դիտելիքներ են :

Բայց կա՛յ ուրիշ տարբերական դիտելիք մը եւս, — ո եւ է երի - տասարդ չի կրնար «ամերիկեան դիտող»ի դիրք բռնել իր ժողո - վուրդի հանրային կեանքին մէջ, անհետաքրքիր ու բարին:

Երիտասարդութիւն՝ կը նշանակէ խանդավառութիւն, հա - տաք եւ աշխատանք: Ուրեմն, երիտասարդութեան կոչումն իսկ ամէն բանէ առաջ հանրօգուտ գործունէութիւնն է, բոլոր ասպա - րէզներուն մէջ: Գրական - գեղարուեստականէն մինչեւ քաղաքա - կանը :

Այդպիսի գործունէութեան մը չնորհիւ է որ կը չարժի, կը նո - րոգուի, երբեմն ալ կ'ալեկոծի ժողովուրդներու կեանքը, միշտ յանուն գերագոյն բարիքի մը :

Եթէ քննէինք մեր ժամանակակից պատմութիւնը, սկսե - լով ազատագրութեան սկզբնական չարժումներէն կամ 1860ի սահ - մանադրական պայքարներէն, մեր առջեւ պիտի պարզուէր կեն - դանի չարժանքար մը՝ անընդհատ ճիգերու, դէպի վերածնութիւն եւ բարօրութիւն :

Փաստանակէն առաջ ծերանալու, հետեւաբար եւ լճանալու, բորբոսելու դատապարտուած են այն ժողովուրդները ուր երիտա - սարդութիւնը հետու կը մնայ կրակէն, կամ անոր չուրջը կը յածի, կը մոլորի ինչպէս թիթեռնիկը:

Մասնաւորապէս ներկայ պարագաներուն մէջ, ուր այնքան սահմանափակ են մեր ինքնապաշտպանութեան աղբակները, ո՞ւր կրնար յանդիլ այս տարագիր բազմութեանց ճակատագիրը, եթէ երիտասարդութիւնն ալ բռնէր նահանջի կամ անչարժութեան ան - փառունակ ճամբան :

Այս մտահոգութիւնն է որ կը մղէ մեզ ուշադրութեամբ հետե - ւիլ երիտասարդական գործունէութեան զանազան երեւոյթնե - րուն, որքան ալ համեստ երեւան անոնք :

Այսպէս, ամիսներ առաջ 8 — 10 երիտասարդական միութիւններ կամ խումբեր քով քովի գալով, համագործակցութեան դաշին մը պատրաստեցին իրենք իրենց համար :

Ամբողջական տեղեկութիւններ չունինք այդ ձեռնարկին ար - դիւնքներու մասին :

Գիտենք , որ անոնց առաջին հոգը եղած է միասնաբար սար - քել դասախօսութիւններ, եղբայրական կապ մը հաստատել զանա - զան հոսանքներու միջեւ, զարկ տալ իրենց զարգացման եւ աստի - ճանաբար վարժուիլ հանրային կեանքի պահանջներուն:

Գիտենք, նաեւ, որ այդ «Համագործակցական»ը վերջերս կոչ մը ուղղած էր քաղաքական կուսակցութեանց, որպէսզի ելք մը գտնեն, համերաշխութիւն եւ գործակցութիւն հաստատելու հա - մար, նկատի առնելով օրուան պահանջները :

Եթէ չենք սխալիր, « Համագործակցական »ը աւելի առաջ գացած է այս ճամբուն վրայ, ծրագիր մը յօրինելով եւ խորհր - դակցութիւն մը սարքելով, թէ տեղական եւ թէ ընդհանուր կազ - մակերպութեան մը համար :

Ինչ որ ալ ըլլայ այս նախաձեռնութեան արդիւնքը, գնահա - տելի է նոյնիսկ երբեւ երեւոյթ: Իրբեւ մտածում եւ ծրագիր :

Ուրեմն, կուսակցութիւններէն դուրս ալ, կամ անոնց հետ խառն, կան տարրեր որոնք այլեւս դիտակցութեան հասած, չեն գոհանար պարզ բաղձանքներով եւ կ'ուզեն գործնապէս նուիրուիլ հանրային ծառայութեան :

Այս երեւոյթը չնորհաւորելի է մասնաւորապէս անոր համար որ, նախ կը նպաստէ սերտ յարաբերութիւններ հաստատելու երի - տասարդական միութեանց միջեւ, մէկդի դնելով կանխակալ կար - ծիքները :

Երկրորդ, մեր յիշած նախաձեռնութիւնը կ'ապացուցանէ թէ երիտասարդութեան գործօն տարրերը այլեւս չեն խանդավառուիր ապաքաղաքական մարզանքներով, որոնք կրակէն փախչելու պատրուակներ են :

Եւ երրորդ, անգամ մը եւս կը հաստատուի թէ մթնոլորտը բուսական պայմաններէն զրկուած է, ընդհանուր հակազդեցութեան մը դա - լու համար :

Միայն տարէ՞ցներն էին որ իրար չէին հասկնար մինչեւ հիմա, հանրային ասպարէզին մէջ...

Այժմէն պարապայի մէջ, յուսատու է բացուած ճամբան:

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՄԱՍՆԱԿԻ ՉՕՐԱՇԱՐԺ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ

ՉԵԽԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԴԷՊԻ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԽ

Ի՞նչպէս պիտի լուծուի այս նոր վէճը

Ինչպէս գրած էինք, Հունգարական կառավարութիւնը խզեց Չեխոսլովաքիոյ հետ կատարուած բանակցութիւնները, վճռապէս պահանջելով կարգ մը հողեր: Բանակցութեանց խզումէն անմի - ջապէս վերջը, Հունգարիա մասնակի զօրաշարժի մը ձեռնարկեց, դրօշի տակ առնելով հինգ դասեր (1908 — 1912) : Պաշտօնական զե - կոյցը կ'ըսէ թէ այս տնօրինութիւնը անհրաժեշտ էր, իբրեւ հե - տեւանք բանակցութեանց խզման եւ Չեխոսլովաքիոյ ձեռք առած միջոցներուն, ինչպէս եւ ձայնասփիւռ սպառնալիքներու :

Հունգարները կը մեղադրեն թէ չեխական կառավարութիւնը դրօշի տակ կը պահէ 18 դաս պահեստները, իսկ իրենց կատարած զօրաշարժը կը նկատեն զգուշական միջոց :

Այս մասնակի զօրաշարժին հետ միաժամանակ, Հունգարիա երկու դիւանագիտական ձեռնարկներ կատարեց, արժեցնելու հա - մար իր հողային պահանջները: Երկու դիւանագէտներ, որոնք Հիթլէրի եւ Մուսոլինիի վստահութիւնը կը վայելեն,— նախկին վարչապետ Տարանեի եւ արտաքին նախարարին դիւանապետը Միւնիխ եւ Հռոմ զրկուեցան օդանաւով, աջակցութիւն խնդրելու հա - մար: Մեծ կարեւորութիւն կը տրուի մասնաւորապէս Գերմանիա կատարուած այցելութեան, որովհետեւ առնէ մը ի վեր զրոյց կը չրջի թէ Հիթլէր համաձայն չէ որ Հունգարիա եւ Լեհաստան սահ - մանակից դառնան :

Երեք միջոցներ կը նախատեսուին Հունգարական վէճին լուծ - ման համար,— 1. Վերակսիլ ուղղակի բանակցութիւնները: 2. Վէ - ճը յանձնել Պերլինի դեսպանախորհուրդին: 3. Նորէն ժողովի հր - աւիրել հարց մեծ պետութեանց վարչապետները, ինչպէս եղաւ Միւնիխի մէջ :

Չեխոսլովաքիա արտաքին նախարարը, Տոքթ. Պունք, կարեւոր տեսակցութիւն մը ունեցաւ Հիթլէրի հետ, Միւնիխի այն հիւ - րանոցին մէջ ուր ժողով դումարած էին հարց վարչապետները: Նա - խարարը տեսակցեցաւ նաեւ իր գերման պաշտօնակիցին հետ:

Այս առթիւ հրատարակուած պաշտօնական զեկոյցը կ'ըսէ թէ պ. Չեմպերլէնի «իր երկրին հաստատակամութիւնը յայտնեց Գերմա - նիոյ եւ թէ Առաջնորդը ցաւ յայտնեց որ չէ լուծուած հունգարա - կան փոքրամասնութեանց խնդիրը»: Այս տեսակցութենէն վերջը Հիթլէր ունկնդրութեան ընդունեց Հունգարիոյ նախորդ վարչա - պետը, ինչ որ կը նշանակէ թէ Գերմանիա կ'ուզէ համոզել Հուն - գարները եւ Չեխերը որ խաղաղութեամբ լուծեն վէճը: Գերմանիոյ արտաքին նախարարութեան օրկանը կ'ապդարարէ որ Չեխոսլովա - քիոյ արտաքին քաղաքականութիւնը վնասակար կացութիւն մը չստեղծէ Գերմանիոյ համար: Ուրիշ թերթեր ալ նոյնիմաստ ազդա - րարութիւններ կ'ուղղեն, բարեկամաբար :

Ցառաջիկայ չորեքշաբթի Պերլին պիտի երթան խումբ մը չեխ դոր - ծարանատէրներ եւ առեւտրականներ, լայն բանակցութիւններ կատարելու համար :

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՆԵՐԸ այսուհետեւ բաց պիտի մնան երկու - շաբթի օրերը, հոկտեմբեր 24էն սկսեալ, համաձայն հաւաքական նոր պայմանագրին եւ հետեւաբար «անգլիական շաբաթ»ի:

ԼԻՈՆի չինութեանց աշխատաւորներէն վարպետ մը սպաննուած ըլլալով, ոստիկանութիւնը ձերբակալեց արհեստակցական մի - ութեան ընդհ. քարտուղարը եւ երեք ամբաստանեալներ:

ՕՐԸ ՕՐԻՆ

... ԹՈՒԼԹՈՒ ՄՈՆԻԻՐ

« Հայրենիք »ի շէնճիին հրդեհը ա - մէնէն առաջ վառեց իր աշխատակից - ներուն հոգին:

Հասնողը լուր կը հարցնէ.

— Իսկապէս ամէն բան մոխի՞ր դարձած է: Հապա գիրքերն ու ձեռա - գիրնե՞րը...

Դժբախտաբար նոր լուր չունինք մեր թղթակիցէն: « Հայրենիք »ն ալ ա - մէնէն բան մը չէ գրած, որպէսզի կարե - նայինք լուսաբանել :

Ուրեմն, արդար մտահոգութիւն մը համակած է բոլորը :

— Կարեւոր աշխատութիւն մը ղր - կած եմ մօտաւորապէս մէկ տարի ա - ռաջ, կ'ուզէի գրքի վերածել, սեւա - գրութիւնն անգամ չունիմ, կ'ողբայ ընկեր Աբրահամ Գիւլխանդանեան :

— Դէզերով ձեռագիր ունիմ խմբա - գրութեան մէջ, «Դիւան Հ. Յ. Դաշ - նակցութեան» եւ ուրիշ նիւթեր, կ'ա - ւելցնէ ընկեր Վրացեան :

— Թուրքիոյ մասին ուսումնասիրու - թիւն մը պատրաստեր էի, ամիսներէ ի վեր կարգի կը սպասէր, կը տրտո - ջայ վ. Իշխանեան :

Անդիէն՝ Նշանը, ի խորոց սրտի.

— Երկու ամիս ցգնեցայ ձեռագիր հասցնելու համար թէ օրաթերթին եւ թէ ամսագրին. ա՛լ, լուր մը, լո՛ւր մը, ո՞ղջ են թէ վառած ...

Այս ընդհանուր անձկութեան մէջ, Ըսատուրն է որ մխիթարանքի խօսքեր կը ցանէ, իրբեւ նախկին խմբագիր « Հայրենիք »ի եւ ծանօթ խմբագրա - տան կարգուսարքին.

— Ես վստահ եմ որ ձեռագիրները անվթար մնացած են, որովհետեւ «Հայրենիք» երկաթեայ սնտուկներ եւ դարաններ ունի, անոնց մէջ կը պահեն ձեռագիրները :

— Ձեռագիրը կը դիմանա՞յ հրաշէկ երկաթին տաքութեան :

— Ցանի՞ որ հրդեհը երկրորդ յար - կէն ծագած է, վախնալու բան չկայ:

— Երանի՛ թէ...

×

Ահա այսպէս հայ հեղինակին ար - տադրութիւնը ապահովագրուած չէ որ եւ է արկածի դէմ :

Ցանի՞ հոգի կրցած են պատճէններ պահել, մեքենագիր կամ ձեռագիր:

Եւ ցանի՞ խմբագրատուն եւ տպա - րան երկաթեայ դարան կամ սնտուկ ունին:

Ձեռագիրը կը ղրկես խմբագրու - թեան, մնացեալը յանձնելով Ամենա - կալին ողորմութեան ...

Ցաճախ մուկերը աւելի շուտ կը հասնին քան Տիրոջը կամ խմբագրին ողորմութիւնը :

ԻՀինչ թանկագին գանձեր կորսուե - ցան հայազիսեղ սարսափներու ընթաց - քին, առ ի չգոյէ պատճէնի: Ոչ մի այն վաճէրու, այլ եւ սեփական տու - ներու մէջ: Ցաճախ ալ ապուշ արկա - ծով մը:

« Գուլխս ողջ, թուղթս մոխի՛ր» , կ'ապաղաչէր Յ. Մրմրեան, յուսահա - տութեան պահու մը կրակի տալով իր ձեռագիրները :

Սրտացաւ կը ցանկայի որ այս աղա - չակը խնայուած ըլլար « Հայրենիք »ի, մանաւանդ ամսագրին անհամար աշ - խատակիցներուն :

ՎԱՀԷ

ԱՌԵՒՏՈՒՐԻ ՀԱՄԱՐ ԱԼ 10 ԱՌ ՀԱՐԻՒՐ

Փարիզի քաղաքապետական խորհուրդէն երկու անդամներ ո - րոշեցին օրինագիծ մը առաջարկել յառաջիկայ ընդհ. ժողովին, պահանջելով որ տասը առ հարիւրի սահմանափակուի օտարական - ներու հարստարարտօրծական եւ առեւտրական ձեռնարկներու հա - մեմատութիւնը: Օրինագիծը կը տրամադրէ նաեւ նոր արտօնա - գիրներ չտալ օտարականներուն, մինչեւ որ համեմատութիւնը 10 առ հարիւրէն պակաս չըլլայ :

Այս ծրագրին հեղինակներէն մէկը, Թորչոսէ, այն է որ վեր - ջերս կ'առաջարկէր արեան տուրք մը հաստատել զինուորութենէ ազատ համարուած օտարականներուն վրայ :

Ի՞նչ եղած է մարաջախտ Պրուխր

Հավասի թղթակիցը հեռագիր մը ուղղելով Մոսկուայէն, կ'ը - սէ թէ կարելի չէ եղած տեղեկանալ Մայր. Աբեւելքի երբեմնի ամենա - զօր հրամանատարին՝ մարաջախտ Պլուխերի ճակատագիրը: Ամէն պարագայի մէջ, ստոյգ է որ մարաջախտը Մայր. Աբեւելք չի գա - նուիր եւ իր բանակը երկու մասի բաժնուած է: Առաջին մասին հրամանատարն է Պլուխերի սպայակոյտին պետը, զօր. Շթէրն, երկրորդին՝ Զօր. Կոնիյեւ: Կը թուի թէ երկու բանակները անջատ կը գործեն, առանց վերին հրամանատարութեան: Զօր. Լուչքովի վախճանէն ի վեր, ազդ. պաշտպանութեան փոխ – գործավարը Մայր. Աբեւելք կը գտնուի, կարեւոր մաքրագործումներ կատա - րելու համար: Կարծողներ կան թէ այս մաքրագործումը կրնայ հաւասարիլ անցեալ տարուան գործողութեան, երբ հրացանի բըռ - նուեցան մարաջախտ Թուխաչեւսկի եւ հօթը զօրավարներ:

Պլուխէր անդամ էր այն զինուորական տեսանին որ մահուան դատապարտեց Թուխաչեւսկին եւ հօթը ընկերները: Սերած է բան - ուոր ընտանիքէ մը, եւ զտարիւն յեղափոխական կը համարուէր: Բանակին մէջ հասարակ զինուոր էր 1914ին, եւ բոլշեւիկ դարձաւ 1918ին: Գործօն դեր կատարած է Վրանկէլի եւ Կոլչաքի ջախջախ - ման մէջ :

Հռենոս—Դանուբ—Սեւ Ծով

Տոքթ. Պունք, Գերմանիոյ տնտեսական նախարարը, հետեւ - եալ յայտարարութիւններն ըրաւ Սոֆիայի մէջ.

— « Իմ ճամբորդութեանս նպատակը չէ Գերմանիոյ տնտեսա - կան խնամակալութեան տակ դնել արեւելեան Եւրոպայի երկիր - ները: Իմ առաջարկներս հիմնուած են սա իրողութեան վրայ թէ այդ երկիրները բազմաթիւ հնարաւորութիւններ ունին որոնցմէ պէտք է օգտուիլ: Գերմանիա պիտի նպաստէ անոնց ճարտարա - գործական արտադրութեանց, ինչպէս եւ բնական հարստութիւն - ներու օգտագործումին: Մենք անոնց պիտի տրամադրենք առեւ - տրական վարկեր, երկար պայմանաժամով: Այդ երկիրները Գեր - մանիոյ միացած են իսկապէս կապով մը,— Դանուբ : Շատ չանցած Հռենոս - Դանուբ ջրանցքը պիտի միացնէ Հիւսիսային ծովը եւ Սեւ ծովը »: .

(Էուրերու շարունակութիւնը կարդալ Դ. Էջ)

ԱՓՐԻԿԵԱՆ ԱՐԵՒԻՆ ՏԱԿ

6.— Երկրին պատմութիւնը (Շար.)

ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ.—

Արաբներու թափանցումին ընդդիմացան դլխաւորաբար Պէրպէրները։ Բիւզանդական բերդերը հետզհետէ ինկան կամ կղզիացան արաբ ասպատակներու հեղեղին մէջ։

Այսպէս արաբ զօրավար մը, Օքպա, յաջողեցաւ արշաւել մինչեւ Ատլանտեան ովկիանոս, առանց սակայն զինաթափ ընելու ամբոցները։ Դէպի արեւելք վերադարձին, ըմբոստները յանկարծակիի բերին զինք Պիսքրայի առջեւ եւ բնաջինջ ըրին իր բանակը։

Օքպայի յաջորդեց Ապու - էլ - Մուհաճիր, որ արագօրէն քալեց մինչեւ Թլէմսէն, ուր իր դէմ կը ճակատէր Քոսայլա, քրիստոնեայ բնիկ ցեղապետ մը, որ խլամացած էր Օքպայի յառաջխաղացութեան ժամանակ, դարձեալ քրիստոնէութեան վերադարձած՝ Օքպայի հետացումէն վերջ։ Ճակատամարտին մէջ յաղթուեցաւ, դարձեալ խլամացաւ՝ փրկելու համար իր իշխանութիւնը, բայց Դամասկոսի խալիֆան այս անգամ նորէն Հիւս. Ափրիկէ կը ղրկէր Օքպան։ Վերջինիս զօրավարը եկաւ չղթայի զարկաւ Ապու - էլ - Մուհաճիրն ու Քոսայլան, արշաւեց մինչեւ Թլէմսէն, պահ մը կանգ առաւ Ձէութայի առջեւ, որուն յոյն բերդապահը անձնատուր եղաւ, յետոյ քալեց դարձեալ արեւմուտք եւ ձին քշեց, իբրեւ խորհրդանշան, Ատլանտեանի ջուրերուն մէջ, ափսոսալով որ կարելի չէ աւելի յառաջանալ եւ տարածել խալիֆային աշխարհակալութիւնը։

Շուտով ետ դարձաւ իբրեւ դիւցազն,— արաբ մատենագիրները հէքեաթներ կը հիւսեն իր մասին ու կը պատմեն թէ Օքպայի ձին կը դոփէր ժայռերուն վրայ եւ ժայռերէն ջուր կը ժայթքէր՝ ի մեծ խնդութիւն ծարաւահար բանակին։

Եւ սակայն չղթայակիր զօրավարները յաջողած էին ոտքի հանել Պէրպէրները, որոնք դիրք բռնեցին Պիսքրայի առջեւ։ Օքպա անխոհեմութիւնը ունեցաւ կիսելու բանակը՝ մէկ թեւը զրկելով հիւսիսէն։ Երբ կը լսէ թէ Քոսայլա փախած է, Պէրպէրներէ եւ Բիւզանդացիներէ խառն բանակով կը սպառնայ հարաւէն, կը քալէ դէպի անապատ, բայց կը պարտուի չարաչար։ Քոսայլա կը ջարդէ Օքպայի ամբողջ բանակը, կը սպաննէ Օքպան ալ, Ապու - էլ - Մուհաճիրն ալ։ Եւ ահա ամբողջ Հիւս. Ափրիկէն կ'իյնայ Քոսայլայի ձեռքը։ Բայց խալիֆան նոր բէյնարանակ զրկեց, Հասան պին Նոմանի առաջնորդութեամբ եւ Քոսայլա ըսպաննուեցաւ նահանջի ժամանակ։

Այն առեն Հասան պին Նոման յայտարարութիւն հանեց թէ ով է ամէնէն զօրաւոր իշխանը Պէրպէրներու երկրին մէջ, որ պիտի չհնազանդի իրեն։ Ըսին թէ հրեայ կին մը կ'իշխէ Աւրէսի լեռներուն մէջ, եւ մարգարէուհիի դեր կը կատարէ, ինչպէս կը մատնէ իր անունն ալ, Քահինա (զուռակ)։ Աւրասպելական բաներ կը պատմէին այս կնոջ քաջութեան մասին։ Հասան պին Նոման քալեց դէպի Աւրէսի լեռները, բայց բնաջինջ եղաւ իր բանակը։ Ութսուն արաբ ազնուականներ, Հասանի բանակէն, դերի ինկան Քահինայի ձեռքը։ Հրեայ հերոսուհին ազատ արձակեց բոլորն ալ, բացի մէկէն, որ Մալիա պին Եաղիա կը կոչուէր եւ դեղեցիկ ու քաջ էր։ Քահինա կ'որդեդրէր քաջերը, , արդէն ունէր երկու զաւակ, մին պէրպէր, միւսը բիւզանդացի, — որդեգրեց նաեւ Մալիա պին Եաղիան, ամանդուհեամբ մը որ կ'ըսուէ։ Առաւ զարիի ալիւր, չաղուեց իւղով, թրեց ու խմոր շինեց, յետոյ ղրաւ ծիծերուն վրայ կաղապարելով զանոնք, ու կանչեց որդեդիրները, հրամայելով ուտել խմորը կուրծքին վրայէն եւ ըսաւ. «Ահաւասիկ եղբայր եղաք»։

Քահինա լսեց որ Արաբները կը համախմբուին արեւելեան սահմաններուն վրայ։ Հրամայեց պարպել եւ ամայացնել երկար հողամաս մը, որ պէպղի անապատ մը ստեղծուի իր եւ անոնց բանակներուն միջեւ։ Աքսորեալ, իր զինուորները ոչ միայն քանդեցին բերդերը, բնակավայրերը, այլ եւ ծառ իսկ չձգեցին, իսկական անապատ։ Այսուհանդերձ Քահինա մարգարէացաւ որ պիտի մեռնի ճակատամարտին մէջ։ Արաբներուն արգելք չեղաւ Քահինայի ստեղծած անապատը, Հասան պին Նոման բնաջինջ ըրաւ հրեայ հերոսուհիին բանակը եւ Քահինա ինկաւ իր հաւատարիմ ընկերներուն հետ պատերազմի դաշտին վրայ։

Այնուհետեւ Հիւս. Ափրիկէ դարձաւ արաբական դաւառ։ Ճիշդ է, Պէրպէրները ըմբոստացան յաճախ, խլամութեան ներքին վէճերը արիւնահեղութեան վերածուեցան եւ տարածուեցան մինչեւ Հիւս. Ափրիկէ, բայց եւ այնպէս երկիրը տէր չինուեց երկար ժամանակ։ Խլամական բոլոր ժողովուրդները, թէեւ աւանդութիւն դարձաւ խլամանալէ վերջ քրիստոնէութեան վերադառնալը ամէն անդամ որ կը ներկին քաղաքական պայմանները։ Ցեղախումբեր կան որ 12 անդամ կրօնք փոխած են քրիստոնէութենէ խլամութիւն, խլամութենէ քրիստոնէութիւն։ Եւ այսօր իսկ, Քապիլներուն մէջ զիւղացիներ կան, որոնք կը պնդեն թէ կը սերին հին Հռովմայեցիներէն։

Արաբերէնը տարածուեցաւ երկրին մէջ, խլամական մշակոյթի վառարան մը դարձաւ Հիւս. Ափրիկէ, — ճիշդ է, երբեք հռովմէական ոսկեդարի բարձրութեան չհասաւ, բայց սիրով է խոստովանիլ որ արաբ Ափրիկէն ալ մեծ դէմքեր տուաւ պատմութեան։

ԹՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ.— Ժ.Զ. դարուն սկիզբը սպանեւփորթուկալեան զէնքը ծանր հարուածներ տուաւ Արաբներուն։ Սպանիացիները մաան Օրան, Եէրբէլ, Մոթթականէմ եւ Փէնոն, որ փոքրիկ կղզի մըն էր Ալժէ քաղաքին առջեւ (եօքէն Խայրէտտին Շիկահեր միացաւ ցամաքին)։ Այս յաջողութիւնը նախ այն ապաւորութիւնը թողուց թէ Արաբները վերջնապէս պիտի վռնտուին Հիւս. Ափրիկէէն։ Խլամական աշխարհը փրփրեցաւ, ամէն կողմէ սկսան օդնութիւն խնդրել վտարելու համար «անհաւատները»։ Մանաւանդ եղերական էր կացութիւնը Ալժէ քաղաքին առջեւ։ Խլամները չէին կրնար լմնցնել ծով որ իրենց միակ մի - ջոցն էր ապրուստի։ Իսկ Սպանիացիներն ալ չէին կրնար դուրս ելլել փէնոն կղզիէն։ Բախտը վճռեցին Օրուճ եւ Խայրէտտին Շիկահեր եղբայրները,— ծագումով յոյն (Լեսպոսցի բերուտի մը զաւակները) յետոյ խլամացած, Եգիպտոսի կղզիներուն հռչակաւոր այս ծովահէնները օգնութեան հասան Ալժէրի խլամներուն։ Օրուճ նախ փորձեց վերագրաւել Պուժի քաղաքը, բայց պաշարման ժամանակ ըսպանիական ռումբ մը փրցուց նետաց իր մէկ բազուկը։ Հասկնալով որ անկարելի է գրաւել Պուժին, մտաւ Քապիլներու երկրին մէջ, ուր երկու ցեղապետներ կը կռուէին իրարու հետ՝ սուլթանութեան տիտղոսի մը համար։ Օրուճի օգնութեամբ յաղթեց ցեղապետներէն մին, որ 5000 զինուոր տուաւ ծովահէնին եւ Օրուճ քալեց դէպի Ալժէ։ Իբրեւ հերոս՝ Ալժէ մտնելէ վերջ, Օրուճ աշխատեցաւ գրաւել փէնոն կղզին, որ անդամալուծութեան դատապարտեր էր Ալժէ քաղաքը։ Լաւ ամրացուած էր կղզին, ուստի չկրցաւ գրաւել, եւ երբ քաղաքին վրիժները սկսան տրտնջալ՝ սպաննեց Ալժէի չէյխը եւ ինքզինք յայտարարեց սուլթան Ալժէի։ Մտովքի մատնեցաւ Սպանիա, քրիստոնեայ թագաւորներուն միջեւ խորհրդակցութիւններ կատարուեցան, փրկելու համար Հիւս. Ափրիկէի քրիստոնեայ վերջին պաշտպանները։ Չհամաձայնեցան իրարու հետ, մինչ Օրուճ կը չարունակէր գրաւել ու միացնել խլամ քաղաքները։ Ցաղթական մտաւ Մէտէա, Միլիանա եւ Թէնէս, երբ Թլէմսէնէն պատուիրակութիւն մը եկաւ հաղորդել իրեն թէ քաղաքին սուլթանը դաշնակցած է Սպանիացիներուն հետ։ Օրուճ քալեց Թլէմսէնի վրայ, յաղթեց եւ մտաւ քաղաք։ Ու փոխանակ իսլամական դատին հաւատարիմ ժառանգորդ մը հաստատելու Թլէմսէնի սուլթանութեան գահին վրայ, ինքզինք յայտարարեց սուլթան Թլէմսէնի, եւ Մէչուար քաղաքին պարիսպներուն տակ փոս մը փորելով՝ աւազանի վերածեց եւ մէջը լեղդեց, մէկ օրուան մէջ, եօթանասուն հոգի իրեն հակառակորդ իսլամ գերդաստանի անդամներէն։ Քիչ վերջ հասան Սպանիացիները՝ օդնական ուժ ստացած, եւ պաշարեցին Թլէմսէն քաղաքը։ Օրուճ սպաննուեցաւ այդ կռիւներուն մէջ։

Իր եղբայրը, Խայրէտտին, ամբողջ Ալժէն, ի վերջոյ զրաւեց փէնոն կղզին եւ միացուց ցամաքին, այսպէս ստեղծելով զօրաւոր խարիսխ մը ծովահէնութեան։ Ցետոյ խնդրեց Կ. Պոլսոյ սուլթանէն՝ իր հովանաւորութեան տակ առնել Ալժէն, որ այսպէս կը դառնար Բարբար։ Դրան հարկատու թագաւորութիւն մը։ Սուլթանը, ընդունելով այս խնդրանքը, ղրկեց 2000 Ենիչէրի եւ 4000 Թուրք կամաւորներ։

1546ին, Խայրէտտին Շիկահեր, զոր Թուրքերը կ'անուանեն Խայրէտտին վաշա Պարպարոս, կը մեռնէր Պոլսոյ մէջ, մինչ Ալճերիա հետզհետէ կը դառնար Թրքական հող։

Բաւորդով պիտի ներկայացնենք Ալճերիոյ կազմակերպութիւնը Թրքական տիրապետութեան տակ եւ դրաւումը Ֆրանսացիներու կողմէ. անկէ վերջ նոր դլուխ մը՝ «Հայերը Հիւս. Ափրիկէի մէջ սկիզբէն մինչեւ մեր օրերը»։

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

ԿԱՐԴԱՑԵՔ ՏԱՐԱԾԵՑԵՔ
« ԱԱՌԱՋ »Ը

ԱՆՑԻՑ ԱՆՑԵԼՈՑ...

Լ'վ ծիծեռնակ, վարանաց թըռչնիկ,
Իր՞նչ տըրտմագին
Զայնիւ, ձայնիր՝ կ'եղանակես մօտ իմ
քանտին։
Միթէ վարուժանդ սիրուն
Հոս միայնա՞կ թողուց էեզ.
Ու դուն անմըխիթար կը հեծեծես.
Որի, լա՛ց ուրեմըն ինծի հետ, ինծի
հե՛տ ....

1880ին, այս թշուառ եղերերգը անդրաժան էր մեր միաքէն ու շրթունքէն։ Ընդհանուր խմաստով, երկիրը այլեւս բանա կը նկատէինք, հակառակ անոր առերեւոյթ ազատութիւններուն։ Այդ ազատութիւններուն ապացոյց մը չէ՞ր միթէ որ, ի ժամու եւ ի տարաժամու, այս եղերերգը կը զոռացնէինք զպրոցին մէջ, զպրոցէն դուրս, տուներուն մէջ եւ դուրսը բաց արեւուն տակ կամ պիչերային սուսերներուն մէջ։ Շէն էին մեր բնակարանները, ճոխ էին մեր ամէն տեսակ կազմածները։ Դուք ամէնքդ, ով չարդուած սերունդներ վերապրող մնացորդներ, փորձով կամ պատմութեամբ դիտէք թէ, չէն էին ձեր ամէնուն բնակարանները, ճոխ էր ձեր ապրած միջավայրը, ուր ձեր, մեր մայրերը իրենց երկունքը կը լուծէին, հայրերնի տուներուն երդիքին տակ, հզօր այրերու, հայրերու արթուն աչքերուն տակ։ Ապահով էր անունդը, ոչ միայն այսօրուան, այլ վաղորդայններու համար։ Սակաւապէտ այլ անսպառ առատութեան հարիւր ոչ մէկ տաճն ամօթով կը ձգէր տանուտէրը։ Անկարօտ այդ կացութեան ծոցին մէջ սակայն բանա էին մեր տուները մեր ըմբռնումով, մեր երեւակայութեամբ, քանի հեռի էինք բնիկ հայեցի կեդրոնէն, տպաւորիչ տնունով՝ Հայրենիքէն, երազային՝ որով զոգցես աւելի իրական սրբացայրէն։ Ու մեր տուներուն ապահով կայքին մէջ մենք մեզ կը տեսնէինք բանտարկուած, բռնի տեղատրուած։ Այս ահա տեսակ մը հակառական դիրքը մեր միտքը կը ձգէր թափառական ծիծեռնակը, վարանքի թռչունը, որ մէկ հերկու ամառուան համար հազիւ կուզար կաւէ խարխուլ բարակ տնակ մը հիւսել իր ծիտերուն, եւ օրն ի բուն եւ դիչերախառն, իր ողբն ու կեղերքը թափել արդէն խակ միեւնոյն ցաւով ծանրացած ներսի բախտակիցներուն ականջին։

Ու դուն անմըխիթար կը հեծեծես
Որի, լա՛ց ուրեմն ինծի հետ, ինծի
հե՛տ։

Անթօս, անբարբառ, իր խմասուն եւ ամենարուեստ երդին ձայնանիչերը բանաւոր թէեւ տակաւ բառերով կը թարգմանէինք ներսը... լաց, լաց ինծի հետ, մեղի հետ, եւ ծիծեռնակը ստուարագոյն յանդերով կը դեղերփներէր, կը սրբագրէր մեր լացին ու կոծին անարուեստ չեչտը։ Եղկելի բանաւորներէն ո՞վ երբեք կրցած է տալ ճոչունին խինդն ու ողբը։ Համաչխարհային բանաստեղծութիւնը, նոյն իսկ իր հեղինակաւոր ձայներուն ու ժոմն ու չնորհովը, չէ հասած այն նրբաթել աւէշին, ուր թռչունին ձայնը կը հատկէի, աննմանօրէն կը կէտկիտուի, անոր բնազդական զգացումին իրրեւ հարազատ թարգմանը — զգացում բերկրութեան, ցաւի, կարօտի եւ սիրոյ։ Զարկ դուն, քերթող, որքան կ'ուզես, քու բառերուդ ճոյլը, փայփայելով անոնց դիրերն ու պիծերը, հնարաւոր բոլորչին ու հնարաւոր պայծառ երանգը տալու համար։ Թովէ, կախարդէ դուն, երաժիչտ, այդ բառերուն բնութիւնը, մանկ, որքան կ'ուզես եւ կրնաս հազարիդ թելերը, բայց երկուքդ ալ անկարող էք ծիծեռնակին կամ սոխակին խօսքը տալ մեղի։ Մարդիկ երարու հետ միայն կրնան մրցիլ։ Անքան ու անքառ, բնութիւնը անմրցելի է։ Ոչ մէկ արուեստ, ըլլայ ներկային, ըլլայ ամէնէն հեռաւոր ապագային, որքան բարձրանայ մեքենայով, չի կրնար թռչուն ըլլալ։ Մարդկային արուեստը ինք իրմով միայն քան մը կ'արժէ եւ, առ առաւելն, կը վնասէ իրեն կամ ուրիչին։ Չի կրնար նոյնիսկ ողբալ եւ հայրենի կարօտը տալ ճչդիւ։

***

ՆԿԱՐՉԱԿԱՆ

Թուրքերը յառաջդիմութեան մէջ են։ Եւ կամ Յառաջդիմութիւնը Թուրքիոյն մէջ է սա միջոցիս։ Ու ամէն ասպարէզի մէջ։ Մինչեւ անդամ նը - կարչութեան։ Ահաւասիկ նոր օրէնք մը որ կը վերաբերի նկարիչներուն։ Թուրք գեղարուեստից նախարարութիւնը կ'ըսէ նկարիչներուն.

— Հերիք որքան նկարեցիք մանուա արապպասիներ, տրնկըլ արապպասիներ, խարխուլ տուներ, կովեր, էշեր, ջրբիններ, ոսկեղջիւրներ, հին գլուխներ, նամիներ, միհարէներ, գերեզմանատուններ, սեղաններ՝ վրան փիլաւ, հուշափ, աշուրէ, սիմիթ, լէպլէպի, թարխանա եւ իշկէմպէ չորպաճիներ։ Մ'լ բաւական է։ Փոխեցէք տեսարան, անձ, նիւթ, իր, գոյն ու գլուխ։

Ու նոր տնօրինութիւն մը։

Ամէն տարի տասը նկարիչներ, տասը նահանգներ պիտի զրկուին որպէսզի ամէն մէկը իր գացած գաւառին կեանքը, տիպարները, աշխատանքները, բնութիւնը, տարազները եւ տօներուն պէտքերը նկարէ։ Այսպէսով պիտի առաջանայ նիւթերու պէտքութիւն մը, նկարչական արուեստին մէջ։

Օրինակի համար, նկարիչ մը պիտի զրկուի Ղաստամպոլու կամ Զաֆրանպոլու, ուրիչ մը Զանդըրը, երրորդ մը Սանճաղ, չորրորդ մը Ղայսէրի կամ Էրճիաս, հինգերորդ մը Ղարաման, վեցերորդ մը Ասը-Եողլատ, եօթներորդ մը Զանկուլաաք, ութերորդ մը Պաֆրա, իններորդ մը Իզմիր եւ տասներորդ մը Փափազ Քէօփրիւ կամ Վլանկա։

Ու հայտա՛, գործի։

Նոր կտաւներու վրայ պիտի երեւին նոր նիւթեր ու տանձեր, վարունգներ, հազարներ, ապուխտներ, երշիկներ, չամանիներ, աւերակներ, ամայութիւններ, անօթիներ, անվարտներ, բորտոներ, ֆրանկալխտաւորներ, տուրքի դանձումի տեսարաններ, կաշառակերութեան պահեր, օձեր, խլուրդներ, խողեր, չուներ, աքաղաղներ, կմախքներ, դանկեր, լքեալ գոյքեր, խարխուլ տուներ, հրդեհուած քաղաքներ, չցանուած արտեր, անապատացած անտառներ, ախոռի վերածուած եկեղեցիներ, միզարանի վերածուած ախոռներ, զարշահոտ ու չէն բանտեր, արիւնի լճակներ, թափառաչրջիկի պլխարկներ, Գնչուներ, քիւրտ ապստամբներ, դողութեան, դիւնամոլութեան տեսիլներ, աղջիկ խաղցնողներ, դաշոյններ, քնացողներ, կկլլակներ, հաչիչներ, օղիներ, կապ - խաղաններ Էսկի համամներ, Էսկի բասեր, պիք փազարներ, եղեմ հաւաներ պէօրէյիներ, վո՛ւր ապրիլյաներ, նոր տէրէպէյիներ, նոր եէնիչէրիներ, միշտ հին ու միշտ նոր տեսարաններ, յաւերժական նիւթեր։

Շնորհն ըսելով գէշմամաոմէն որ ունեցած է գեղարուեստից նախարարութիւնը։

Եթէ քիչ մըն ալ պատմական նկարչութեան մղում տրուի՝ աւելի հետաքրքրաշարժ տեսարաններ կարելի է վերարտադրել...

Կոչ կ'ընեմ, այս առթիւ, որ մեր արտասահմանեան հայ նկարիչներն ալ հետեւին մեր «գեղակից» թուրք նկարիչներուն եւ նկարեն հայ տարազներն տեսարաններ։

Մինչեւ հիմա ի՞նչ նկարեցին մեր արտասահմանեան հայ նկարիչները։ — Լիւբսէմպուրկի պարտէզ, փոՆէօֆ, երեսունը ութը քիլօ կշռող օրիորդ մը կամ հարիւր քիլօ ծանրութեամբ տիկին մը, սեղան մը՝ վրան ծխամորճ, ձուկ եւ սոխ, Լուվրի քանդարանին ընդօրինակութիւն մը, վերսայլի պալատին մէկ մասը, ծաղկման մը մէջը վարդեր, պողտման մը մէջը խաղողներ, դուլպայ հիւսող մեծ մայրիկ մը, Ջերմանոց, տերեւաթափ ծառեր, հով, դեղնած տերեւներ, ակռայի ցաւ ունեցող երկինք մը...

Ա՛լ բաւական է, կը կարծեմ։

Ահա տասնըվեցերդ տարի է որ կ'պրինձ զանազան երկիրներու եւ քաղաքներու մէջ տարագիրի կեանքը, լի ողբերգական եւ կատակերգական տեսարաններով, լի բազմազոյն պատկերներով, լի նոր կենցաղով, նոր տարազով, լի նոր պարապութեամբ։

Ժամանակ է որ հայ նկարիչները դադրին Փրանսացի նկարիչներուն կապիկները ըլլալէ եւ հայ ոճով, հայ երանգով, հայ տիպարներ ու հայ կեանքի տեսարաններ ներկայացնեն։

Անցեալները, այս ուղղութեամբ խօսակցութիւն մը ունեցայ հայ ռահնկարիչի մը հետ որ ըսաւ.

— Եղբայր, դուն ալ կեցիր բան կը պերեկես։ Հայ նիւթս ո՞րն է։ Մենք կը նկարենք յատկանիշ նիւթեր։

— Օրինակի համար սոխը։

— Այո՛, սոխը եւ ձուկը, քանի ալ չիչ մը գինի։ Սոխը կը ներկայացնէ ցամաքը, ձուկը ծովը ու գինին երկինքը։ Սոխով, ձուկով ու գինիով կը ներկայացնենք անհուն տիեզերքը, իր համով, հոտով եւ խորհուրդով։ Տիեզերքին մէջ Հայը ի՞նչ կը ներկայացնէ։

— Անշուշտ ոչինչ քեղի պէս... Համբ։

— Եղբայր, մեղի նիւթ պէաք է, նիւթ։ Հայ կեանքը այնքան փոքր է, այնքան սահմանափակ, այնքան միրնակ որ նիւթ չունի։

Սոխանկարիչը առանց պատասխանի սպասելու՝ բարձրացուց իր չղթիկ գլխարկը եւ հեռացաւ։

Այդ սոխանկարիչին, ինչպէս նաեւ ուրիչ հայ սխատորանկարիչներու, տանձանկարիչներու եւ կովանկարիչներու եւ խանկարիչներու դիմումին համար կը ներկայացնեմ կարճ մը չահեկան նիւթեր, արտասահմանեան հայ կեանքէ.

Ա.— Նկարել Հրանտ Սամուէլի զբաղաճառատուները ուր մէկ յաձախող

ՁԷՅԹՈՒՆԻ ԱՁՔԸ

Հեղինակ՝ ԹԷԼՊԹԹ ՄԸՆՏԻ Անգլ. թարգմ. Ա. ՀԱՒԵԼԵԱՆ

Միւս կողմէ պարզ էր որ բացակայութեանս մէջոցին օրիորդ Վանտէր - մէնը պարապ կեցած չէր։ Զիս ներս առնող երկու մարտիկներէն զատ ա - մէն ոք նասած էր,— կլօրիան կինն - բուն մէջեւ՝ տախտակամածին վրայ կռնակը պատին տուած, իսկ մնաց - եալները անոնց դէմ կիսաշրջանակ մը կազմած էին։ Երկու կիներ իրենց բազուկներով օրիորդը զրկած էին զո - բալէից կերպով, բայց նաեւ պատրաստ կացութեան դիմազրաւելու։

— Ի՞նչ կ'ընէիր, հարցուց Ֆրէտ եւ կլօրիա Վանտէրմէնին նայելով յաղթական կերպով խնդաց։

— Պատրաստութիւններ կը տես - նէի օրիորդ Վանտէրմէնը Տարտոն տանելու համար, պատասխանեցի։

Ինծի թուեցաւ թէ օրիորդ Վանտէրմէնը այս խօսքերուս վրայ չատ յուզուեցաւ։ Ինքզինքը երկընդրանքի մը տալէ կը զգար,— Հայերո՞ւն ենթարկուիլ թէ մեղի։ Մէկ կողմէն Հայ կի - ներուն վիճակը կը ճնշէր իր վրայ, միւս կողմէն Մընթիին տառապանքը։

— Հարկաւ թոյլ պիտի չտանք որ երթաս, ըսաւ Հայերէն մէկը լաւ անդլիերէնով մը, խօսքը կլօրային ուղղելով եւ վստահացուցիչ չեչտով մը։

Զեռքս դրպանիս տարձանակին տարի, որովհետեւ եթէ Արապաճին զէպի Զէյթունն ճամբայ պիտի ելլէ, ուրեմն որքան չուտ այնքան լաւ։

— Դուք հիւանդներուն կրնաք հոգ տանիլ։ Կրնաք մեզ ամենուս համար նուագել, անտարակոյս այս երկուքն ալ որոշ յատկութիւններ ունին, ըսաւ Կլօրիա։

Այդ վայրկեանին այնքան զբաղուած էի որ Կլօրիայով չէի հրապուրուեր, եւ ոչ ալ կ'ուզէի հաւկնել թէ ւնոր այդ յայտարարութիւնը Ֆրէտ - տին ու Ուիլլին վրայ ի՛նչ ազդեցութիւն էր գործած։ Այն ինքզինքը կիներէն ձերբազատելով ոտքի ելաւ, առկայծող դեղին լոյսին տակ հրաշալի էր ան։ Ամէնքը թեթեւ չարժում մը ունեցան, պատրաստ ոեւէ պատահականութեան առջեւ։ Աւելին եկած համարելով եւ ես իսկ առած քայլէս զարմացած դոչեցի դէնքս երկարելով.

— Այս առտնանակս կրակած վայրկեանիս մարդ մը անմիջապէս դէպի Զէյթուն պիտի սուրայ Գագիկին ի - մաց տալու։ Այդ մարդը իր զրպանին մէջ Գագիկին յանձնելիք գրութիւն մը ունի։ Դուք դատեցէք թէ Գագիկն ու իր մարդիկը որչափ ժամանակէն հոս կրնան հասնիլ։

Անմիջական մօտս դանուող մէկը յանկարծ վրաս յարձակելով արմունկներս եւեւէս բռնեց մինչ ուրիչ մարդ մը առտնանակը ձեռքէս խլեց։ Կիները դարձեալ կլօրիան բռնեցին։ Բայց Ֆրէտ աւելի արագ չարժեցաւ,— իր առտնանակը քաշելով դէպի առաստաղը կրակեց։

— Երկու անդամ Ֆրէ՛տ, պոռացի ես։ ու ան զարձեալ կրակեց։

— Այսպէս։ Հիմա ի՛նչ կ'ուզէք ը - րէք։ Լրատարը գնաց, ըսի ես։

Այն առեն կլօրիան վերջին անգամ

ԿՈՂՈՊԱՀԱՅ

Ա՛ր ծիծեռնակ, վարանաց թըռչնիկ,
Իր՞նչ տըրտմագին
Զայնիւ, ձայնիր՝ կ'եղանակես մօտ իմ
քանտին։
Միթէ վարուժանդ սիրուն
Հոս միայնա՞կ թողուց էեզ.
Ու դուն անմըխիթար կը հեծեծես.
Որի, լա՛ց ուրեմըն ինծի հետ, ինծի
հե՛տ։

Անթօս, անբարբառ, իր խմասուն եւ ամենարուեստ երդին ձայնանիչերը բանաւոր թէեւ տակաւ բառերով կը թարգմանէինք ներսը... լաց, լաց ինծի հետ, մեղի հետ, եւ ծիծեռնակը ստուարագոյն յանդերով կը դեղերփներէր, կը սրբագրէր մեր լացին ու կոծին անարուեստ չեչտը։ Եղկելի բանաւորներէն ո՞վ երբեք կրցած է տալ ճոչունին խինդն ու ողբը։ Համաչխարհային բանաստեղծութիւնը, նոյն իսկ իր հեղինակաւոր ձայներուն ու ժոմն ու չնորհովը, չէ հասած այն նրբաթել աւէշին, ուր թռչունին ձայնը կը հատկէի, աննմանօրէն կը կէտկիտուի, անոր բնազդական զգացումին իրրեւ հարազատ թարգմանը — զգացում բերկրութեան, ցաւի, կարօտի եւ սիրոյ։ Զարկ դուն, քերթող, որքան կ'ուզես, քու բառերուդ ճոյլը, փայփայելով անոնց դիրերն ու պիծերը, հնարաւոր բոլորչին ու հնարաւոր պայծառ երանգը տալու համար։ Թովէ, կախարդէ դուն, երաժիչտ, այդ բառերուն բնութիւնը, մանկ, որքան կ'ուզես եւ կրնաս հազարիդ թելերը, բայց երկուքդ ալ անկարող էք ծիծեռնակին կամ սոխակին խօսքը տալ մեղի։ Մարդիկ երարու հետ միայն կրնան մրցիլ։ Անքան ու անքառ, բնութիւնը անմրցելի է։ Ոչ մէկ արուեստ, ըլլայ ներկային, ըլլայ ամէնէն հեռաւոր ապագային, որքան բարձրանայ մեքենայով, չի կրնար թռչուն ըլլալ։ Մարդկային արուեստը ինք իրմով միայն քան մը կ'արժէ եւ, առ առաւելն, կը վնասէ իրեն կամ ուրիչին։ Չի կրնար նոյնիսկ ողբալ եւ հայրենի կարօտը տալ ճչդիւ։

***

— Եթէ Գագիկ հոս գալու ըլլայ, չատ պիտի բարկանայ. անգութ մարդ մըն է ան, չարունակեցի ես։

Հայերը, այր թէ կին, իրարու պատրաստ կը նայէին։

— Գագիկ մեր կարծածէն աւելի պիտի ըլլայ, մրմնջեց Ֆրէտ։ Սենեակին բազմութիւնը հասկցաւ տեսանք որ հոն քանի մօտ զրահականներ կային՝ մեծ մասով կիներ։ Հաստատ եթէ կարենայինք անոնք չհասնելու համար գործին մեծ մասը կատարած ըլլալ, գործին վրայ կ'ըլլայինք։ Վարը, ծառերուն միջեւ, տպաւորող պահակները տեսած պիտի ըլլան որ մեր դէմ չեն։ Հաստատ կը նկատէինք, չանկարծ անդուներէն դէպի տանիքը բարձրացող ոտքերու ձայներ առինք եւ մարդ մը, որուն բոլոր Հայերը եվրեմ անունով կը նկատէին, ներս մտաւ, սպառազէն տեսակ դէնքերով։

Բայց եվրեմ առանձին չէր։ անոր հետեւէն անծայր չղթայի պէս մէկ մէկ ներս մտան ուրիչ մարդիկներ եւ անկէ ծայրէ ի ծայր լեցուեցաւ։ Այդ մարդիկներէն ոմանք Թուրք նմանած էին, մեծ մասը սակայն Հայ էին։

(Շար.)

ԲԱՑԱԿ ԼԵԼԵՆ ԵՒ ԻՐ ԱԶՈՒՆ

— Ես հենց որո՞ւ են կարոտ, մորս եղբայրն էլ չկա, որ գնամ նրա մոտ, ինձ ուրախացնի, ասի՝ ես եկել եմ քեզ մոտ, ինչ ուզում ես՝ տուր ինձ, ես էլ կգնամ, կբերեմ քեզ համար, որ ինձ էլ ուրախանաս։ Ուրիշ ոչ մի ազգական չունեմ, որ գնամ նրանց մոտ։ Ես ինչ անեմ, որ ինձ ուրախացնեն։ Ես ինչ անեմ, որ ինձ էլ

Ինչման տուժեց Զեհտոլովաքիան

Մինչեւ համաձայնութեան հետեւանքով Գերմանիա ամբողջապէս ստացաւ այն, ինչ որ պահանջած էր Կոտբոպէրկի վերջնագրով, նոյնիսկ քիչ մըն ալ աւելի :

Պերլինի դեսպանախորհուրդը արդէն որոշած է չեխ - գերմանական սահմանները, որմէ կ'երեւայ որ Պերլին յաջողած է երկու կէտերու մէջ աւելի հող ձեռք ձգել քան պահանջած էր Կոտբոպէրկի մէջ :

Հողի ու բնակչութեան կորուստներէն զատ՝ Զեխոսլովաքիա ենթարկուած է ճարտարարուեստական ու անտեսական ծանր վնասներու : Եւ եթէ ապագային այն հողամասերն ալ, ուր հանրածանօթ պիտի կառուցուէր, անցնին Գերմանիոյ, այն առեն կասկածելի կը դառնայ թէ մնացեալ Զեխոսլովաքիան պիտի կրնա՞յ ապրիլ իբրեւ անկախ միութիւն եւ տնտեսապէս իր գոյութիւնը պահել, մանաւանդ որ Լեհաստան եւ Հունգարիա եւս հողամասեր կցած են իրենց :

Այս անդամատումով Զեխոսլովաքիա կորսնցուցած է 90 առ հարիւրը իր ածխահանքերուն, գրեթէ ամբողջը իր անտառներուն եւ փայտածուխի պահեստներուն, կէսը իր մետաղի հանքերուն, երկու երրորդը իր հիւսուածեղէնի ճարտարարուեստին, կէսը իր հագուստի գործարաններուն, ամբողջը չախճապակիի գործարաններուն եւ կէսը իր օծանելիքներու եւ խեցեգործական արտադրութեանց :

Իր ճամբաները եւ երկաթուղիի հաղորդակցութիւնը կտրուած են գերման սահմանապետներով : Փիլզէնի ազգային պաշտպանութեան գործարանները թէեւ կը մնան Զեխերու ձեռք, բայց երեք կողմէ շրջապատուած են Գերմանիայով : Նոյնիսկ Փրակայի լոյսի եւ փիլզէնի էլեկտրականութեան կեդրոնական կայանները մնացած են գերման հողամասերու մէջ :

Պերլինի դեսպանական խորհուրդին մէջ Գերմանիա իր ուզածը ստացաւ, որովհետեւ ամէն ընդիմութեան պատասխանեց , թէ ի հարկին զինու զօրութեամբ կը գրաւէ, եւ միւս դեսպանները տեղի տուին :

Ամբողջ Սոֆիան խուզարկուեցաւ մեկ օրուան մէջ

Հոկտեմբեր 13ին, զինուորական ուժերու պաշտպանութեան տակ՝ ոստիկանութիւնը տուն առ տուն խուզարկութիւն կատարեց Սոֆիայի մէջ, փնտռելով ինքնութեան թուղթ չունեցող եւ անբաղձալի անձերը :

Այս խստութիւնը հետեւանքն էր սպայակոյտի պետ զօր. փէյեւի սպանութեան :

Փողոցներու վրայ հսկող զինուորները ունէին ձեռնաւոր ամբողջ եւ սուինները անցուցած էին հրացաններուն : Ամբողջ քաղաքը կը ներկայացնէր պատերազմական վիճակի պատկեր մը :

Ամբողջ 19 ժամ ոչ ոքի թոյլ տրուեցաւ դուրս ելլել տուներէն , բացի զինուորներէ, ոստիկաններէ եւ զիւանագիտական մարմնի անդամներէ : Աւելի քան 350,000 հոգի բանտարկուած մնացին իրենց տուներուն մէջ :

Հաղորդակցութեան բոլոր միջոցները՝ հանրակառք, երկաթուղի, հեռաթոռ, հեռագիր եւն. կանգ առին : Միայն կը գործէր ձայնասփիւռը, որ առեն առեն կը տեղեկացնէր, թէ խուզարկութիւնը կը շարունակուի : Քաղաքին մէջ կեանքը դադրած էր :

Զերբակալուեցան քանի մը հարիւր հոգի, իսկ բանտ առաջնորդուեցան ձախակողմեան կուսակցութեանց, Գիւղացիական ումանկեդրոնական աւելի քան հարիւր զեկավարներ :

Կաթոլիկ եկեղեցին Աւստրիոյ մէջ

Աւստրիոյ գերման լրագրերը, Հէր Պիւրքէլ յայտարարեց նախկին մեծ ժողովի մը առջեւ, թէ կառավարութեան եւ Աւստրիոյ կաթոլիկ եկեղեցիի մէջեւ բանակցութիւնները խզուած են :

Յարձակելէ եօթ Վիէննայի արքեպիսկոպոս կարտինալ Իննի – ցկըի վրայ, ան ըսաւ թէ տեղի ունեցող ցոյցը Զեխերու եւ Հրեաներու գործն էր : Եւ աւելցուց .

— Ես հրամայեցի, որ 1· Վիէննայէն հեռանան անյապաղ այն բոլոր Հրեաները, որոնք Զեխոսլովաքիոյ հպատակ են, եւ այն բոլոր Զեխերը, որոնք անբաղձալի են :

2·— Այսօրուընէ սկսեալ փակուին բոլոր կաթոլիկ եկեղեցական պատկան դպրոցները :

3·— կաթոլիկ կղերականները զուրս մնան Զուտէթեան հողամասերու կցումին հետեւանքով արուելիք ընդհանուր ներումէն :

4·— Մերժել կաթոլիկ կղերականներու այն բոլոր ջանքերը, որոնց նպատակն է ներում ստանալ առք· Շուշնիկի համար, որ չուտով պիտի դատուի :

5·— Պահել եկեղեցիի եւ կառավարութեան միջեւ բանակցութիւնները :

Ժողովականները, որոնք լսեցին այս ճառը, ազդարակեցին թէ « պէտք է կեդրոնացման կայան դրկել Իննիցէրը» կամ «կ'ուզենք որ Իննիցէրը կախաղան հանուի այստեղ »:

Ազգ. վիճակահանութեան պարգեւներ

Ազգ· պարգեւախաղի 10րդ շարքին վիճակահանութիւնը տեղի ունեցաւ ուրբաթ գիշեր, Ռէնսի մէջ: Հինգ միլիոնի մեծ պարգեւը շահեցաւ 313,061 թիւը:

Հետեւեալ չորս թիւերէն իւրաքանչիւրը շահեցաւ մէկ միլիոն փր·— 752,752, 212,934, 184,606, 360,940 :

Հետեւեալ վեց թիւերէն իւրաքանչիւրը շահեցաւ 500,000 փր· — 063,292, 1,233,568, 594,865, 081,967, 978,165, 841,769:

01,718 վերջացող թիւերը շահեցան 100,000 փրանգ:

82,573 եւ 53,653 վերջացող թիւերը շահեցան 80,000 փրանգ:

21,611 եւ 15,655 վերջացող թիւերը շահեցան 50,000 փրանգ:

9892, 0586, 2158 եւ 7907 վերջացող թիւերը շահեցան 20,000 փրանգ :

146 վերջացող թիւերը շահեցան 10,000 փրանգ:

084 վերջացող թիւերը շահեցան 5000 փրանգ :

80 վերջացող թիւերը շահեցան 1000 փրանգ :

42 եւ 71 վերջացող թիւերը շահեցան 220 փրանգ :

5 վերջացող թիւերը շահեցան 110 փրանգ :

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ,

Ֆ. կ. Խաչի Փարիզի Մասնաճիւղի Նոր տարեշրջանի առաջին դասախօսութիւնը 22 Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը ճիշդ 9ին, 8 Ռիւ Պօսիւէ, Փարիզ:

ԿԸ ԽՕՍԻ ԳԵՐ. ՏԻՐԱՆ ՎՐԴ. ՆԵՐՍՈՅԵԱՆ

Նիւթ՝ «Առանին կրթութիւնը»:

Կը հրաւիրուի հասարակութիւնը: Հիւրասիրութիւն Քէյով կարկանդակ: Ծախսերու մասնակցութեան համար կը գանձուի 3 ֆր.:

Թէյատեղաւ

Շ. ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

16 Հոկտ., կիրակի ժամը 3ին, Հայ Ակումբին մէջ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՅԱՆՈՒՆ Շ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԻԿ. Շ. ՄԻՍԱՔԵԱՆ

Սահերու Միութիւնը կը բեմադրէ «ՃԱՌԱՁ ԹՈՐՈՍ» (զաւեշտ):

Գեղարուեստական բաժինին կը նուագէ Թառիստ ԳԱՐԵԳԻՆ:

Մուտք 3 ֆրանք, փոքրերու 2 ֆրանք

ՎԵՐԱՄՈՒՏԻ ՀԱՆԴԷՍ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԵԱՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ Պ. ԱՐՇԱԿ ՋՕՊԱՆԵԱՆԻ

16 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 4էն մինչեւ կէս գիշեր: 8 Ռիւ Պօսիւէ, Փարիզ: Կը խօսին զոյգ Միութեանց ներկայացուցիչները: Գեղարուեստական բաժին եւ պար: Խնամուած պիւֆէ եւ օրքէսթր:

Մուտք 3 եւ 5 ֆրանք:

ՅԱՌԱՋ կը ծախուի Սէնթիւի շրջանին մէջ

42, Rue des Petits Carreaux, Փարիզ Mr. Pierre Marchal՝ խանութը:

ԵՓՐԱՏ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Ղեկավար Տ· ՕՆՈՍԵԱՆ

15, Rue du Pourtour, Clamart, Seine — Tél. Observatoire 13 - 45

Հեռաձայնել երեկոները 8էն վերջ :

Հայկական, եւրոպական եւ կովկասեան եղանակներ: Միակ նուագախումբը հաճելի դարձնելու համար ձեր հանգիստները, հարսնիքները եւ հաւաքոյթները :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր եւ Տիկին Թուիֆէնկեան եւ զաւակունք եւ իրենց փեսան Պ. Հայկ Սիմոնեան իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն Կրընոպլի Հ· Բ· Դ· «Եօթնեղբայրեան» կոմիտէին, Հ· Կ· Խաչի Մասնաճիւղին, Տիկին Մուրատեանի, գաղութիս հայրենակիցներուն եւ ամէն անոնց որոնք անձամբ, գրաւոր եւ ծաղկեպսակով ցաւակցութիւն յայտնեցին Տիկին Աբշալոյս Սիմոնեանի (ծնեալ Թուիֆէնկեան) դառնաղէտ մահուան առթիւ: Թուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 4ին եւ մարմինը ամփոփուեցաւ Կրընոպլի Մէն Թօք գերեզմանատունը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՓԱՐԻԶԻ Թոքատի Հայրենակցական Միութեան ժողովը տեղի պիտի ունենայ 16 Հոկտ., Կիրակի կէսօրէ վերջ ժամը 2—4, Պ. Թրավէսեանի բնակարանին մէջ, 13 Rue Charles Calmus, Paris (13): Բոլոր հայրենակիցներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ,

Հ· Թրավէսեան, Ե, Դանիէլեան Ս· Պապիկեան:

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Deneume — PARIS (13)

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈՒԿԱՐԻՈՑ Պօրիս թագաւորը ունկնդրութեան ընդունելով Գերմանիոյ տնտեսութեան նախարար Հէր Փունքը, անոր շնորհեց Ս· Ալէքսանդրի չքանշանը :

ԴՈՐԾԱԶԳԿՈՒԹԵԱՆ չաբաթական տեղեկագրին համաձայն , հոկտեմբեր 8ին նպաստընկալ գործազուրկներու թիւն էր 350,229, որոնց 241,555ը այր, 18,674ը կին: Նախորդ չաբաթուան թիւն էր 339,816: Ուրեմն աւելցած են 10,413 հոգի: Այս յաւելումը մեծ մասով հետեւանք է աշխատանքի հրապարակին խանգարման, որ յառաջ եկաւ պահեստներու մասնակի զօրաշարժով :

ՌՈՒՄԱՆԻՈՑ պատերազմական նախարարը եւ օդնականը հրաժարեցան, վէճ մը ծագած ըլլալով նոր սպառազինութեանց մասին: Նախարարը, Զօր· Արկէսէանու, պաշտօնի կոչուած էր պատրիարք – վարչապետին դահլիճին մէջ, իսկ օդնականը՝ Զօր· կլաց, Ռումանիոյ վերազինման գործը յառաջ կը տանէր երեք տարիէ ի վեր :

Մ· ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ վերազինումը փութացնելու համար, նոր ծրագիր մը առաջարկեց նախագահ Րոզվէլթ, որպէսզի Ամերիկան եւս չմնայ միւս պետութիւններէն: 1,250,000,000 տոլարի ծախք մը կը նախատեսուի այս նոր ծրագրին համար: Մասնաւորապէս մղում պիտի տրուի ամէն տեսակ սպառազինութեանց արտադրութեան :

ՔԱՆԹՈՆԻ ԱՆՁՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ պահանջեց ձախոն, թոռոյիկները ցրուելով օդանաւերու միջոցաւ: Հակառակ պարագային ընդհանուր յարձակողականի մը պիտի ձեռնարկէ ցամաքէն, ծովէն եւ օդէն, քարուքանդ ընելու համար քաղաքը, որ ունի 861,000 բնակիչ: Քաղաքին իշխանութիւնները այլեւս փոխադրուեցան: Միջոցներ ձեռք առնուած են, 400,000 քաղաքացիներու տեղափոխութեան համար :

ԵՐՈՒՍԱղԷՄԷն կը հեռագրեն թէ Պաղեստինի ապստամբները որոշած են քանդել բոլոր ճամբաները, որպէսզի անգլիական նոր ուժերը չկարենան չարժիլ: Վերջին 24 ժամուան միջոցին քանդուած են բազմաթիւ ճամբաներ: Ապստամբները խրամներ կը փորեն խճուղիներուն վրայ եւ կ'ողողեն զանոնք, պայթեցնելով ջրանցքները :

ՍՊԱՆԻՈՑ հանրապետական վարչապետը, Պ. Նէկրէն, ճառ մը խօսելով, յայտարարեց թէ խաղաղութիւնը կարելի է ապահովել վերահաստատելով միջազգային օրէնքը՝ ի նպաստ հանրապետական կառավարութեան եւ հանրաքուէ կատարելով երկրին մէջ: Այս առթիւ պահանջեց նաեւ եան կանչել օտար կամաւորները :

« ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՍՏՂԸ », աշխարհի ամենամեծ օդապարիկը, որ կը պատրաստուէր ամենաբարձր թռիչքը կատարել դէպի երկինք, բռնկեցաւ եւ ոչնչացաւ փորձի մը պահուն: Շինութիւնը արժած էր 400,000 տոլար:

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱՒՈՒԾԱԲԱՆ - ԱՏԱՄՆԱՒՈՒԾԱԲԱՆ

44 Rue Dunkerque (ՄԷՋԸՐՍ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՒՌ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20:

Աւտօմոպիլները ժամադրութեամբ:

ԿԱՐԱՊԵՏ Յ. ԷՄՄԷՐԵԱՆ

Maison E. CHARLES *հիմնուած 1869*

29 rue Mathis, Métro Crimée

Autobus: AJ, AV, CP, 52, 50/71 Tel. Botzaris 12—60

Կը ծախենք գոհարեղէններ, ամէն տեսակ ժամացոյցներ մատանիներ եւլն.: Նորոգութիւն ժամացոյցներու եւ գոհարեղէններու: Կը գնենք՝ բլաթին, ոսկի, արծաթ եւ գոհարեղէններ՝ նպաստաւոր գիներով:

Մի մոռնաք որ վստահելի ձեռքէ գնուած ոսկեղէն ու գոհարեղէնները անփոփոխ կը պահեն իրենց արժէքը:

Գաւառներէն եղած ապատրանքները կը կարգադրուին արագ եւ խղճմտօրէն:

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

Ճաշարան ՓԼՕՐԻԱ

61, Rue Monsieur le Prince, Paris (6e)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ :

ՐԱՖՖԻ

Փարիզահայերու միակ վայելուչ ճաշարանը

Տէր եւ Տնօրէն Մ· Գ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆԻ

9, RUE MAUBEUGE, Paris (9)·

Մէթրօ Cadet et le Peletier (Carrefour Chateaudun).

Հոն պիտի գտնէք ՈՒՈՐՈՒԱՏ կարգով պատրաստուած Արեւելեան եւ Եւրոպական կերակուրներու հարուստ ճաշացուցակ մը:

Ամբոխելի մաքրութիւն եւ անշնորհի սպասարկութիւն, անմիջապատ ժամերէն գինեբաժ:

Ամէն տեսակ ձաշկերոյթներու, թէյասեղաններու եւ շաքոյթներու կը տրամադրուի սրահ:

Ճաշարան "ԲԵՐԱ"


ՏՆՕՐԷՆ ԵՐՋԱՆԻԿ ՊԱԼԵԱՆ

9 Rue Provence, Paris 9e. *(Առաջին յարկ)*

Մէթրօ Le Peletier

Արեւելեան եւ եւրոպական կերակուրներ՝ պատրաստուած անարատ իւղով:

Hommes **Dames**



15, Bld. Bonne Nouvelle

Métro: Bonne Nouvelle — Tél.: Gut. 93-70



"ՇԻՐԱԿ"

Արեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական, Անմրգելի, Անխարդախ, Առաջնակարգ գօրագուցիչ ախորժակ բեր, պատրաստուած զուտ չամիչ ի միջոց Թով: Հայ ատենդական սեղաններն զարդ



ՐԱՖԸ ՏԻՒԶ

Զուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով սաստկացուած ուած ֆրանսական օղին է *ՐԱՖԸ ՏԻՒԶԸ*. Զգուշացէք արհեստական օղիներէ, որոնք ձեր ստամոքսը կ'այրէ գլուխերնիը չուր կը խմէ եւ կը վնասէ ձեր առողջ չուներան: Խմեցէք *ՐԱՖԸ ՏԻՒԶԸ* որուն համ, կազդուրիչ եւ ախորժ բաղա, կազդուրիչ եւ ախորժ փարեք ըլլալը ուած է:

Dalakupeian 8 Rue Sullie Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՐԱՉ — HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 79
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ Գաղութքներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Ամերիկա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	235 ֆրանք	120 ֆրանք	

ԵՐԵՔՇԱԲԹԻ
18
ՀՈԿՏԵՄԲԵՐ
HARDI
18 Octobre
1938

ԺԹ ՏԱՐԻ — 14e Année No. 3863

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿԱՒ ԽՕՍՔ

ԿԸ ԹՈՒԻ ԹԷ ՊԱՏՐԱՍՏ ՉԷԻՆ

Ամբողջ աշխարհ ուրախացաւ, երբ չորս վարչապետները Միւնիխի վազելով, գլուխ գլխի տուին եւ խախտեցին պատերազմը :

Հարց մը կը համարուէր այս բարեյաջող ելքը, այնքան արհաւալի պահու մը, երբ միլիոնաւոր բանակներ չարժման մէջ դրուած, հրամանի մը կը սպասէին, յառաջ խաղալու համար :

Անշուշտ վճռական դեր կատարեց չորս ղեկավարներուն խոհեմութիւնը, մեռսանաներորդ ժամուն : Որ եւ է յախտուն չարժուածքի կրնար պայթեցնել վառօդը : Մանաւանդ որ, զեմմանական զօրաչարժը վճռուած էր արդէն, իսկ Ֆրանսա դրօշի տակ առած էր առնուազն 4½ միլիոն զինուոր :

Այդ առթիւ կատարուած տնտեսական ծախքերն անգամ դիւրաւ պոռոտ կը պատճառեն :

Այսպէս, Ֆրանսայի ելմտական նախահաշիւը 225,000,000 տոլար կը հաշուէր սեպտեմբերի բացառիկ ծախքերը : Ուրիշ աղբիւրներու համաձայն, Պելժիա ծախսած է 6,180,000 տոլար, թէեւ բանի մը օր հաղիւ տեւեց զօրաչարժը, այն ալ մասնակի, ինչպէս Ֆրանսականը : Հոլանտան ալ տնտեսեցաւ 56,220,000 տոլար ծախսել, նախնական զօրաչարժի մը համար : Անգլիոյ բացառիկ ծախքերը կը հաշուեն մինչեւ 140,000,000 տոլար (60,000,000 տոլար՝ նաւատորմին, 75 միլիոն հակօդային պաշտպանութեան , եւ 25 միլիոն ալ կազարդել զինամթերու համար) :

Վաւերական տեղեկութիւններ կը պակսին Գերմանիոյ պին - ուորական պատրաստութեանց համար : Մասնագէտներ դիտել կուտան թէ Քրիմագրամի չրջաբերութիւնը աւելցած է մօտ 750 միլիոն տոլար : Արդ, այս դումարին 560 միլիոն տոլարը չրջաբերութեան հանուած էր սեպտեմբեր 23էն 30,--- Միւնիխի համաձայնութիւնն նախօրեակին : Ուրեմն կարելի է դնել մօտաւոր հաշիւը :

Չեխոսլովաքիոյ ծախքն ալ խոշոր դումար մը կը կազմէ : Միայն 28,110,000 տոլար ծախսուած համարձակ էին տպագնապալի պահուն, մէկ չաբթուան ընթացքին , իսկ պատրաստութիւնները կը չարունակուին ամիսներէ ի վեր :

Բոլոր բացառիկ ծախքերը միասին հաշուելով, իրազեկներ կը հաստատեն թէ 1,400,000,000 տոլարի նստած են վերջին զօրաչարժները :

Եւ այս՝ առանց որ եւ է ճակատամարտ մղուած ըլլալու :

Հիմա որ մղձաւանջը փարատած է, իրազեկներ կամ ազմկարարներ սկսած են յայտնութիւններ կատարել, գաղտնիքներ մէջտեղ հանել :

Կիրակի օր անգլիական թերթ մը կ'ողբար թէ երկիրը անպատրաստ էր պատերազմի համար : Այս առթիւ կը պատմէր թէ հակօդային թնդանօթները պակաս կուգային, ուրիշներ ալ անգործածելի էին եւայլն :

Անգլիացի նախարար մը, լորտ Ուինթըրթըն, պարագ սեպեց հրապարակաւ յայտնել թէ Ս. Միութիւնը ոչ միայն բացորոշ հաստատիքներ տուած չէր զօրծնակէս օգնելու Չեխոսլովաքիոյ, այլեւ ի վիճակի չէր, բազմաթիւ հրամանատարներ հրացանի բերնուած ըլլալով :

Մոսկուա իր դեսպանին միջոցաւ բողոքեց այս յայտարարութեան դէմ, բայց անգլիացի նախարարը պնդեց, ուրիշ յայտնութիւններ ալ կատարելով :

Փարիզի մէջ չատ աւելի իրար անցած են :

Անգլիոյ երեսփոխան Վալտրոն Ուինթըրթըն, «ողբալի» կոչած ըլլալով Ֆրանսայի օդանաւային ուժերուն վիճակը, կարգ մը թերթեր եւ երեսփոխաններ խուղ կը լեցնեն կրակին վրայ :

« Փառի Սուար » քննութեան մը ձեռնարկած է : Նախկին նախարար եւ ընկերվարական Ֆրոսար «օդանա՛ւ, օդանա՛ւ, օդանա՛ւ» կ'աղաղակէ, վարչապետէն պահանջելով 5000ի բարձրացնել թիւը : Նախկին վարչապետ Լէոն Պլում իր երկուան խմբագրականը նուիրած էր այս հարցին, ժխտելով չափազանցութիւնները, բայց իր կարգին խոստովանելով թէ Ֆրանսական օդաուրմիղը ստորադաս վիճակի մը մէջ կը գտնուի :

Ընականաբար աւելի յառաջ կ'երթան ազակողմեան տարրերը, իրրեւ ընդդիմադիր :

Երեսփոխան մը, Պ. Ֆէրնան Լօռան, անդամ բանակի յանձնաժողովին, դառնօրէն կը դանգատի թէ՝ բացի զրօշի տակ առնուած զինուորներէն եւ կարգ մը պաշտօնատարներէ, կազարդել դիմակ բաժնուած չէր Փարիզի ժողովուրդին, մինչեւ սեպտեմբեր 30: Եւ կը պատրաստուի աւելի ծանրակչիռ յայտնութիւններ ընել, հարցապնդում կատարելով :

Ուրիշ երեսփոխան մը, Պ. Ֆրէտէրիք Տիւփոն, նոյնպէս երեսան կը հանէ քաղաքացիներու պաշտպանութեան թերութիւնները, շնդալից փաստեր յիշելով : Այս ալ իր կարգին հարցապնդում պիտի կատարէ :

Եւ այսպէս բազմաթիւ հրատարակութիւններ ու ճառեր, ապացուցանելու համար թէ պետութիւնը պատրաստ չէր իր ժողովուրդն իսկ պաշտպանելու, ալ ո՛ւր կը մնար օգնութեան հասնիլ Չեխերուն :

Ուրեմն, պատերազմը եթէ խափանուեցաւ, դլխաւոր պատճառը այն է որ մեծերը պատրաստ չէին, վարկեանը նպաստաւոր չէին սեպեր, սպառնալիքին սպառնալիքով պատասխանելու համար :

Եղրակացութիւնը,--- զինուինք անյապաղ, որպէսզի չափազանց նոր նահանջներ կատարել, աւելի զերազանց ուժերու առջեւ ....

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գործակցութիւն Արեւելեան Եւրոպայի մէջ

Լոնտոնի «Սընտէյ Տիմփէյ» թերթը, որ կը հրատարակուի կիրակի օրերը, իր առաջին էջին վրայ չընդալից խորագիրներով կը ծանուցանէ թէ Հիթլէրը Պերլինի բրիտանական դեսպանին պարզած է եւ մօտերս Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի ալիսի ներկայացնէ ծրագիրը մը՝ եւրոպական համաձայնութեան մասին : Թերթը այսպէս կ'ամփոփէ այդ ծրագրին հիմնական կէտերը.--

1· Հիթլէրը պատրաստ է երաշխաւորելու Ֆրանսայի բոլոր սահմանները :

2· Հիթլէրը պատրաստ է յայտարարելու թէ բրիտանական կայսրութիւնը այնպէս ինչպէս կազմուած է եւ իր ներկայ հողային հիման վրայ, կը համապատասխանէ Գերմանիոյ չահերուն :

3· Հիթլէրը պիտի առաջարկէ եւրոպական սպառազինութեանց դաշինք մը մէկ կողմէ Գերմանիոյ եւ Անգլիոյ, միւս կողմէ Գերմանիոյ եւ Ֆրանսայի միջեւ :

4· Գերմանիա, Ֆրանսա, Իտալիա եւ Մեծն Բրիտանիա բացորոշապէս յանձն պիտի առնեն դաշինք չկնքել Ս. Միութեան հետ :

5· Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա Գերմանիան կատարեալապէս ազատ պիտի ձգեն արեւելեան Եւրոպայի մէջ :

6· Գերմանիոյ պէտք է վերադարձուին իր նախկին գաղթավայրերը որոնք Անգլիոյ կամ Ֆրանսայի հոգատարութեան տակ դրուած են Ազգերու Դաշնակցութեան կողմէ :

ԳԵՐՄԱՆԻԱ ԻՆՉԵ՞Ր Կ'ԵՓԷ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Նոր համաձայնութի՞ւն Իտալիոյ հետ

Ամմատական պաշտօնաթերթին քաղաքական խմբագիրը, Տիկին Ժընըվիեվ Թաղուբ, որ կ'աչխատակցի նաեւ Լոնտոնի Թերթերուն, ընդհանրապէս օգտուելով Ֆրանսայի արտաքին նախարարութեան չրջանակներէն, կիրակի օրուան քրոնիկին մէջ կը դրէ թէ Մուսոլինի նորէն տեղի տուած է Հիթլէրի պահանջներուն առջեւ : Եւ կը չարունակէ .

—« Երկկ իրիկուն Հոմմէն կ'իմանայինք թէ երկու դիկտատորներուն միջեւ գոյացած նոր համաձայնութեան հիմնական սկզբունքներն են.—

1· Գերմանեփտալական գերակայութիւն կեդր· Եւրոպայի եւ Պալքանեներու մէջ, դուրս ձգելով ժողովրդապետական ազգերը :

2· Խորհրդային Ռուսաստանը պէտք է հեռու պահուի Եւրոպայէն : Ոչ մէկ արդիւնաւոր համաձայնութիւն կարելի է երկու դիկտատուրաներու եւ ժողովրդապետութեանց միջեւ, ցորչափ այս վերջինները Թոյլ կուտան որ Ս. Միութիւնը որ եւ է դեր կատարէ Եւրոպայի գործերուն մէջ :

3· Հոմմ - Պերլին առանցքը պէտք է գործէ տիրաբար, որպէսզի Իտալիա կարենայ իր բազմակողմանի գերակշռութիւնը հաստատել Միջերկրականի ափագանին մէջ :

4· Վերջնապէս եւ կատարեալապէս կործանել գաղթային խնդիրը :

Միջերկրականի հարցին առթիւ, երկկ մեղի կը հաւատացնէին թէ Իտալիա կ'ուզէ ամէն գնով պահել Մայորքա կղզին եւ անոր զերիչխանութիւնը պիտի ստանայ Սպանիոյ ազգայնական կառավարութեան կողմէ, երբ վերջնապէս հաստատուի ան : Ուրիշ խօսքով Սպանիան գաղթավայրի մը պիտի վերածուի Իտալիոյ եւ Գերմանիոյ կողմէ : Այս վերջինը պիտի ստանայ նաւային կայան մը եւ տնտեսական չահագոյնութիւններ սպանիական Մարոքի մէջ :

Արեւելեան Միջերկրականի մէջ, Փանթէլլէրիայի եւ Երկոտասան կղզիներու ամրութիւններէն վերջը, կ'ըսուի թէ Իտալիա պիտի պահանջէ նաւային կայաններ յունական կղզիներուն եւ Թուրքիոյ մէջ, ի պաշտպանութիւն այն քաղաքական, տնտեսական եւ զինուորական դրութեան որ առաջին տեղը պիտի տայ Իտալիոյ՝ Դանուբի հարաւային մասին մէջ : Հիւսիսային Ափրիկէի Ֆրանսական գաղթավայրերու խնդիրն ալ օրակարգի վրայ է :

Հոմմի վարիչ շրջանակներուն մէջ դիտել կուտան որ եթէ Հոմմի Ֆրանսական նոր դեսպանը, Պ. Ֆրանսուա Փոնսէ ուղէ արտայայտուիլ տարտամ բառերով եւ հին դիւանագիտութեան յատուկ բացատրութիւններով, պարզապէս քաղաքավարի պատասխան մը պիտի ստանայ եւ նորէն ամէն բան առկախ պիտի մնայ : Եթէ Ֆրանսայի ներկայացուցիչը կ'ուզէ Մուսոլինիի վստահութիւնը չահիլ եւ դիւրացնել յետագայ բանակցութիւնները, պէտք է նոր պատասխան առաջարկներ ներկայացնէ, առանց փոխարինութիւն պահանջելու : Ֆաչական պաշտօնատարները կը բացատրեն թէ Իտալիա Միւնիխի մէջ մատուցած ծառայութենէն վերջը պահանջող է եւ Ֆրանսա պէտք է արագօրէն ընդունի իր պահանջները, առանց դիւանագիտական ձգձգումներու :

Միւս կողմէ, Իտալիա ապահոված է իր տեղը Գերմանիոյ տնտեսական ծաւալման ծրագիրներուն մէջ, ի սիրուս աչխարհի : Այսպէս, համաձայնած է Գերմանիոյ հետ, ազդեցութեան չրջան մը ստանալու համար Իրանի եւ Աֆղանիստանի մէջ :

Յայտնի է որ Քրուփ, Գերմանիոյ թնդանօթի թագաւորը , Տէմագ եւ Տուիքսպուրգ ընկերութեան հետ առաջարկ ստացած է ճանրարան մը հաստատելու Իրանի մէջ : Այս ապրանքը կ'արժէ

(Յուդերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

«ՖՈՒԹՊՈԼ»Ը ԵՒ ԹՐՔՈՒԱԶԻՆ

Պոլսոյ թուրք թերթերը կը գրեին անցեալ սեպտեմբերին.—

Կրթական գործավարութիւնը որոշ չեց որ 17 տարեկան աղջիկները, աշակերտ միջնակարգ եւ բարձրագոյն վարժարաններու, հետեւին մարզական խաղերու, մէջն ըլլալով *ֆութպոլը* :

Նոյն թերթերը կը հաղորդեն վերջին թղթարերով .—

Մարմնակրթութեան մասնագէտ ուսուցչուհի Պայան Միւպէճճէլ Աբկան, որ պետութեան կողմէ Շուէյտ ղրկուած էր մարզական մասնագիտութիւն ձեռք բերելու համար, այս առթիւ դրած իր մէկ յօդուածին մէջ կ'ըսէ .

« Այս կերպով մեր երեւակայութեան մէջ կենդանացուցած նուրբ, բարեձեւ, ուժեղ երիտասարդ աղջիկներու սերունդի մը փոխարէն, ծնողներուն կասկածելի, կոշտ ու կոպիտ կիներու հօտ մը հասցուցած պիտի ըլլանք... : Ահա թէ ինչու կարելի չէ ու ճիշդ ալ չէ աղջիկներուն ֆութպոլ խաղցնել » :

Կը կարծեմ թէ պայան Միւպէճճէլ շատ ետ մնացած է : Այո՛ նուազն նահապետերազմեան է :

Անշուշտ կրթական գործավարութիւնը բան մը գիտէ որ *ֆութպոլին* ալ կը յանձնարարէ թուրք աղջիկներուն, իբրեւ մարզական եւ մանաւանդ մարտական կրթութիւն :

Թուրքերը Շուէտ՞ին պիտի սորվին տակաւին կրթութիւն :

Պոլսոյ թուրք թերթերը կը գրեին անցեալ սեպտեմբերին.—

Կրթական գործավարութիւնը որոշեց որ 17 տարեկան աղջիկները, աշակերտ միջնակարգ եւ բարձրագոյն վարժարաններու, հետեւին մարզական խաղերու, մէջն ըլլալով *ֆութպոլը* :

Նոյն թերթերը կը հաղորդեն վերջին թղթարերով .—

Մարմնակրթութեան մասնագէտ ուսուցչուհի Պայան Միւպէճճէլ Աբկան, որ պետութեան կողմէ Շուէյտ ղրկուած էր մարզական մասնագիտութիւն ձեռք բերելու համար, այս առթիւ դրած իր մէկ յօդուածին մէջ կ'ըսէ .

« Այս կերպով մեր երեւակայութեան մէջ կենդանացուցած նուրբ, բարեձեւ, ուժեղ երիտասարդ աղջիկներու սերունդի մը փոխարէն, ծնողներուն կասկածելի, կոշտ ու կոպիտ կիներու հօտ մը հասցուցած պիտի ըլլանք... : Ահա թէ ինչու կարելի չէ ու ճիշդ ալ չէ աղջիկներուն ֆութպոլ խաղցնել » :

Կը կարծեմ թէ պայան Միւպէճճէլ շատ ետ մնացած է : Այո՛ նուազն նահապետերազմեան է :

Անշուշտ կրթական գործավարութիւնը բան մը գիտէ որ *ֆութպոլին* ալ կը յանձնարարէ թուրք աղջիկներուն, իբրեւ մարզական եւ մանաւանդ մարտական կրթութիւն :

Թուրքերը Շուէտ՞ին պիտի սորվին

վ.Ա.Հ

ԱԹԱԹԻՒՐՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԾԱՆՐԱՑԱԾ

Փարիզի ռուսական օրաթերթը, «Պոսլետնիա Նովոստի», կ'իմանայ թէ Աթաթիւրքի հիւանդութիւնը ծանրացած ըլլալով, իրեն պիտի յաջորդէ Լոնտոնի դեսպանը, Թէֆիկ պէյ :

Մ. Նահանգներու անկախութեան ապատազինութիւնները

Վերջին տեղեկութեանց համաձայն, Մ. Նահանգներու նախագահին վերազինման ծրագիրը աննախընթաց համեմատութիւններ կը ներկայացնէ : Այսպէս, մասնագէտներու կարծիքն առնելով, նախագահը անհրաժեշտ կը դտնէ 500,000ի յաւելուածական բանակ մը կազմել, ինչպէս եւ 2300 ռազմական օդանաւեր, մեծաքանակ հակօդային թնդանօթներ, ծովեզերեայ եւ դաշտային հրետանի, գնդացիրներ եւն. ապահովել : Պատերազմական նախարարութիւնը զօրծի ձեռնարկած է արդէն, 2,000,000 տոլարի ապրանք մը տալով չարք մը զօրծարանատէրներու, որպէսզի անհրաժեշտ պիտոյքները եւ մեքենաները ճարեն եւ իրենց պաշտօնեաները մարզեն ռազմական արտադրութեանց համար :

Նախագահը իր ծրագիրը պարզած առեն չծածկեց թէ վճռած յաւելուածական միլիոններ ծախսել անմիջապէս, իրրեւ հետեւանք արտաքին դէպքերու : Այս մտահոգութեամբ, անմիջապէս միջոցներ ձեռք առնուեցան, վերջացնելու համար բանուորական վէճերը, ինչպէս եւ կառավարութեան եւ եղեկտրական ընկերութեանց միջեւ տիրող անհամաձայնութիւնը :

Նախագահը եւ նաւային ու զինուորական իշխանութիւնները ծրագիր մը կը մշակեն, Մ. Նահանգները օժտելու աչխարհի ամէնէն չարժուն սպառազինութեամբ, առանց նկատի առնելու հսկայական ծախքերը : Այս առթիւ նախատեսուած վարկերը 25 առ հարիւր աւելի են, բաղդատելով անցեալ տարուան հետ : Ամերիկեան թերթերը կը գրեն թէ ազգը մեծ մասով համաձայն է նախագահ Րոզվելթի ծրագրին եւ յանձն պիտի առնէ ամէն զոհողութիւն, զայն իրականացնելու համար :

Տասը միլիոն ռակի վարկ Չեխոսլովաքիոյ

Անգլիական կառավարութիւնը յանձնարարեց Անգլիոյ դրամատան անմիջապէս Չեխոսլովաքիոյ տրամադրութեան տակ դնել տասը միլիոն ռակի, իրրեւ կանխավճար, զօրծածուելու համար տնտեսական պէտքերու եւ մասնաւորապէս զպաթականներու օդնութեան : Այս առթիւ հրատարակուած զեկոյցը կ'ըսէ թէ անգլիական կառավարութիւնը պիտի ուսումնասիրէ չեխական կառավարութեան յաչադիրը, Ֆրանսայի հետ եւ պատասխան մը պիտի ղրկէ կարելի եղածին չափ չուտ : Մինչ այդ, անյապաղ չեխական կառավարութեան տրամադրութեան տակ պիտի դրուի տասը միլիոն ռակի վարկ մը :

ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻՈՅ ընկերվարական կուսակցութիւնը որոշեց քաչուել Բ. Միջազդայինէն : --- Զախախոմմեան թերթերը կը գրեն թէ գերմանական կառավարութիւնը պահանջած է իրեն յանձնել վախտական ընկերվարականները, համախնամարները եւն. :

ԹՈՒՐՔԻՈՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ա.

Ի՞նչ է Թուրքիոյ տնտեսական վիճակը, ղէպի բարելաւո՞ւմ կը դիմէ, թէ ընդհակառակն ղէպի քայքայում:

Ահա հարցումներ, որոնց իրական պատասխանը կոչուած է պարզելու չատ մը այլ կէտեր ալ, եւ ամէնէն առաջ Թուրքիոյ ապագան, եթէ ճիշդ է որ մտահոգութիւնն է երկրի մը դլխաւոր հիմը եւ անկախութեան երաշխիքը:

Անտարակոյս, մասնագիտական վերլուծում մը չէ որ պիտի ընեմ: Նախ՝ ասիկա դուրս է օրաթերթի նեղ սահմանէն: Երկրորդ՝ «պետական վիճակագրութիւն» ըսուածը այնպիսի վատ մըն է, որուն երբեք կարելի չէ վստահիլ: Ուղածնուն պէս կը դարձնեն, կը կլորցնեն, կ'ուռճացնեն, եւ ահա դիմացդ կը դնեն առողջ ու գիտուկ պատկեր մը, երբ մօտէն դիտես թէ մարմինը հիւծախտաւոր է պարզապէս:

Ընդհանուր ակնարկ մըն է որ պիտի նետեմ, խոշոր դիծերու մէջ ներկայացնելու համար տնտեսութեան պատկերը:

Ամէնէն առաջ յայտնեմ որ, այս երանելի երկրին պիւտճէն ոչ միայն բաց չունի, այլ եւ հաւասարի դրոշ առուտուրի ակտիւութիւն կը ներկայացնէ, հակառակ անոր որ տարուէ տարի կ'աւելնան ծախքերը: Այսպէս, քանի մը տարի առաջուան 180 միլիոն ոսկինոց պիւտճէն՝ արդէն իսկ մօտ 250 միլիոնի բարձրացաւ այս տարի:

Ուրիշ կէտ մը: Պետական պաշտօնեաներու ամսականները կանխիկ կը վճարուին: Այսպէս, Օգոստոս 1ին կամ 2ին, Օգոստոսի թոշակը կը վճարուի: Եւ այս՝ տարիներէ ի վեր:

Երեւոյթ մըն է այս որ աննախընթաց է թրքական պատմութեան մէջ: Ատաթիւրք Համիտի չրջանին՝ կը պատահէր որ 10—12 ամսական դիւղուի: Սահմանադրութեան չրջանին ալ նեղութիւն կը կրէին եւ միայն արտաքին փոխառութիւններով կը յաջողէին ընել վճարումները:

Միւս կողմէ, միլիոններ արժող չինութիւններ: Մեծ մեծ չէնքեր կը շինեն, գործարաններ կը հիմնեն, քաղաքներ կը վերակազմեն, երկաթուղի կ'երկարեն:

Ուրի՞ց կը հայթայթեն այս բոլոր դրամները: Անշուշտ ժողովուրդէն, բան որ նոր թուրքիան միչեւ հիմա արտաքին փոխառութիւն չկիճեց:

×

Մտէք մասնաւոր անտեսութեան մէջ, եւ հոն ալ աչքի պիտի զարնէն բազմաթիւ նպաստաւոր կէտեր: Սպարէզները, ուր թուրքին հոտը չկար, հիմա լեցուն են թուրք արհեստաւորներով: Երբեմն ալ՝ բոլորովին անոնց վերապահուած: Թուրքը այսօր կրնայ խելք հասցնել ամէն արհեստի եւ մասնագիտութեան, սկսեալ որմնադրութենէն, երկաթագործութենէն մինչեւ ոսկերչութիւն եւ ճարտարագիտութիւն (երկրաչափ, ճարտարապետ, էլեկտրագէտ, եւն.):

Նոյն երեւոյթը առուտուրին մէջ: Հայուն, Յոյնին, Հրեայի յաջորդած է թուրքը եւ ձեռք առած առեւտուրի բոլոր ճիւղերը: Ամէն տեղ եւ ամէն ճիւղի մէջ՝ թրքական տուներ եւ ընկերութիւններ:

Մէկ խօսքով՝ Թուրքը սկսած է առեւտրական դառնալ, երբ նախապէս միայն պաշտօնեայ կամ ղինուոր կ'ըլլար:

Ուրանալ այս փոփոխութիւնը՝ կը նշանակէ աչք գոցել իրականութեան առջեւ, միայն զգացումէ տարուիլ: Ըսել թէ Թուրքիոյ մէջ բան չի կատարուիր, կը նշանակէ անտեսել չափելի փաստեր: Որովհետեւ այսօր կան չինութիւններ, որոնք պարզապէս հիացում կը պատճառեն:

Արդարեւ, չատ սխալ է ազգերը բաժնել ընդունակներու եւ անընդունակներու եւ Թուրքերը անպայման խօթել վերջին դասին մէջ: Այս դասաւորումը չինծու է բացարձակապէս: Ամէնէն յետամնաց ու ապուշ ժողովուրդն ալ կրնայ առաջդիմել ու «մարդ» ըլլալ, եթէ ունենայ զործե լու պատեհութիւններ: Մէկ դէշ կ'ընէ, երկու դէշ կ'ընէ, բայց երրորդին լաւ կ'ընէ: Այլ խօսքով, կ'իյնայ կ'ելլայ եւ կը վարժուի, ճիշդ քալելու ըսկսած երախայի մը նման:

×

Մինչեւ 1927, այս վիճակը կը պարզէր Թուրք ժողովուրդը: Ոչ-իսլամներ մէկ մասով զբաղած ըլլալով, ասպարէզը ամբողջովին անոր մնացած էր: Եւ ահա եռուն զործունէութիւն մը ամէն ճիւղի մէջ: Ավունդուք Զաուէ եղբայրները կը հաստատուէին ճիշդ Իրքունոսեանի զործատեղին եւ խրոխտաբար կը յայտարարէին թէ լեմոն պիտի քամեն մանիֆաթուրայի հայ իչխանին վրայ:

Նեմլի Զաուէները կը փայլէին իրենց կարդին, առուտուրէն յետոյ ձեռք զարնելով երկաթուղիի չինութեան եւ տիրելով հրապարակին:

Եւ դեռ չատ մը ուրիշներ, նորա լոյս կամ հին անչքուեներէն նչանաւոր զարձան յանկարծ:

Անդին՝ մանուածոյ մեծ ընկերութիւններ եւ զործարաններ, ինչպէս նաեւ Իշ զրամատունը՝ զլխաւորութեամբ ներկայ վարչապետ Ճէլալ Պայարի:

20—30 տարի ալ այսպէս, եւ երկիրը կը ծաղկէր, ունենալով ժողովուրդ մը որ վարժուած է բոլոր ճիւղերու մէջ: Վերջ ի վերջոյ, ո՞վ ըսաւ թէ առուտուրը բնաւորէ միայն Յոյնին, Հայուն եւ Հրէային: Ասիմճանական փորձառութեամբ, մեր չհաւնած Թուրքն ալ փառաւորապէս կրնայ տիրանալ այդ ճիւղին:

Բայց ասոր համար անհրաժեշտ էր որ պետութիւնը կարենար մէկ կողմէ տիրանալ, միւս կողմէ՝ օգնել նորահաստատ վաճառականութեան եւ ճարտարարուեստին, դիւրութիւններ եւ վարկեր տալով:

Թուրքիոյ դժբախտութիւնը այն է, որ, հազիւ չորս տարի կրցաւ դիմանալ: Այն ալ՝ չնորհիւ լճեայ գոյքերու եւ այլ աւարներուն, որոնք պատկառելի հարստութիւն մը կը կազմէին:

Զորս տարի յետոյ, պետական սընտուկը արդէն իսկ պարապ էր եւ հարկ էր կամ փոխառութիւն կնքել արտասահմանէն, կամ ժողովուրդը քամել:

Փոխառութիւնը անկարելի էր երկու պատճառով: Առաջին՝ դրամ արտդ չկար: Արեւմտեան չուկաները այնքան չհաւաքեր էին որ, օտար ազնաւորը կարեւորութիւն չէր տար Թրքական աշխարհին: Դէր կը կատարէին նաեւ քաղաքական նկատումներ: Երկրորդ՝ Իսմէթ փաչայի նման զօրավար մը չէր որ պիտի դիմէր այդ միջոցին, երբ դեռ ականջին մէջ կը մնար արձագանգը Լորա Քըրզընի պատմական ազգաբարութեան, ուղղուած Լօզանի խորհրդաժողովին, 1923ին.

— Քաղաքական անկախութիւնը ստացաք, բայց ոչ տնտեսականը:Վաղը նորէն պիտի ստիպուիք ձեռք բանալու մեզի...

Այս ծանր խօսքերը ականջովը լսելէ յետոյ, վարչապետ Իսմէթ փաչա կրնա՞յ միթէ ձեռք բանալ օտարին: Մանաւանդ որ իր նախարարներուն մեծ մասը նոյնպէս զինուորական անձներ էին, այսինքն իրեն նման դողոզ ու ինքնավստահ:

Եւ ահա սկսաւ տուրքի չարժ մը, աստիճանաբար երկարելով ու հաստնալով: Քանի դրամ կը պակսէր, նոր տուրք մը կը հաստատէին: Երբ տեսակը լրացաւ սկսան բացառիկ անուններ ստեղծել ու օր մը՝ տագնապի տուրբ (պուհրան), ուրիչ օր մը՝ հաւասարակշռութեան (միւվազէնէ), երրորդ օր մը՝ օդային (հավա), եւ այսպէս անվերջ:

Եւ որովհետեւ կառավարութիւնը զինուորական էր եւ պահանջը ստիպողական, տուրքերու զանձումը կատարուեցաւ զինուորական խստութեամբ:

×

Ժողովուրդը յամառեցաւ ուղղակի տուրքերու այդ այլազան ու ծանր բեռներու տակ: Բայց նորէն չնորհաթեցաւ տապնապը, քանի որ ջուրի պէս կը հոսէր կարիքը: Մէկ կողմէ զինուորական պատրաստութիւնները անդադար կ'աւելնային, միւս կողմէ հիմը կը դրուէր երկաթուղիի մեծ եւ ծախքոտ ծրագրի մը: Հարկ էր երկաթէ ցանցով մը պատել հսկայական երկիրը, որպէսզի պատերազմի պարագային կարելի ըլլայ մէկ տահմանէն միւսը զինուոր դրկել արագօրէն: Կը սիւներու մէկ թրծուած իսմէթ փաչա գիտէր թէ ինչ ըսել է երկաթուղիի չգոյութիւնը: Ռեղճ զինուորը հարկադրուած էր 20 — 30 օր քալել, ծանր բեռը չալակին:

Անհրաժեշտ էր նաեւ ինքնաբաւ դառնալ ամէն տեսակէտով, ունենալ գործարաններ որ պատրաստեն ամէն տեսակ զէնք ու ռազմանիւթ, ինչպէս եւ նախանիւթ: Ինչո՞ւ դուրսէն բերուն ռումբը, փամփուչտը, տաւտակը, վառօդը, չաքարը, եւն. եւն.: Բոլորը պէտք է չինել տեղին վրայ, պատերազմի պարագային կարօտ չմնալու համար:

Միայն տուրքով կարելի չէր դիմադրաւել այսքան հսկայական ծախքեր: Հարկ էր ձեռք առնել ճարտարարուեստական կարգ մը ճիւղեր եւ չահագործել:

Եւ ահա պետականացումի բաղաքականութիւնը, որ կացինի երկրորդ հարուածը տուաւ տնտեսութեան, առաջինն ըլլալով տուրքերու հարուածը: Որպէս թէ ճարտարարուեստը հովանաւորելու համար, կառավարութիւնը մէկիկ մէկիկ ձեռք անցուց տնտեսութեան գլխաւոր ճիւղերը եւ բնակար նարար ուղածին պէս ծախեց անոնց արտադրութիւնները: Այլ խօսքով՝ մենաշնորհ դարձուց տնտեսութիւնն ու առուտուրը, եւ այս ձեւով անուղղակի տուրքեր էջ մը ստեղծեց:

Ահա այդ հեղինակաւոր «Corriere» օրագիրը կը սխալի, իսկապէս այդ անձը Թուրք էր, եւ այնքան անզգամ որ, հասարակութիւնը ձայն բարձրացնելով՝ ոստիկանութիւնը կը ստիպուի զայն արտաքսել:

Ես Պ. Լեւոն Փանոսեանի կրպակին մէջ հազիւ կրցայ աւարտել «Corriere»ի դրած յօդուածը: Ցաճախորդներու խուժադուժը արդելք կ'ըլլար:

Նորաձեւ «նովէդէնթէաքօ» թաղականերու վրայ չարունակ հիւրերը կը փոխուէին, նորեր կը յայտնուէին հինեներուն՝ որոնք ջինջ մաքուր չողչողուն նման հեղինակաւոր աշխարհաձանաչի օրագրի մը մէջ: Այդ օրագիրը չատ դիւրաւ Հայերուս վրայ լաւ խօսելու յօժարութիւն ցոյց չի տար չատ անգամ՝ խարհային պատերազմէն վերջը: Երբ այդ օրագիրը կը գնահատէ Հայը, մենք հպարտ ղգալու ենք: Առաջին անգամ որ Թուրքն Մամուլեանի անունը չարժանաւորի վարպետներուն հետ կը յիշատակուի Մամուլին մէջ չոնդպիլ ընդունելութիւն գտաւ, նոյն Մամուլեանը խօսիլ քննադատուելու Corriere արուեստագէտ քննադատին: Այն տեղ խմբագրութեան ներկայացաւ Պ. Բագարատ ուսանողը՝ եւ անոր երեսին գարկաւ այդ անիրաւ քննադատականը: Արուեստագէտ յօդուածագիրը՝ հասկնալով իր սխալը, ուրիշ յօդուածով մը արբագրից իր սխալը, անտարակոյս ոչ թէ ուանողին խօսքերէն ազդուելով, այլ ըմբռնելով թէ իրաւցնէ անիրաւութիւն էր Հայը զրկել իր ունեցած արժանիքներէն:

Արուեստի պարապողին մէջ պիտի չէ փնտռել ներքին մարդը:

Օսկար Ուայլտ թէեւ ամէնէն հզօր արուեստագէտը, պերճ վարպետը կը համարուի, սակայն անոր զրականութեան քննադատները երբեք իրաւունք չունեցան հարցականի եւ խմանալ թէ ինչո՞ւ ան բանտարկուեցաւ:

Նոյն ինքն Օսկար Ուայլտ կ'ըսէ՝ որ երբ վարպետ Ջուքթահէաքի մը նուագած մէկ զեղեցիկ կտորը կը լսենք՝ երբեք չենք ուզեր մտածել թէ Ջուքթահկին լարերը առնէմներու ոտիքներով պատրաստուած են:

Մենք այս տողերուն մէջ նկատի առնք հայ ներկարարներու արուեստի յաջողութիւնը: Ո եւ է Հայու յաջողութիւնը մեր ազգին պարծանք կը համարուի: Մտածենք որ այդ արուեստի համեստ վարպետները բարեաւէն իրենց յաջողութեան մէկ, եւ անով ոչ միայն պարծանք, այլ օգտակար ըլլան հայ ժողովուրդին:

ԱՏՐՈՒՇԱՆ

«ԼՈՒՍՏՐԱՖԻ»Ն ՕՏԱՐ ՊՈՂՈՏԱՆԵՐՈՒ ՎՐՁՁ

Մշուշ աչնանային օր մը, ճարտարապետ Պ. Ա. Պասմաճեան ինծի ներկայացուց չազանակագոյն երիտասարդ մը. եւ անոր ըսաւ.

— Վահէ, խնդրածդ յայտնէ. ահա այն անձը որ քեղ կրնայ զոհացնել:

Ես կրծատապով անհանգիստ էի, ու հետս առի այդ անծանօթ Սկիւտարցի հայ երիտասարդը, Միլանոյի Տօմայի չուրջը ման եկայ: Մշուշը փոշիացած ապակիի նման թոքերուս մէջ մտնելով՝ կուրծքս կը խարտոցէր: Ես ղժուարաւ կը շնչէի, ու առանց յուսահատելու՝ անծանօթ Իտալացիներու դիմելով՝ փնտռցայ Ֆոնթանայի կողմերը անկիւն մը կը խնդրէի Պ. Վահէի համար, եւ գործը կը կարգադրուէր: Քանի մը օր վերջը մեր Հայը իր «լուստրաճի»ի արկղիկը հոն դրած, աշխատանքի ձեռք կը զարնէր: Ես ապահով էի անոր յաջողութեան:

Տասը տարի վերջը, ես դինքը դտայ Փիացա Մէդրզոնթիի մէկ անկիւնը, բայց չճանչցայ: Ան ինքզինքը ծանօթացուց. յիչեցուց անցեալը, ինծի ցոյց տուաւ իր տիկինը որ բազմած՝ անդադար կը չարժէր դրամընկալ արկղի անիւը:

Ես կը գտնուէի այդ «ՄալօնէՕրիէնթալէ»ի մէջ. եւ իմ աչքերուս չէին հաւատար: Իտալացի երիտասարդներ սեւ համազդեստով՝ աթոռակներու վրայ նստած՝ կը մաքրէին չաճախորդներու կօշիկները: Այդ կրպակէն ներս կիներու ու այրերու հոսանքը կը չարունակուէր՝ առտուան ժամը ութէն մինչեւ իրիկուն ութը:

Հոն մեր հայ «լուստրաճին» վայելչօրէն հագուած՝ մեծահարուստ կալուածատէրի մը նման՝ իր վեհաշուք հեղինակութիւնը ցոյց կուտար:

Այդ օրէն մինչեւ այսօր անցած են վեց տարիներ: «Մալօն Օրիէնթալէն» այնքան մեծ յաջողութիւններ ունեցաւ որ Միլանոյի ամէնէն պատկառելի օրագիրը, «Corriere della Sera»ն (8 հոկտեմբեր 1938 կէսօրուան հրտ.) ընդարձակ յօդուած մը ընծայեց անոր:

Տիկին Վահէ Էքմէքճեանի եղբայրը՝ Պ. Լեւոն Փանոսեան այդ «լուստրաճի»ի արուեստով կը պարապի ասկէ չորս տարի առաջ. Տմօյի հրապարակի Մէնկոնի անուն ամէնէն բանուկ փողոցը:

Ան երէկ կը հարցնէր թէ կարդացե՞ր էի «Corriere» լրագիրը, ու ինձ կը յանձնէր թերթը: Ես ուրախութեամբ կարդացի մեր հայ «լուստրաճի»ներու դովեստը: Եւ տեսայ որ օրագիրը կը խոստովանի թէ այս ամենակարեւոր համեստ արհեստը՝ հոս Միլանոյի մէջ ազնդուստրիական յեղաչրջում կրած է Հայերու նախաձեռնութեամբ: Մենք ցոյց են տուած «իրենց ընդունակութեան գերազանց արդիւնքը»— I frutti di loro abilita superlativa».

Լրագիրը կը յիչէ թէ ամէնէն առաջ «լուստրաճիութիւնը հոս սկսած է Թուրք մը, «օրֆէս զրած ըլլալով, ժողովուրդը զայն Թուրք կ'անուանէր, կի տուրքերու ենթարկեց ժողովուրդը:

Հետեւանքը եղաւ կատարեալ քայքայում, ինչպէս պիտի տեսնենք:

ԴԷՏ

ՁԵՑԹՈՒՆԻ ԱՁՔԸ

Հեղինակ՝ ԹԷԼՊՕԹ ՄԸՆՏԻ — Անգլ. թարգմ. Ա. ՀԱՒԷԼԵԱՆ

Սանդուղը անոնց ծանրութեան տակ կոտրեցաւ, որուն վրայ Եփրեմին հրամանդով վերջին եկողները նստան վերի սանդղամատներուն վրայ:

Նաւեկներէն չատերը ջահեր ունէին, որոնց կծու ծուխը չունչով լեցուած այդ վայրը անտանելի մառախուղով մը պատեց:

Երեք մարդ Եփրեմին քովը երթալով տեղի ունեցած դէպքերու մասին սկսան լուսաբանութիւն տալ: Կարծեմ վինքը կը ճանչնային իրրեւ տեսակ մը խմբապետ եւ հրամայական երեւոյթ մը ունէր, բայց ամէնքն ալ մէկ ան զամէն կը խօսէին եւ հայերէն լեզուով, այնպէս որ մէկ երկու բառ հասկրնային հասկնալ: Մինչեւ իսկ Ֆրէտ, հակառակ լեզուներու մէջ ունեցած իր ձիրքին, անոր պոչն ու զլուխը հազիւ կրնար դանդաղնել:

Մենք երեքս ամբոխը ճեղքելով եւ կինները մէկ կողմ հրելով, զացինք կլօրիային քովը կեցանք: Անոնք մարդոցը ուշադրութիւնը ուղեցին մեր վրայ հրաւիրել, բայց վիճաբանութիւնը այնքան տաք էր որ չէին ուզեր անկից հրաժարիլ եւ կիները ի զուր կը ճչային:

— Կարծեմ դուրս կրնանք ելլել, պոռացի Ուիլին ականջն ի վար: Բայց ան զլուխը թօթվեց: Առ նուազն վեց հոգի կեցած էին ծուղակին վրայ եւ չէինք կրնար զանոնք մէկ կողմ հրել, որովհետեւ տախտակամածին վրայ չարժելիք ուրիչ տեղ չկար:

Ուստի Ֆրէտին դառնալով դարձեալ պոռացի.

— Ձե՞նք կրնար այս աւազակները սանդուղներէն վար զլորել եւ վրանին կոխկրտելով խոյս տալ:

Ֆրէտ կրկին զլուխը չարժեց եւ չարունակեց անոնց խօսակցութեան հետեւիլ, աչխատելով վիճաբանութեան բնոյթը իմանալ:

Վերջապէս մէկը թոքերուն բոլոր ուժովը պոռալով հասկցուց Եփրեմին որ լրատարին Զէյթունի զրկողը ես եղած եմ: Ուրեմն պէտք է որ կախումի: Ու սկսաւ ձեռքի չարժումներ ընել: Մարդիկ սկսան սանդուղներէն վար դէպի բազմամբոխ տախտակամածը վազել եւ Ուիլը ինծի հետ չփոթելով քանի մը հոգի զայն առաջ քըշեցին: Տանիքին ծակէն զլուխ մը երեւցաւ որուն հրահանգուեցաւ որ վազելով չուան մը բերէ: Ատճանակս գտած չէի, հրացանս ալ կռնակէս կախուած էր, զոր ամբոխին պատճառով չէի կրնար չարժել: Բայց Ֆրէտ պատրաստ կոլտ ատրճանակ մը ունէր իր հետեւի դրպանին մէջ, որուն փողը անմիջապէս Եփրեմի ականջին ուղղեց: Ձեմ դիտեր թէ Ֆրէտ ինչ ըսաւ անոր, միայն դիտեմ թէ անոր համոզումները փոխուեցան, եւ լռութիւն պռոաց: Եւ այն մարդը որ Ուիլը կաչկանդած կը պահէր՝ զայն ատգամ ձգեց ճիշդ այն վայրկեանին, երբ զգուելի չուանը, ծայրը խեղդակապով ա՛ր, տանիքէն վեր կ'երկարէր:

Ծակին բերանը նոր մարդ մը երեւցաւ, որուն զէմքը չէի տեսներ.— մարդու ձեւով մէկը որ իր արիւնթաթաւ բազուկին մնացորդը դէպի մեղ կ'երկարէր եւ անընդհատ կ'արձակէր: Քիչ վերջ ամենահետաքրքրական անկիւնի մարդիկն անգամ խնդրին տեղեկացան եւ քար լռութիւն տիրեց: Մարդը տասնեակ անգամներ կրկնեց իր պատմութիւնը, կարծէք զայն գոց սորված ըլլար, բերանէն փրփուր կը հոսէր եւ ջարդուած բազուկը կը չարժէր չարունակ: Տասներկուերորդ անգամին նուազեցաւ եւ սանդուղներէն զլխիվայր զլորեցաւ, եւ մարդիկ իրենց ուսերուն վրայ առնելով, զայն դարձեալ վեր բարձրացուցին:

— Ի՞նչ կ'ըսէ այս մարդը, փսփսաց Ֆրէտի ականջն ի վար: Բայց ան կլօրիային քով կ'աճապարէր, եղելութիւնը պատմելու:

— Քիւրտերը կուգան կ'ըսէ: Կ'ըսէ նաեւ թէ Թուրքերը երկու դունդ քըրտական հեծելազօրք զրկած են Հայերը «պաչտպանելու» համար: Այդ քիւրտերը դիւղերը ճամբայ ելած են, որոնք մարդուն երկու ձեռքերն ալ կտրեր են, բայց ինքզինքը ծառ կեղծելով յաջողեր է փախչիլ: Կը պատմէ որ ժողովուրդին ոտքը կոտրելով՝ կը բռնադատեն այդ վիճակի մէջ մինչեւ Տարսոն քալել, խակ կիներն ու աղջիկները կը հաւաքեն, ծախու հանելու համար: Տարէց կիներն ու փոքրիկ երախաներն ալ որպէս տեսակ մը մարդանք կը դործածեն: Քիւրտերու մասին լսուածները խմացո՞ծ էք: Անոնք այդ մարդանքը բէմէննէրէն (կարմիր մարդ) աւելի ահաւոր կու է:

Սենեակին մէջ հղումներուն լեզուները բռնուեցան կարծես: Ամէն ոք անչարժ կեցած, Եփրեմին կը նայէր: Ան որ այնքան դիւրութեամբ մէկու մը կախուիլը հրամայած էր, հիմա տեխպուած էր իր ուսերուն վրայ նոր պատասխանատուութիւններ ստանձնել:

Բայց Եփրեմ նոր ծրագիր մը պատրաստած չէր դեռ ու անդլերէն չէր դիտեր: Աչքերը խոշոր բացած՝ դողդողացող մատներով վերարկուս բռնեց եւ խեղդուկ ձայնով մը եւ հայերէն լեզուով հարցում մը ուղղեց: Չամայնալեզուն աւելի լաւ պիտի հասկնայի այդ պահուն, քան այն ինչ որ կ'ըսէր:

— Ֆրէ՛տ, ի՞նչ կ'ըսէ:

— Կ'ուզէ դիտնալ թէ Գագիկը որքան ժամանակ է որ հոս կը գտնուի:

— Գագի՛կ, կրկնեց Եփրեմ, օձիքը բռնելով: Այո՛, այո, այո, Գագի՛կը պիտի զայ:

— Շատ աղէկ պիտի ըլլանք: Գագիկ չուտով հոգ կ'ընէ: Գագիկ մեր բոլոր Քիւրտերը պիտի մորթէ. մեզ կը պահէ ան, ըսաւ մէկը անկիւնէն անդլերէն լեզուով:

— Գագի՛կ, պընդեց Եփրեմ. Գագիկ պիտի զայ:

Բայց ես դիտէի որ Գագիկ պիտի չգար, ոչ այդ դիշերը, ոչ ալ ուրիշ տեղ: Ու Եփրեմ մոլեգին անհամբերութեամբ ինձմէ պատասխան կը ըսէր:

ԳԼՈՒԽ 11

Վայրկեանի մը համար այրերու եւ կիներու այդ մտահոգ բազմութեան անթափանցելի փոթորիկը զարձաւ որ Գագիկը ճանչնալու խոստովանեցայ, ես որ անոր լսածներ մը զրկեցի, ես որ հինգ վայրկեան առաջ ամբոխին ծակէն վար ինկած իւղոտ նէն պիտի կախուէի, ես ուրիսի անոնց տիպուած պէտք է հնազանդէի անոնց պահանջներուն:

(Շար.)

ԲԱՑԻՑ ՆԵՐԵՑ ԿԻ ՂՈՐՈՒՆ

— Ախեղի աբա՛խ... Ախեղի ա՛ղբեր, ի՞նչ կ՚ելլայ, ձեզի մեռա՛ր: Ծօ խալա՛տ, ձեզի՝ ֆ ձեզի ալ տարբ: — Ի՞նչ կ՚ելլայ, խալա՛տ... Ախեղի ա՛ղբեր, ես ծօ, չուտ... — Խալատ ալ ա՛ղբ ալ ես ծօ, ես ալ ա՛ղբ եմ, ես ալ ա՛ղբ եմ, ամէն մարդ ա՛ղբ է, ամէն ինչ ա՛ղբ է, ամէն տեղ

30 միլիոն մարք եւ նախապէս պիտի տրուէր անգլիական հաստատութեան մը :

Հաղիւ քանի մը օր առաջ, Հիթլէր, իբրեւ բանակին վերին հրամանատարը, գնդապետութեան բարձրացուց գերման սպայ մը որ մեծ պատերազմին առեն Իրան եւ Աֆղանիստան ղրկուած էր Գերմանիոյ ընդհ. սպայակոյտին կողմէ եւ որ իր կատարած գործերուն չնորհիւ յորջորջուած էր «Գերման Լորընսը» :

Այսօր գերմանական կառավարութիւնը այդ սպային յանձնած է զանազան պաշտօններ այն բոլոր երկիրներուն մէջ որ կապեր ունին բրիտանական կայսրութեան հետ, մէջն ըլլալով Թուրքիան եւ Հնդկաստանը : Ինչպէս կը տեսնէք, երկու դիկտատորներուն նոր համաձայնութիւնը շատ ընդարձակ է եւ միայն Եւրոպայի մէջ կանգ չառներ :

Ինչպէ՞ս պիտի գոնացնեն Հունգարիոյ պահանջները

Փրակայէն կը հեռագրեն թէ Հունգարիոյ եւ Չեխոսլովաքիոյ բանակցութիւնները պիտի վերսկսին, չնորհիւ դիւանագիտական միջամտութեանց : Գերմանիա եւ Իտալիա մասնաւորապէս պնդած են որ նոր փորձ մը կատարուի, ուղղակի բանակցութիւններով լուծելու համար խնդիրը : Առ այժմ մէկդի դրուած է չորս մեծ պետութեանց վարչապետներուն դիմելու ծրագիրը, քանի որ Ֆրանսա եւ Անգլիա արամադիր չեն նոր ժողով գումարելու, իսկ Գերմանիա կը նախընտրէ որ վէճը լուծուի ուղղակի բանակցութիւններով : Իտալիա նախապէս համաձայն էր չորս մեծ պետութեանց վարչապետներու խորհրդակցութեան, բայց այժմ ընդունած է գերմանական տեսակէտը, եւ կ'ուզէ որ բանակցութիւնները կատարուին Հռոմի եւ Պերլինի հովանաւորութեամբ : Թէ Գերմանիա եւ թէ Իտալիա ընդհանրապէս նպաստաւոր են Հունգարիոյ պահանջներուն հանդէպ, սակայն Պերլին չուզեր որ Ռումէնիան ալ անդամատուի :

**** Հռոմէն կը հեռագրեն թէ ֆաշական մեծ խորհուրդը ժողով պիտի գումարէ այս գիշեր, քննելու համար Հունգարիոյ եւ Չեխոսլովաքիոյ վէճը : Եթէ խաղաղութիւնը վտանգուի, Իտալիոյ մէջ նպաստակայարմար կը գտնեն որ չորս մեծ պետութիւնները միջամտեն :*

Ուրիշ հեռագրի մը համաձայն, Ռումանիա եւ Եուկոսլաւիա բողոքագիր մը ուղղած են Հունգարիոյ, բանաւոր եւ ընդունելի չգտնելով անոր պահանջները :

**** Հունգարական աղբիւրէ կը հաղորդեն թէ Չեխերը մեծ ուժեր համախմբած են սահմանագլուխին վրայ, գնդացիրներով եւ հրասայլերով : Հունգարիոյ հիթլէրականները թուրցիկներ բաժնեցին, պահանջելով հրաժարեցնել օրուան կառավարութիւնը եւ անմիջապէս զինուորական դործադուլեան ձեռնարկել Չեխոսլովաքիոյ դէմ :*

Երուսաղէմ պաշարուած

Հոկտեմբեր 16 թուակիր հեռագրի մը համաձայն, Երուսաղէմ ամբողջեալ քաղաքի մը վերածուած է, եւ ամէն օր ծանր դէպքեր կը պատահին : Ռումբ մը պայթեցաւ Էմմէլի մզկիթին (Սողոմոնի տաճար) չուրջը : Զորս Արաբներ, որոնք պահակի դեր կը կատարէին, վիրաւորուեցան : Նոյն օրը երկրորդ ռումբ մը նետուեցաւ, մեծ խուճապ առեղծելով : Ռմբաձիգը զոհ գնաց իր իսկ նետած ռումբին : Ապահովութիւնը այն աստիճան խանգարուած է որ զինուորական իշխանութիւնը հրամանագրով մը յանձնարարեց հին քաղաքամասի բնակիչներուն իրենց տուներէն դուրս չելլել 24 ժամ : Երուսաղէմի անմիջական չրջականերուն մէջ ընդհարում մը տեղի ունեցաւ արաբ ըմբոստներու եւ անգլիական զօրքին միջեւ : Երեք Արաբներ սպաննուեցան, եւ անգլիացի տասնապետ մը վիրաւորուեցաւ : Կռիւ մըն ալ կաղպի չրջակաները պատահեցաւ : Ապստամբները ական մը գրին միջազգային գծին վրայ եւ փախան, բայց անգլիական զինուորները յաջողեցան պաշարել խումբը : Երեք ապստամբներ սպաննուեցան, երկու հոգի ալ գերի բռնուեցան :

Ռամլէի մէջ, որ երկաթուղիներու կարեւոր կեդրոն մըն է, զինուորական իշխանութիւնը հարցաքննութեան ենթարկեց 300 բնակիչներ, անգլիացի զինուորի մը դէմ կատարուած յարձակումին առթիւ : Եաֆայի բնակիչները որոշեցին ընդհ. գործադուլ հռչակել, բողոքելու համար զսպողական անօրինութեանց դէմ : Հայֆայի մէջ ալ խռովութիւններ ծագեցան եւ նաւթապիծը կրակի տրուեցաւ : Զինուորական տեսանը մահուան դատապարտեց չորս Արաբներ :

Ոչ-պաշտօնական տեղեկագրի մը համաձայն, 358 հոգի սպաննուած են Պաղեստինի մէջ, հոկտ. 14ն 15 :

Առաջարկ զինելու աշխարհի բոլոր Հրեաները

Վարչապետ Սիոնական կազմակերպութեան վերաքննական խմբակցութիւնը յայտարարութիւն մը հրատարակեց որով կ'ա-ռաջարկէ զինուորական կրթութիւն տալ աշխարհի բոլոր երիտասարդ Հրեաներուն, պաշտպանելու համար «Պաղեստինի հրէական պետութիւնը »:

Յայտարարութիւնը այս առթիւ խստօրէն կը քննադատէ Մեծն Բրիտանիան, որուն քաղաքականութեամբ « Հրեաները միշտ փոքրամասնութիւն մը պիտի մնան Պաղեստինի մէջ »: Յետոյ կը թելադրէ զինեալ ընդդիմութիւն ցոյց տալ այդ ծրագրին դէմ, «որ պիտի վճացնէ Սիոնականութիւնը » : Եւ կը հրաւիրէ աշխարհի բոլոր Հրեաները որ անմիջապէս ձեռնարկեն զինուորական կրթութեան, որպէսզի «եթէ արաբական կառավարութիւն մը հաստատուի Պաղեստինի մէջ, կարենան զինու զօրութեամբ նուաճել ամէն հրէական գաղութ, ամէն քաղաք եւ գիւղ » :

Յայտարարութիւնը կը ծանուցանէ նաեւ թէ արեւելեան Եւրոպայի Հրեաները մօտերս «խորհրդարան մը» պիտի գումարեն Վարշաւայի մէջ, միջոցներ դտնելու եւ ամբողջ Պաղեստինը հրէական հայրենիքի վերածելու համար :

Ի՞նչ կ'անցնի կը դառնայ Խ. Միութեան մէջ

Մոսկուայէն Վարշաւա հասած լուրերու համաձայն, ազգ. պաշտպանութեան քաղաքական - կուսակցական վարիչը, Մեխլիս, ծրագիր մը յօրինած է բանակին վերին հրամանատարութեան վերակազմութեան համար : Այս ծրագիրը կը տրամադրէ ընդլայնել կարմիր բանակի քաղաքական վարիչներուն իրաւասութիւնները, սահմանափակելով սպաներու իրաւունքը : Ծրագրին համաձայն, Սթալին պիտի ստանձնէ զինուորական գերագոյն խորհուրդին նախագահութիւնը, որ մինչեւ հիմա յանձնուած էր մարաջախտ Վորոշիլովի :

Զինուորական խորհուրդի նախագահին իրաւասութիւնները զգալապէս պիտի ընդարձակուին, ինչ որ մեքենաբար պիտի սահմանափակէ մարաջախտ Վորոշիլովի դերը :

**** Իտալական թերթերը երկարօրէն կը բացատրեն թէ կարմիր բանակին վերին հրամանատարութիւնը բոլորովին կազմալուծուած է, իբրեւ հետեւանք բռնամիութեան դնդակահարութեանց : Մարաջախտ Պլուխէրի համար կ'ըսեն թէ բանտարկուած է իր կարգ մը գործակիցներուն հետ :*

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Գերմանիոյ տնտեսական նախարարը, Տոքթ. Ֆունք, որ այնքան աղմուկ հանեց Թուրքիոյ եւ Պալքաններու մէջ կատարած պտոյտներով, Պերլին վերադարձաւ հոկտեմբեր 16ին : Նախարարը Պելկրատ ալ հանդիպելով, խորհրդակցեցաւ Եուկոսլաւիոյ վարչապետին հետ, առեւտրական դաշնագիր մը կնքելու համար :

Անգլիոյ գաղթապետութեանց նախարարը, Լորտ Սթենլի, որ թեկնածու կը համարուէր ծովային նախարարութեան, մեռաւ երկար հիւանդութենէ մը վերջ : 44 տարեկան էր : Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Պ. Չեմպըլէն կարեւոր փոփոխութիւններ պիտի կատարէ դահլիճին մէջ : Այս առթիւ երկու նոր նախարարութիւններ ալ պիտի ստեղծուին, մէկը՝ ազգային ծառայութեան (զինուորութիւն), միւսը՝ պաբենաւորման համար :

ՅՕՇՈՏՈՒԱԾ ԴԻՍԿ ՄԸ գտնուեցաւ Շուպլը – Ռուայլ մէջ : Ոստիկանութիւնը հաստատեց որ Փոնթուազի չրջանին արհեստակցական միութեան ընդհ. քարտուղարն է, համայնավար Ապէլ Քասիէ, որ անհետացած էր հոկտեմբեր 7էն ի վեր : Կը կարծուի թէ սպաննուած եւ չոգեկառքի գծին վրայ նետուած է, որպէսզի անձնասպան եղած համարուի :

ՇԱՐԺԱՆԿԱՐի ատաղձէն Օր. Սիմոն Սիմոն 60,000 Ֆրանք հատուցում կը պահանջէ ընկերութենէ մը, որ 1935ին վարձած էր զինքը Հարրիմորի հետ : Օրխորդը պատմած էր որ ժապաւէնին վրայ իր անունն ալ արձանագրուի ճիչդ այն տառերով ինչպէս Պորի անունը : Արդ, երբ չարժանկարը ներկայացուեցաւ, Պորի անունը խոչոր տառերով տպուած էր, իսկ Սիմոն Սիմոնի անունը՝ մանր : Դատարանը նախապէս 4000 Ֆրանք հատուցում սահմանած էր, բայց Սիմոն Սիմոն զոհ չմնալով, այժմ դատ բացած է եւ 60 հազար կրպահանջէ :

ՄԱՐՍԷԼ ՔԱՇԻՆ, «Իմանիթէ»ի խմբագրապետը, բաց նամակ մը ուղղելով վարչապետ Պ. Տալատիէի, կը հարցնէ.— « Ո՞ւր կ'երթաք, ո՞ւր կը տանիք մեզ, ո՞ւր կը տանիք Ֆրանսան» : Բոլշեւիկ դեկավարը մասնաւորապէս կը ծանրանայ սպանիական հարցին վրայ :

ՉԵՐՆԱԿԱԼՈՒԵՑԱՆ երեք « երեւելիները », երկուքը՝ Փարիզի ռումանական նախկին հիւպատոս Զիօլան եւ իր կինը, երրորդը՝ հարուստ յոյն սեղանաւոր մը, Եոաքիմ Տիամանտոզլու, որուն համար կ'ըսեն թէ 80,000,000 Ֆրանքի հարստութիւն մը ունի եւ կը բնակի Շան զ'Էլիզէի չրջանին մէջ : Երեքը միասին մեծ քանակութեամբ էրօին փոխադրած էին Շէրպուռ, մօտ մէկ միլիոն Ֆր. արժողութեամբ : Ռումանական նախկին հիւպատոսը պահած ըլլալով իր դիւանագիտական անցագիրը, օգտուած էր մաքսանենգութեան համար :

ԹՐԻԼՍԹԻ մէջ երեւան հանուեցաւ հակաֆաչական կազմակերպութիւն մը, որուն վարիչն էր Հրեայ մը, փրոֆ. Քոլսրոնի : Կալանաւորներուն մէջ կը գտնուի նաեւ նախկին երեսփոխան մը :

ՃԱՓՈՆԱԿԱՆ բանակը չարունակելով իր յառաջխաղացութիւնը, խզեց Քանթոնի եւ Հոնկ Քոնկի հաղորդակցութիւնները : Քոլէրա ծագած է Քանթոնի չրջանի մէջ, վարակելով 20,000 հոգի : Արդէն մեռած են 8000 քաղաքացիներ :

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ֆ. կ. Խաչի Փարիզի Մասնաճիւղի նոր տարեշրջանի առաջին դասախօսութիւնը 22 Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը ճիշդ 9ին, 8 Ռիւ Պօսիւէ, Փարիզ՝

ԿԸ ԽՕՍԻ ՏԻՐԱՆ ՎՐԴ. ՆԵՐՍՈՅԵԱՆ

Նիւթ՝ «Առանին կրթութիւնը»:

Կը հրաւիրուի հասարակութիւնը, Հիւրասիրութիւն թէյով կարկանդակ: Ծախսերու մասնակցութեան համար կը գանձուի 3 ֆր.:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Վերամուտի առաջին դասախօսութիւնը տեղի կ'ունենայ 20 Հոկտ., Հինգշաբթի ժամը 21ին, Միութեան կեդրոնատեղին՝ 8 Ռիւ Պօսիւէ, Փարիզ: Կը գասախօսէ՝ ՏԻՐԱՆ ՎՐԴ. ՆԵՐՍՈՅԵԱՆ,ն իւթ՝ «Երիտասարդութիւնը եւ եկեղեցին»:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

1939 "ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՑՔ,,

Ժ. ՏԱՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ, ՄԱՐՍԷՅԼ

Դիմել՝ ընդհանուր գործակալ՝ կայծակ Ճարայեանի,

Monsieur Gaïzak Djarayan, 5, Rue de l'Eclipse, Marseille, France:

Գինն է՝ Մարսէյլ 5 Ֆրանք Ֆրանսա, Սուրիա եւ գաղութներ 5.50 ֆր., արտասահման՝ 6 Ֆրանք:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ԵՐՈՒՍԱՂԷՄ, ԵՐՈՒՍԱՂԷՄ...

(ՎԻՊԵՐԳՈՒԹԻՒՆ)

ԳՐԵՑ՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

Հրատարակութիւն Մարսէյլի Հայ Մշակութային Միութեան: Գեղատիպ հատոր մը, 200 օրինակ ապուած՝ վարդագոյն ազնիւ Թուղթի վրայ:

Գին,— սպիտակ թուղթի վրայ տպուածներ պիտի ծախուին 5 Ֆրանքի մինչեւ 30 Հոկտեմբեր, ան ետք վերջ 7.50 Ֆրանք: Վարդագոյն թուղթի վրայ տպուածներ՝ 7,50 Ֆրանք: Ամէն մէկ ուսուցչի ապագրանքի համար դրկել փոստի ծախք 0,65 դրոշմանիշ: Արտասահման 10 եւ 15 Ֆրանք (ըստ երկրի): Դիմել՝ Հայ Մշակութային Միութեան գանձապահին

S. Diradourian 2 Rue Philippede Girard, *Մարսէյլ:*

սահմանափակելով սպաներու իրաւունքը : Ծրագրին համաձայն, Սթալին պիտի ստանձնէ զինուորական գերագոյն խորհուրդին նախագահութիւնը, որ մինչեւ հիմա յանձնուած էր մարաջախտ Վորոշիլովի :

Զինուորական խորհուրդի նախագահին իրաւասութիւնները զգալապէս պիտի ընդարձակուին, ինչ որ մեքենաբար պիտի սահմանափակէ մարաջախտ Վորոշիլովի դերը :

**** Իտալական թերթերը երկարօրէն կը բացատրեն թէ կարմիր բանակին վերին հրամանատարութիւնը բոլորովին կազմալուծուած է, իբրեւ հետեւանք բռնամիութեան դնդակահարութեանց : Մարաջախտ Պլուխէրի համար կ'ըսեն թէ բանտարկուած է իր կարգ մը գործակիցներուն հետ :*

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Գերմանիոյ տնտեսական նախարարը, Տոքթ. Ֆունք, որ այնքան աղմուկ հանեց Թուրքիոյ եւ Պալքաններու մէջ կատարած պտոյտներով, Պերլին վերադարձաւ հոկտեմբեր 16ին : Նախարարը Պելկրատ ալ հանդիպելով, խորհրդակցեցաւ Եուկոսլաւիոյ վարչապետին հետ, առեւտրական դաշնագիր մը կնքելու համար :

Անգլիոյ գաղթապետութեանց նախարարը, Լորտ Սթենլի, որ թեկնածու կը համարուէր ծովային նախարարութեան, մեռաւ երկար հիւանդութենէ մը վերջ : 44 տարեկան էր : Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Պ. Չեմպըլէն կարեւոր փոփոխութիւններ պիտի կատարէ դահլիճին մէջ : Այս առթիւ երկու նոր նախարարութիւններ ալ պիտի ստեղծուին, մէկը՝ ազգային ծառայութեան (զինուորութիւն), միւսը՝ պաբենաւորման համար :

ՅՕՇՈՏՈՒԱԾ ԴԻՍԿ ՄԸ գտնուեցաւ Շուպլը – Ռուայլ մէջ : Ոստիկանութիւնը հաստատեց որ Փոնթուազի չրջանին արհեստակցական միութեան ընդհ. քարտուղարն է, համայնավար Ապէլ Քասիէ, որ անհետացած էր հոկտեմբեր 7էն ի վեր : Կը կարծուի թէ սպաննուած եւ չոգեկառքի գծին վրայ նետուած է, որպէսզի անձնասպան եղած համարուի :

ՇԱՐԺԱՆԿԱՐի ատաղձէն Օր. Սիմոն Սիմոն 60,000 Ֆրանք հատուցում կը պահանջէ ընկերութենէ մը, որ 1935ին վարձած էր զինքը Հարրիմորի հետ : Օրխորդը պատմած էր որ ժապաւէնին վրայ իր անունն ալ արձանագրուի ճիչդ այն տառերով ինչպէս Պորի անունը : Արդ, երբ չարժանկարը ներկայացուեցաւ, Պորի անունը խոչոր տառերով տպուած էր, իսկ Սիմոն Սիմոնի անունը՝ մանր : Դատարանը նախապէս 4000 Ֆրանք հատուցում սահմանած էր, բայց Սիմոն Սիմոն զոհ չմնալով, այժմ դատ բացած է եւ 60 հազար կրպահանջէ :

ՄԱՐՍԷԼ ՔԱՇԻՆ, «Իմանիթէ»ի խմբագրապետը, բաց նամակ մը ուղղելով վարչապետ Պ. Տալատիէի, կը հարցնէ.— « Ո՞ւր կ'երթաք, ո՞ւր կը տանիք մեզ, ո՞ւր կը տանիք Ֆրանսան» : Բոլշեւիկ դեկավարը մասնաւորապէս կը ծանրանայ սպանիական հարցին վրայ :

ՉԵՐՆԱԿԱԼՈՒԵՑԱՆ երեք « երեւելիները », երկուքը՝ Փարիզի ռումանական նախկին հիւպատոս Զիօլան եւ իր կինը, երրորդը՝ հարուստ յոյն սեղանաւոր մը, Եոաքիմ Տիամանտոզլու, որուն համար կ'ըսեն թէ 80,000,000 Ֆրանքի հարստութիւն մը ունի եւ կը բնակի Շան զ'Էլիզէի չրջանին մէջ : Երեքը միասին մեծ քանակութեամբ էրօին փոխադրած էին Շէրպուռ, մօտ մէկ միլիոն Ֆր. արժողութեամբ : Ռումանական նախկին հիւպատոսը պահած ըլլալով իր դիւանագիտական անցագիրը, օգտուած էր մաքսանենգութեան համար :

ԹՐԻԼՍԹԻ մէջ երեւան հանուեցաւ հակաֆաչական կազմակերպութիւն մը, որուն վարիչն էր Հրեայ մը, փրոֆ. Քոլսրոնի : Կալանաւորներուն մէջ կը գտնուի նաեւ նախկին երեսփոխան մը :

ՃԱՓՈՆԱԿԱՆ բանակը չարունակելով իր յառաջխաղացութիւնը, խզեց Քանթոնի եւ Հոնկ Քոնկի հաղորդակցութիւնները : Քոլէրա ծագած է Քանթոնի չրջանի մէջ, վարակելով 20,000 հոգի : Արդէն մեռած են 8000 քաղաքացիներ :

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

«ՄՇԱԿՈՑԹԻ ՕՐ»Ը ՇԱՒԻԼԻ ՄԷՋ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԿԻՐԱԿԻ

ԿԱՐԴԱՑԷՔ ԵՒ ՏԱՐԱԾԵՑԷՔ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ, ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ («Հայաստանի Դեղականութիւն», հին ուղղագրութեամբ), Փարիզ, 1938, 7·50 Ֆր.: ԱՇԽԱՐՀԻ ԼՈՑՄՆ Ի ՀԱՑՍ, Գարեգին եպս. Տրապիզոնի, 25 Ֆր.: ԱՊՏԻՒԼ ՀԱՄԻՏ ԵՒ ՇԵՐԼՕՔ ՀՈԼՄՍ, եր. Օտեան 40 Ֆր.: ԱՐԻ ՀԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Հ. Գ. Բ.), Ա. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԳՐՈՂՆԵՐ, Փարիզ 1939, 25 Ֆր.: ԱՐՇԻԼԸ ԻՐ ԲՈՑՆԻՆ ՄԷՋ, Ա. Թէզլաչեան, Փարիզ 1938, 15 Ֆր.: ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ ԿԵՆԱՍԱԳՐ. 10 Ֆր.: ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՑ Ա.ԶԳ. ԵԿԵՂԵՑԻՒ, Մ. Սեբուեան, 1938, 15 Ֆր.: ԵՐԳԻՉԱԿԱՆ, Ն. Պէչիկթաչլեան, 15 Ֆր.: ԵՐԿՈՒՆՔ, Չերենց, 20 Ֆր.: ԹԷՈՏՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ, Չերենց, 20 Ֆր.: ԽԱՉԱԳՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ, Բաֆֆի, Գահիրէ, 25 Ֆր.: ՇԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ, Ն. Պէչիկթաչլեան, 20 Ֆր.: ԿԱՑՔԵՐ, Բաֆֆի, Ա. եւ Բ. մասին, 50 Ֆր.: ԿԱՐՄԻՐ ԴՐՈՒԱԳՆԵՐ ՀԵՐՈՄՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ՝ 1915 - 1918, Ա. Մ. Քէչեան, Պուքրէշ 1938, 20 Ֆր.: ՀԱՑԵՐԷՆ ԵՐԳԷ, ձայնագրեալ պատկ. երգարան, Գ. Աճէմեան, Ա. հատոր 7 Ֆր.: Բ. 7 Ֆր.: ՀԱՑ ՄՇԱԿՈՑԹԻ ՕՐԸ, պատկ. 10 Ֆր.: ՀԱՑԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, Ց. Պապկեան, 10 Ֆր.: ՄԱՑԻՍ 28 (1918 - 38, քանամեակ) 5 Ֆր.: ՄԿՐՏԻՉ ԵՕԹ. ՆԵՂԲԱՑՐԵԱՆ, Ց. Հիսայեան, 8 Ֆր.: ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ 40 ՕՐԵՐԸ, Ֆ. Վերֆէլ, 2 հատոր, 70 Ֆր.: ՆԱՐԵԿ, աչխարհարար, Գահիրէն եպս. Տրապիզոնի, լաթակազմ, 30 Ֆր.: ՆՈՐ ՔՆԱՐ, ձայնագրեալ եւ պատկ. ընդհ. երգարան, 50 Ֆր.: ՍԱՄՈՒԷԼ, Բաֆֆի, Ա.թէնք, 50 Ֆր.: ՐԱՖՖԻ, կեանքը, Փարիզի 1937, 10 Ֆր.: ՕՄԱՆ ՀԱՑԵԱՄԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԸ, Ա. Զարըգ, 15 Ֆր.:

LE ROLE DES ARMÉNIENS DANS LA CIVILISATION MONDIALE, avec 17 illustrations Prof. V. Totomiantz, Belgrade 1938, 40 fr., LA BELLE ANAHITTE, A. Surménian, Toulon, 1938, 15 fr.:

ԴԻՄԵԼ՝ ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ ՍԱՄՈՒԷԼ

51 Rue Monsieur le Prince, Paris (6): CHÈQUE POSTAL: PARIS 1278 - 35. Tél. DANton 88-65, Métro Odéon :

Գասուէն հարիւրին տասը, արտասահմանէն հարիւրին 15 առաքման ծախք աւելցնել ապսպրանքներու դումարին վրայ, զոր կանխիկ պէտք է դրկել :

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

«Մատենաշար Ռազմիկի» թիւ 2

ԼԵՌՆԱՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գրեց՝ ՀՐԱՆՏ ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

Հրատարակութիւն Հայ կամ. եւ Մարտիկներու Միութեան

Գինը՝ Ֆրանսա, Սուրիա եւ Պալքաններ 10 Ֆրանք, միւս երկիրներ 15 Ֆրանք:

Ստանալու համար դիմել — Փարիզեան շրջանի համար՝ 9 Rue Thénard, Paris: Գաւառի համար՝ մեր տեղական վարչութիւններուն



Fourrures de St. Bernard

ՀԱՑԿՈՒՀԻՒ ԿԻՒԼՊՕՃԵԱՆ

Միակ վստահելի տունը ուր պիտի գտնէք տարուն ապրանքներ՝ գեղչեալ գիներով : Ընտիր արժանիքներ, իրական մօրթեր, փոթուններ, սկուներ, օձիքներ, գաբեր, վերարկուներ եւայլն :

Կը չինենք չափու վրայ մանթօներ՝ գանազան տեսակ մուշտակներէ, վերջին նորաձեւութիւններով :

Կը տառնձնենք մուշտակներու նորոգութիւնը, ձեւափոխութիւնը, ներկելը եւ թանաժը : Մուշտակները կը մաքրենք ձրի, կիրակի օրերը բաց է մինչեւ կէս օր :

24, Rue Affre կամ 8, Rue Cavé — PARIS - 18e

Մասնաճիւղ՝ 2, Rue de la Charbonnière —

Métro: La Chapelle — Barbès Roch. Tél. Montmartre 69-70



ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐՔԵՒՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Gobelins 15 - 78
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ | ՎԵՑԱՄՍԵԱՅ | ԵՒԱՄՍԵԱՅ

Թրանսա եւ Գազուքիեր	150 ֆրանգ	75 ֆրանգ	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	285 ֆրանգ	140 ֆրանգ	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանգ	110 ֆրանգ	

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
19
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
19 Octobre
1938

ԱՓ ՏԱՐԻ — 14e Année No. 3864

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՒՒ ԽՕՍՔ

Ի ՊԼԷՏՍ ԲԱՐԵՊԱՇՏԻՑ

Անցեալ ամառ « Ա. Հայաստան » դադրեցուց իր փոխանակութիւնը « Յառաջ »ի հետ :

Մասնաւոր նամակ մը ուղղելէ եւ երկար սպասելէ վերջ, տիպուհեցանք մենք ալ դադրեցնել :

Ինչուա միջոցներ չեն պակսիր, թերթը նորէն սառնալու համար, ինչպէս իրենք ալ դիմած են տարբեր ճամբու մը :

Արդ, մինչեւ մեր նոր կարգադրութիւնը, անցաւ միջանկեալ չրջան մը եւ « Ա. Հայաստան »ի կարդ մը թիւերը չհասան մեր ձեռքը :

Այդ համարներէն մէկը, 1938 օգոստոս 3 (Թիւ 177), կը պարունակէ յայտարարութիւն մը, որուն վերլուծումը հրատարակուած է « Հայրենիք »ի մէջ (7 հոկտ.) :

Ցայտարարութեան պատճէնը չունինք աչքի առջեւ, բայց, ինչպէս կը բացատրէ « Հայրենիք »ի աշխատակիցը, խնդիրը կը վերաբերի « ժողովուրդի թշնամիներու » եւ կղերին զործակցութեան : Այս առթիւ, յայտարարութիւնը կը սահեցնէ հետեւեալ տողերը .

--- « Այս հանգամանքն արդէն ապացուցուած է Գորկու մարգում մերկացուած կղերականների շայկայի դատավարութեամբ, Սվերդլովի եւ Արեւելեան Սիբիրի մարզերում յայտնաբերուած ընդյատակեայ վանքերի, ինչպէս եւ վրաստանի ու ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՆՁԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ (ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ԿԱԼԻՆԻՆՕ, ԵՐԵՒԱՆ) ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ԵՆԹԱՐԿՈՒՄԸ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՀԱԿԱՅԵՂԱՓԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԹՇՆԱՄԱԿԱՆ ԴՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻ ԱՄԲՈՂՋ ՇԱՐՔ ՓԱՍՏԵՐՈՎ »:

Իրրեւ լրացուցիչ տեղեկութիւն, ըսենք որ Լոնտոնի թերթերը ամիսներ առաջ հաղորդած էին բարձրաստիճան կղերականներու « մաքրագործումը » կամ « հաշուեյարդար »ը (լիկվիդացիա), յիշելով Ազբէչեանն ու Վրաստանը եւ ուրիշ երկիրներ, բայց անտեսելով Հայաստանը : Եւ Տէյլի Թելէկրաֆի թղթակիցը այս առթիւ կը յիշեցնէր թէ խորհրդային բարբառով « հաշուեյարդար » ընդհանրապէս կը նշանակէ գնդակահարութիւն :

Արդ, հիմա որ Երեւանի պաշտօնաթերթը ինք յատկապէս կը յիշէ Հայաստանի անունը, մանաւանդ Վաղարշապատը (էջմիածին), ինքնին կը ծագի հետեւեալ հարցը·

--- Այս հրատարակութիւնը պաշտօնական հաստատումը չէ՞ էջմիածնի ողբերգութեան :

Պարզամիտներ միայն պիտի կրնային « ոչ » պատասխանել այս հարցումին :

Անոնք որ ծանօթ են խորհրդային բարքերուն, դիտեն թէ ի՛նչ հրէշային միջոցներ կը գործադրուին, խեղաթիւրելու կամ ծակելու համար քամնելի բարբարոսութիւնները :

Եթէ երբեմն հրապարակային դատեր կը սարքուին, այդ չի նշանակեր թէ բոլոր գնդակահարութիւնները, աքսորներն ու բանտարկութիւնները կը սահմանափակուին այդ խեղկատակութիւններով :

Այս մասին հազարաւոր փաստեր կարելի էր յիշել միայն վերջին երկու տարիներու պատմութենէն : Բայց մենք պիտի ամփոփուինք մի այն Հայաստանի վրայ, պատահարար յիշելով կարգ մը պարագաներ :

Այսպէս, աւելի քան երկու տարի վերջն ալ, կարելի չեղաւ լուսաբանել Ազատ Ոանջեանի « անձնասպանութեան » պարագան :

Որ եւ է դատավարութիւն տեղի ունեցա՞ւ, նախապէս որ եւ է լուր ունէի՞նք, երբ « Ա. Հայաստան » դատավարութեան մը առթիւ, մէջբերած կը սահեցնէր հետեւեալ խօսքը·-- « Ներկայումս գնդակահարուած Ն. Սահեանեան » (նախկին զործավար) :

Պաշտօնապէս հաղորդուեցա՞ւ նախկին վարչապետ Սահակ Տէր Գաբրիէլեանի, Ամատունիի, Ակօրովի, Մուղդուսիի, Դ. Շահվերդեանի, Ալազանի, Բակունցի, Թոթովենցի, Գ. Մահարիի, Գր. Վարդանեանի, Մանուչարեանի, Ա. Եսայեանի (երեքն ալ Չոկի վարիչներ) եւ դեռ ուրիչ ծանօթ եւ անծանօթ վարիչներու, գործիչներու եւ զրագէտներու սպանութեան մասին : Ամիսներ վերջը չէ՞ր որ խմացանք այդ քամնելի լուրերը, երբեմն բերնէ բերան, յետոյ ճամբորդներու միջոցաւ, բայց ամէնէն առաջ՝ Դաշնակցութեան ճարած աղբիւրներէն :

Եւ այսպէս բազմաթիւ պարագաներ, որոնց մէկ մասը եթէ վիճելի կը համարուի, չի նշանակեր թէ բոլորովին սուտ են, այլ պարզապէս աղբիւրները կը պակսին :

Այսպէս նաեւ էջմիածնի ողբերգութիւնը :

Առաջ մը հետազրերը կը հաղորդէր թէ Ամենայն Հայոց կաթողիկոսը յանկարծամահ եղած է : Ուրիշ տեղեկութիւն չկար, եւ զիկոսը յանկարծամահ եղած է : Ուրիշ տեղեկութիւն չկար, եւ մարդիկ հաւատացին :

Շատ չանցած, իրարու հետէ հասան չարաշուք լուրեր, բազմաթիւ ճամբորդներէ քաղուած տեղեկութիւններ, որոնք ահաւոր բաներ կը պատմէին,-- էջմիածինը թալանուած, կաթողիկոսը խեղդուած, երկու եպիսկոպոսներ եւ վարդապետ մը գնդակահարուած կամ բանտին մէջ սպաննուած են. են. :

Եւ ահա գեհենի վախճան մը,-- Սո՛ւտ է...

Երկու կասկածելի եւ չափազանց ուշացած նամակներ ալ բանական եղան թէեւ տալու « Հայաստանասէր »ներուն, որոնք ամէն այլանդակութիւն փորձեցին, մոռնալով բուն հարցը :

Արդ, « Ա. Հայաստան »ի օգոստոս 3 թուակիրը յայտարարութիւնը բան մը կը խօսի՞ այդ մարդոց խելքին, չենք ըսեր խղճին :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՊԱՇՏՕՆԱՊԷՍ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ ԱԹԱԹԻՒՐՔԻ ՎԻՃԱԿԻՆ ԾԱՆՐԱՑՈՒՄԸ

Էնկիւրիէն կը հեռագրեն հոկտ. 17 թուականով (Ռիւքէր).--

Կառավարութեան կողմէ հրատարակուած զեկոյց մը կը ծանուցանէ թէ Ա֊թաթիւրք ծանրապէս հիւանդ է :

**** Ա.ազիէն անդամ է որ թրքական կառավարութիւնը պաշտօնապէս կը հաստատէ Ա֊թաթիւրքի հիւանդութեան ծանրացումը : Մինչեւ հիմա կը զոհանար հերքումներով, եւ նոյնիսկ երեք ամիս դադարման դատապարտեց թուրքերէն թերթ մը, « Թան », որ խմբագրական մը զրած էր այդ մասին : (Պոլսոյ հայերէն թերթեր ալ թարգմանած ըլլալով այդ խմբագրականը, ասոնական օր դադարման դատապարտուեցան) :*

**** Էնկիւրիի մէջ հրատարակուած առաջին պաշտօնական տեղեկագիրը կ'ըսէ (17 հոկտեմբեր).*

--- « Լեարդի հիւանդութիւնը, որմէ կը տառապի հանրապետութեան նախագահը, իր բնական ընթացքին կը հետեւէր, երբ անցեալ գիշեր պատահած սաստիկ տագնապը երթալով ծանրացաւ, յառաջ բերելով մեծ տկարութիւն մը, բակտերիական դաշում, մարսողական եւ զգային խանգարումներ : Այս խանգարումները մասամբ նուազեցան գիշերը, մասնագէտ եւ մինչեւ բժիշկներու պատուիրած դարմաններուն չնորհիւ : Հիւանդին վիճակը ծանր է միշտ, հակառակ այս առտու հաստատուած բարւոքման մը » :

Պոլսէն կը հեռագրեն թէ կառավարութեան պաշտօնական զեկոյցը ընդհանուր յուզում եւ սրբագրելութիւն պատճառեց ժողովուրդին եւ քաղաքական չրջանակներուն մէջ, ուր կը յուսային թէ Ա֊թաթիւրք պիտի կրնայ նախագահել հանրապետութեան հատուածման 15րդ տարեդարձին ծոնակատարութեան, հոկտեմբեր 29ին : Անոնախընթաց պատրաստութիւններ տեսնուած են այս տօնակատարութեան համար : Նոյեմբեր 1ին ալ նախագահը պիտի բանար խորհրդարանին նստաշրջանը :

Ա֊թաթիւրք 58 տարեկան է : Իր ամէնէն հաւանական յաջորդները կը համարուին Լոնտոնի դեսպանը՝ Պ. Ճէմիլ եւ մարաջալ Ճէվտի Զաքմաք :

**** Պոլսոյ թուրք թերթերը զգոնութեամբ կը գանգատին թէ Սըր Բօնըլա Սթօքս, Կիպրոսի նախկին մարզպանը, դասախօսութիւններ կը կատարէ պալքանեան մայրաքաղաքներուն մէջ, հռչակաւոր Լորընսի մասին : Այս առթիւ զարմանք կը յայտնեն, յիշեցնելով անգլիաթրքական բարեկամութիւնը եւ Լորընսի կոչելով « ամենամեծ չարագործը եւ ոճրագործը » :*

Իտալիա ուժ կուտայ Հունգարիոյ

« Ինֆորմացիոնէ Տիփլոմաթիք », Իտալիոյ արտաքին նախարարութեան օրկանը, խմբագրականով մը կը թելադրէ Հունգարիոյ յանձնել Սլովաքիոյ եւ Ռութէնիոյ այն չրջանները ուր մեծամասնութիւն կը կազմեն Հունգարները : Միեւնոյն առեն կը յանձնարարէ հանրաքուէ կատարել այն չրջաններուն մէջ ուր մեծամասնութիւնը վիճելի կը համարուի : Թէեւ թերթը որոշ բան չըսեր Լեհաստանի եւ Հունգարիոյ սահմանակցութեան մասին, բայց իր առաջարկած կարգադրութիւնը եւ մանաւանդ հանրաքուէն իրականին մէջ պիտի յանգին այդ ելքին :

Այս առթիւ, թերթը կը հերքէ այն լուրերը թէ անհամաձայնութիւն կը տիրէ Գերմանիոյ եւ Իտալիոյ միջեւ, չեխեւհունգարական վէճին կարգադրութեան մասին : « Պարզապէս աղսյական են այդ մասին հրատարակուած զրոյցները : Փրակայի չահը կը պահանջէ անյապաղ փակել վտքրամասնութեանց խնդիրը··· Անգամ մը որ Չեխոսլովաքիա ճշդէ իր նոր սահմանները եւ կարգադրէ բոլոր խնդիրները, Պոհեմիա կրնայ ապաւինիլ Իտալիոյ բարեկամութեան » :

Հռոմի մէջ կը կարծեն թէ մօտերս պիտի վերսկսին Հունգարիոյ եւ Չեխոսլովաքիոյ բանակցութիւնները որոնք ընդհատուեցան անցեալ չաբթու : Բանակցութիւնները պէտք է կատարուին Մինիխի համաձայնութեան սկզբունքներուն վրայ, Հունգարիոյ վերադարձնելով հունգարաբնակ չրջանները :

Իտալիա միեւնոյն առեն հաւանութիւն կը յայտնէ Հունգարիոյ զինուորական անօրինութեանց մասին, « իբրեւ զգուշական միջոց, քանի որ Չեխոսլովաքիա տակաւին չէ ցրուած իր զօրքը, սառրագաս վիճակի մը մէջ դնելով Հունգարիան » :

**** Լոնտոնի թերթերը կը դրեն թէ Հիթլէր ալ կ'ուզէ որ հունգարական խնդիրը կարգադրուի հաշտարար միջոցներով : Պերլինի հունգարական դեսպանը այս առթիւ կը բացատրէ թէ Հունգարիոյ պահանջները աչխարհակալութեան հանգամանք չունին, այլ կը բխին ազգագրական սկզբունքներէ եւ կը համապատասխանեն Մինիխի համաձայնութեան :*

--- « Այս խնդիրը պէտք է կարգադրուի 1910ի մարդահամարի հիման վրայ, -- վերջինը որ կատարուեցաւ 1919էն առաջ, երբ Չեխերը սկսան ապազգայնացնել այդ չրջանները » :

Դեսպանին այս յայտարարութիւնները հրատարակուեցան հիթլէրական զլխաւոր օրկանին մէջ, բայց իրազեկներու կարծիքով, այդ չի նշանակեր թէ Գերմանիա եւս կ'առնէ իր առարկութիւնները՝ Լեհաստանի եւ Հունգարիոյ սահմանակցութեան մասին :

ԼՈՑՏ ՃՈՐՃ, Անգլիոյ նախկին վարչապետը, հրատարակեց իր պատերազմական յուշերուն առաջին գիրքը, որ չունգալից յայտնութիւններ կը պարունակէ : Պիտի խօսինք յաջորդով :

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՇԷՆՔԻՆ ՀՐԴԵՀԸ

ՍԻԵԼԻ ՔԱՆ 30,000 ՏՈԼԱՐ ՎՆԱՍ

(Մասնաւոր թղթակցութիւն « Յառաջ »ի)

ՊՈՍԹՐՆ, 4 հոկտեմբեր.--- Սեպտեմբեր 30ի առաւօտ ժամը 1·30 --2ի առենները, անծանօթ պատճառով մը մեծ հրդեհ մը կը ծագի « Հայրենիք »ի չէնքին մէջ : Հրէչմները հազիւ կը յաջողին չէնքը փրկել հիմնայատակ կործանումէ :

Առաւօտն, երբ աչխատաւորները հասանք՝ « Հայրենիք »ի չէնքը աւերակներու մէջ գտանք : Վերնայարկը բոլորովին հրոյ ճարակ, առաջին յարկի ձեղունը քանդուած, սենեակները, ինչպէս նաեւ ներքնայարկը, ուր տպագրական մեքենաները զետեղուած են, հրչէմներու կողմէ ողողուած էին, իսկ գոյքերը խաղտ լաթերով ծածկուած՝ զանոնք ջուրէն պաչտպանելու համար :

Այսքան միայն յայտնի է որ հրդեհը ծագած է վերնայարկէն, ուր ամբարուած էին « Հայրենիք » օրաթերթի եւ ամսագրի հատաքածոները, ինչպէս նաեւ « Հայրենիք » տպարանի ուրիչ բազմաթիւ հրատարակութիւններ : Յատկի է ըսել որ ասոնք մեծ մասով փճացած են եւ կարելի չէ ասոնց վերարտադրութիւնը --- մանաւանդ օրաթերթի հաւաքածոները, որոնցմէ միայն մէկական օրի – նակ կը մնայ :

Այս կորուստները « Հայրենիք » հասատատութեան համար չատ աւելի ծանր կը կշռեն քան նիւթականը որ աւելի քան 30,000 տոլարի կը հասնի :

Հ. Յ. Դ. կեդր. Կոմիտէի, « Հայրենիք »ի խմբագրութեան եւ վարչութեան դրասենեակները գտնուելով առաջին յարկին վրայ՝ փրկուած են կրակին անմիջական ազդեցութենէն, բայց ողողուած ըլլալով և ձեղուններու անապահովութեան պատճառով անգործածելի դարձած են : Նմանապէս գրաչարանոցը, որ նոյն յարկին վրայ կը գտնուի :

Ներքնայարկը, ուր զետեղուած են տպագրական մեքենանե – րը, նմանապէս ջուրով ողողուած ըլլալով եւ չէնքին ընդհանուր անապահովութեան պատճառով առժամապէս անգործածելի դարձած :

Այսպէս՝ « Հայրենիք » հասատատութիւնը որ ամբողջ 40 տարի անընդհատ ու կանոնաւորապէս գործած էր, այս մեծ հրդեհին պատճառով ենթարկուած է ժամանակաւոր անկանոնութեան մը :

Օրաթերթը մէկ -երկու օր լոյս չտեսաւ : Ամերիկեան մեծ հատատութեան մը ազնուական աջակցութեամբ « Հայրենիք » օրաթերթը սկսաւ կանոնաւորապէս լոյս տեսնել :

Ամսագրի հոկտեմբերի թիւը, որ մէկ –երկու օրէն լոյս պիտի տեսնէր, հրդեհին պատճառով քիչ մը ուշ պիտի հրատարակուի : Վստահ ենք թէ « Հայրենիք »ներու արտատահմանի ընթերցողներն ու բաժանորդները ներողամիտ կը գտնուին այս յապաղումներուն համար, որոնք անկախ են խմբագրութեան ու վարչութեան կամքէն : Հաւանարար մէկ -երկու չաբաթ յետաձգուի « Հայրենիք » անգլիերէն չաբաթաթերթին հրատարակութիւնը :

Ըստ իս բարեբախտութիւն մըն է այն իրողութիւնը, որ Հ. Յ. Դ. Պատգամաւորական ժողովը բանաւոր պատճառով մը այս տարի երեք ամիս յետաձգուած ըլլալով, կը բացուի հրդեհէն ճիշդ մէկ չաբաթ վերջը : Ցուսով ենք թէ մեր չրջանի այս բարձրագոյն մարմինը անհրաժեչտ կարգադրութիւնը պիտի ընէ « Հայրենիք »ի չէնքը, հետեւաբար « Հայրենիք » հասատատութիւնը աւելի լաւ պայմաններու մէջ դնելու համար :

Շէնքը եւ գոյքերը ապահովագրուած էին.--- Ա. Պ.

Ծերակուտականի մը հարցապնդումը Ալեքսանտրէթի հարցի մասին
արտաքին նախարարին Ժընեւի երթալու առթիւ

Լուտո Ինֆիֆռիէօռի ծերակուտականը, Կիւսթաւ Կոթքոս, նամակ մը ուղղելով արտաքին նախարարին, հարցապնդում կը պահանջէ Ալեքսանտրէթի հարցին առթիւ, քանի որ նախարարը կը պատրաստուի Ժընեւի երթալու (հաւանաբար հոկտ. 28ին) :

Ահաւասիկ նամակին ամփոփումը .---

« Ով որ գիտէ Ալեքսանտրէթի նահանգիպատին կաբեւորութիւնը, Սանճաքին պատմութիւնը եւ մեր Սուրիա - Լիբանանան հետաքրքրութիւնը, ինչպէս եւ անոր տրամադրած պատասխանները, Մօտաւոր Արեւելքի եւ ամբողջ արաբական աչխարհին մէջ յառաջ ծագած յուզումը՝ իրրեւ հետեւանք Ֆրանքաւթուրք սակարկութեանց, անհրաժեչտ եւ տիպզոպական կը համարի ուղղել լքումի քաղաքականութիւնը որ 18 տարի առաջ բացուեցաւ Ժընեւի մէջ :

Անշուշտ գիտէք թէ ինչ կ'անցնի կը գտնայ Սանճաքին մէջ, ամիսներէ իվեր : Մեր լաւագոյն բարեկամները կը գտնուին հակառակորդներու որոնցմէ վախնալու ամէն պատճառ ունին, ինչպէս կը հաստատեն Կիլիկիոյ վայրագութիւնները եւ ամենավերջին շահատակութիւնները : « Ժողովուրդներու ազատ ինքնորոչման սկզբունքը » այժմէն իսկ չանգած է բնաբական խաղերու որոնց դէմ բողոքեցին Ազգերու Դաչնակցութեան ներկայացուցիչները իրենք : Սուրիական դրօչը, խորհրդանչանը օրինաւոր դերիչխանութեան, տեղի տուած է օտար ազգի մը դրօչին առջեւ, ազգ մը որ կ'ուզէ « անչլուս » մը (կցում) կատարել հոն, հակառակ բնակիչներու ստոյգ մեծամասնութեան, դաչնագիրներու տրամադրութեանց,

(Լուրերու շարունակութիւնը կարդա Դ. էջ)

ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ՎԵՊԵՐԸ

Հ. ՍԱՐՅԱՆԻ

Հայկ Նահապետի մասին հնագույն ավանդությունները հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ ամենահին շերտն են կազմում։ Դրանք ստեղծվել են դեռևս նախադասային հասարակարգի ժամանակաշրջանում, երբ ցեղերն ու ցեղակցական միությունները ձևավորվում էին որպես ինքնուրույն տնտեսական միավորներ, և ամեն մի ցեղ ունենում էր իր առաջնորդը, որը միաժամանակ ցեղի հոգևոր առաջնորդն էր։ Ցեղերի միջև հաճախ պատերազմներ էին տեղի ունենում, որոնք ավարտվում էին հաղթական ցեղի կողմից հաղթվածների ենթարկմամբ։ Ցեղերի միջև կռիվները, ինչպես նաև ցեղերի ներսում տեղի ունեցող ներքին պայքարները, ամենայն հավանականությամբ, հանգեցրել են նրան, որ ցեղերի առաջնորդները սկսել են ձգտել դառնալ ոչ միայն ցեղի հոգևոր, այլև աշխարհիկ առաջնորդներ։ Ցեղերի միջև կռիվների ընթացքում ցեղերի առաջնորդները ձգտել են ոչ միայն ենթարկել հաղթված ցեղերին, այլև ստիպել նրանց ընդունել իրենց աստվածները։ Ցեղերի միջև կռիվների ընթացքում հաղթող ցեղերի առաջնորդները ձգտել են ոչ միայն ենթարկել հաղթված ցեղերին, այլև ստիպել նրանց ընդունել իրենց աստվածները։ Ցեղերի միջև կռիվների ընթացքում հաղթող ցեղերի առաջնորդները ձգտել են ոչ միայն ենթարկել հաղթված ցեղերին, այլև ստիպել նրանց ընդունել իրենց աստվածները։

Հայկ Նահապետի վեպերը հայ ժողովրդի հնագույն պատմական հիշողության մեջ ամենահին շերտն են կազմում։ Դրանք ստեղծվել են դեռևս նախադասային հասարակարգի ժամանակաշրջանում, երբ ցեղերն ու ցեղակցական միությունները ձևավորվում էին որպես ինքնուրույն տնտեսական միավորներ, և ամեն մի ցեղ ունենում էր իր առաջնորդը, որը միաժամանակ ցեղի հոգևոր առաջնորդն էր

ԲԱՑԱԿ ՆԵՐՔԵՆ ԵՒ ԻՐ ԱՇԽԱՐՀ

ՊԱՐՈՆ • ՊԱՐ

Մեր Հայաստանի տարածուն դաշտերուն, լեռներուն վրայ ապրող ժողովուրդը, որ ամէն տարի կը տեսնէ գարունը, ամէն տարի կը տեսնէ ամառը, աշունը եւ ձմեռը, ինչպէ՞ս կրնայ ան չսիրել իր հայրենի երկիրը, որ իր մայրն է, իր հայրը, իր ընտանիքը, իր տունը, իր ընկերները, իր հարեւանները, իր գիւղը, իր քաղաքը, իր ամբողջ աշխարհը։ Ամէն մարդ կը սիրէ իր հայրենի երկիրը, ամէն մարդ կը սիրէ իր ծննդավայրը, ամէն մարդ կը սիրէ իր ընտանիքը, ամէն մարդ կը սիրէ իր հարեւանները, ամէն մարդ կը սիրէ իր գիւղը, ամէն մարդ կը սիրէ իր քաղաքը, ամէն մարդ կը սիրէ իր աշխարհը։ Ամէն մարդ կը սիրէ իր հայրենի երկիրը, որովհետեւ ան իր հայրենի երկիրն է։ Ամէն մարդ կը սիրէ իր հայրենի երկիրը, որովհետեւ ան իր հայրենի երկիրն է։ Ամէն մարդ կը սիրէ իր հայրենի երկիրը, որովհետեւ ան իր հայրենի երկիրն է։

Մեր հայրենի երկիրը, որ մեր մայրն է, մեր հայրն է, մեր ընտանիքը, մեր հարեւանները, մեր գիւղը, մեր քաղաքը, մեր աշխարհը, մեր տունը, մեր ընկերները

մեր կողմէ Սուրիոյ հանդէպ եղած պարտաւորութեանց եւ մեր պատիւին: Ինչպէս եւ հակառակ մեր եւ մեր դաշնակիցներու ազդային չահերուն, որովհետեւ Ֆրանսայի եւ Անգլիոյ ամէնէն իրաւասու ներկայացուցիչները ընդունած եւ հաստատած են թէ Ալէքսանդրէթի երկրամասին ճակատագիրը կապուած է մեր եւ երեք ցամաքամասերու ապահովութեան :

Պարոն նախարար, թերթերը հաղորդեցին թէ էնկիւրի պիտի երթաք, նոր դաշինքը կնքելու համար: Այս լուրը ապշեցուցիչ է մանաւանդ անոր համար որ միջազգային տագնապը կը պահանջէ պահպանել մեր դիրքերը, մեր ուժերը եւ մեր վարկը արեւելեան Միջերկրականի մէջ, Ասիոյ եւ Ափրիկէի դաւաններուն առջեւ: Գիտէք որ մեր նուաստացումը՝ Սանճաքին մէջ, մաս կը կազմէ այն բոլոր նուաստացումներուն որ յառաջ եկան մեր մարզպաններու յաճախ անպաշտպանելի դիրքէն՝ հովանաւորեալ երկիրներու մէջ: Փոխանակ վերջապէս դարման տանելու այս կացութեան, ուրեմն մեր արտաքին նախարարը անձամբ զանոնք վաւերացնելու կ'երթայ... Այնուհետեւ պիտի հաճիք հերքել այս լուրը :

Մինչ այս մինչ այն, Ֆրանսայի ժողովուրդը եւ խորհրդարանը իրաւունք ունին լուսաբանուելու Ալէքսանդրէթի դէպքերուամսին, գերիշխանութեան արդէն կիսովին կատարուած փոխանցումի մը հետեւանքներու մասին, քանի որ Թրքական զօրամասեր դրաւած են Սանճաքը: Ինդիրը պէտք է ներկայացնել խորհրդարանին. ան միայն կրնայ, Ազգերու Դաշնակցութենէն վերջը, վաւերացնել կամ ժխտել այսպիսի գործողութիւններ:

Իրրեւ նախկին ռազմիկ Սուրիոյ եւ Կիլիկիոյ Ֆրանսական զօրամասերուն, նախագահը՝ Սուրիոյ Բարեկամներու ծերակուտականն խմբակցութեան, ներկայացուցիչը նահանգի մը որուն զաւակներէն չատերը մեռած են այնտեղ, մեր սահմաններուն պաշտպանութեան եւ մեր հովանաւորեալներուն ապահովութեան համար, պատիւ ունիմ կանխաւ խնդրելու ձեզմէ որ համիք ընդունիլ հարցապնդումի առաջարկը, զոր կ'ուղղեմ ծերակոյտի Պ. նախագահին եւ որուն նիւթն է Ալէքսանդրէթի համաձայնութիւնը եւ մեր ընդհանուր քաղաքականութիւնը Թուրքիոյ հետ »:

4.000 ՕԴԱՆԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՄԱՐ

Իտալիա եւ Գերմանիա կը սուրան..

Օդանաւային մանագէտ մը, Պ. Փէյռօնէ սը Թորէս, որ յաճախ Ֆրանսայի օդանաւային նախարարութեան տեսակէտներուն արտայայտիչը կը համարուի, սոսկալի չափ կ'ուղղէ 4000ի բարձրացնելու ռազմական օդանաւերու թիւը :

« Էնթրանսիժան »ի մէջ հրատարակուած գրութեամբ մը, Պ. սը Թորէս կը յորդորէ մոռնալ ներքին վէճերն ու փոխադարձ մեղադրանքները եւ ամբողջովին նուիրուիլ այս գործին: Իր հաշիւներուն համաձայն, Ֆրանսա 4000 ռազմական օդանաւ չինելով, պիտի կրնայ 2600ի պահեստի օդաուրմիղ մը ունենալ : Եւ կը չեչտէ.

— « Որպէսզի մեր վարչապետը կարենայ հաւասարէ հաւասար խօսիլ ուրիշ կառավարութեանց պետերուն հետ, Ֆրանսան պէտք է զօրաւոր ըլլայ: Եթէ ոեւէ մոռայ, որ եւ է պարագայի մէջ պիտի չկրնայ իր ամբողջ ծանրութիւնը արժեցնել իր կնքած դիւանակուռեանց մէջ : 40,000,000 բնակիչներ ունեցող Ֆրանսա մը ի՞նչ կըրնայ ընել 120,000,000նոց Հռոմ - Պերլին առանցքին դէմ: Պէտք է բաց աչքով նայիլ իրականութեան: Աւելորդ է պրպտել թէ ի՛նչ թերութիւններ գործուած են անցեալին մէջ եւ ով է անոնց պատասխանատուն: Ընդհակառակն, բոլոր ջանքերը պէտք է կեդրոնանան, քաղաքականութիւնը պէտք է ճշդուի, ծրագիրներ պէտք է մշակուին եւ գործադրուին »:

Ցօդուածագիրը պարզելէ վերջ թէ չեխական տագնապին առեն երեւան եկաւ որ Ֆրանսական օդաուրմիղին վիճակը նուազ գոհացուցիչ է քան չատեր կը կարծէին, կը յիշեցնէ թէ Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ կարագը զոհուած էսպառազինութեանց, մինչդեռ Ֆրանսայի օդային ճարտարարուեստը ծանրաբեռնուած ըլլալով վարչական արգելիչ դրութեամբ մը, մասնաւոր ճիգ մը չէ կատարուած :

Ցօդուածագիրը 7000 (եօթը հազար) կը հաշուէ Հռոմ - Պերլին առանցքին առաջնակարգ ռազմական օդանաւերը: Երկու երկիրներն ալ անհրաժեշտ վարկերը եւ հեղինակութիւնը չանձնած են իրենց զինանականներուն, ճարտարագէտներուն եւ գործարանատէրներուն: Այս կարգադրութեան շնորհիւ, անոնց արտադրութիւնը այնքան ծաւալած է որ կը վտանգէ Ֆրանսայի ապահովութիւնը :

Պ. սը Թորէս 50,000,000 անգլ. ոսկի կը հաշուէ 4000 ռազմական օդանաւերուն չինութեան ծախքը: Ասկէ զատ, անհրաժեշտ է 30,000,000 ոսկի, հոգալու համար յաւելուածական պաշտօնեաներու կրթութիւնը եւ աշխատավարձքը, ինչպէս եւ ուրիշ ծախքեր:

Ուրիշ մանագէտ մը, Պ. Ֆլէօռի, աշխատակից «Փարի - Սուար»ի, կը գրէ թէ Գերմանիա 500 օդանաւ կը շինէ ամէն ամիս, կամ աւելի՝ բան Մ. Նահանգներու, Անգլիոյ եւ Ֆրանսայի միացեալ արտադրութիւնը: Ցեռոյ դիտել կուտայ թէ Ֆրանսական օդանաւերը չատ եռ կը մնան ոչ միայն թիւով, այլեւ արագութեան տեսակէտով, մանաւորապէս գերմանական հետապնդիչ սուսանակներէն որոնք ժամը 375 մղոն կը կարեն, իսկ Ֆրանսականները՝ միայն 190 մղոն: Գերմանական ռմբաձիգ օդանաւերն ալ 250 մղոն արագութիւն ունին, իսկ Ֆրանսական ամէնէն սրընթաց ռմբաձիգը՝ միայն 187 մղոն:

Երկու մանագէտներն ալ կը պահանջեն ամբողջովին վերաքննել Ֆրանսայի օդանաւային արտադրութեան պայմանները եւ փութացնել արտադրութիւնը, դաս առնելով Գերմանիայէն եւ Իտալիայէն :

Մերկացումները կը չարունակուին ուրիշ թերթերու մէջ ալ : Աւելի կարեւոր յայտնութեանց կը սպասուի խորհրդարանին մէջ, երբ հարցապնդումներ կատարուին :

Հ. Յ. Դ.

Գաւառ

ՄԱՐՍԷՅԼԻ «Մարօ» խումբի ժողովը 23 Հոկտ., կիրակի կէսօրէ ետք ժամը 3ին, «Շաբրիկեան» սրահին մէջ:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ֆ. Կ. Հայի Փարիզի Մասնաճիւղի նոր տարեշրջանի առաջին դասախօսութիւնը 22 Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը ճիշդ 9ին, 8 Ռիւ Պօսիւէ, Փարիզ:

ԿԸ ԽՕՍԻ ՏԻՐԱՆ ՎՐԴ. ՆԵՐՍՈՅԵԱՆ

Նիւթ՝ «Առանին կրթութիւնը»:

Կը հրաւիրուի հասարակութիւնը: Հիւրասիրութիւն թէյով կարկանդակ: Ծախսերու մասնակցութեան համար կը գանձուի 3 ֆր.:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Վերամուտի առաջին դասախօսութիւնը տեղի կ'ունենայ 20 Հոկտ., Հինգշաբթի ժամը 21ին, Միութեան կեդրոնատեղին՝ 8 Ռիւ Պօսիւէ, Փարիզ: Կը գասախօսէ՝ ՏԻՐԱՆ ՎՐԴ. ՆԵՐՍՈՅԵԱՆ,ն իւր՝ «Երիտասարդութիւնը եւ եկեղեցին»:

ԹԷՅԱՍԵՂԱՆ — ՀԱՒԱՔՈՑԹ

«ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳԱԽՈՒՄԲԻ ԿՈՂՄԷ

23 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 4էն մրնչիւ կէս գիշեր, 8 Ռիւ Պօսիւէ, Փարիզ: Գեղարուեստական բաժին եւ պար:

Կը հրաւիրուին երգչախումբի անդամներն իրենց ընտանիքով, եւ համակիրներ. Մուտք՝ 5 ֆրանք (Թէյ եւ խմորեղէն միասին): Սպասարկութիւն ժամը 5ին:

ԾԱԽՈՒԻ Է *սոիպզական մեկնումի պատճառով, կօշիկաբէն լանուէթ մը լաւ վիճակի մէջ: Banc finissage եւ կարի մեքենայ: Ո տարի պայմ: Գինն՝ 4000 ֆրանք:*

Դիմել՝ Rue Moutcalm, Paris (18e), մէթրօ Jules Joffrin:

ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

Նիւ Եորքի մէջ բացուած դատին առթիւ, ընդհ. դատախազը բացէ ի բաց ամբաստանեց Գերմանիան, իբրեւ յղացողը եւ գլխաւորը Մ. Նահանգներու մէջ սարքուած լրտեսութեան, որուն գործիքներն են չորս ամբաստանեալներ: Դատախազը յայտարարեց թէ Քարլ Շլութէրն, «Պրէմէն» չոգենաւին քաղաքական գործակալը եւ 14 ամբաստանեալներէն մէկը, որ բացակայ է, խոստովանած է ձերբակալուած լրտեսի մը թէ կրնար քրքրել գերմանական նաւերու թղթատարական պայուսակները եւ լուսանկարներ առնել խորհրդային առեւտրական պատուիրակութեան պայմանագիրներ, հետեւաբար եւ Ս. Միութեան սպառազինութեանց մասին : Կ'ըսուի թէ ընդհ. դատախազը ուրիշ պետութեան մը անունն ալ պիտի յիշէ, դատավարութեան ընթացքին: Ուրիշ լուրի մը համաձայն, լրտեսներէն մէկը, Ռումբիա, չարաթական յիսուն տարեկան կը սեպուի, իր լրտեսական գործունէութեան համար եւ ձերբակալուելու երբ կը փորձէր յիսուն ամերիկեան անցապրի խնդրագիր ճարել: Այդ անցագիրները պիտի արուէին գերման գործակալներու, որպէսզի Ռուսաստան մտնեն իբրեւ ամերիկեան հպատակ: Այս առթիւ կեղծուած է նոյնիսկ նախագահ Րոզվէլթի առորագրութիւնը: Լրտես մը խոստովանած է թէ Գերմանիա գործակալներ ունէր Ամերիկայի օդանաւային գործարաններուն մէջ: Համպուրկի հետախուզական վարիչը գերմանածին քաղաքացիներ կը վարձէր Մ. Նահանգներուն մէջ, լրտեսութիւն կատարելու համար: «Շատեր զրամ կը սեպնային, ուրիշներ կը ծառայէին իրրեւ հայրենասիրական պարտականութիւն »:

Աւելի չռնդալից յայտնութեանց կը սպասուի :

ԻՏԱԼԱԿԱՆ կառավարութիւնը հաւանութիւն յայտնեց Ֆրանսական նոր դեսպանին, Պ. Ֆրանսուա Փոնսէի անուանման: Դեսպանը Հռոմ կը սպասուի նոյեմբերի սկիզբը, եւ յանձնարարագիրը պիտի ներկայացնէ Վիթթօրիօ Էմմանուէլ Գ.ի, թագաւոր Իտալիոյ եւ կայսր Եթովպիոյ: Ուրիշ խօսքով, Ֆրանսա պաշտօնապէս պիտի ճանչնայ Եթովպիոյ գրաւումը :

ԿԱՐԼ ԿԱՈՒՑԿԻ, ընկերվարական մեծ տեսաբանը եւ կարլ Մարքսի սակաւաթիւ բարեկամներէն մէկը, մեռաւ Ամստէրտամի մէջ: Ծնած էր Փրակա եւ 84 տարեկան էր: Պատերազմէն առաջ Գերմանիոյ ընկերվարական կուսակցութեան գլխաւոր վարիչներէն մէկն էր: Երբ հիթլէրական իշխանութիւնը հաստատուեցաւ, Կաուցկի Վիէննա գաղթեց, բայց սակայն հետանալ, Ամստրիոյ կցումէն վերջը: 1919ին գիրք մը գրեց, ապացուցանելու համար թէ մեծ պատերազմին ամբողջ պատասխանատուութիւնը կ'իյնայ Վիլհէլմ Բ.ի վրայ: Մինչեւ վերջը պայքարեցաւ համայնավարական բռնութեանց դէմ: Յառաջիկային աւելի երկար կը խօսինք իր կեանքի եւ գործի մասին :

ԵՐՈՒՍԱղԷՄԷն կը հեռագրեն թէ քաղաքը պատերազմական վիճակ մը կը ներկայացնէ: Հոկտեմբեր 11ին փակուեցան բոլոր դուռները, բացի Եաֆայի դուռնէն: Բնակիչները իրենց տուներէն դուրս չեկան եւ միայն անգլիացի պահակներ կը տեսնուէին փողոցներուն մէջ: Տանիքներու մէջ ապաստանած ըմբոստներ հրացան պարպեցին պահակներուն վրայ եւ ամբողջ գիշերը ընդհարումներ պատահեցան: 12 արաբական քաղաքներ պատիժի ենթարկուեցան, դատապրներ պահած ըլլալով: Խռովութիւնները կը շարունակուին ամէն կողմ :

ՉԱՆԱՉԱՆ ՉՐՈՑՑՆԵՐ կը չրջին կառավարութեան եզմտա – կան ծրագիրներու, դահլիճի քանի մը անդամներու փոփոխման եւ երեսփ. ժողովի լուծման մասին, բայց պաշտօնական լուրեր կը պակսին: — Պ. Խոճօ ճառ մը խօսելով Լիոնի մէջ, մեղադրեց համայնավար կուսակցութեան խռովայոյզ պայքարը :

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Բերքուանիներ)

ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Փառատիպ հատոր մը, 300 էջ, Տպուած սակաւաթիւ օրինակներով

Գուլպաները այս հայկական քերթողագիրքին.—

ՅԱՑԴԱՐՁԱԿԱՆ
ՍԷՐԸ ՓՈՒՇԷ ՊՍԱԿՈՎ
ԹԵՂԱ ՄԱՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ԲԵՀԵՆԱԿԱՆՔ
ՀԱՆԱՄՏԵՂԸԸ ԿԱՍՏՈՒԱԾԱՆԱՑ
ՍԻՐՏՍ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐՈՎ
ԻՆՔՆԱԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՓԻՒՂԻ ՍԻՒՔԵՐ՝ ԵԱՐՈՂ ԵՐԳԵՐ

Սուրիա եւ Ֆրանսա 40 ֆրանք
Ուրիշ երկիրներ 50 ֆր.:

Ապսպրանքները բացարձակապէս կանխիկ:

Դիմել հեղինակին,
17. Rue Damesme, PARIS

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

1939 "ԳՕՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՑՑ,,

Ժ. ՏԱՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՊՈՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ, ՄԱՐՍԷՅԼ

Դիմել՝ ընդհանուր գործակալ՝ Կայծակ Ճարայեանի,
Monsieur Gaïzak Djarayan, 5, Rue de l'Eclipse, Marseille, France:

Գինն է՝ Մարսէյլ 5 ֆրանք Ֆրանսա, Սուրիա եւ գաղութներ 5.50 ֆր., արտասահման՝ 6 ֆրանք:

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԻ - ԱՏԱՄՆԱԲՈՑԻ

44 Rue Dunkerque (ՄԷԹՐՕ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՒ)

Tél. Trudaine 42—69

Ի'ինգուռնի ամէն օր ժամը 14—20:

Հատուածները ժամադրութեամբ:

Ձ ա յ ռ ա ր ա ն "ԲԵՐԱ"

ՏՆՕՐԷՆ **ԵՐՋԱՆԿ ՊԱԼՃԵԱՆ**

9 Rue Provence, Paris 9e. *(Առաջին յարկ)*
Մէթրօ **Le Peletier**

Ամէնէն նոր եւ եւրոպական կերակուրներ՝ պատրաստուած անարատ իւղով:

ՀԱՅԵՐՈՒ ԹԱՄԱԴՐԱՎԱՃԸ

Ա ր տ ա ր ա ն Ֆ Լ Օ Ր Ի Ա

61, Rue Monsieur le Prince, Paris (6e)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ :

ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆ ԱՒ ՈՒՏԵՍՏԵՂԷՆ ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԻԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք Ֆրանսական, անգլիական եւ չեխոսլովաք կերպասներու Փափաքողները կրնան զրկել իրենց գնած ապրանքները, ուսնաէվրատ եւ ծոյլ գրի մեքենաներ կը գնենք ու կը ծախենք օտար դրամներ կը տանձնենք ապրանքներու emballago եւ ապահովագրութիւն Փոխադրութիւն ամէն տեսակ ապրանքներու եւ պահածներու

Դիմել՝ **American Lloyd, Paris (9). 7 rue Auber**
Tel. Opéra 67-77



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ձուլտ խառնած քարտ եւ անիսոնով պատրաստուած ճշգական օղին է Ռաքը Տիւզը ձգտողները արեւմտահան օղիներէ ձեր առաջին կ'արտ գիւղերները չուռ կը խմեն եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք Ռաքը Տիւզը որուն պրան պատ, կազդուրիչ եւ ախորժարեր ըլլալէ զատ է:

Dalakupeian 8 Rue Sydney Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89

Le Gérant : H. STEPHAN
17. Rue Damesme, PARIS (13)
A. DER OHANIAN

PHÉNIX
anis distillé
Agent General : Mr Albert Bacri
ՌԱՔԻ ՖԷՆԻՔՍ
19. rue Turbigo. PARIS 2e Tel: Cent: 83-17.

AGENCES: ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ

LYON: ԼԻՈՆ — *M. Francis COTTON, 68 Avenue Galline; à Villeurbanne, près Lyon. Téléph. Lalande 64-10.*

MARSEILLE, ՄԱՐՍԷՅԼ — *M. SIMONDI, 17 Allées des Primevères. à Marseille.*

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Gobelins 15 - 79
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱԿ ԵՒԱՄՍԵԱԿ

Թրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	225 ֆրանք	120 ֆրանք	

ՀԻՆԳՇԱԲԹԻ
20
ՀՈԿՏԵՄԲԵՐ
JEUDI
20 Octobre
1938

14e Année No. 3865

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ալիեւի ՔԱՆ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Այն հատուածը զոր երէկ արտատպեր էինք «Մ. Հայաստան»էն (3 օգոստոս 1938), տուն կուտայ այլապէս վրդովիչ խորհրդածութեանց :

Այսպէս, կը հատատաէ թէ ծանրակչիռ զործօղութիւններ կատարուած են «Հայաստանի առանձին չրջաններուն մէջ — Վաղարշապատ, Կալինինօ, Երեւան»: Բուն իսկ Երեւանի պաշտօնաթերթը խօսքերը զործածելով, «լիկվիդացիայի ենթարկուած են տեղւոյն հակայեղափոխական Դաշնակցական խմբակները »:

Երէկ բացատրեցինք թէ ի՛նչ կը նշանակէ «լիկվիդացիա » (հաշուեյարդար), բոլշեւիկեան բառարանին մէջ:

Եթէ որ եւ է լուր հասած չըլլար էջմիածնի ողբերգութեան մասին, կարելի էր այս հրատարակութիւնը կարդալ եւ անցնիլ, իբրեւ ձուլածոյ բացատրութիւն մը :

Բայց, Մորէն կաթողիկոսի եւ ուրիշ կղերականներու սպանութեան մանրամասնութիւնները եւ ուրիշ պարագաներ այդ մթին թաղութենէն ալ կը զրկեն մեզ: Եւ նմանօրինակ անհամար դէպքերու վրայ հիմնուելով, տրամաբանօրէն կը հետեւի թէ իսկապէս արիւնոտ «լիկվիդացիա» մը կատարուած է, անցեալ ապրիլին, էջմիածնի մէջ: Նոյնքան խորհրդաւոր եւ քամնելի պարագաներու տակ, ինչպէս 1936ին եւ 1937ին, բազմաթիւ զոհերով, որոնց բոլոր անունները չեն ճշդուած տակաւին :

Կը կարծենք թէ այս պարագան, զոնէ «Մ. Հայաստան »ի վկայութիւնը բաւական են սթափեցնելու քնացողներն ու քնացնողները, ո՛ւր որ ալ զտնուին եւ ի՛նչ հոսանքի ալ պատկանին :

Ի՞նչ օգուտ օրօրներէն, երբ կոպիտ իրականութիւնը ուրիշ բան կ'ըսէ, մէկը միւսէն վրդովիչ փաստերով:

Ըսած ենք եւ նորէն կը յիշեցնենք,— ժամանակն է որ հատաքական եւ վճռական փորձ մը կատարուի, վերջնապէս լուսաբանելու, տուգելու համար Հայաստանի անցուդարձը, մանաւանդ վերջին երկու տարիներու ահաւոր ողբերգութիւնը :

Գիտենք որ զրեթէ անյաղթելի դժուարութիւններ կը ցցուին այս ճամբուն վրայ, իբրեւ հետեւանք խորհրդային իշխանութեան հաստատած կարգուսարքին: Եւ սակայն, «սպասենք եւ յուսանք»ը քաղաքականութիւն չէ, եթէ իսկապէս՝ունինք այդպիսի բան մը մեր միտքին Հայաստանին հանդէպ:

Սպասելը եւ յուսալն ալ ունին սահմաններ, մանաւանդ երբ հարցը կը վերաբերի հայրենիքի մը ճակատագրին: Իսկ սպասելու եւ յուսալու այն «իմաստութիւնը» որ կը տիրէ Արտաքին Գործոց Նախարարութեան կարգ մը չրջանակներուն մէջ, պարզապէս ծերացած, գործելու անընդունակ եւ անիմաստ հոգեբանութիւն մը կը մատնէ: Դիրք մը, որ երբեք չի համապատասխաներ ոչ հայրենասիրութեան, ոչ ալ տարրական պարտաճանաչութեան :

Այս հարցին հետ կապուած է, նաեւ, աւելի հիմնական խնդիր մը,— յարաբերութեանց վերահաստատումը Երեւանի հետ :

Հայաստանի ամէնէն լաւատես բարեկամներն ալ սկսած են ողբալ, զրաւորապէս, թէ ոչ նամակ, ոչ թերթ, ոչ ալ դիրքեր կը ստանան, մէկուկէս տարիէ ի վեր: Նոյնիսկ Հրատ մոլորակը աւելի մօտ կը զտնեն քան Երեւանը :

Արդ, բաւակա՞ն է ողբը, իբրեւ արտայայտիչ զիտակցութեան եւ հայրենասիրութեան: Քանի մը հարիւր հոգի չենք արտահանման մէջ, այլ հարիւր հազարներ, — 7- 800,000, որ կը տապալին անորոշութեան մէջ:

Որո՞ւ կ'ենթայ կարելին փորձել, այս մթութիւնը պարզելու եւ կապերը վերահաստատելու համար: Տարի մըն ալ այսպէս, եւ այն ատեն միայն անուններ մնացած պիտի ըլլան միթքերու մէջ, Հայաստանի «լուսապայծառ իրականութենէն »:

Այս մտահոգութիւնը մեքենաբար կը յանգի նոյն չարաբաստիկ հարցումին,— ունի՞նք ընդհանուր դեկավարութիւն մը, որ իրաւասու ըլլար այդպիսի փորձի մը ձեռնարկելու :

Պարզ է որ չունինք: Արդ, ներելի՞ է որ այսպէս ալ մնանք, անդեկ եւ անգլուխ :

Եթէ նոյնիսկ ճակատագրուած ըլլար որ Մոսկուան կամ Երեւանը չարունակեն արհամարհել Հայկական Արտաքին Գործոց Նախարարութեան կարգադրութիւնները, եւ բարեպաշտները էջմիածնի օրհնութենէն անդամ զրկուին, աւելի սոսկալի չի՞ դառնար ընդհանուր դեկավարութեան իրական նպատակը :

Չենք ուզեր տագտկալի դառնալ, յիշելով այն բազմազան հոգերը որ կը ծանրանան Արտաքին Գործոց Նախարարութեան վրայ, իր իսկ ինքնապահպանութեան համար :

Չենք խօսիր նաեւ քաղաքական գործունէութեան մասին, այն վստահութեամբ թէ զոնէ քաղաքական կուսակցութիւնները ի վերջոյ ելք մը պիտի զտնեն, դիւրացնելով գործակցութիւնը:

Հարցը այն է որ, միայն քաղաքական կուսակցութեանց հանրային գործակցութիւնը բաւական չէ, դիմաւորելու համար այնքան բարդ հոգեր :

Այսպէս կոչուած անկախներն ու չէզոքներն ալ, եւ մանաւանդ «չրջանաւարտ»ները պարտաւոր են որոճալ իրենց կարգին, եւ ճամբան հարթել, բոլոր տարամտրելի ուժերը համախմբելու եւ բաղձանքները իրականութեան վերածելու համար :

Իսկ այս հոգը ամէնէն առաջ կ'իյնայ Փարիզի վրայ:

ՌԱՖՖԻ ճաշարանը յայտնի է բոլորին հայկական եւ եւրոպական իր հարուստ ճաշացուցակով եւ իր հանրածանօթ կովկասեան չաչլիկով:

Տէր եւ տնօրէն Մ. Գ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆ

8 Rue de Maubeuge, Paris (9e), Metro: Cadet, Le Peletier et N. D. de Lorette



"ՇԻՐԱԿ"

Աւետելքի միակ իսկական օղին է: Անզուգական, Անմրցելի, Անհարդախօս: Առաջնակարգ զօրացուցիչ ախորժակբեր, պատրաստուած զուտ չամիչի ջրով: Հայ աւանդական սեղանին չքնաղ



ՐԱՓԸ ՏԻՒԶ

Զուտ խաղողէ քաղուած եւ անխտրով պատրաստուած հայկական օղին է: ՐԱՓԸ ՏԻՒԶ, Զգուշութեամբ արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գիչերները չուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութիւնը: Խմեցէք միայն ՐԱՓԸ ՏԻՒԶը որուն անուշ համը, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը ճաշակողները ընտանեցուած է:

Dalakupeian 8 Rue Suffren, Marseille. Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89.

Le Gérant : H. STEPHAN
17, Rue Damesme, PARIS (13e) A. DER (AGOPIAN)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՖՐԵՆՁԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ՀԵՌԱԽՕՍԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎՃՑԱՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Եգիպտոս եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	285 ֆրանք	150 ֆրանք	

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
26
ՀՈԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
26 Octobre
1938

ԺԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3870

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՕՐ ԽՕՍՔ

ԻՐԻ ՇՐՋԱՆԸ ԿԸ ՀԱՍՆԻ...

— oo —

Ամէն ժողովուրդ զօրանոց կ'առաջնորդէ իր արու զաւակները, երբ անոնք դարձած կ'ըլլան 18 - 20 - 21 – 22 տարեկան, համաձայն մինչավայրի պայմաններուն :

Կան ժողովուրդներ ալ որ սեփական պետութիւն չունին, բայց նոյնպէս զինուոր կուտան տիրապետող իշխանութեան :

Այս պարտականութիւնը չի վերջնաւոր միայն գործօն ծառայութեամբ : Կան պահեստները, քաղաքապահները, երկրապահ – ները : Սովորական ժամանակներու մէջ, զինուորութեան շրջանը կը հասնի համագումար 10 – 12 տարի, տեղ - տեղ ալ աւելի :

Այս ծանօթութիւնները քիչ մը նախապատերազմեան են :

Այսօր բոլորովին փոխուած է զինուորագրութեան եղանակն ալ, շատ մը երկիրներու մէջ : Հաստատուած է «զինուորեալ ազգ»ի դրութիւն մը, որ կ'ընդգրկէ 18էն մինչեւ 55 տարեկանը (Իտալիա) : Մարտական կրթութիւն կը տրուի մինչեւ անգամ տարբեր – կան դպրոցներու մէջ, սկսելով 6–8 տարեկանէն, եւ տրամադրե – լով փայտէ հրացաններ :

Երկու տեսակ դիկտատուրաները, բոլշեւիկեանն ու ֆաշական – նը, իրարու հետ մրցումի եւած են այս ճակատին վրայ, եւ դժ – ուար է ըսել թէ ո՛րը կրցաւ կոտրել կամ պիտի կոտրէ մրցանիշը :

Ընդհանուր վերիվայրումէն ազդուեցան ուրիշ երկիրներ ալ, յետ թէ փոքր, առանց կարգուսարքի խորութեան :

Այս երկիրն անգամ, ուր ազատութեան գաղափարը աւանդու – թիւն մը դարձած է, օրուան վարիչները հարկադրուեցան հաստա – տել զինուորեալ ազգի օրէնք :

Ուրեմն, բոլոր ժողովուրդներու երիտասարդ, կենսունակ, պիտանի տարիները պարտաւորիչ ծառայութեան շրջան մը կը բո – լորեն, յանուն հայրենիքի պաշտպանութեան :

Երբ շրջանը հասնի եւ զօրակոչը հնչէ, օրուան իշխանութիւնը չի հարցներ.— Հաւատքով ի՞նչ ես, ո՞ր հոսանքին կամ դասակար – գին կը պատկանիս : Համազգեստ մը կ'անցընէ կռնակդ եւ կը յանձ – նէ տասնապետի մը : Մնացեալը մէկքնարար կը սորվիս, համա – ձայն մատուր կամ փիզիքական ընդունակութեանդ :

Մենք ալ ժողովուրդ մըն ենք, բազմաթիւ մասերու բաժ – նուած : Գլխաւոր մասը ամփոփուած է սահմանափակ հայրենիքի մը մէջ, մնացեալը կը յածի աշխարհի բոլոր ափերուն վրայ :

Այնտեղ, հայրենիքին մէջ, երիտասարդները կը կատարեն ի – րենց զինուորութիւնը, ինչպէս ամբողջ Ս. Միութեան մէջ : Այ – դին, Հայկական Սրտասահմանի մէջ, զանազան երկիրներ դեռ նոր սկսան զինուոր առնել հայրենազուրկները· ամէնէն վերջը՝ այս երկիրը : Եւ ընդհանրապէս կ'առնեն բուն զինուորցուները,— 20 - 22 տարեկան : Մեծամասնութիւնը ազատ է բոլոր երկիրներուն մէջ, իր անձնական գործերով զբաղելու համար, ինչպէս ամէն քաղաքացի :

Ինչո՞ւ զրի առինք այս տարբերական դիտելիքները :

Պարզապէս նոր հարց մը ուղղելու համար տարագիր երիտա – սարդութեան այն մասին որ ոչ կուսակցութեան մը կ'անդամակ – ցի, ոչ այս կամ այն միութեան, ոչ ալ կը խանդավառուի հանրա – յին ծառայութեան որ եւ է երեւոյթէ :

Եթէ այս երիտասարդութիւնը — եւ պատկառելի զանգուած մը կը կազմէ այս դասը – տարիքը անցուցած չըլլար, զինուորու – թեան պիտի կանչուէր առ նուազն երկու տարի, իր հայրենիքին մէջ կամ այլուր :

Անշուշտ բոլորն ալ ընդունակ չեն զինուորութեան, բայց օ – րէնքը այդ պարագան ալ նախատեսած ըլլալով, իւրաքանչիւրին կը սահմանէ յարմար գործը :

Եւ ահաւասիկ հարցումը.— պետական պաշտպանութեան ինդիր չունինք, բայց ունինք ինքնապաշտպանութեան հոգ մը, մանաւանդ հեռու ըլլալով մեր հայրենիքէն :

Ամէն ուր որ ինկած ենք, միջավայրը, պարագաները, օրէնք – ները, քաղաքական եւ ընկերային ճնշումները կը սպառնան կազ – մալուծել, փոշիացնել մեզ : Սոխպուած ենք հարիւր ճիգ թափել, 20 – 25, նոյնիսկ աւելի պակաս սրդիւնք ստանալու համար : Ոչ միայն մեր ճակատագրին բարելաւումը, այլ մեր գոյութիւնն իսկ ամէն մէկէս կը պահանջէ ինքնաբերաբար, դիտակցօրէն առանձ – նել որ եւ է ծառայութիւն :

Այդ ծառայութիւնը պիտի կատարէ՞ինք, եթէ արտաքին ուժ մը պարտադրէր մեզի :

Պատասխանը երկու տեսակ չի կրնար ըլլալ :

Հիմա դուք արամաբանեցէք.— երբ օտարէն բռնադատուելով կը կատարես ծառայութիւն մը որ չատ հեռուոր կամ անուղղակի կապեր միայն ունի քու ճակատագրիդ հետ, ինչո՞ւ կը մեծես միայն, — այն որ կը բխի սա ցեղական բազմութեանդ կացութե – նէն :

Դէպի զօրանոց քալած առեն, կը զգաս թէ մարակ մը կախ – ուած է գլխուդ վերեւ, տեսանելի կամ անտեսանելի :

Իսկ երբ ազատ ես, եւ «հայկական իրականութեան» ամբողջ ողբերգութիւնը կը տեսնես աչօք բացօք, ինչո՞ւ պարտաճանաչու – թեան եւ պատասխանատուութեան դիտակցութիւնն ալ մարակի մը պէս պիտի չկրնայ կատարել քեզի համար, խարազանելով քու երիտասարդական յաւակնութիւններդ :

Հաւատքդ չեն հարցներ, զօրանոց գացած առեն : Այս պար – տականութեան առթիւ ալ, հաւատա ինչ բանի որ կ'ուզես : Բայց, բարեհաճէ յորձանքին խառնուիլ եւ գործել : Ծառայել :

Ատանց այս տարբերական պարտաճանաչութեան, ամէն բանէ առաջ դաւաճանած կ'ըլլաս երիտասարդի կոչումիդ, ուր որ ալ պանուիս :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՖՐԱՆՍԱՅԻ ՆԵՐՔԻՆ ՀՈԳԵՐԸ

— oo —

Օդային ապատագիտութիւնը եւ ուրիշ խնդիրներ

Այսօր, չորեքշաբթի, կը բացուի արմատական կուսակցու – թեան համագումարը՝ Մարսէյլի մէջ : Ժողովին պիտի մասնակցի նաեւ վարչապետը, իբրեւ նախագահ կուսակցութեան : Այս առթիւ պիտի պարզուի ոչ միայն դահլիճին նոր ծրագիրը, այլեւ վերա – կազմութեան եղանակը :

Ինչպէս բացատրած ենք, նոր ծրագրին գլխաւոր կէտերէն մէ – կը պիտի ըլլայ հաւասարակշռել ելեւմուտքը եւ զարկ տալ օդանա – ւային արտադրութեան : Օդանաւային հաստատութեանց բանուոր – ներն ու մասնագէտները արդէն ընդունած են չարաթական 45 ժամուան կանոնը :

Իրազեկները կը պնդեն թէ Պ. Տալատիէ ապատագիտութեանց նախարարութիւն մը պիտի հաստատէ, զայն յանձնելով Պ. Ռաուլ Տոթըրի, երկաթուղիներու նախորդ վերատեսուչը որ խոկ եւ խոկ մասնագէտ մըն է եւ անկուսակցական : Ուրիշ լուրի մը համաձայն, Պ. Տալատիէ կը խորհի ազդ· պաշտպանութեան նախարարութիւ – նը յանձնել զօրավարի մը, ինչ որ յանդգնութիւն մը կը համար – ուի, որովհետեւ այս երկրին մէջ յարմար չեն դատեր զինուորա – կանի մը յանձնել բանակը : Եթէ այս փոփոխութիւնը կատարուի, այն առենՊ. Տալատիէ լայն ժամանակ պիտի ունենայ ամբողջովին քաղաքական գործերու նուիրուելու եւ զօրաւոր կառավարութիւն մը կազմելու մինչեւ 1940 :

**** Նախկին նախարար Պ. Քայէօ, անդամ ծերակոյտի, ճառ մը խօսելով յորդորեց վերջ տալ դասակարգային պայքարներուն, փրկելու համար երկիրը : «Հասած է ժամը որ Ֆրանսա ոտքի կանգ – նի միացեալ ճակատով, բոլոր դասակարգերու գործակցութեամբ, — բանուոր դասակարգը՝ առաջնորդուած Ֆրանսայիներէ, ոչ թէ իր հրամանները առանալով արտասահմանէն· գիւղացիները՝ միշտ պատրաստ զոհողութեան, միջին դասը՝ որ ողնայարն է ժողովր – դապետութեան, եւ գործատէրերը : Կառավարութեան կը մնայ բանալ ճամբան :*

Վարչապետին նոր տագնապները

— oo —

Պ. Տալատիէ առջի օր մէկուկէս ժամ տեսակցեցաւ Թունդ ա – ջակոմեան կուսակցութեան վարիչին՝ Պ. Լուի Մառէնի հետ, ո – րուն խմբակցութիւնը ինը աթոռ կորզած էր արմատականներէն, կիրակի օր, ծերակուտական ընտրութեանց առթիւ : Նոյն օրը տես – նուած էր նաեւ կեդրոնի խմբակցութեան վարիչին՝ Պ. Փօլ Ռէյնո – յի հետ (դատական նախարար), պարզելով իր տնտեսական եւ էլ – մատական ծրագրին գլխաւոր դիծերը, ինչպէս եւ միահեծան պե – տութեանց հետ մերձեցում հաստատելու տրամադրութիւնը : Անցեալ շաբթու ալ վարչապետը խորհրդակցած էր Պ. Լէոն Պլումի եւ ուրիշներու հետ :

Վարչապետը Մարսէյլ կ'երթայ այս դիշեր, արմատական հա – մագումարին բացման առթիւ : Ինք եւ արտաքին նախարարը՝ Պ. Ժոռժ Պոնէ, որ նոյնպէս արմատական է, պիտի պաշտպանեն Միւ – նիխի համաձայնութիւնը, ինչպէս եւ Գերմանիոյ, Իտալիոյ եւ Թերեւս ազգայնական Սպանիոյ հետ մերձեցում հաստատելու տե – սակէտը :

Արմատական համագումարին ընթացքէն կախում ունի նաեւ ժողովրդական ճակատին բախտը : Շատ մը դատատական մասնա – ճիւղեր հակառակ են համագործակցութեան :

Հունգարիա նոր պահանջներ կ'առաջարկէ Չեխոսլովաքիոյ

— oo —

Հունգարական կառավարութիւնը հետեւեալ պայմանները ա – ռաջարկեց Չեխոսլովաքիոյ, իբրեւ պատասխան անոր վերջին ծա – նուցագրին .—

1. Հունգարական զօրքը կը գրաւէ անվիճելի հողամասերը, ո – րոշ պայմանաժամի մը մէջ :

2. Հանրաքուէ կը կատարուի վիճելի չրջաններուն մէջ, բացի Պրաթիսլավայէն որու մասին առանձին բանակցութիւններ պիտի կատարուին : Հանրաքուէն պէտք է վերջանայ 1938 նոյեմբեր 30 – ին : Չեխական զօրքը պէտք է այդ չրջաններէն քաշուի նոյեմբեր 1էն առաջ, միջազգային զօրամասի մը յանձնելով զայն :

3. Հունգարիա նոր Չեխոսլովաքիոյ սահմանները կրնայ երաշ – խաւորել միայն այն առեն երբ անոր բազկացուցիչ ազգերը, մաս – նաւորապէս Ռութէնները իրենց ճակատագիրը որոշեն ժողովրդա – կան քուէարկութեամբ :

4. Եթէ Չեխոսլովաքիա չընդունի այս պայմանները, Հուն – գարիա կ'առաջարկէ իրաւարարութիւն կատարել բոլոր վիճելի չրջաններուն մէջ, Իտալիոյ եւ Գերմանիոյ միջոցաւ՝ արեւմտեան մասին համար, եւ Գերմանիոյ եւ Լեհաստանի միջոցաւ՝ արեւել – եան մասին համար :

— oo —

700 ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ մնացած ըլլալով անտէր հողի մը վր – րայ, Գերմանիոյ եւ Չեխոսլովաքիոյ նոր սահմաններուն միջեւ, ա – նօթութենէն մեռնելու դատապարտուած են : Մէկը թենդեցած է տատապանքէն : Երկու երկիրներն ալ չեն ուզեր ներս առնել զա – նոնք :

ՀԱԿԱԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ պայքարը կը տատակնայ Զուիցերիոյ մէջ : Այժմ ալ սկսած են չարժանկարներ ներկայացնել, պարզելով բոլշեւիկեան յեղափոխութեան չարիքները զանազան երկիրներու մէջ :

ՕՐԸ ՕՐԻՆ

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԱՆՑՔԵՐ
ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ

Խորհրդաւոր անցքեր տեղի կ'ունե – նան խորհրդային երկրին մէջ :

« Զտում »ը կը շարունակուի նախ – կին թափով : Մարդիկ կը իշուին ահ – ռորավայրերը՝ տաժանելի, տմարդի վահով մահանալու, կը թխմուին բան – տերու մէջ՝ ողջ դուրս չգալու, կը գի – դակահարուին առանց դատի - դա – տաստանի :

Եւ երկրին բովանդակ մտաւոր ղե – կավարութիւնը կը բնաջնջուի յարա – տեւ, կանխամտածուած ոճրային ծր – րագրով մը :

Դժգոհութեան փոքր արտայայտու – թիւն մը, անշուշտ ծամածռում մը, շլինու կասկած մը բաւական են, որ երէկուան իշխանաւորը կամ ամենա – զօր չեկիստը յանկարծ շնորհազըր – կուին, շղթայի զարնուին կամ գնդա – կի բռնուին :

— Մի՛ մտածեր, կը հրամայէ « Ա – բեւ - Առաջնորդը» :— Մի՛ խօսիր : ե – ր է քեզնէ պիտի բանաս, խօսէդ պէտ է ըլլայ իմ փառաբանութիւնը միայն :

Եւ աշխարհի մէկ վեցերորդը, կաթ – ընկեր մանուկներէն մինչեւ մէկ ոտքը գերեզման հասած ծերուկը, ա – մէնքը, ամէնքը կը փառաբանեն մե՛ծ Սթալինը խլացուցիչ, կեղծաւոր, Աստուած ու պատիւ ուրացող օրհներ – գով մը, որ գարշելի է նոյնիսկ իր ողբերգականութեան մէջ :

Ահա՛ ամիսներէ ի վեր կը լսուի, որ Ծայր· Առաջնորդ Արեւելքի կարմիր բանակներու միահեծան տէրը՝ Պուլխէր շնորհա – գրկուած է կամ քանտարկուած, կամ գնդակահարուած : Ահա՛ նոր եղերա – կատակերգութիւն մը բեմադրելու պատրաստութիւնները կը տեսնեն Մոսկուայի մէջ՝ իբր թէ դատելու ա – ռնուիֆ, որ փրանճիեխորհրդային դա – շինիքին ջատագովներն են : Եւ որովհե – տեւ «Ֆրանսա դաւաճանած է Միւնիխի մէջ» կամ որովհետեւ թերեւս Սթալին կ'որոճայ նակատ փոխել եւ հիթլերա – կան Գերմանիոյ մերձենալու փորձ մը կատարել, ահա՛ բեմը կը յարդարեն նոր սպանդի համար : Նոյնիսկ զրոյց – ներ կան թէ հազարաւորներու արիւնը խմող անկուշտ անյագութիւն Եժովը, իր կարգին, շնորհազրկուած կամ բան – ատարկուած է եւ կամ թոյն առած է անճնազան ըլլալու համար :

Եւ նոր սպանդին զոհերը ճշդուած են արդէն : Շատով պիտի լսենք, որ Զինովիեվ - Թրոխաչեւսքիներու դառն ճակատագրին ենթարկուած են հան – րային կրթութեան նախկին գործա – վար Պուպնով, գործավարներու խոր – հուրդի նախկին փոխ - նախագահ վալերիէն, 1937ի Փարիզի ցուցահան – դէսի խորհրդային տաղաւարի վարիչ Իվան Եւն· : Մարաջախտ Պուլխերի բախտակից են արտաքին գործերու դիւանագետաց պետ Բարկով, Ծայր· Ա – րեւելքի գործերու վարիչ Վայնպէրգ, Լէնինկրատի շրջանի ընդհանուր դա – տախազ չեկիստ Փոզէրն, ներքին գոր – ծավարի օգնականներէն Եուէոլսոֆ, կրթական գործավար Տուրգին եւ ու – րիշներ : Խնայած չեն մինչեւ անգամ նշանաւոր Օթօ Շմիտին, որ կազմա – կերպեց հոչակաւոր ուղեւորութիւ – նը դէպի հիւսիսային բեւեռ :

Խորհրդաւոր ու մութ դէպքերու դասական երկրին մէջ, որ Ռուսաս – տան կը կոչուի, ոճրային անցքեր տե – ղի կ'ունենան : Մահացողներու տան – ջուղներու, բանտերու նկուղներու մէջ կեղեքուողներու ողբ-աղաղակնե – րուն ամէնէն հեռաւոր, նկուն մէկ ար – ձագանգն է որ կը հասնի մեր ականջին : Գնդակներու որոտին մէկ նուաղկուն շշունչն է միայն, որ կը լսուի արտաքին աշխարհին մէջ :

Ի՞նչ կ'անցնի կը դառնայ մե՛ր հայ – րենիքին մէջ, որ այս խորհրդային երկրի խորհրդաւոր «դրախտ»ին մէկ մասնիկն է ···

Երանե՛ն պատասխանել անոնք, որ այս «խորհրդաւոր» դրախտին փառքը կը յանկերգեն ամէն օր···:

Ի՞նչ կը բանին Հայաստանի մէջ···

Ա.ՍԱՏՈՒՐ

ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ ՄԱՐԱՋԱԽՏ ՊԼՈՒԽԵՐԻ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

— oo —

Մոսկուայէն Վարչապետի թերթերուն հաղորդուած հեռագիր մը, որ խորհրդային դրաքննութեան ենթարկուած էր, կը հաստա – տէ թէ մարաջախտ Պլուխէր բանտարկուած է եւ ընդհ· դատախազ Վիշինսկի այժմ զբաղած է դատավարութեան դասաւորումով : Նոյն աղբիւրին համաձայն, ձերբակալուած են նաեւ երեք բարձ – րաստիճան պաշտօնատարներ.— Բարկով, ներքին գործավարու – թեան արարողապետը, Վայնպէրգ, ներքին գործավարութեան ա – րեւմտեան եւրոպայի պաշտօնատան վարիչը եւ Փոզէրն, պետա – կան փաստաբան եւ ազգական Պլուխէրի :

Մարաջախտ Պլուխէր, բուն անունով Կալէն, որուն անհետաց – ման մասին զրոյցներ կը չրջէին չեխական տագնապին սկիզբէն ի վեր, նշանաւոր հանդիպացաւ 1924ին, երբ Զինաստան ղրկուած էր, վերակազմելու համար բանակը : Այնտեղ մնաց երեք տարի եւ հերոսացաւ իր ներկայ անունով : Ցետոյ աւելի փայլեցաւ զինուո – րական ասպարէզին մէջ, զօրացնելով Ծայր· Արեւելքի խորհրդա – յին բանակը եւ ամրութիւնները : Իր արեւը խաւարեցաւ երեք ա – միս առաջ, ճափոնի հետ ծագած սահմանամերձին առթիւ, երբ դէպքերը կը հաստատէին թէ խորհրդային բանակը պիտի չկրնայ ետ մղել ճափոնցիները : Այնուհետեւ բարձր պաշտօնատարներ ղրկուեցան Ծայր· Արեւելք, քննութիւններ կատարելու համար :

**** Զրոյցի մը համաձայն, Զեկային ամենազօր վարիչը՝ Ե – ժով եւս բանտարկուած է· բայց վաւերական տեղեկութիւններ կը պակսին այս մասին : Նոյն աղբիւրին համաձայն, իր հաւանական յաջորդներն են Մալենքով, Սթալինի դիւանապետը, Միկոյեան, Եժովի երդուեալ թշնամին, Բերիա, Կովկասի երբեմնի փոխար – քան, եւ կամ Եուկովսքի :*

Ամէն պարագայի մէջ, ատոյգ է որ մաքրագործումները կը չա – րունակուին եւ նոր դատավարութիւններ պիտի սարքուին մօ – տերս :

Կազութիւնը Երուսաղէմի մէջ

— oo —

Կիրակի օր զինուորական իշխանութիւնը չորս ժամուան հա – մար վերցուց Երուսաղէմի հին քաղաքամասին պաշարումը, եւ բնակիչները նոր քաղաքը թափեցան Դամասկոսի եւ Եափայի դուռներէն : Այս առթիւ սրտառուչ տեսարաններ պարզուեցան, երբ իրարու հանդիպեցան ազգականներ որոնք չէին տեսնուած մէկ չաբաթէ ի վեր : Կառավարութիւնը 10000 հաց բաժնեց Կ. Ժաչի մի – ջոցաւ : Քրիստոնեայ - իսլամ արաբական կոմիտէն ալ ուսուիք

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. Էջ)

ՀԱՅՐԻԿ ՍԱՐՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՏԳԱՄԸ

Նկար. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ

Ֆիրսովին սիրելի էր Հայրենիքի պատգամը։ Ինչպես ամեն անգամ, երբ նա հանդիպում էր ինչ-որ նոր բանի, ինչ-որ նոր գաղափարի, նա ուզում էր ամեն ինչ իմանալ, ամեն ինչ հասկանալ։ Ֆիրսովին ոչ միայն ուզում էր, այլև կարող էր։ Նա ունակ էր ամեն ինչ հասկանալ, ամեն ինչ ընկալել։ Ֆիրսովի ուղեղը ինչ-որ առանձնահատուկ կազմություն ուներ։ Նա ամեն ինչ հասկանում էր, ամեն ինչ ընկալում էր, ամեն ինչ ներթափանցում էր։ Ֆիրսովի ուղեղը ինչ-որ հատուկ ընդունակություն ուներ։ Նա ամեն ինչ ընդունում էր, ամեն ինչ ներծծում էր։ Ֆիրսովի ուղեղը ինչ-որ հատուկ կարողություն ուներ։ Նա ամեն ինչ ներգաղթում էր, ամեն ինչ ներհոսում էր։ Ֆիրսովի ուղեղը ինչ-որ հատուկ ներհոսություն ուներ։ Նա ամեն ինչ ներհոսում էր, ամեն ինչ ներգաղթում էր։ Ֆիրսովի ուղեղը ինչ-որ հատուկ ներգաղթություն ուներ։ Նա ամեն ինչ ներծծում էր, ամեն ինչ ներթափանցում էր։ Ֆիրսովի ուղեղը ինչ-որ հատուկ ներթափանցություն ուներ։ Նա ամեն ինչ ընդունում էր, ամեն ինչ ընկալում էր։ Ֆիրսովի ուղեղը ինչ-որ հատուկ ընկալություն ուներ։ Նա ամեն ինչ հասկանում էր, ամեն ինչ ընդունում էր։ Ֆիրսովի ուղեղը ինչ-որ հատուկ ընդունություն ուներ։ Նա ամեն ինչ հասկանում էր, ամեն ինչ ընդունում էր։ Ֆիրսովի ուղեղը ինչ-որ հատուկ հասկան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Հայկական հարցը (Թուրքերէն տեսակէտէ) իր ներկայ ձեւով ծնունդ առաւ 1878ի Սան Սթեֆանոյի դաշնագրութենէն ետք։ Ան ինքնին ծնունդ մըն էր Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ տեղի ունեցած պատերազմին։ Ռուսիա, որ Թուրքիոյ դէմ կռուելու համար Հայաստանի ամբողջ ուժերը կազմակերպած էր, ստիպուած էր զանոնք ետ կանչել, երբ Պեռլինի դաշնագրութեան ժամանակ Անգլիա եւ Աւստրօ-Հունգարիա ընդդիմացան Ռուսիոյ՝ Հայաստանի մէջ ինքնավարութիւն մը հաստատելու գաղափարին։ Ռուսիա ստիպուեցաւ ետ քաշուիլ, եւ Հայաստան մնաց Թուրքիոյ տիրապետութեան տակ։

Հայկական հարցը ծնունդ առաւ Պեռլինի դաշնագրութեան 61րդ յօդուածով։ Ան կը պարտաւորեցնէ Թուրքիան՝ Հայաստանի մէջ անհրաժեշտ բարենորոգումներ կատարելու։ Այդ յօդուածը կը յանձնարարէ նաեւ Եւրոպական պետութիւններուն՝ հսկել այդ բարենորոգումներուն կատարման։

Հայկական հարցը ծնունդ առաւ Պեռլինի դաշնագրութեան 61րդ յօդուածով։ Ան կը պարտաւորեցնէ Թուրքիան՝ Հայաստանի մէջ անհրաժեշտ բարենորոգումներ կատարելու։ Այդ յօդուածը կը յանձնարարէ նաեւ Եւրոպական պետութիւններուն՝ հսկել այդ բարենորոգումներուն կատարման։

Հայկական հարցը ծնունդ առաւ Պեռլինի դաշնագրութեան 61րդ յօդուածով։ Ան կը պարտաւորեցնէ Թուրքիան՝ Հայաստանի մէջ անհրաժեշտ բարենորոգումներ կատարելու։ Այդ յօդուածը կը յանձնարարէ նաեւ Եւրոպական պետութիւններուն՝ հսկել այդ բարենորոգումներուն կատարման։

Հայկական հարցը ծնունդ առաւ Պեռլինի դաշնագրութեան 61րդ յօդուածով։ Ան կը պարտաւորեցնէ Թուրքիան՝ Հայաստանի մէջ անհրաժեշտ բարենորոգումներ կատարելու։ Այդ յօդուածը կը յանձնարարէ նաեւ Եւրոպական պետութիւններուն՝ հսկել այդ բարենորոգումներուն կատարման։

Հայկական հարցը ծնունդ առաւ Պեռլինի դաշնագրութեան 61րդ յօդուածով։ Ան կը պարտաւորեցնէ Թուրքիան՝ Հայաստանի մէջ անհրաժեշտ բարենորոգումներ կատարելու։ Այդ յօդուածը կը յանձնարարէ նաեւ Եւրոպական պետութիւններուն՝ հսկել այդ բարենորոգումներուն կատարման։

բաժնեց երեք տարբեր կեդրոններէ: Բոլոր խանութները բացուեցան, եւ անդլիացի զինուորները նորոգեցին հեռագրական եւ ելեկտրական գիծերը:

Քաղաքին պաշարման առեն, անգլիացի զինուորները խուզարկած են բոլոր տուները, զատ զատ զբոսնելով իւրաքանչիւրը: Եթէ պատասխան չտրուէր քանի մը վայրկեանէն, դուռը խորտակելով ներս կը մանէին եւ կը խուզարկէին: Գործողութենէն վեր կ

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 76
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

	ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԱՄՍԵԱՑ	ԵՒԱՄՍԵԱՑ	
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՀԻՆԳՇԱԲԹԻ
27
ՀՈԿՏԵՄԲԵՐ
JEUDI
27 Octobre
1938

ԺԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3871

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՂՍՏՈՍՏՈՒՆ ԻՒ ՅԱՐԱՓՈՓԽ

— oo —

Զարմացուցիչ ոստումներ կ'ընէ քեմալական Թուրքիան: Աւե-լի քան տարի մը առաջ, անկիւնադարձ մը փորձեց,— հեռացաւ Ֆա-միւթենէն ու հակեցաւ դէպի Անգլիան: Անկէ վերջ, դէպքերը աչնպէս մը դասաւորուեցան, որ Աթաթիւրքի երկիրը օր օրի խրե-ցաւ Մեծն Բրիտանիոյ գիրկը: Գործարանի չինուածին, ծովային կայան, վարկ: Նոյնիսկ, անգլեւթուրքական բախտումի մը հաւանա-կանութեան օրերուն, «Միջերկրականեան դաշինք» ու պատրաս-տամուխ՝ւնը էնկիւրիւ··· «Անգլիան պաշտպանելու՝ ընդդէմ Իտալիոյ» («Ճիւմհուրիյէթ»): Յամոռանանք նաեւ Մոնթրէօն, որ սկիզբը կազմեց անգլեւթուրք սիրաբանութեան:

Այս մեղրալուսինը երկար չտեւեց, սակայն: Ընդհակառակն: Զարմացուցիչ արագութեամբ մը, Թուրքիա իր թեւերը բացաւ Գերմանիոյ: Եւ, Անգլիոյ նման, հիմա «Մեծագոյն Գերմանիան»է որ գործարան, զէնք, նաւահանգիստ կամ վարկ կ'ապահովէ Թուրքիոյ:

Ի՞նչ է այս իրարայաջորդ «բարեկամութիւններուն» խմաս-ը: Եւ ինչո՞ւ Թուրքիան այս աստիճան պատրաստակամ է զար-ձած, մէկ օրէն միւսը, դէպի երկարող բազուկները:

Անհիմն ու, հետեւապէս, սխալ կ'ըլլար, անշուշտ, ըսել թէ բացառապէս տնտեսական համաձայնութիւններ են այդ բոլորը: Մանաւանդ հիմա՝ եր «մեծերու» պայքարը այնքան սուր ու նոյն-քան վճռական բնոյթ է առացած: Ու մանաւանդ աչխարհի այն մա-սին վրայ, ուր Թուրքիա իր խարիսխն է հաստատած, եւ ուր ան — խուսափելի կերպով իրարու կը բախին նոյն այդ պայքարին երկու կամ առաւել կողմերը:

Յորհրդային Ռուսաստան աւելի քան տասնեւհինգ տարի «տնտեսապէս» օգնեց Թուրքիոյ: Տուաւ զէնք, դրամ, ռազմա — նիւթ ու գործիքներ: Շինեց գործարաններ, ու տրամադրեց ինչ որ անհրաժեչտ էր՝ երկաթուղիի ցանցը լրացնելու համար: Բայց, քանի այդ օժանդակութիւնը չարունակուեցաւ, այնքան տիրական եղաւ, բաղաքական հարցերու մասին, խորհրդային դեսպանին ձայնը՝ էնկիւրիւի մէջ:

Անգլիական օժանդակութիւնը, միչտ տնտեսական գետնի վը-րայ, խորհրդային դեսպանին հեղինակութիւնը փոխանցեց անգ-լիական դեսպանին:

Կերպերը նոյնն էին,— դրամ, մասնագէտ ու զէնք կամ կազ-մած: Նոյնն էր դիրքը կամ աթոռը՝ օտար խորհրդականին՝ Թուր-քիոյ վարչապետին քով: Բայց նոյնն էր նաեւ նպատակը,— փո-խան այդ օժանդակութեան՝ քաղաքական գետնի վրայ ենթարկու-մը Թուրքիոյ: Ու փոխուած էր միայն այդ խորհրդականին ազգ-պատկանելիութիւնը — Ռուսին տեղ անգլիացին — հիմնովին փո-խելով Թուրքիոյ արտաքին բաղաքականութեան ուղղութիւնը: Թերեւս ճիշդ չըլլայ ըսել թէ այդ փոփոխութիւնը վերադարձ մըն էր Արեւելքէն դէպի Արեւմուտք: Վասն զի, նախ, Թուրքիա, իր աչխարհագրական դիրքին բերումով, ոչ բացառապէս «արեւելեան քաղաքականութիւն» կրնայ տանիլ, ոչ ալ բացառապէս «արեւմ-եան քաղաքականութիւն»:

Իթթիհատ - Թէրաքքիի օրով, ու նոյնիսկ «Ժէօն Թուրքերու» նախաշրջանին, Թուրքիա իր գլուխը ի զուր զարկաւ «արեւելեան» ու «արեւմտեան» կոչուած պատերուն, նոյնքան զուր կերպով փոր-ձելով նախընտրութիւն մը այդ երկուքին միջեւ: Դէպքերը եկան ճելով նախընտրութիւն մը այդ երկուքին միջեւ: Դէպքերը եկան հաստատելու թէ ան ստիպուած էր ճակատիլ թէ՛ մէկին եւ թէ՛ միւսին դէմ: Նախընտրութեան նոյն փորձը խռովեց, սկիզբի օրե-րուն «մէլլի» չարժման պետերը, երբ Մուսթաֆա Քե - մալ դեռ նախագահն էր Ազգ· Մեծ Ժողովին, յունական բանակը կը սպառնար էնկիւրիւի, եւ Պէքիր Սամի ու Եոնուս Նատի Լոնտո - նէն կը վերադառնային հաչտութեան համար իրենց կատարած դի-մումին անյաջող ելքէն յուսահատ: Այդ օրերուն եւս, Ազգ· Մեծ Ժողովին մէջ ձայներ ու բռունցքներ կը բարձրանային իրարու դէմ: Ու Եոնուս Նատի «եէնի կիւն»ի իր մէկ խմբագրականը կը խորագրէը հետեւեալ ձեւով,— «Արեւելքի հետ եւ Արեւմուտքի դէմ»···: Ուրիչներ ճիշդ հակառակը կ'ըսէին:

Երկու ճակատներու այս հարկադրանքէն անջատ, որ, ինչպէս ըսինք, առանձնապէս Թուրքիոյ յատուկ, է, «բարեկամական օ - ժանդակութիւնները» իրենց տուրքը կը պայմանաւորէին — Թուրքիոյ մէջ, Թուրքիոյ չուրջ ու Թուրքիոյ միջոցաւ տարուող պայքարին համար — նոյն Թուրքիոյ կողմէ ընդդրկուելիք քաղա-քական որոշ ուղղութեամբ մը:

Ա. Միութիւնը պարտադրեց ճակատիլ Արեւմուտքի դէմ: Անգլիա, ընդհակառակն, էնկիւրիւն ուզեց ապահովել Արեւմուտ - քէն, ու անոր դէմքը փորձեց դարձնել Արեւելք՝ ռուսական ձգտում-մին դէմ:

Հիմա՞: Ահա գերմանական «տնտեսական օժանդակութիւնը»: Ի՞նչ բանի կը ձգտի ան: Քսանամեակ մը առաջ միեւնոյն Գեր-մանիան տուած է այս հարցումին պատասխանը, — յստակ ու ո - րոշ:

Բայց, ինչ որ մեզ կը չահագրգռէը, այսօր, պատասխանն էր այն հարցումին թէ իրապէս ինչո՛ւ Թուրքիան այսքան չատ ու այս-քան չուտ « բարեկամներ » կը փոխէ ···

Ուրեմն, նախ փնտռենք պատասխանը այս հարցումին:

Վ. ԻՇԽԱՆԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԱՆԳԼԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՃԱՌԸ

— oo —

Սպառազինութիւն եւ Զին.պարտադիր ծառայութիւն

— oo —

Մեծն Բրիտանիա կը քաւնայ հովանոցը, որպէսզի անձրեւ չտեղայ..

— oo —

Եւրոպական վերջին տագնապէն ի վեր՝ առաջին անգամն էր, որ լորտ Հալիֆէքս, արտաքին նախարար Անգլիոյ, ճառ մը խօսե-ցաւ Երկուչաբթի երեկոյ, էտինպուրկի մէջ, սկովտական ընկե - րակցութեան մը անդամներուն առջեւ, եւ երկրորդ ճառ մը՝ երէկ գիչեր, ձայնափիւռին առջեւ, յատկապէս ամերիկեան ժողովուր-դին ուղղեալ, ճիշդ ինչպէս Զըրչիլ իր խօսքը կ'ուղղէր Ամերի - կայի, 16 հոկտեմբերին:

Իր առաջին ճառով, լորտ Հալիֆէքս կը մատնէր կառավարու-թեան մտահոգութիւնը հանդէպ միջազգային ներկայ կացու - թեան, որ երկրին կը պարտադրէ կատարել նոր եւ աւելի մեծ զո-հողութիւններ, մասնաւորաբար ուժգին թափ մը տալ սպառազի - նութեան եւ պարտադիր հռչակել զինուորական ծառայութիւնը, բան մը որ աննախընթաց է Անգլիոյ պատմութեան մէջ, բայց կան— հրաժեչտ՝ որպէսզի բրիտանական զէնքը համապատասխանէ իր միջազգային դիրքին կարեւորութեան:

Եւրոպական վերջին տագնապին ծագումը, ըսաւ, պէտք է փնտռել այն հարցին մէջ որ հին է քանի մը դար, բայց երէկ կը ստանար սուր հանգամանք մը իբրեւ հետեւանք ցեղային ազդակ - ներուն, որոնց ուժ կուտայ փելլիսոփայութիւն մը, որ ներչնչար-նէն է գերմանական կառավարութեան: Այդ հարցը կը ներկայա - նար երկու երեսներով,— նախ միատարը ժողովուրդ մը կը պահան-ջէը իր քաղաքական ճակատագիրը տնօրինել այնպէս ինչպէս ինք կ'ուզէր: Բրիտանական կառավարութեան համար, որ այդ սկզբ - բունքը պաչտպանած է ամէն երկրի մէջ, դժուար էր մերժել ար-տայայտած այդ պահանջը: Երկրորդ, հարցին լուծումը կը վոր-ձուէր կատարել ուժերու արտակարգ պոռթկումով մը, որ չէր հա-մապատասխաներ անգլիական հաչտարար ոգիին, զոր մենք կը համարինք խարիսխը միջազգային յարաբերութեանց:

ՉԵԽԵՒՍԼՈՎԱՔԻԱ ՓՐԿՈՒԵՑԱՒ ԲՆԱՋՆՋՈՒՄ�է

Ուստի հարցը կը դրուի այսպէս,— խղճի դէմ չէ՞ր թոյլ տալ որ Եւրոպան, եւ իր եռեւէն ամբողջ աչխարհը, նետուի պատերազ-մի մը մէջ, ուժը ուժին դէմ ճակատեցնելով, փոխանակ արդիւք հանդիսանալու, ամէն զոհողութիւն եւ ազդեցութիւն ի գործ դնե-լով, որ վէճերը կարգադրուին խաղաղութեան սեղանի մը վրայ: Աւելորդ է քննել հոս թէ Չեխեսլովաքիոյ կրած անարդարութիւնը կարելի չէ՞ր խնայել իրեն՝ եթէ իր վարիչները նախապէս հետա - պնդէին աւելի հեռատես քաղաքականութիւն մը: Հարցը այն է որ Չեխեսլովաքիան փրկուեցաւ մեծ ազէտէ մը,— բնաչնջումէն: Բայց կը հարցնեմ անոնց որ մեզ կը քննադատեն մեր դիրքին հա - մար, իրենց համակրանքը արտայայտելով հանդէպ Չեխեսլովա-քիոյ.— Ի՞նչ ուրիչ լուծում կար: Ոչ ոք կրնայ ուրանալ թէ ի՛նչ պատերազմ ալ ըլլար, ի՛նչքան ալ իրենց ճիգերը միացնէին Անգ - լիա, Ֆրանսա եւ Ռուսիա՝ իրենց եռեւէն քաչելով ուրիչ ազգեր, կարելի չէր Չեխեսլովաքիան փրկել այն սարսափելի կործանու - մէն, որմէ ազատեցաւ մեծ զոհողութիւններ կատարելով: Աւե - լորդ է ըսել թէ Չեխեսլովաքիոյ հետ՝ աչխարհի կէսն ալ ազատե— ցաւ պատերազմի մը արհաւիրքէն:

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԴԷՄ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Զկայ ժողովուրդ մը որ պատերազմ ուզէ: Ոչ Անգլիա, ոչ ալ Ֆրանսա, նոյնպէս ոչ Գերմանիա, ոչ ալ Իտալիա, ինչպէս ցոյց տուին ժողովրդային պոռթկումները՝ երբ խմացուեցաւ թէ վէճը լուծուեցաւ խաղաղ զոհողութիւններով: Չէյմպըլէնի հանդէպ համակրանքի ցոյցերու պատճառը: — « Ես չեմ մայր մըն եմ, չնորհակալ եմ Անգլիոյ վարչապետին որ ինծի վերադարձուց երեք զաւակներս, պատերազմը պիտի զրկէր զիս զաւակներէս »:

Լորտ Հալիֆէքս յետոյ անդրադարձաւ անգլեւգերմանական այն յայտարարութեան, զոր ստորագրած են Հիթլէր եւ Չէյմպը - լէն, եւ ըսաւ թէ ոմանք կը թերագնահատեն անոր արժէքը, բայց այդ յայտարարութիւնը կը կենդանացնէ ոգի մը իրար մօտեցնելու երկու ազգեր: Կ'ուզեմ աւելցնել որ, երբ անգլիական եւ գերմանա-կան ազգերը յանգին իրական համաձայնութեան մը, համոզուած եմ որ ատիկա պիտի ըլլայ ամէնէն զօրաւոր ապահովութիւնը ընդ-դէմ այն սարսափելի վտանգներուն, որոնց օրինակը տեսաւ աչ - խարհ:

ՎԵՐՍԱՑԼԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՄԷԿ ԿՈՂՄ ՆԵՏՈՒԱԾ

Այս միջոցիս Եւրոպայի սրտին վրայ կը կատարուին սահմա - նային սրբագրութիւններ ըստ ցեղային բաչխումի,— կը յուսամ որ գործելու այս ընթացքը նպաստէ խաղաղութեան ամրապնդումին: Այսօր ականատես կ'ըլլանք Վերսայլի դաչնագրին վերաքննու - թեան: Ազգաժողովի դաչինքին մէջ դոյութիւն ունի յօդուած մը որ կ'ընդունէր ազգերու ինքնորոչման սկզբունքը, բայց ոչ ոք կը համարձակէը գործադրել զայն: Այսօրուան գործադրուածը, սա-կայն, չի կրնար կատարեալ ըլլալ, չկայ կատարեալ լուծում նման հարցերու մէջ, միչտ ժողովուրդի մասնիկ մը պիտի իյնայ ուրիչ

(Ուրիշրու շարունակութիւնը կարդաք Դ· էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԴԱՍ ՄԸ ՄԵԾԵՐՈՒԻՆ

Փոքր ազգ մը աչխարհը հիացուց իր կեցուածքով:

Չեխը: Հազիւ էսան տարուան պե-տական անկախ կեանք մը: Եւ երբ ա-ղէտը հասաւ, ան չկորսնցուց իր գլ - խովը, տէր եղաւ իր չիղերուն, պա - հեց իր հոգեկան հաւասարակչռութի-ւնը՝ անսպասելի, անհաւատալի, գի - տակցուած բարձր կարգապահու - թեամբ մը, որ չի կրնար յարգանք չներչնչել բոլորին:

Արդէն չէիս երկիրը անդամատուած է երեք կողմերէ: Հզօրները, սպառնա-կան բռունցք շարժողները առած են ի-րենց բաժինները: Եւ ինչը մնացած է դարձեալ իր գլխուն տէր, իր ճակա - տագրին տէր, արժանի իր դրացիին - րուն յարգանքին:

Աւելի էան երեքուկէս միլիոն ժո - ղովուրդ փրցուած է իր մարմնէն ա - ւելի էան **110.000** քառ· քիլոմեթր հո - ղամասով միասին:

Չեխը գիտցաւ պարպել օրը օրին, վայրկեանը վայրկեանին այդ շրջան - ները եւ յանձնել իրենց նոր տէրերուն, տպշեցուցիչ կարգապահութեամբ մը: Հարիւր հազարաւոր փախստականներ տեղաւորուած են նոր վայրերու մէջ, առանց ցնցումի ու թշուառութեան, աւօթութեան, սովի կամ էաղաքա - ցիական կռիւի տեսարաններու: Պե - տական դեկավարութիւնը եւ մանա - ւանդ բանակը, խորունկ փոփոխու - թիւններէ անցնելով հանդերձ, մնա - ցած են անեղծ ու կարգապահ: Ո՛չ նիւթական ոչ բարոյական խուճապ:

Եւ փոքր չեխ ժողովուրդը, այսքան դաւաճանօրէն լքուելէ, այսքան վրան - բաց կերպով յօշոտուելէ ետք, գիտ - ցաւ տագնապէն դուրս գալ հպարտ, բաղաքակիրթ մարդու հոգեկան կորո-վը բարձր բռնած, ազգին ու հայրենի-բին պատուին բարձրօրէն պաժանի:

Ազգերը երբեմ մեծ չեն միմիայն ի - րենց բիրտ ուժով կամ նիւթական ան-սահման կարողութիւններով: Ազգերը մեծ են իրենց ոգիով եւ աղէտին առեն երեւան բերած ներբին, ցեղային այն ներզօր կենսունակութեամբ, որ կը յաւերժացնէ, անմեռ ու անմահ կը դարձնէ զիրենք:

Չեխը հաստատեց որ արժանի է ոչ մրայն փառաւոր անցեալի մը, այլեւ աւելի փառահեղ ապագայի մը: Ոչ ճիչ, ոչ լաց, ոչ կոծ, այլ հպարտ տխ-լութիւն, ինքնավստահութենէ ցայ, զուսպ ու ապրուած տառապանք: Յաւին մէջ ի-ելիը չկորսնցուց, ազգային սուգին մէջ անպատիւ չեղաւ· գիտցաւ ըլլալ ւարի ու համբերատար: Չեխը հոգիով մեծ եղաւ:

Եւ այս հոգեկան անուրանալի կորո-վը, երբ անդին մեծերը, հզօրները, դաշնակիցները ամէն էար դարձուցին, ամէն թուի պրպտեցին, ամէն ծուղակ աչէէ անցուցին, որ կերպ մը գտնեն խուսաւիելու տառապգրուած չանձնա - ռութիւններէն:

Չեխական տագնապին ատեն աչ - խարհ հոգեկան փոքրութիւն միայն ցուցադրեց: Մեծերը փոքր եղան: Խաղաղութիւն աղաղակելով Պեղա - տոսի նման իրենց ձեռքերը լուացին իսչեալին առջեւ: Միակ՝ մեծը, ան - մահը, արժանաւորը եղաւ իմքը՝ խաչ-եալ Չեխը:

Ան ցոյց տուաւ, թէ ինչպէ՛ս ժողո-վուրդ մը կրնայ իր սուգին, իր ազ - գային տառապանքին մէջ ըլլալ վսեմ, ազի ու պատուաւոր:

ԱՍԱՏՈՒՐ

ԱԶԳԱՅԻՆ Ի ՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԶԻՆԱԴԱՐԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆՑ ԱՌԹԻՒ

— oo —

Նախկին Ռազմիկներու եւ Թոչակներու նախարարութիւնը մասնաւոր յանձնաժողով մը կազմած է, զինադադարի 20րդ տա - րեդարձի տօնակատարութեան համար (11 Նոյեմբեր): Այս առթիւ «Յառաջ»ի հաղորդուած պաշտօնական զեկոյց մը կը ծանուցանէ թէ ազգային հանգանակութիւն մը բացուած է, հովանաւորու - թեամբ հանրապետութեան նախագահին: Տօնակատարութեան պիտի մասնակցին կարեւոր պատուիրակութիւններ՝ զաղթավայ - րերէն եւ հովանաւորեալ երկիրներէն: Ցիշատակարաններ պիտի չինուին ռազմաճակատի զերեզմանատուններուն մէջ, յիչատակի բոց մը ընդունելու համար: Նոյեմբեր 12ին երիտասարդներ կո - չուեր բոնած՝ պիտի մեկնին յաղթական կամարէն, զերեզմաններուց - ները երթալու եւ այդ բոցը վառելու համար:

Մեր ընթերցողներուն լուրջ ուչադրութեան յանձնելով կառա-վարութեան այս նախաձեռնութիւնը, հանգանակութեան ցանկ մըն ալ «Յառաջ»ի մէջ կը բանանք, իրրեւ բարոյական պարտակա-նութիւն:

Ղրկուած դրամարկղերը արձանագրելով թերթին մէջ, պիտի փոխադրենք Նախկին Ռազմիկներու եւ Պատերազմի Զոհերու ազգ· Համագործակցութեան:

« Յառաջ »ի խմբագրութիւնը կը տրամադրէ 100 ֆրանք:

Թրխկան հերգարդը կը դադրի

— oo —

Պոլսոյ թերթերը կը գրեն·—

Ռումանիոյ եւ Պուլկարիոյ ու Թրք· կառավարութեան միջեւ, դաղթականներու վերաբերեալ հարցերու մանրամասնութեանց չուրջ կարգ մը տարակարծութիւններ ծագած ըլլալով, առայժմ վերջ տրուած էայս երկիրներէն կատարուող ներգաղթին: Միայն թէ, «Վաթան» չոգենաւը անգամ մը եւս Գոնսթանցա երթալով, իրենց գիւղերէն ճամբայ ելած մօտ 1700 դաղթականները պիտի բերէ եւ այսպէս այս տարի ուրիչ նոր դաղթական պիտի չփոխա - դրուի մայր երկիր:

Ըստ ծրագրի, այս տարի յիչեալ երկու երկիրներէն մօտ 25 հազար դաղթական պիտի դար: Մինչեւ հիմա Ռումանիայէն 6000, իսկ Պուլկարիայէն ալ 5500 դաղթական բերուեցաւ որոնք Մարմա-րայի էրէյլին ցամաք հանուելով, Թրակիոյ մէջ իրենց համար ճշդուած վայրերը տեղաւորուեցան: Այս կերպով, յառաջիկայ գարնան կը մնայ մնացեալ 13,000է աւելի դաղթականներու փոխա-դրութիւնը:

Միւս կողմէ, Եուկոսլաւիոյ հետ ալ դաղթականական գործի մասին համաձայնութիւն դոյացած է եւ յառաջիկայ գարնան մօտ 4000 դաղթականներ պիտի դան մայր երկիր:

— oo —

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՊԱՏԱԿՈՒԹԵՆԷ զրկուեցան 57 քաղաքացի - ներ, մեծ մասով Հրեայ: Իրենց գոյքերն ալ գրաւուեցան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԽՈՒՍ

Հրատարակվում է Բոստոնում

— Ընկեր Մելիք, ասեցի ես, ուրեմն ես ու ջհնդիկ Մելիքիս տնից Ղարսի Ազատության հրապարակ եկանք, ինչպես որ ասել էր մեր ընկերը, ու ինչպես որ ես ձեզ ասացի, նրան ամեն տեղ ծանոթ էին, ամեն տեղ ընդունելի էր, ամեն տեղ ազատ էր մտնում ու դուրս գալիս։ Ես ու Մելիքը ամեն տեղ նրա հետևից էինք գնում, ինչպես որ ստվերը մարդու հետևից է գնում։ Ամեն տեղ նրան ասում էին, որ ինքը Ղարսի ամենահարուստ մարդն է, ամենամեծ վաճառականը։ Ամեն տեղ նրան հարգանքով էին ընդուն

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆ Է

Ամեն կերպ ջանում էին ինձ ստիպել, որ ես ինքս գնամ ու ներողություն խնդրեմ, ասեմ, որ ես ինքս եմ մեղավոր, որ ես ինքս եմ ամեն ինչ խառնել, ես նրանց ոչինչ չեմ ասել, ոչ մի խոսք չեմ ասել, ոչ մի խոսք չեմ ասել, ոչ մի խոսք

երկրի մը մէջ, միշտ փոքրամասնութիւններ պիտի ըլլան սահմանին այս կամ այն կողմը, բայց երբ դոյութիւն ունի վէճերը խաղաղօրէն լուծելու տրամադրութիւն մը, փոքրամասնութիւնները ամէն համակրանք պիտի գտնեն որ անարդարութիւնը լուծուի մեծագոյն չափով :

ԱՆԳԼԻԱ ՊԻՏԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԻ

Բոլոր այս մտահոգութիւններուն մէջ, Անգլիա կը խորհի մէկ բան, --- որպէսզի կարենայ խաղաղութիւնը պահպանել, պէտք է որ խօսի հաւասար ուժերով, իր սպառազինութիւնը յառաջ տանելով այնքան որքան յառաջ կը տանին ուրիշները : Ահա թէ ինչո՛ւ շարք մը կարեւոր որոշումներ տուինք աւելցնելու համար մեր երկրին ուժը : Ոչ մէկ պատճառ ունինք յարձակումէ մը վախնալու , բայց մենք աշխարհի վրայ ամէն կողմ պարտաւորութիւններ ունինք, զորս կ'ուզենք պաշտպանել :

Ցետոյ լորտ Հըլիֆէքս դէմ արտայայտուեցաւ «ճակատագրապաշտութեան աւետարանին», բան թէ զօրաւոր աղդեցութիւններ կը գործեն ի նպաստ խաղաղութեան, --- նախ սպառազինութիւնները, համաձայն հին առածին որ կ'ըսէ · «երբ ձեռքիդ մէջ պատրաստ կը պահես հովանոցդ, անձրեւ չի տեղար » : Եւ յետոյ այն թէ ամէն երկրի մէջ ուժեր կան, որոնք կը ստիպեն գործելէ առաջ մտածել երկու անգամ, ի՛նչքան ալ պատրաստուած ըլլայ այն որ կ'ուզէ խախտել ներկայ հաւասարակշռութիւնը :

Այժմ երեք ճամբաներ կան մեր առջեւ. Ա.--- Պատերազմի ճամբան : Բ. Զինեալ խաղաղութեան ճամբան : Գ. Հաչտ ընթանալու խաղաղութեան ճամբան : Կը նախընտրենք վերջին ճամբան , բայց քանի հարկաւորուած ենք, Տանթէին պէս որ Քաւարանէն անցաւ մտնելու համար Արքայութիւն, պիտի անցնինք զինեալ խաղաղութեան ճամբէն, մտնելու համար իրական խաղաղութեան մէջ :

Այդ ճամբուն մէջ չենք ուզեր լքել հին բարեկամները եւ գըտնել նոր բարեկամներ, բայց որոշած ենք ամէն կարելի ճիգ փորձել բարելաւելու համար մեր յարաբերութիւնները ամէն անոնց հետ , որոնք կ'ուզեն հաստատել ընդհանուր համաձայնութիւն մը :

Ֆոն Ռիպպընթրոփի Հռոմի մէջ

— oo —

Գերմանիոյ արտաքին նախարարը , Ֆոն Ռիպպընթրոփ, Հռոմ հասաւ երէկ :

Այս այցելութիւնը զանազան ձեւով կը մեկնեն Հռոմի եւ Փարիզի թերթերը : Կ'ըսուի թէ Գերմանիոյ եւ Իտալիոյ երկու արտաքին նախարարները անհրաժեշտ տեսան խորհրդակցութիւն մը կատարել հունգարեւ-չեխական վէճին մասին, իբրեւ իրաւարար : Ուրիշներ դիտել կուտան թէ Ֆոն Ռիպպընթրոփ կ'ուզէ ամրապնդել համաձայնութիւնը որ գոյութիւն ունի Գերմանիոյ, Իտալիոյ եւ Ճափոնի միջեւ, այդ համաձայնութիւնը --- որուն հեղինակն է Ֆոն Ռիպպընթրոփ --- աւելի եւս ընդլայնելով եւ հասցնելով փոխադարձ օգնութեան դաշինքի մը արժէքին, իրրեւ պատասխան այն դանգուածային սպառազինութեան, որու լծուած են Ֆրանսա, Անգլիա եւ Ամերիկա, ուղելով դերակշռութիւն մը ապահովել Պերլին-Հռոմ - Թոքիօ եռանկիւնին վրայ :

Կ'ըսուի նոյնպէս որ Ֆոն Ռիպպընթրոփ պիտի տեսակցի Մուսոլինիի հետ : Ինչ նկատի ալ չունենայ այս տեսակցութեանց ընթացքին, կ'ենթադրուի որ Իտալիա պիտի չուզէ Անգլիոյ անհաճոյ դիրք մը բռնել, մանաւանդ որ լորտ Հըլիֆէքսի ճառը նպաստաւոր ընդունելութիւն գտաւ Հռոմի մէջ :

Իտալական թերթերը կը հետեւցնեն խմխմպուրկի ճառէն թէ Անգլիա կ'ընդունի որ

1· Ճակատագրուած էր Վերսայլի դաշնագրին վերաքննութիւնը :

2· Աղգերու Դաշնակցութիւնը անկարող էր կատարելու այդ վերաքննութիւնը :

3· Վտանգաւոր է իրարու հակադրել միահեծան եւ ժողովրդավար պետութեանց սկզբունքները :

4· Անհրաժեշտ էգործակցութիւն մը ստեղծել եւրոպական մեծ պետութեանց միջեւ , առանց հետաքրքրուելու անոնց ներքին քաղաքականութեան մասին :

5· Միւնիխ դրաւ նոր եւրոպայի մը չէնքին հիմերը :

6· Օրինական են հունգարական պահանջները :

Այսուհանդերձ, կ'ըսեն Հռոմի թերթերը՝ տեսակ մը կասկածով, խաղաղասէր Չէմպըրլէնի կատարած սպառազինութիւնները կրնան օգտուիլ վաղը ուրիշ քաղաքագէտներ, երբ իշխանութեան գլուխ գան : Ահա թէ ինչու Իտալիա ամուր կառչած է հիւսիսի իր հարեւանին :

Ճափոնական զօրքը Հանկեու մտաւ

— oo —

Թոքիոյէն կը հետագրեն թէ երեքշաբթի առաւօտ ճափոնական բանակը մտաւ Հանքէու : Քաղաքին հիւսիսային թեւը բոցերու մէջ էր :

Այս առթիւ Ճափոնի մայրաքաղաքը խրախճանքներ կատարեց : Լուրը տրուեցաւ ահազանգի սուլիչներով, որոնք սուլեցին մէկ վայրկեան : Դրօշներու եւ լապտերներու վաճառատուները բոլորովին սպառած էին ժամերով : Վիթխարի թափօր մը կազմուեցաւ, աւելի քան մէկ միլիոնոց բազմութիւն մը, որուն 70,000ը ուսանողներէ կազմուած, հայրենասէրներու միութեան անդամները իրենց դիւնուորական զգեստները հագած : Մէկ օր արձակուրդ տրուեցաւ Պատերազմական նախարարը, Զօր. Իթակաքի, յայտարարեց մամուլի ներկայացուցիչներուն որ, եթէ պէտք ըլլայ, Ճափոն պիտի գրաւէ ամբողջ Չինաստանը, բնակնելու համար համաչխարհական քարոզչութեան որ եւ է հետք :

Մարշալ Ճանկ – Քայ - Շէկ, որ իր կնոջ հետ վերջին պահուն միայն կրցաւ օդանաւով փախչիլ քաղաքէն, յայտարարեց թէ պատերազմը պիտի չդադրի մինչեւ վերջ :

Շանհկհայէն հասած հետագրի մը համաձայն, մարշալ Ճանկ-Քայ-Շէկ հրաժարած է եւ նոր կառավարութիւնը կ'աշխատի հաչտութիւն կնքել Ճափոնի հետ : Այս լուրը չհաստատուեցաւ սակայն :

ՋԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ՀԱՑԱՍՏԱՆԻ կրթական փոխ - դործավար նշանակուեցաւ ուսուցչուհի Մ. Գ. Հայկազունի :

ԵԳԻՊՏԱԿԱՆ կառավարութիւնը որոշեց չհնել պատերազմական նաւատորմիղ մը 36 միաւորներէ բաղկացած, որոնց մէջ յածանաւեր, ականաձիգներ , սուզանաւեր :

Հ. Յ. Դ.

Գաւառ

ՊՈՒԼՎԱՐ ՕՏՏՈՅԻ Հ. Յ. Դ. Գաւ. միութեան ընդհ. ժողովը՝ 29 Հոկտեմբեր, շաբաթ երեկոյ ժամը 7.30ին սովորական ցաւաքատեղին:

ՄԱՐՍԷՅԼԻ «վ.ասեան» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 29 Հոկտ., շաբաթ երեկոյ ժամը 8ին սովորական ցաւաքատեղին:

ՄԱՐՍԷՅԼԻ «Քրիստափոռ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 28 Հոկտեմբեր, ուրբաթ երեկոյ ժամը 9ին: Ձեկոյց ներկայացուցչական ժողովի, ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԿՐ ՏՕՆՈՒԻ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ.-

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ Հ. Յ. Դ. ԵԳԻՊՏԱՑԻՑ ԿԱՄԻՏԷԻՆ

29 ՀՈԿՏ. ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ ԺԱՄԸ 8.30ԷՆՄԻՆՉԵՒ ԱՌԱՒՕՏ

Petit Journal*Ի ՍՐԱՀԻՆ ՄԷՋ, ՄԷՔՐՕ *Cadet

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿԵՐՈՒՀԻ ՔԱՂՐԱԾ ԱՆԱՀԻՏ

ԿԸ ԽՕՍԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ Վ. ԹՐԽԱՆԵԱՆ ԵՒ Վ. ՔԻՉԱՊԵԱՆ

Գեղարուեստական բաժինին կը մասնակցին Օրիորդ Անահիտ Թէլլեան (երգ), Օր. Կնեազեան (երգ), Օր. Գազազեան (կովկասեան պար), Օր. Օսմանեան (արտասանութիւն), Պ. Սարըեան (ջութակ), Պ. Մէհտէրեան (երգ), Թառիստ Գարեգին եւ ուրիշներ :

Ճառերն ու գեղարուեստական բաժինը միխրոով լսելի պիտի ըլլայ բոլորին :

Կէս գիշերէն վերջ կը սկսին եւրոպական պարերը, ղեկավարութեամբ Պ. Սարըեանի նուագախումբին, եւ կը տեւէ մինչեւ առաւօտ :

Մուտք 6 ֆրանք :

ԼԻՈՆԻ ՄԷՋ.- 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ

ԿԸ ԽՕՍԻ ԸՆԿ. Ս. ՎՐԹԱՆԵԱՆ

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ.- 30 ՀՈԿՏ. ԿԻՐԱԿԻ

ԿԸ ԽՕՍԻ ԸՆԿ. Ս. ՎՐԹԱՆԵԱՆ

Թէյասեղան—խնչոյք

Սէն Լուի Հ. Յ. Դ. Գաւառական եւ Կ. Խաչի Սանուհիներու Միութեանց կողմէ, 29 Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը 8ին, Պ. Ֆ. Փիլոեանի սրճարանը ի պատիւ Թաղին հայ զինուորներուն:

ՊԱՏԱՐԱԳ

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ Շավիլի եւ շրջակայից հայ բարեպաշտ ժողովուրդեան կը յանուցուի թէ՝ կիրակի, հոկտ. 30ին, Փարիզի առաջնորդական փոխանորդ Գեր. Տիրան վրդ. Ներսոյեան հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ, տեղւոյն Մ. Գըրիգոր - Լուսաւորիչ մատրան մէջ :

Կը հրաւիրուի բարեպաշտ ժողովուրդը :

Երգեցողութիւնները պիտի կատարուին վկնավարութեամբ Պ. Կարապետ Բասենանի եւ մասնակցութեամբ տեղւոյն դպիրներու: Սկիզբ ժամերգութեան 8.30, պատարագ 10.30 :

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ԳՐՊԱՆԻ ՏԱՐԵՑՈՑՑ

1939

Ի· տարի

Գին 5 ֆրանք (Ֆրանսա), Արտահանման 1·50 շիլին կամ 40 սէնթ :

Դիմել հեղինակին·

44 Rue du Commerce, Colombes,(Seine) France·

Le Gérant : H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17. Rue Demours — PARIS (17e)

Ամերսականներու հանգստարանը

— oo —

Ինչպէս գրեցինք, Ֆրանսայի արմատական կուսակցութեան համագումարը բացուեցաւ Մարսէյլի մէջ, Յորեքշաբթի առաւօտ :

Օրակարգի առաջին հարցն էր երկրին հոդագործական քաղաքականութիւնը : Տալատիէ մեկնելէ առաջ դէպի Մարսէյլ, նախ երկար խորհրդակցութիւններ կատարեց Փաթընոթրի, Լուի Մարթին, Մոնզիի, Մարշանտոյի եւ Փոլ Ռէյնոյի հետ :

Արմատականներու համագումարը կ'ոգեւորեն գլխաւորապէս հետեւեալ հոսանքները կամ տեսակէտները :

Նախ, «պատուաւոր խաղաղութեան» տեսակէտը, որ կը կոթնի բանակը զօրացնելու, օդանաւային ուժերը աւելցնելու պահանջին :

Երկրորդ, հին թշնամական ոգին դարմանելու տեսակէտը, բարեկամանալ Իտալիոյ հետ,--- այս տեսակէտը կը պաշտպանէ մասնաւորաբար կուսակցութեան երիտասարդ թեւը, առաջնորդ ունենալով Կասթոն – Մարթինը իր այնքան տարածուած թերթով Ս.fu (Առանցքներ) :

Իտալիոյ հետ բարեկամութեան ջատագովներուն կողքին , կան նաեւ անոնք որ անկարելի չեն գտներ մօտենալ Գերմանիոյ, --- «ոչ թշնամութիւն, ոչ ալ մերձութիւն» հանգանակով :

Այս թեւին ծայրը կը գտնուին «պատմադէտները», որոնց կարծիքով՝ պէտք է հզօր բանակ մը ստեղծել եւ ընկերային անսասան կարգադահութիւն մը, ու թոյլ տալ որ Գերմանիա իր գիտցածին երթայ, կուտի կամ ճնշէ կեդր· Եւրոպայի մէջ, հոռմէական գիծէն անդին : Գերմանիոյ պայքարը, այդ գիծէն անդին, անտեսական պայքար մըն է, որ երբեք չի վնասեր Ֆրանսական աւանդական արդիւնաբերութեան, պերճանքի առարկաներու չի նութեան : Ուչ կամ կանուխ Գերմանիա պիտի պատերազմի Ռուսիոյ հետ,-- թոյլ տանք որ կուտի ռուսական տափաստաններուն մէջ եւ սկարանայ :

Այս տեսակէտին դէմ, ոմանք կ'առարկեն թէ վաղը Գերմանիա կրնայ միանալ Ռուսիոյ եւ փոխանակ ռուսական տափաստաններուն մէջ մխրճուելու, իր պայքարը կը տանի Միջերկրականի մէջ :

Բոլոր այս հոսանքներուն եւ տեսակէտի զանազանութեանց մէջ՝ իրրեւ միացման գիծ եւ ղեկավար կը մնայ Տալատիէ, որուն ուժ պիտի տայ, կ'ըսեն, Էռիօ :

Հիթլէր յանկարծակի այցելեց Էնկէբրաւ քաղաքը, սլովաքեան Պրթիսլաւա քաղաքին դէմ գերմանական կամուրջին գլուխը, եւ քննեց չեխական նախկին ամրութիւնները :

«ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐ»Ը ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՀԱՑ ՄՇԱԿՈՒՕՅԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

30 Հոկտեմբեր, կիրակի երեկոյեան ժամը 8,30ին

ԹՕԼԻՅԷԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ. ՊՈՒԼՎԱՐ ՏԻՒԿՕՄԻՔ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԱՌԱՋՆ. ՓՈԽԱՆՈՐԴ ԶԳՕՆ ՎՐԴ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ

ԿԸ ԽՕՍԻՆ Պ. Պ. Շ. ՄԻՍԱԿԵԱՆ, Մ. ԿԻՒՐՃԵԱՆ ԵՒ ՓԱՅԼԱԿ ՍԱՆԱՍԵԱՆ

Գեղարուեստական խնամեալ բաժինին իրենց մասնակցութիւնը կը բերեն Օր. Հ. Գրմպըլեան, Պ. Պ. Յ. Քիւրքճեան, Ս. Չէօրէճեան, Ե. Փափազեան, Վ. Տէր Վարդանեան, Կ. Թիւքէլեան, Կ. Փոլատեան, Տ. Թադոյեան եւ օտար արուեստագէտ նուագողներ: Օր. Պ. Վարդերեսեան (ջութակ), Պ. Հ. Համբարձումեան (երգ): Փոքրերու մուտքը արգիլուած է:

Ծախսերու մասնակցութիւն 6 ֆրանք :

Կիրակի առաւօտ Փրատոյի Մայր եկեղեցիին մէջ հոգեհանգիստ յատուկ արարողութիւն, հայ մշակոյթի ծառայողներու յիշատակին: Եկեղեցական արարողութիւնէն յետոյ այց Մ. Նուպարեանի եւ Մ. Վարանդեանի դամբարանները: Փափաքողներ կրնան մասնակցիլ :

«ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐ»Ը ՇԱՎԻԼԻ ՄԷՋ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

30 Հոկտ., կիրակի ժամը 3.30ին տեղւոյն դպրոցի սրահին մէջ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Պ. Դ. ՏԷՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԿԸ ԽՕՍԻ Պ. Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Գեղարուեստական բաժին տեղւոյն «Րաֆֆի» երգչախումբին կողմէ

Մուտքը ազատ է

Թատերական ներկայացում

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Հ. Յ. Դ. ՊՈՒԼՎԱՐ ՕՏՏՈՅԻ «ՎՐԱՄԵԱՆ» ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ

30 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին

«Պար Էնթէրնասիոնալի» սրահին մէջ

Հ. Յ. Դ. «Ազամեան» թատերախումբը իր անդամներուն դին. ուրարական ծառայութեան մեկնումին առթիւ.

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՝ ԵՐԵՒԻ

Մուտք՝ 4 ֆրանք, փոքրերուն համար 1 ֆրանք

Ներկայացումէն յետոյ թէյասեղան զինուորներու համար

Թէյասեղան—դասախօսութիւն

Ֆ. Կ. ԽԱՉԻ ԼԻԼԱ-ՓՈՒԷ ՍԷՆ ԺԷՌՎԻԷ Ս.ԱՒԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

30 Հոկտեմբեր, կիրակի ժամը 3—7 դպրոցի սրահին մէջ

15 Rue des Bruyères, *մէթրօ* Porte des Lilas

Երգ, արտասանութիւն եւ նուագ

Մուտք 3 ֆրանք, *փոքրերուն* 2 ֆրանք

ՓԱՐԻԶԻ ՀԱՅՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Ցառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ 27 Հոկտեմբեր, Հինգշաբթի իրիկուն ժամը ճիշդ 21ին, Միութեան կեդրոնատեղին 8 Ռիւ Պօսիէ, Փարիզ· կը դասախօսէ Պ. Վ. ԻՇԽԱՆԵԱՆ, նիւթ «Գաղութահայ հրիտասարդական շարժումը»:

ԱՁԳԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԿՆՈՑԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԵՑԻՔ

Notre-Dame de Lorette *մէթրոյին մօտիկ,*

8 Rue Notre-Deme de Lorette *ակնոցավաճառի խանութը՝*

Աչքի ճիր քննութիւն հայ եւ ֆրանսացի մասնագէտներու կողմէ:

Շաբաթ օրերը հայրենակիցներու համար **ԿԱՐԵՒՈՐ ԶԵՂՉ**



“ ԵՐԱԿ ”

Արեւելքի սիրակ իսկական օղին է: Անզուգական, անմրցելի, ախորժագրաւ: Առաջնակարգ զօրացուցիչ ախորժաբեր, պատրաստուած զուտ չամիչի հիւթով: Հայ աւանդական սեղանին զարդ:

ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ ԵՒ ՈՒՏԵՍՏԵՂԷՆԻ ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք Ֆրանսական, անգլիական եւ չեխոսլովաք կերպասներու· Փոփաքոզները կրնան գրկել իրենց գնած ապրանքները, ունէրվուտ եւ նոյպլ գրի մեքենաներ· կը գնենք ու կը բանքներ· կը տանինք ապրանքներու embalաgo եւ ապահովագրութիւն· Փոխադրութիւն ամէն տեսակ ապրանքներու եւ պահածոներու·

Դիմել՝ American Lloyd, Paris (9). 7 rue Auber

Tél. Opéra 67-77



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խափոդէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած ճշգակաւոր օղին է ՐԱՔԸ ՏԻՒԶԻ, ձգտողներէ արուեստական օղիներէ աւելի ստամոքսը կ'այրէ եւ գիշերները ջուր կը խմենք եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խնդրեցէք որպէսզի ՐԱՔԸ ՏԻՒԶԻ ապրանքը, որուն անունը, կազդուրիչ եւ ախորժաբեր, գաստակուած է:

Dalakupeian 8 Rue Suffren, Marseille· Tél. Dragon 70-89.

Dépôt: 7 Rue de la Paix, Marseille· Tél. Dragon 70-89.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՐԱՄԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 76
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	285 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՕՐ 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ VENDREDI 28 Octobre 1938

ՅԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3872

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՏԱԳՆԱՊԻ ՄԸ ԴԱՍԵՐԸ

— oo —

Աննախընթաց տագնապը, որուն ենթարկուեցաւ Եւրոպա վերջին ամիսներու ընթացքին, վեր ի վայր ջրջեց ո՛չ միայն կեդրոնական Եւրոպայի քարտէսը, գծուած Վերսայլի մէջ, այլ եւ կարգ մը վարդապետութիւններ եւ սկզբունքներ, որոնք քաղաքական բարոյականի հիմը կը կազմէին մինչեւ այսօր :

Մեծ Պատերազմը, որ համաշխարհային պատմութեան մէջ նշանակելի զարադարձ մը եղաւ, արդէն իսկ խախտած էր բազմաթիւ ըմբռնումներ :

Զինադադարէն քսան տարի ետք, ահա՛ նոր դարձակէտ մը — Միւնիխը, զայն կանխող եւ անոր յաջորդող դէպքերով :

Վերսայլի մէջ յաղթականները յաւակնած էին աշխարհի քարտէսը փոխել՝ ըստ իրենց հայեցողութեան, պարտաւոր ձգելու եւ աշխարհին տեւական խաղաղութիւն ապահովելու միտումով :

Այդ օրերուն ազգերու ինքնորոշման սկզբունքը հրապարակ նետեցին, Ուիլսընի 14 կէտերը իբրեւ նոր « հաւատամք » քարոզեցին, հոգ չէ թէ միւս կողմէ նոյն այդ վեց սկզբունքներուն դաւաճանէին, երբ խնդիրը մեղի պէս փոքր եւ տկար ազգերու մասին էր :

Վերսայլի մէջ նստած, անոնք աշխարհի համար նոր ճակատագիր մը կերտել կարծեցին, գրչի հարուածներով քարտէսներ գծեցին, կեղեքուած եւ օտար լուծի տակ հեծող ազգերուն ազատութիւն եւ անկախութիւն չնորհեցին :

Եւ սակայն կարկանդակը բաժնած առեն, աննկարելի սխալներ գործեցին : Կնքուած հաշտութեան դաշնագրերները իրենց մէջ կը պարունակէին ապագայ նոր եւ ահռելի պատերազմներու սաղմերը : Առնուազն ներքին կռիւներու եւ ազգամիջեան վէճերու սերմերը :

Այսպէս, յօշոտուած եւ արիւնաքամ Սերպիան դրեթէ կայսրութեան մը վերածեցին Եուկոսլաւիա անուան տակ, անոր կցելով Քարատաղը, Պօսնա-Հերսէքը եւ Հանգուցեալ Աւստրեւհունգարիոյ զանազան մասերը — Խրուաթիա, Սլովենիա եւն. : Նոր խճանկար պետութիւն մը, որուն բազկացուցիչ տարրերուն միասնականութիւնը կարելի եղաւ պահպանել ցարդ՝ չնորհիւ ուժեղ կառավարութեան մը, որ միահեծան կ'իշխէ երկրին : Այլապէս ներքին դժգոհութիւնները ա՛յնքան ուժեղ էին, որ Պելկրատի խորհրդարանին մէջ երեսփոխաններ իրար սպաննեցին եւ Ազէքսանդր Քարագեորգեւիչ ալ ազգայնական Խրուաթի մը դնդակին զոհ գնաց : Եթէ Խրուաթներն ու Սլովէնները իրենց եռեակ ունենային զօրաւոր օտար պետութիւն մը, չատնոյ Եուկոսլաւիան ալ Չեխոսլովաքիոյ օրին հասած պիտի ըլլար :

Նոյն ձեւով իր սահմաններն ընդարձակեց Ռումանիան, որ Մեծ Պատերազմին դաշնակիցներու կողքին կանգնած էր եւ այդ պատճառով ալ զեղմանական գրաւման ենթարկուած : Թրանսիլվանիան (Հունգարիայէն), Պեսարապիան (Ռուսիայէն) եւ Տօբրուճայի մէկ մասը (Պուլկարիայէն) առանալով, Ռումանիա եւս դարձած է խճանկար պետութիւն մը : Դժգոհ փոքրամասնութիւններ հոս ալ գլուխ կը ցցեն, երբեմն նոյնիսկ օտար քայլերու թեանց արժանանալով :

Իսկ Չեխոսլովաքիոյ եւ Լեհաստանի ստեղծումը, առաջնորդուած ըլլալով հանդերձ ազգերու ինքնորոշման մարդասիրական վեհ սկզբունքներէն՝ առաւելապէս արդիւնք էր քաղաքական նկատումներու, այնքան լայն սահմաններու մէջ :

Դաշնակիցները Գերմանիոյ բոլորտիքը ստեղծելով այս պետութիւնները, նպատակ ունէին անվնաս դարձնելու զայն : Նիւթական մեծ զոհողութիւններու գնով ոտքի վրայ դրին նորաստեղծ կամ ընդարձակուած այս երկիրները : Դրամով, ռազմանիւթով, մասնագէտներով եւ կարելի բոլոր միջոցներով օժանդակեցին անոնց զօրացման ու զարգացման : Լեհաստանի, Չեխոսլովաքիոյ, Ռումանիոյ եւ Եուկոսլաւիոյ ելեւմուտքի բացերը ամէն տարի փակուեցան մասնաւորաբար այս երկրին դրամական աջակցութեան չնորհիւ :

Արդիւնքը : Լեհաստան տարիներէ ի վեր ինքնաբաւ դարձած է եւ իր վրայէն նետած հալանաւորեալի չուքը : Այսօր իր քաղաքականութիւնը գլխովին հակառակ է այն երկիրներուն, որոնց կը պարտի իրեն անկախ պետութիւն իր գոյութիւնը : Անիկա ձեռք ձեռքի կը քալէ այն պետութեան հետ, որուն դէմ իրեն թումբ կամ խարազան սեղծուած էր :

Իրաւունքը զօրաւորինն է : Աչխարհի սեղծագործութենէն ի վեր անդեղի մնացած այս ճշմարտութիւնը տարակոյս չկայ թէ այսուհետեւ եւս բնաւ պիտի չփոխուի : Աւստրիոյ կցումէն եւ Չեխոսլովաքիոյ յօշոտումէն վերջ, Եուկոսլաւիա քայլ մը աւելի կը մօտենայ Գերմանիոյ եւ Իտալիոյ, իր գոյութիւնը պահպանելու եւ հաւանական ներքին խլրտումներու դէմ արտաքին զօրաւոր պաշտպաններ ունենալու համար :

Նոյն ուղղութեան կը հետեւի նաեւ Ռումանիա, Փոքր Համաձայնութեան այս երրորդ անդամը, որ անմիջական աջակիցներու պէտք ունի, մասնաւորաբար պաշտպանուելու համար հունգարական ախորժակներու դէմ, որ չափազանց սրուած կը թուին այս օրերս :

Ուրեմն յեղաշրջումը ակներեւ է : Վերսայլի դաշնագիրը քանի մը տարի իսկ չկրցաւ դիմանալ : Կեանքը, չոր իրականութիւնը ցոյց տուին թէ կարելի չէ թուղթի վրայ սահմանագլուխներ գծել, չինչպէս սկզբունքներու վրայ յենուլ՝ մասնաւոր նպատակներ հետապնդելու համար :

Այս վերջին տագնապը դղրդացին ձեւով հաստատեց նաեւ մեր ժողովուրդին չատ ծանօթ ճշմարտութիւն մը, «ո՛չ եղբարք, ո՛չ օտարներէն չկայ յոյս» : Չեխոսլովաքիան մինչեւ վերջին վայրկեանը իր յոյսը դրաւ օտարին վրայ, ինչպէս քանի մը տարի առաջ ալ Նէկուսը իր յոյսը դրած էր Ազգերու Դաշնակցութեան վրայ : Երկու պարագային ալ արտաքին յոյսը ի դերեւ ելաւ եւ տկար ազգերը քաւութեան նոխազ դարձան :

Այս երկու տխուր իրականութեանց լոյսին տակ, հայ ժողովուրդը անգամ մը եւս կը զգայ դառնութիւնը այն ծանր յուսախաբութեանց, որոնց ենթարկուեցաւ ծովերով արիւն թափելէ վերջ, ո՛չ միայն յանուն իր սեփական ազատութեան, այլ եւ իբրեւ « փոքր դաշնակից », յանուն Դաշնակիցներու դատին յաղթութեան :

Ու իր քաղաքական փորձառութեան մատեանին վրայ հայութիւնը այսօր նոր էջ մը եւս կ'աւելցնէ՝ արժանի դասերը քաղելու համար անկէ :

ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԳԵՐՄԱՆԵԻԻՏԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԸ

— oo —

Յոն Ռիպպընթրոփի տեսակցութիւնները, Հռոմի մէջ, մի քանի շաբաթ առաջ, նիւթը դարձած են այս պահուս :

Հռոմի թերթերը կը գրեն թէ Գերմանիոյ արտաքին նախարարին կ'ընկերանան ընդհ. արարողապետը Տէօրնպէրկ, Թարգման Շմիթ, հարիւրապետ Հէվէլ, եւ արտաքին նախարարութենէն երկու մասնագէտներ, — այս խումբին անդամներուն կարեւորութիւնը պատճառ մըն է որ խորհրդակցութեանց տրուի մեծ արժէք : Ֆրանսական թերթ մը, ակնարկելով պատուիրակութեան կազմին, կ'ըսէ թէ իրական առաքելութիւն մըն է որ Գերմանիոյ կողմէ կը ներկայանայ Մուսոլինիի : Հռոմի մամուլը, սակայն, կը պնդէ թէ «առանցքին անկեղծութիւնը կը պահանջէ որ յաճախակի այսպիսի խորհրդակցութիւններ տեղի ունենան երկու կառավարութիւններուն միջեւ» :

Ըստ Ֆրանսացի թղթակիցներու, Յոն Ռիպպընթրոփի տեսակցութիւններուն հետ զուգահեռաբար, գերման արտաքին նախարարութեան մասնագէտներն ալ իրենց կարգին խորհրդակցութիւններ կը կատարեն Իտալիոյ արտաքին նախարարութեան ի – րենց պաշտօնակիցներուն հետ : Այդ խօսակցութեանց նիւթ կը կազմեն .

1· Հռոմ դործադրելով անգլեւիտալական համաձայնութիւնը, ի վերջոյ պիտի մղուի ուղղակի բանակցութիւն կատարել նաեւ Ֆրանսայի հետ : Միւս կողմէ, Գերմանիա չարունակելով իր խօսակցութիւնները Անգլիոյ հետ, հատանաբար չիման մէջ մտնէ նաեւ Ֆրանսայի հետ : Այդ պարագային, ի՛նչ պիտի ըլլայ Գերմանիոյ դիրքը իտալական քաղաքականութեան վերաբերմամբ, եւ ի՛նչ պիտի ըլլայ Իտալիոյ դիրքը գերմանական ձգտումներուն վերաբերմամբ : Կ'ենթադրուի թէ Հռոմ եւ Պերլին պիտի աչխատին յաջողցնել քառանդամ խորհրդակցութեանց ծրագիրը՝ իրրեւ չարունակութիւն Միւնիխի :

2· Հռոմ ուժ կուտայ Պուատիէշի եւ Վարչաւայի, որպէսզի Ռումինիան միացուի Հունգարիոյ եւ ստեղծուի հատարակաց սահմանագլուխ մը Լեհաստանի եւ Հունգարիոյ միջեւ : Իսկ Պերլին ուժ կուտայ Փրակայի՝ պաչտպանելով իտալական ծրագրին ճիշդ հակառակը : Մանաւանդ վրայ տեսակէտներու այս հակադրութիւնը անհրաժեչտ կը դարձնէր որ փոքր մը կատարուի հակառակ տեսակէտները հաչտեցնելու : Մանաւանդ որ Փրակա վերջին պահուն առաջարկեց դիմել Պերլինի եւ Հռոմի իրաւարարութեան :

3· Հակահամաչխարհային պայքարի համաձայնութիւնը, որ ստորագրուեցաւ Հռոմի մէջ Իտալիոյ, Գերմանիոյ եւ Ճափոնի կողմէ, հարկ է թարմացնել ներկայիս, երբ Փարիզի, Լոնտոնի եւ Ուաչինկթընի կառավարութիւնները, նոր թափ մը տալով սպառազինութեան, կը խախտեն ուժերու հաւասարակչռութիւնը :

4· Պերլին չուտով պիտի պահանջէ որ վերաքննութիւն մը կատարուի գաղութներու բաչխումին մէջ : Այս մասին եւս հարկ է որ Իտալիա եւ Գերմանիա համաձայնին նախապէս :

«Նիւզ Քրոնիքլ» կը կարծէ թէ Հռոմի խօսակցութիւնները ուրիշ նպատակ չունին, բայց եթէ համաձայնութեան մը գալ, երաչխաւորելու համար չեխական նոր պետութիւնը : Միւս կողմէ, կ'ըսէ նոյն թերթը, Յոն Ռիպպընթրոփ կ'ուզէ Մուսոլինիի բերնէն իմանալ իտալաֆրանսական յարաբերութեանց վիճակը : Եւ ասիկա անոր համար, որ Գերմանիա կ'ուզէ չուտով առաջարկել Ֆրանսայի՝ ոչ – յարձակողական դաչինք մը կնքել 25 տարուան համար :

Չիւաստան պիտի շարունակէ պատերազմը

— oo —

Ճափոնական բանակը լրացուց Հանքէուի չրջակայ արուարձաններուն ու քաղաքներուն գրաւման գործողութիւնը : Ցաղթականութեան մուտքի զօրանչքը տեղի չէ ունեցած տակաւին, սակայն պատճառ ցոյց կը տրուի այն որ Հանքէու հնոց մը դարձած է : Մասնաւորաբար բոցերու մէջ են Վուչանկ եւ Հանեանկ քաղաքները, ուր ոչ ոք կը համարձակի մտնել : Բոցերը հսկայ չափերու պէս դէպի երկինք կը բարձրանան, բնակարաններու փայտէ մասերը այնքան ուժգին կը ճարճատին, որ աղմուկը կը խլացնէ ականջները :

Հանքէուի գետին վրայով՝ քաղաք մտան ճափոնական պատե-

(Մուտքը շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԴԻՏՈՂՆԵՐԸ

Հռոմի մամուլին մէջ քուռն դժգոհութիւն կայ, թէ ժողովրդավար պետութիւնները լծուած են ապառազին – ման արտակարգ գործունէութեան մը : Ոմանք նոյնիսկ այնքան առաջ կ'երթան, որ չեն վարանիր մեղադրելու թէ Ֆրանսայի եւ Անգլիոյ զինուորական նոր նիգերը խախտումն են Միւնիխի համեակ հաւաձայնութեան :

Այս դժգոհութիւնը այնքան ալ զարմանալի պէտք չէ թուի, երբ նկատի առնենք որ միահեծան պետութիւնները վարժուած են շուտով գործունէութեան, շուտով անհամբեր դառնալու, երբ իրենց անհաճոյ իրողութեան մը առջեւ կը գտնուին :

Վերսայլի անփառունակ հաչտութենէն ի վեր անընդհատ դժգոհելով՝ Գերմանիա, Իտալիա, Ճափոն եւն. հայ առ հայ տիրացան բազմաթիւ առաւելութիւններու : Անոնք ո՛չ միայն յաջողեցան հիմնել այն միահեծան վարչաձեւերը, որոնց տակ տիրաբար կը վարեն իրենց երկիրներու կեանքը, այլեւ աստիճանաբար նուաճումներ կատարեցին արտաքին ճակատներու վրայ, զինու զօրութեամբ գրաւելով նոր հողեր ու երկիրներ :

Այսպէս՝ Ճափոն նուաճեց Մանչուքուօն, ոտքի տակ առաւ Չինաստանի մեծագոյն մասը եւ դարձաւ Արեւելքի միակ տիրականը այսօր :

Իտալիա նուաճեց Եթովպիան եւ հիմնեց ափրիկեան կայսրութիւնը, Հիւս հռոմէական աչխարհակալութիւնը վերականգնելու հոյակապ տեսիլքով մը :

Գերմանիա կցեց Աւստրիան, անդամատեց Չեխոսլովաքիան ու խլեց ա – ռիւծի պատառը անոր հողերէն, եւ այժմ կը պատրաստուի իր ահարկու գրոհին դէպի արեւելք :

Այս յաղթանակները քանականօրէն ստեղծած են Ճափոն, գերման ու իտալական ժողովուրդներու եւ դեկավարներուն մէջ այնպիսի հոգեվիճակ մը, որ չի հանդուրժեր միւս մեծերու զօրացման , չուզեր իրենց խաղաղականութեան աչխարհակալութեանց ճամբուն վրայ խոչընդոտներ եւ կը գանգատի, կ'անհանգստանայ ՝ երբ միւս աչխարհակալները ալ կը պատրաստուին, կը զինուին, փոքրորիկի չհրմնուելու նախագուչական քայլեր կ'առնեն :

Եւ դժգոհները, դէմ ժամածողները անոնք անոնք են, որոնք մինչեւ ակռաները զինուած են, սպառազինման մարզի մէջ ո եւ է սեղմում ու սահմանափակում չեն ճանչնար, եւ, որ աւելի յատկանչականն է՝ զինեալ դժգոհութիւնով, ուժի սպառնալիքով, պատերազմի պատրաստ ըլլալու կեցուած – քով իրենց խօսքը կը խլեցնեն :

Այս հոգեվիճակին ի տես՝ ժողովրդավար ազգերուն եւ պետութիւնները – րուն ուրիշ բան չի մնար, եթէ ոչ ընթանալ սպառազինութիւն, պատրաստ ըլլալ, ուժին դէմ ուժ ցուցադրել :

Եւ ասոր համար ալ կը զինուին ա – նոնք՝ Անգլիա, Ֆրանսա, մինչեւ իսկ Մ. Նահանգները : Կը զինուին, որով – հետեւ բասն տարուան շարունակական պարտութիւնները բաղաքական ամէն իւրաքարթութենց մէջ՝ այս դասը տրվեցուցին անոնց· կը զինուին, որպէսզի այդ պարտութիւններու շղթան այլեւս աւարտի, որպէսզի նորանոր անակնկալներ այսուհետեւ նոր «կատարուած իրողութիւններու» առջեւ չդնեն զիրենք, որպէսզի վերջապէս նոր Չեխոսլովաքիաներ չնիւթուին եւ – րոպայի գլխուն :

Միահեծան պետութիւնները զինուած են լրիւ· կը դժգոհին ու կը շահին : ժողովրդավար պետութիւնները, չկորսնցնելու եւ չդժգոհելու համար, կամայ ակամայ պիտի զինուին :

Իտալական մամուլի դժգոհութիւնը թերեւս անտեղի չէ, բայց ժողովրդապետական ազգերու մամուլը կրնայ իրաւամբ պատասխանել, որ Մուսոլինիէն ու Հիթլէրէն սորվեցան այս դասը :

Դժգոհէ՛ որ շահիս : Փարիզ-Լոնտոնն առանցքին համար առիթ ձեռնտու է այժմ դժգոհութիւն լսել, բան անպատրաստ ըլլալ Հռոմ-Պերլին առանցքին գրոհին առջեւ եւ կորսնցնել :

ԱՍԱՏՈՒՐ

ԱՆԳԼԻԱ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

— oo —

Բրիտանական գահլիճը նիւթ մը գումարեց Զորեքչաբթի առաւօտ : Լոնտոնի թերթերուն քաղած տեղեկութենց համաձայն, անգլիական նախարարները կ'ուզեն որ չարունակուի եւ ընդլայնուի Չէմպըլէնի խաղաղութեան քաղաքականութիւնը, կատարելով ամէն զոհողութիւն : Եւ առաջին առթիւ, քննութեան առնուեցաւ գաղութներու հարցը, ի նախատեսութիւն Գերմանիոյ պահանջին : Որոշում մը չարուեցաւ գերմանական հին գաղութներուն ճակատագրին մասին, բայց եւ այնպէս հարցին քննութիւնն իսկ նչանակութիւն մը ունի : Հարաւ - ափրիկեան պետութեան ազգ· պաչտպանութեան նախարարը, Փիրով, արդէն ձեռնարկած է նոյն հարցին ուսումնասիրութեան : Այս պահուս Փիրով կը գտնուի Լիզպոն : Երբ Լոնտոն հասնի, բրիտանական կառավարութիւնը պիտի խորհրդակցի հետը, որոշում մը տալու համար գաղթային վէճերու կարգադրութեան մասին :

Այնպէս կը կարծուի որ Անգլիա, երբ բնական վիճակ ստանան անգլեւիտալական յարաբերութիւնները, ուղղակի չփումներ պիտի կատարէ Գերմանիոյ հետ, վիճելի հարցերու կարգադրութեան համար : Հէնռէբսըն, Պերլինի անգլիական դեսպանը, որ Լոնտոն կը գտնուի այս պահուս, կառավարութեան ներկայացուցած է տեղեկագիր մը, որ կը չօչափէ Եւրոպայի խաղաղեցումը անգլեւգերմանական բարւոք յարաբերութեանց հիման վրայ :

— oo —

ԱՆԳԼԻՈՑ թագաւորը Աւստրալիոյ ընդհանուր կառավարիչ նչանակեց իր կրտսեր եղբայրը՝ Քէնթի դուքսը, որ իր պաչտօնատեղին պիտի մեկնի 1939 նոյեմբերին եւ պիտի մնայ նոր պաչտօնին վրայ 2 - 3 տարի :

ՆԻՒ ԵՈՐՔԻ մէջ լրտեսական մեծ դատի ընթացքին, ամբաստանեալ Ռումբիխ խոստովանեցաւ թէ գերման լրտեսութիւնը փորձ կատարած է կարեւոր տեղեկութիւններ քաղել ամերիկեան օդատորմիղի մասին :

ԻՆՔՆԱՇԱՐԺԻ մեծ գործարանատէր Հէնրի Ֆորտ յայտարարեց , որ իր ընկերութիւնը կը յուսայ 1939ին 50 առ հարիւր աւելի առեւտուր ընել եւ 50 առ հարիւր աւելի ինքնաչարժ ծախել քան 1938ին :

ՊԵԼԿՐԱՏԻ մէջ ստորագրուեցաւ գերման-եուկոսլաւ առեւտրական նոր դաչնագիրը, որու համաձայն՝ Գերմանիա պիտի գրկ եուկոսլաւ երկրագործական արտադրութիւններու 50 առ հարիւրը :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայկական խորհրդային կոմիտեն, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության աշխատավոր դասակարգի համար անհրաժեշտ է ստեղծել նորմալ պայմաններ, որոնք կապահովեն նրա կենսական պահանջների բավարարումը, որոշում են՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատավոր դասակարգի համար ստեղծել հետևյալ նորմալ պայմանները՝

ա) Աշխատանքային օրվա տևողությունը սահմանել 8 ժամ, իսկ վնասակար արտադրություններում՝ 6 ժամ։

բ) Ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար սահմանել ամսական 15 ռուբլի ոսկի։

գ) Ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար սահմանել տարեկան 22 աշխատանքային օրերի վճարովի արձակուրդ։

դ) Ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար սահմանել 40—50 տոկոս հավելավճար գերժամանակյա աշխատանքի համար։

ե) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար 8 ժամ տևողությամբ գիշերային աշխատանքի ռեժիմ։

զ) Սահմանել հղի կանանց և 16 տարեկան չհասած անչափահասների համար 6 ժամ տևողությամբ աշխատանքային օրվա ռեժիմ։

է) Սահմանել հղի կանանց համար 56 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ ծննդաբերությունից առաջ և 56 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ ծննդաբերությունից հետո։

ը) Սահմանել ծննդաբերած կանանց համար 2 ժամ ընդմիջումներով 3 ամսվա ընթացքում կրծքով կերակրելու արտոնություն։

թ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժա) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժբ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժգ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժդ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժե) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժզ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժէ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժը) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ժթ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

ի) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

իա) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

իբ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

իգ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

իդ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

իե) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

իզ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

իէ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

իը) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

իթ) Սահմանել ամենաքիչ վարձատրվող աշխատանքի համար տարեկան 15 օրացուցային օրվա վճարովի արձակուրդ։

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայկական խորհրդային կոմիտեին հանձնարարել ստեղծել հատուկ հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության աշխատավոր դասակարգի համար ստեղծված նորմալ պայմանների իրագործման համար։

Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ՝ Ա. Ջալալյան

Հայկական խորհրդային կոմիտեի նախագահ՝ Ա. Մյասնիկյան

Երևան, 1920 թ. հունվարի 23։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայկական խորհրդային կոմիտեն, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության աշխատավոր դասակարգի համար անհրաժեշտ է ստեղծել նորմալ պայմաններ, որոնք կապահովեն նրա կենսական պահանջների բավարարումը, որոշում է

ԿԱՐՃ ՊՏՈՒՏ ՀԱՐՑ

Ամեն ինչ սկսվեց այն օրից, երբ Ալեքսանդր Ստեփանի Ղազարյանը, որ ամբողջ կյանքում ոչ մի անգամ չէր հիվանդացել, հանկարծ զգաց, որ ինքը հիվանդ է։ Ինչպես ասում են, ոչ մի ցավ չկար, բայց ամբողջ մարմինը ինչ-որ տարօրինակ կերպով ծանրացել էր, ոտքերը դժվարությամբ էին շարժվում, գլուխը պտտվում էր, և ամեն ինչ աչքի առաջ մշուշվում էր։ Ալեքսանդր Ստեփանիչը ստիպված էր հրաժարվել իր սովորական զբոսանքից։ Նա ամբողջ օրը անցկացրեց տանը, իսկ հաջորդ օրը, երբ ավելի վատ զգաց, կանչեց բժշկին։

Բժիշկը եկավ, զննեց հիվանդին, ջերմաչափը դրեց նրա թևի տակ, ապա հարցրեց, թե ինչ է զգում հիվանդը։ Ալեքսանդր Ստեփանիչը պատասխանեց, որ ինքը ոչ մի ցավ չի զգում, միայն թե ամբողջ մարմինը ծանր է, գլուխը պտտվում է, և ամեն ինչ աչքի առաջ մշուշվում է։ Բժիշկը նայեց ջերմաչափին, որը ցույց էր տալիս 39 աստիճան ջերմություն, և ասաց, որ հիվանդությունը շատ լուրջ է, և որ նա պետք է հիվանդանոց գնա։

Ալեքսանդր Ստեփանիչը համաձայնեց։ Նա ինքն էլ զգում էր, որ ինչ-որ լուրջ բան է պատահել իր հետ։ Նա ուզում էր հիվանդանոց գնալ, որպեսզի ազատվի այդ տանջալի վիճակից։

Հիվանդանոցում նրան հանձնեցին բժիշկ Ռուբեն Ավետիսյանին, որը հետաքրքրվեց հիվանդի ամբողջ կյանքով, նրա հիվանդության պատմությամբ, ապրելակերպով, սովորություններով, ապա սկսեց հետազոտել նրան։ Ալեքսանդր Ստեփանիչը պատասխանում էր բոլոր հարցերին, ենթարկվում էր բոլոր հետազոտություններին, բայց ինքն էլ չէր հասկանում, թե ինչ է պատահել իր հետ։

Հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ հիվանդի մոտ ախտորոշվել է ուղեղի ուռուցք։ Ալեքսանդր Ստեփանիչը ուղեղի ուռուցքի մասին լսել էր, բայց երբեք չէր պատկերացրել, որ ինքն էլ կարող է հիվանդանալ այդ ահավոր հիվանդությամբ։ Նա հասկանում էր, որ ուռուցքը չարորակ է, և որ նրա կյանքը վտանգված է։

Ալեքսանդր Ստեփանիչը ուղարկեցին վիրահատության։ Վիրահատությունը տևեց մի քանի ժամ։ Երբ նա ուշքի եկավ, տեսավ, որ գտնվում է հիվանդասենյակում, իսկ գլխին մեծ վիրակապ է դրված։ Նա ուզում էր հարցնել, թե ինչ է եղել, բայց չկարողացավ, քանի որ շրթունքները չէին ենթարկվում նրան։ Նա միայն նայում էր շուրջը, տեսնում էր հիվանդասենյակը, բժիշկներին, բուժքույրերին, բայց չէր հասկանում, թե ինչ է կատարվում։

Հետո նա նորից քնեց։ Երբ արթնացավ, տեսավ, որ կողքին նստած է կինը՝ Աննան։ Նա ուզում էր նրան հարցնել, թե ինչ է պատահել, բայց կինը ձեռքի նշանով ցույց տվեց, որ պետք չէ խոսել։ Ալեքսանդր Ստեփանիչը հասկացավ, որ ինքը ծանր հիվանդ է, և որ կինը ամեն ինչ գիտի։

Հետո նա նորից քնեց։ Այդպես անցան մի քանի օրեր։ Նա արթնանում էր, տեսնում էր կնոջը, բժիշկներին, բուժքույրերին, բայց չէր հասկանում, թե ինչ է կատարվում։ Նա ուզում էր հարցնել, բայց չէր կարողանում։ Նա միայն նայում էր շուրջը, տեսնում էր հիվանդասենյակը, բժիշկներին, բուժքույրերին, բայց չէր հասկանում, թե ինչ է կատարվում։

Հետո նա նորից քնեց։ Երբ արթնացավ, տեսավ, որ կողքին նստած է կինը՝ Աննան։ Նա ուզում էր նրան հարցնել, թե ինչ է եղել, բայց կինը ձեռքի նշանով ցույց տվեց, որ պետք չէ խոսել։ Ալեքսանդր Ստեփանիչը հասկացավ, որ ինքը ծանր հիվանդ է, և որ կինը ամեն ինչ գիտի։

Հետո նա նորից քնեց։ Այդպես անցան մի քանի օրեր։ Նա արթնանում էր, տեսնում էր կնոջը, բժիշկներին, բուժքույրերին, բայց չէր հասկանում, թե ինչ է կատարվում։ Նա ուզում էր հարցնել, բայց չկարողացավ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԿԸ ՏՕՆՈՒԻ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ.- ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ Հ. Յ. Դ. **ԵԳԻՊՏԱՑԻ** ԿՈՄԻՏԷԻՆ

29 ՀՈԿՏ. ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ ԺԱՄԸ 8.30ԷՆՄԻՆՉԵՒ ԱՌԱՒՕՏ *Petit Journal*Ի ՍՐԱՀԻՆ ՄԷՋ, ՄԷՔՐՕ *Cadet*

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿԵՐՈՒՀԻ **ՓԻԼՈՐԱ ԱՆԱՀԻՏ**

ԿԸ ԽՕՍԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ **Վ. ԽՉԼՄՆԵԱՆ** ԵՒ **Վ. ՔՐԻՍՊԵԱՆ**

Գեղարուեստական բաժինին կը մասնակցին Օրիորդ Ագաճիտ Թէլլեան (երգ), Օր. Կնեազեան (երգ), Օր. Գազազեան (*կովկասեան պար*), Օր. Օսմանեան (*արտասանութիւն*), Պ. Սարըեան (*ջութակ*), Պ. Մէհտէրեան (երգ), *Թառիստ* Գարեգին եւ ուրիշներ :

Ճաշերն ու գեղարուեստական բաժինը միբրօով լսելի պիտի ըլլայ բոլորին :

Կէս գիշերէն վերջ կը սկսին եւրոպական պարերը, ղեկավարութեամբ Պ. Սարըեանի *նուագախումբին, եւ կը տեւէ մինչեւ առաւօտ :* Մուտք 6 ֆրանք :

ԼԻՈՆԻ ՄԷՋ.-

Հ. Յ. Դ. «ՎԱՐԱՆԴԵԱՆ» ՇՐՋ. ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ ԺԱՄԸ 8.30ԻՆ ՅՐԴ. ԲԱՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. **Թ. ՑՅՎԱՋԵԱՆ** ԿԸ ԽՕՍԻ ԸՆԿ. **Ս. ՎՐԹԱՆԵԱՆ**

ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ.— Կ'արտասանեն փոքրիկն ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏՋԵԱՆ, *Օր.* ՏՕԼՊԱՇԵԱՆ *եւ Ա.* ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Կ'երգէ Օր. ՄԱՐԻՏԱ ՊԱԼՄԱՃԵԱՆ

ՇԱՆՕԹ.— Հանդէսէն վերջ ընկերահամակրական խնջոյք Յոյներու սրահը, 5 Rue Bonnefoi· *ՇԱԽԲԵՐՈՒԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻԻՆ* 0 95ֆր.·

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ.- 30 ՀՈԿՏ. ԿԻՐԱԿԷ, ԿԸ ԽՕՍԻ ԸՆԿ. **Ս. ՎՐԹԱՆԵԱՆ**

Հ. Յ. Դ.

Գ Ա Ւ Ա Ռ

ՊՈՒԻԼՎԱՐ ՕՏՏՈՅԻ Հ. Յ. Դ. Պատ. միութեան ընդհ. ժողովը՝ *29* Հոկտեմբեր, Շաբաթ երեկոյ ժամը 7.30ին սովորական հաւաքատեղին։

ԱՐՍԷՆԻ «Վոլտեան» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 29 Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը 8ին սովորական հաւաքատեղին։

ՄՈՐԼԱՆԻ «Քրիստափոր» ենթակոմիտէի ընդհ. ժողովը *28* Հոկտեմբեր. ուրբաթ երեկոյ ժամը 9ին Զեկույց Նե. կայացուցչական ժողովի ներկայ կ'ըլլայ Շրջ. կոմիտէի ներկայացուցիչը։

ՍԵՆԷ ԷՔԻԷՆի «Վնտօք» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 29 Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը 8ին, «Դուրեսն» գրադարանը։ Խիստ կարեւոր օրակարգ։

Թէյասեղան—խնջոյք

Սէն Լուի Հ. Յ. Դ. Պատանեկան եւ Կ. Խաչի Սանուհիներու Միութեանց կողմէ, 29 *Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը* 8*ին, Պ. Ֆ. Փիլոհանի սրճարանը ի պատիւ թաղին հայ զինուորցուներուն։*

Թատերական ներկայացում

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Հ. Յ Դ. ՊՈՒԻԼՎԱՐ ՕՏՏՈՅԻ «ՎՐԱՄԵԱՆ» ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ

30 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին

«Պար Էնթէրնասիոնալի» սրահին մէջ

Հ. Յ. Դ «Ադամեան» թատերախումբը իր անդամներուն զինուորական ծառայութեան մեկնումին առթիւ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՝ ԵՐԿՈՒՈ

Մուտք՝ 4 ֆրանք, փոքրերուն համար 1 ֆրանք

Ներկայացումէն յետոյ թէյասեղան զինուորներու համար

Թէյասեղան—դասախօսութիւն

Ֆ. Կ. ԽԱՉԻ ԼԻԱ-ՓՈՒԷ ՍԷՆ ԺԷՌՎԻՒ Ա.ՅԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

30 Հոկտեմբեր, Կիրակի ժամը 3—7 դպրոցի սրահին մէջ

15 Rue des Bruyères, *մէթրօ* Porte des Lilas

ԿԸ ԴԱՍԱԽՕՍԷ Պ. ԼԵՒՈՆ ԶՈՐՄԻՍԵԱՆ

երգ, արտասանութիւն եւ նուագ

Մուտք 3 ֆրանք, փոքրերուն 2 ֆրանք

Ողջերթի երեկոյթ Մարսէյլի մէջ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԲԱԼՈՒԻ ՀԱՅՐ. ԵՒ ՎԵՐԱՇԻՆԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ

Ի պատիւ Բալուցի զինուորագրեալներու որոնք ծառայութեան պիտի մտնեն նոյեմբերի սկիզբը :

Տեղի կ'ունենայ Հոկտեմբեր 29, *շաբաթ երեկոյ ժամը* 8·30ին, *բիւ Լ'Էքլիփս, Շահրիկեան սրահին մէջ :*

Գեղարուեստական բաժին Մուտք 3 ֆրանք

ՊԱՏԱՐԱԳ

Ի ԳԻՏՈՒԹԻԻՆ Շաւիլի եւ շրջակայից հայ բարեպաշտ ժողովուրդեան կը յանձնուի թէ՝ կիրակի, Հոկտ. 30ին, Փարիզի առաջնորդական փոխանորդ Գեր. Տիրան վրդ. Ներսոյեան հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ, տեղւոյն Ս. Գրիգոր - Լուսաւորիչ մատրան մէջ :

Կը հրաւիրուի բարեպաշտ ժողովուրդը :

Երգեցողութիւնները պիտի կատարուին ղեկավարութեամբ Պ. Կարապետ Բադոսեանի եւ մասնակցութեամբ տեղւոյն դպիրներու : Սկիզբը ժամերգութեան 8.30, *պատարագ* 10.30 :

Ա. Զ Դ

ՀԱՅ ԳՐԱԳԻՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ընկերակցութիւնը կը փութայ յայտնել, որ իր մատենաշարին Ա. հատորը, Ռուբէն Զարդարեանի Արձակ էջեր եւ հէքիաթները, սպառած ըլլալով, իր չարքէն որեւէ 2 *հատոր պիտի տրամադրէ անոր, որ իրեն կը ղրկէ սպառած այդ հատորէն մէկ օրինակ :*

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demeaux — PARIS (19)

«ՄՇԱԿՈՑԹԻ ՕՐ»Ը ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԲԱՑԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

30 *Հոկտեմբեր, կիրակի երեկոյեան ժամը* 8.30ին

ՔՕԼԻԶԷի ՍՐԱՀԻՆ ՄԷՋ, ՊՈՒԻԼՎԱՐ ՏԻՒԿՕՄԻ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԱՌԱՋՆ. ՓՈԽԱՆՈՐԴ ԶԳՕՆ ՎՐԴ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ

ԿԸ ԽՕՍԻՆ Պ. Պ. **Շ. ՄԻՍԱՔԵԱՆ, Մ. ԿԻՒՐՃԵԱՆ**

ԵՒ **ՓԱՇԱԼԱԿ ՍԱՆԱՍԱՐ**

Գեղարուեստական խնամեալ բաժինէն իրենց մասնակցութիւնը կը բերեն Օր. Հ. Գըմպըլեան, Պ. Պ. Յ. Քիւրքճեան, Ս. Չէօրէճեան, Ե. Փափազեան, Վ. Տէր Վարդանեան, Կ. Թիւրքէլեան, Կ. Փոլատեան, Տ. Թադոյեան եւ *օտար արուեստագէտ նուագողներ*; Օր. Պ. Վարդերեսեան (*ջութակ*), Պ. Հ. Համբարձումեան (*երգ*); *Փոքրերու մուտքը արգիլուած է :*

Ծախսերու մասնակցութիւն 6 *ֆրանք :*

Կիրակի առաւօտ Փրատոյի Մայր եկեղեցիին մէջ հոգեհանգիստի յատուկ արարողութիւն, հայ մշակոյթի ծառայողներու յիշատակին : Եկեղեցական արարողութիւնէն յետոյ այց Մ. Նալպարեանի եւ Մ. Վարանդեանի դամբարանները : Փափաքողները կրնան մասնակցիլ :

«ՄՇԱԿՈՑԹԻ ՕՐ»Ը ՇԱՎԻԼԻ ՄԷՋ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

30 *Հոկտ., կիրակի ժամը* 3·30ին *տեղւոյն դպրոցի սրահին մէջ*

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Պ. Դ. ՏԷՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԿԸ ԽՕՍԻ Պ. Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

Գեղարուեստական բաժին տեղւոյն «Բաֆֆի» երգչախումբին կողմէ

Մուտքը ազատ է

Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱՐՈՒԱԾ - ԱՏԱՄՆԱՐՈՒԱԾ

44 Rue Dunkerque (ՄԷՋՐՕ ԿԱՊ ՏԻՒ ՆՈՒԹ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20։

Աւտօներով ժամադրութեամբ։



Fourrures de St. Bernard

ՀԱՅԿՈՒՀԻ ԿԻԼՊՕԼԵԱՆ

Մեկ վստահելի տունը ուր պիտի գտնէք տակուն ապրանքներ՝ դեղչեալ գիներով։ Ընտիր արժանիքներ, իրական մորթեր, փէթուններ, սկուններ, օձիկներ, գլխարկներ եւայլն։

Կը չհենինք չափու վրայ մանթօներ՝ գանազան տեսակ մուշտակներէ, վերջին նորաձեւութիւններով :

Կը ստանձնենք մուշտակներու նորոգութիւնը, ձեւափոխութիւնը, ներկելը եւ թանաժը։ Մուշտակները կը մաքրենք ձրի, կիրակի օրերը բաց է մինչեւ կէս օր :

24, Rue Affre կամ 8, Rue Cavé — PARIS - 18e

Մատուցիչ՝ 2, Rue de la Charbonnière —

Մէթրօ՝ La Chapelle — Barbès Roch. Tél. Montmartre 69-70

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՅՐԸ

Ճաշարան Ֆլօրիա

61, Rue Monsieur le Prince, Paris (6e)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ :



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած իսկական հայկական օղին է Րաքը Տիւզը։ Զգուշացէք Րաքը Տիւզը՝ արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գիշերները չուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան։ Խմեցէք միայն Րաքը Տիւզը որուն անուշ համ, կազդուրիչ եւ ախորժագրաւ ժաքեր ըլլալը ճանաչուած է։

Dalakupeian 8 Rue Suffren, Marseille. Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89

բազմական նաւերը։ Նաւային սպանները ապահովութիւն տուին որ պիտի պաշտպանուի չէզոք գօտին :

**** Չինաստանի անգլիական դեսպանը նաւեցաւ, տեսակցելու մարշալ Ճանկ - Քայ - Շէկի հետ։ Կ'ըսուի թէ անգլիական դեսպանը կ'աշխատի դանել յարմար պահը, հաշտեցնելու համար Չինացիներն ու Ճափոնացիները :*

**** Փարիզի չինական դեսպանը կը հաղորդէ զեկոյցով մը թէ Չինաստանի հիմնական քաղաքականութիւնն է երկարաձգել պատերազմը՝ ստանձնելով ամէն զոհողութիւն, թէ նչանակութիւն չունի քաղաքի մը կորուստը :*

Մոսկուա կ'ամրացնէ արեւմտեան սահմանները

— oo —

Անգլիական թերթերու քաղած տեղեկութեանց համաձայն, Խորհ. Միութիւնը կ'աշխատի աճապարանքով ամրացնել իր արեւմտեան սահմանները, հիմնելով պաշտպանողական զօրաւոր գիծ մը, իբրեւ զգուշական միջոց գերմանական սպառնալիքին դէմ :

Մոսկուա հրամայեց առժամաբար դադրեցնել ուրիշ զինուրական ամէն աշխատանք, բոլորովին նուիրուելու համար Ուկրա - նիոյ ապահովութեան, պաշտպանելու համար հանքածուխ ու ցորեն արտադրող չրջանները :

Այդ նպատակով ,

Ա.— 150 քիլոմեթրի վրայ երկար չրջան մը պիտի մաքրուի անտառներէ :

Բ.— Բնակչութիւնը եւս պիտի հեռացուի, կարգ մը քաղաքներու եւ ագարակներու մէջ թողլով միայն կարմիր բանակի մարդիկը, անոնք որ կը վայելեն Մոսկուայի վստահութիւնը :

Գ.— Պիտի քանդուին կամուրջներն ու ճամբաները, որոնք կը դանուին ապահովութեան գօտիին մէջ :

Դ.— Ամրոցներ պիտի չինուին նոյն գօտիին արեւելեան սահմանին վրայ :

Ե.— Պիտի երկարեն երկաթուղին՝ այդ գծին եռեւ :

Զ.— Օդանաւային նոր կայաններ պիտի չինեն :

— oo —

ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍԻՈՆԱԿԱՆ չարժման ղեկավարները խնդրագիր մը տուին անգլիական կառավարութեան, որով կը պահանջեն որ անեղծ պահուի Պալֆուրի յայտարարութիւնը եւ Պաղեստինը պահպանուի իբրեւ հրէական ազգային տուն :

ՔԱԿԱՆՈՎԻԶ, որ Խորհ. Միութեան ծանր արդիւնաբերութեան գործավարն էր, չնորհազրկուելով նչանակուեցաւ նոյն գործավարութեան ներքին գործերու տեսուչ : Ծանր արդիւնաբերութեան գործավար նչանակուեցաւ Եմելիանով, որ կէփէուին ազդեցիկ պաշտօնատարներէն մէկն էր :

ՄՐԻՄԻ եւ ԿՈՎԿԱՍԻ հանքային չուրերուն մէջ բուժուելու գացած են, անցեալ եղանակին, 84 գործավարներ, 8,000 պետական եւ կուսակցական մեծ պաշտօնատարներ, 1,800 ճարտարարուեստական վարիչներ :

ՀԻԹԼԷՐ գերմանական Արծիւին մեծ - խաչը տուաւ Ֆրանսայի նախկին դեսպանին, Ֆրանսուա - Փոնսէի : Այս չքանչանին առեղծուածն է (1936), առաջին անգամն է որ Հիթլէր այսքան մեծ պատիւ մը կ'ընէ Ֆրանսացիի մը :

ՆԱԽԱԳԱՀ Ռուզվելթ, իր ծովային նախարարին ուղղած նամակով մը, կ'ըսէ թէ Միացեալ - Նահանգները պէտք է սպառազինուին, ի պաշտպանութիւն ամէն հաւանականութեան դէմ :

ՇԱԼՄԷԹ, Վալօրիսի քաղաքապետը, հրաժարեցաւ Ֆրանսայի համայնավար կուսակցութենէն, մամուլին տալով իր հրաժարման պատճառները : Պատերազմի վախի օրերուն համայնավար կուսակցութիւնը զաղտնի նամակով մը կը խնդրէ իրմէ կենսագրական եւ այլ կարգի տեղեկութիւններ տալ ոչ միայն իր անձին, այլ եւ ընտանիքին անդամներուն եւ ընկերներուն մասին : Լրատասական այսպիսի աշխատանքէ մը զարչելով՝ Շալմէթ ղրկեց իր հրաժարականը :

ԵՐԿՈՒ ԱԻԱԶԱԿՆԵՐ փորձեցին ինքնաչարժով մը առեւանգել մեծահարուստ օտարական մը Փարիզի մէջ, Օփերայի հրապարակին վրայ, բայց ձերբակալուեցան :

ԼՈՑՏ ՃՈՐՃ, քննադատելով Չէմպըրլէնի խաղաղութեան քաղաքականութիւնը, Միւնիխի համաձայնութիւնը որակեց «ամօթ» մը : Իր կարծիքով, պատերազմ մը հաւկիթի պէս պիտի ճզմէր միահեծան պետութիւնները (Գերմանիա եւ Իտալիա) :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆի Փարիզի Մանաճիւղի երկրորդ ղրական դասը՝ 3 Նոյեմբեր, Հինգշաբթի երեկոյ ժամը 8.30ին : *Նկատի ունենալ այս թուականը : Մանրամասնութիւնները յայտնուած :*

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲԻ

« Հիմնարկութեան հինգամեակի» տարեկան բացման հանդէսը տեղի պիտի ունենայ երկուշաբթի 31 *հոկտեմբեր, երեկոյեան ժամը* 8·30ին, 26, *Ավընիւ տը Թօֆիօ :*

Գեղարուեստական բաժին *Մուտք (թէյ մխասին)* 5 *Ֆր·*

ԼՈՑԻ ՏԵՍԱՒ

1939 "ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ,,

Ժ. ՏԱՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ, ՄԱՐՍԷՅԼ

Դիմել՝ ընդհանուր գործակալ՝ կայծակ Ճաքայեանի,

Monsieur Gaïzak Djarayan, 5, Rue de l'Eclipse, Marseille, France:

Գինն է՝ Մարսէյլ 5 *Ֆրանք Ֆրանսա, Սուրիա եւ զաղութներ* 5.50 *Ֆր·, արտասահման՝* 6 *Ֆրանք :*

ԵՓՐԱՏ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Ղեկավար Տ· ՕՆՈՄՏԱՆ

15, Rue du Pourtour, Clamart, Seine **Tél. Observatoire 13 - 45**

Հեռաձայնել երեկոները 8ին վերջ :

Հայկական, եւրոպական եւ կովկասեան եղանակներ : Մէկ նուագախումբը հաճելի զբաղմունք մը ընելու համար ձեր հանդէսները, հարսնիքները եւ հաւաքոյթները :

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demeaux — PARIS (19)

Թէյասեղան—համերգ

Ս. Խաչի Սանուհիներու Միութեան կողմէ, 29 *Հոկտ., Շաբաթ երեկոյ ժամը* 8*ին, Պ. Ֆ. Փիլոհանի սրճարանը ի պատիւ թաղին հայ զինուորցուներուն։*

Թատերական ներկայացում

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ

Հ. Յ Դ. ՊՈՒԻԼՎԱՐ ՕՏՏՈՅԻ «ՎՐԱՄԵԱՆ» ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ

30 Հոկտ., կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին

«Պար Էնթէրնասիոնալի» սրահին մէջ

Հ. Յ. Դ «Ադամեան» թատերախումբը իր անդամներուն զինուորական ծառայութեան մեկնումին առթիւ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՝ ԵՐԿՈՒՈ

Մուտք՝ 4 ֆրանք, փոքրերուն համար 1 ֆրանք

Ներկայացումէն յետոյ թէյասեղան զինուորներու համար

Թէյասեղան—դասախօսութիւն

Ֆ. Կ. ԽԱՉԻ ԼԻԱ-ՓՈՒԷ ՍԷՆ ԺԷՌՎԻՒ Ա.ՅԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

30 Հոկտեմբեր, Կիրակի ժամը 3—7 դպրոցի սրահին մէջ

15 Rue des Bruyères, *մէթրօ* Porte des Lilas

ԿԸ ԴԱՍԱԽՕՍԷ Պ. ԼԵՒՈՆ ԶՈՐՄԻՍԵԱՆ

երգ, արտասանութիւն եւ նուագ

Մուտք 3 ֆրանք, փոքրերուն 2 ֆրանք

Ողջերթի երեկոյթ Մարսէյլի մէջ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԲԱԼՈՒԻ ՀԱՅՐ. ԵՒ ՎԵՐԱՇԻՆԱՑ ՄԻՈՒԹԵԱՆՑ

Ի պատիւ Բալուցի զինուորագրեալներու որոնք ծառայութեան պիտի մտնեն նոյեմբերի սկիզբը :

Տեղի կ'ունենայ Հոկտեմբեր 29, *շաբաթ երեկոյ ժամը* 8·30ին, *բիւ Լ'Էքլիփս, Շահրիկեան սրահին մէջ :*

Գեղարուեստական բաժին Մուտք 3 ֆրանք

ՊԱՏԱՐԱԳ

Ի ԳԻՏՈՒԹԻԻՆ Շաւիլի եւ շրջակայից հայ բարեպաշտ ժողովուրդեան կը յանձնուի թէ՝ կիրակի, Հոկտ. 30ին, Փարիզի առաջնորդական փոխանորդ Գեր. Տիրան վրդ. Ներսոյեան հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ, տեղւոյն Ս. Գրիգոր - Լուսաւորիչ մատրան մէջ :

Կը հրաւիրուի բարեպաշտ ժողովուրդը :

Երգեցողութիւնները պիտի կատարուին ղեկավարութեամբ Պ. Կարապետ Բադոսեանի եւ մասնակցութեամբ տեղւոյն դպիրներու : Սկիզբը ժամերգութեան 8.30, *պատարագ* 10.30 :

Ա. Զ Դ

ՀԱՅ ԳՐԱԳԻՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ընկերակցութիւնը կը փութայ յայտնել, որ իր մատենաշարին Ա. հատորը, Ռուբէն Զարդարեանի Արձակ էջեր եւ հէքիաթները, սպառած ըլլալով, իր չարքէն որեւէ 2 *հատոր պիտի տրամադրէ անոր, որ իրեն կը ղրկէ սպառած այդ հատորէն մէկ օրինակ :*

ՊԱՏԱՐԱԳ

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՑԻ կապոյտ Խաչի Սրիմեան դպրոցի վարչութիւնը դպրոցի սրահի ընդարձակման եւ բեմի չինութեան համար ստացած է հեռաւեալ նուէրները :

Ա. ՅԱՆԿ

Պ. Հրաչ Հանտալեան 300 *Ֆրանք, Պ. Եփրեմ Նալարեան* 200, *Պ. Լեւոն Գալուստեան, Օր. Մարիամ Գալուստեան, Պարոններ Կարապետ Փափալեան, Մարտիրոս Տէրտէրեան, Աբրէն Պօյաճեան, Գէորգ Անկիւեան, Յովսէփ Ճապուհեան, Արտաշէս Ճագոբեան, Խոսրով Կարմիրմօրուքեան, Աղապապ Պարսամեան, Սամուէլ Գանտիլեան, Յովակիմ Պօղոսեան, Ճարուխիւն Գալուստեան, Քերովբէ Պօյաճեան, Ստեփան Մարգարեան, Խոսրով Զարդեան, Ճակոբ Զօլաքեան, Մարտիրոս Գարթմաեան, Սահակ Օզտաեան, Ստեփան Մարկոսեան, Երուանդ Ըմբատեան, Բժիշկ Տամլամեան եւ Օրիորդ Անգինէ Ալճեան 100ական ֆրանք :*

Դուռմար Ա. ցանկի՝ 2,800 *Ֆրանք :*

ՄԱՐՍԷՅԼԻ «Քրիստափոր» ենթակոմիտէի դաշտահանդէսին տեղի ունեցած վիճակախաղէն արժէքաւոր դիրքեր չահած են հետեւեալ թիւերը : 00,261, 00,249, 00,239, 00262, 00,247 :

ՅԱՌԱՋԴ

ՄՐԱԹԵՐԻ. ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՓՐԱՆՍԱՅ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 76
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵԼԵԿ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ :—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Թրանսա եւ Գաղութքներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՇԱԲԱԹ
29
ՀՈԿՏԵՄԲԵՐ
SAMEDI
29 Octobre
1938

ՅԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3873

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՔԻՉ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ...

— oo —

Ինչո՞ւ, իրաւէ՛ս, այսքան ոստոստուն ու այսքան յարատեւ - փոխ դարձաւ Թուրքիա, կը հարցնէինք մեր նախորդ խմբագրա - կանով :

Իր քաղաքական հակումներուն հետ նաեւ իր քաղաքական ձգտումնե՛րն են որ կը փոխուին: Նոր ուղղութիննե՛ր կ'ընդգրկէ Էնկիւրի: Երէկ «իմպերիալի՛զմ»ը կ'ուզէր հարստացնել Ա. Միու - թեան տուած իր կոնակը:

Իսկ այսօր, նոյն այդ «իմպէրիալի՛զմ»ին է յեցած՝ բոլշեւիզ - մին դէմ թիակաւարելու համար: Նուազագոյն կամ առաւելագոյն ծրագիրնե՛ր ունի՝ ինչպէս, օրինակ, Իտալիան կամ Գերմանիան: Բայց, մանաւանդ, ի՞նչ կը փնտռէր ժողովրդապետական Անգլիոյ կողքին կանգնած առեն, ու ի՞նչ կը փնտռէ --- հապա տարի մը վերջ, --- երբ արդէն իսկ չուկայ կը դառնայ, այնքան արագ ու այնքան պատրաստակամ կերպով, Հիթլէրեան Գերմանիոյ...

Հարցումներ, ահաւասիկ, որոնք ինքնաբերաբար ծնունդ կ'առնեն, երբ կը հետեւինք Էնկիւրիի քայլերուն: Լրացնելու հա - մար այս չարքը, դնենք եւ ուրիչ հարցում մը ,--- Թուրքիա այս փոփոխումները ինճնակա՛մ կերպով կ'ընէ: Կամ, աւելի պարզօրէն ըսած, Էնկիւրի ի՞նճն է որ կը գծէ իր ուղղութիւնը՝ երէկ մէ - կին, յաջորդ օրը երկրորդի մը, ու այսօր ուրիշի մը հետ կամ քով ըլլալով: Ըսել կ'ուզենք,--- այս բոլոր համաձայնութիւնները , զա - չինները, մերձեցումները կամ նոյնիսկ «բարեկամութիւնները » կը խմորուին կամ կը ծրագրուին Էնկիւրիի մէջ ու Էնկիւրի՞ կող - մէ, թէ, ընդհակառակն, Էնկիւրի հարկադրուած կ'ըլլայ օր մը մէ - կուն ու օր մը ուրիշին հետ կամ քով ըլլալ:

Կանխելու համար հաւանական թիւրիմացութիւն մը, ճշդենք, անմիջապէս, որ ոչ Անգլիոյ հետ զինակցութիւն մը վերագրել ու - զեցինք --- անկախ «Մ իջերկրականեան Ուխտ»էն որ մեռած էր ար - դէն երբ ծնաւ, --- ոչ ալ նոյն ձեւի դաշինք մը նկատի ունինք՝ երբ կը խօսինք զերմանեւթուրք մերձեցման մասին: Ըսենք նաեւ ան - կեղծօրէն, որ քեմալական Թուրքիան, հակառակ իր բոլոր յաւակ - նութիւններուն, չվերցուց հասնիլ որ եւ է «մեծ»ի հետ զինակցու - թիւն: Այս մասնաւորութեան մէջ, կամովին զանց կ'առնենք Ա. Միութիւնը: Վասնզի երկու երկիրներու երբեմնի զինակցական կապը արդիւնք էր Թուրքիոյ աշխարհագրական դիր - քէն: Ռուսիոյ՝ այդ չբլանին՝ բոլորովին առանձնութենէն , երկու երկիրներու «յեղափոխական» ապրումներէն ու մանաւանդ հին թէ նոր Ռուսիաներու միօրինակ ու անխախտ ձգտումէն կը բխէր: Ցարական Ռուսաստանը փորձեր էր, աւելի քան դար մը, բռնի ուժով իշնել Միջերկրական: Բոլշեւիկ Ռուսաստանը , ա՛յն օրերուն մանաւանդ, տակտ ներքնապէս ու արտաքնապէս, փոխեց ձեւը միայն՝ բռնի ուժին տեղ առաստաձեռն «բարեկամութիւնը»կի - րարկելով, բայց պահեց անփոփոխ նպատակը,--- իրեն ենթակայ Թուրքիա մը ունենալ՝ անոր հաւանութեամբ «իշնելու» համար Տարանէլ ու Միջերկրական ...

Թողունք, սակայն, այս միջանկեալ --- թէեւ բնորոշ պարա - գան,--- ու փնտռենք պատասխանները այն հարցումներուն , զորս դրինք վերը:

Գտնելու համար ճշդրիտ պատասխանները այդ հարցումնե - րուն, հարկ է ուշադրութեան առնել երկու կարեւոր սկզբունքներ, որոնք քեմալական Թուրքիոյ ամէնէն հիմնական առանձնաղրու - թիւնները կազմեցին, երբ, Լոզանի յաջողութենէն վերջ, իրա - կանացած էր «ազգային սահմաններուն մէջ ազգային անկախ պե - տութիւնը»:

Այդ սկզբունքներէն առաջինը բանաձեւուած էր այսպէս, --- « խաղաղութիւն երկրէն ներս, ու խաղաղութիւն երկրէն դուրս»: Իսկ երկրորդը վճռակա՛ն կը ճշդէր թէ «Թուրքիա բացարձակապէս անկախ պիտի ըլլայ՝ ներքին, արտաքին ու տնտեսական տեսակէ - տով»: Այս երկրորդ առանձնաղրութեան հասկնալի եղրակացութիւ - նն էր նաեւ Քեմալի երրորդ յաւակնութիւնը, --- « ոչ մէկ օտար զինուոր ոտք պիտի դնէ մեր հողին վրայ»...

Հետեւելով Թուրքիոյ բոլոր քայլերուն, մենք տեւապէս մտա - նահոգուած ենք, օրը օրին, այն բոլոր չեզոքմները զորս արձանագրեց Թուրքիա իր արտաքին թէ ներքին կեանքին մէջ, ա՛յ միայն թէ - լաղրանքներու, այլեւ հրահանգներու ընթացք տալով: Յուրիշ, ու անկէ վերջ մասամբ Գարախան՝ տասնեւհինգ տարի չարունակ, յանուն Մոսկուայի, ցուցամատ չարժեցին Էնկիւրիի մէջ: Նուազ տիրական չեզոք Անգլիոյ դեսպանը՝ նոյն Էնկիւրի մէջ՝ Մոնթ - րէօյէն վերջ: Ոչ մէկ տարակոյս, որ Գերմանիոյ անտեսական նա - խարարը, իր ընծայած վարկին հետ քեմալական Թուրքիոյ « ըն - ծայեց» նաեւ վարքագիծ մը՝ առաւել կամ նուազ չափով ճշդուած: Այս բոլորը հասկնալի են, անշուշտ: Հասկնալի՝ այն իմաստով որ, 1922ի թաւալգլոր դէպքերը սեղծեր էին, Թուրքիոյ վարիչնե - րուն մէջ, բարձրաթռիչ հոգեբանութիւն մը, որ, իր կարգին, տուն տուեր էր նոյնքան բարձրաթռիչ սկզբունքներու: կեանքը, ու նոյն ձեւի թաւալգլոր դէպքեր՝ եկան վերիվայր չընչելու «բացար - ձակ անկախութեան» մեծամիտ սկզբունքը...:

Նուազ անխուսափելի չեզոք միւս առաջադրութեան վախ - ճանքը :

Քեմալական Թուրքիա, ապահովելէ վերջ իր անկախութիւնն ու սահմանները, երկու հիմնական մտահոգութիւններ ունեցեր էր, --- երկրին վերականգնումը՝ ժամանակին համապատասխան ձեւով, ու խաղաղ զոյակիցի մը՝ իրրեւ նախապայման առաջին մտահոգութեան իրականացումին: --- « Խաղաղութիւն երկրէն ներս ու խաղաղութիւն երկրէն դուրս»ը ա՛յս նպատակին բանաձեւումն էր :

Ցաղթական ըլլալը բաւական չէր: Հարկ էր ապահովել այդ յաղթանակին արդիւնքը: Բայց մանաւանդ՝ տեւականացնել զայն:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՏԱԼԱՏԻԷԻ ՃԱՌԸ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

— oo —

ԽԻՍՏ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐՈՒՆ ԴԷՄ

— oo —

«Պէտ չունիմ փրկիչի, պէտ ունիմ աշխատողների»

— oo —

Հինգշաբթի առաւօտ Մարսէյլ հասաւ վարչապետ Տալատիէ : Կայարանին մէջ զինք դիմաւորեց խուռն բազմութիւն մը: Կէսօրէ վերջ, ներկայանալով արմատականներու համագումարին՝ խօսե - ցաւ այն ճառը, որու կը սպասուէր ամէն կողմէ : Երկիրը բացած էր ձայնասփիւռի բիւրաւոր բերանները եւ բոլորը իրենց ականջը տուած էին վարչապետին :

Տալատիէ նախ ողջոյնի խօսքեր արտասանեց, յետոյ անցաւ միջազգային քաղաքականութեան: Եւրոպայի ներկայ կացութեան մէջ, ըսաւ, ամէն իրողութենէ աւելի խաղաղութեան պարագան է որ կը զբաղեցնէ այսօր ամէն ազգ: Եւ խորհիլ որ այդ խաղաղու - թիւնը եկաւ այն պահուն՝ երբ հասած էինք զահավէժին եզերքը: Աւելորդ է պատմել թէ ինչ ճիգերով եւ զոհողութիւններով լուծե - ցինք տագնապը: Ինչ որ կ'ուզեմ կրկնել այստեղ, այն է թէ եւրո - պական քաղաքակրթութեան համար, մարդկային ազատութեան համար, մեր երկրին համար, նոյնիսկ Չեխոսլովաքիոյ համար՝ Միւնիխի համաձայնութիւնը գերազաս է այն վիճակէն, որուն պիտի մատնուէինք այսօր եթէ խուսափած չըլլայինք պատերազ - մէն:

Եւ սակայն կան մարդիկ որ կ'ըսեն թէ Ֆրանսա անճնաւոր եղաւ: Կը յայտարարեմ որ մենք Միւնիխի համաձայնութիւնը չտորադրեցինք սպատնալիքի մը տակ: Եթէ վերջնագրի մը առջեւ գտնուէի Միւնիխի մէջ, եթէ չկարենայի լսելի ընել ձայնս ու վի - ճիլ հաւասարէ հաւասար, կը վերադառնայի Փարիզ եւ ժողովուր - դը կը հրաւիրէի զիմադրելու :

Ես չեմ հասկնար թէ ինչո՛ւ ամանք պայքար կը մղեն այդ հա - մաձայնութեան դէմ, որ արժանացաւ երկրին հանրաքուէին, երբ մայրեր եւ հայրեր կ'արտայայտէին իրենց հրճուանքը, որ իրենց ինայուեցաւ արեան զոհողութիւնը եւ սուգը:

Ոչ ծափահարութիւնները եւ ոչ ալ լուտանքները կ'ազդեն վը - րաս, երբ ես կը խորհիմ երկրին չահերուն մասին, ու զղուանք կը զգամ, երբ կը տեսնեմ որ խումբ մը մարդիկ հրապարակագրական վէճի նիւթ զարձուցած են վերջին դէպքերը: Իրաւունք չունի՞մ ըսելու որ կարգ մը մարդիկ, երբ տագնապը հասած էր անձկու - թեան մը ասպիճանին եւ ժամերը կամ վայրկեաններ միայն մեզ կը բաժնէին աղէտին պայթումէն, ցոյց չտուին այն վճռականութիւ - նը, կորովը, քաջութիւնը, զոր ցոյց կուտան հիմա, վտանգը հե - ռանալէ վերջ: Մեզ քննադատելու իրաւունք պիտի ունենային ա - նոնք միայն, որոնք ամէնէն եղերական ժամուն իսկ պիտի չվարա - նէին պահանջկոտ ըլլալ՝ յանձն առնելով նոյնիսկ պատերազմի մը պատասխանատուութիւնը: Մեզ քննադատելու իրաւունք պիտի ունենային անոնք միայն, որոնք թեթեւութիւն պիտի չզգային՝ իմանալով դէպի Միւնիխ մեկնումս:Ի՞նչ կեղծիք է այսվերջապէս, որ այդ մարդիկը կը մղէ քաջ մարդու ձեւեր առնելու եւ դաս տա - լու այն պահուն՝ երբ անցած է վտանգը, բայց լուռ կը մնան, նոյն - իսկ կը դողան այն պահուն՝ երբ հարկ է քալել վտանգին դէմ :

Համայնավար կուսակցութիւնը կրնայ ինծի ըսել թէ հակա - ռակած է սկիզբէն իսկ, բայց իր պայքարներն էին որ անդամալու - ծեցին աշխատանքները: Երբ համայնավար թերթերն ու ճառա - խօսները կոչա յարձակումներ կը գործէին Ձէյմպրլէնի վրայ որ հրաչալի հաւատքով մը աշխատեցաւ խաղաղութեան պահպան - ման համար, ատով միթէ չհակարացուցի՞ն Ֆրանսայի դիրքը: Երբ ամէն օր կը յարձակէին մեր կառավարութեան վրայ, ատով միթէ չդժուարացուցի՞ն մեր աշխատանքը: Երբ անէծքներ կը թափէին այն կառավարութիւններուն դլխուն, որոնց հետ ժամանելի խոր - հրդակցութիւններ կը կատարէինք մենք, ատով միթէ չվտանգե - ցի՞ն մեր դիրքը: Եւ դեռ այս մարդիկն են որ այսօր կը յայտարա - րեն թէ Ֆրանսայի կատարած մտանակի զօրաչարժը հնարք մըն էր ծածկելու համար մեր անճնաւորութիւնը, --- ստա՛ մը որուն եթէ հաւատար զանգուածը, անկարելի պիտի դառնար օգտուիլ զօրա - չարժէն, որ, կը կրկնեմ, մեծապէս նպաստեց խաղաղութեան :

Եթէ այն բոլոր Ֆրանսացիները, որոնք քաջութեամբ պա - տասխանեցին հայրենիքի կոչին, եւ արժանի գործօն երախտա - գիտութեան, միւս կողմէ՝ համայնավար կուսակցութեան վա - րիչները այնպիսի դերք մը բռնեցին, որ ուրիչ իմաստ չունէր, բայց եթէ խափանել կառավարութեան գործը: Երբ կ'ուզէք որ կա -

Իսկ այդ ապահովումն ու տեւականացումը ուժեղ բայց խաղաղ զոյակիցակով մը կրնային իրականանալ:

Զիօսինք «երկրէն ներս»ի «խաղաղութեան» մասին: Անկա - խութեան դառարան: «Մահափորձեր»ու առասպելներ: Կախա - զաններ հոս ու հոն: Քրտական կոտորածներ: Դիա՛կ նոյնիսկ Ազգ. Մեծ Ժողովին մէջ: Կամ՝ արեան սպառնալիք մեղկ Ֆէթհիին ան - դամ ...

« Երկրէն դո՞ւրս»: Թուրքիա ինչպէ՞ս կրնար ապահովել ա՛յդ խաղաղութիւնը,--- ահա հարցում մը, որուն պատասխանը պա - տասխանն է միապամայն մեր վերեւ դրած հարցումներուն:

Վ. ԻՇԽԱՆԵԱՆ

ՕՐԸ ՕՐԻՆ

ՏԱՐԱԶԻ ԱՐՏՕՆՈՒԹԵԱՄԲԸ ...

Հակառակ մեր բոլոր ճիգերուն, քրէական դրոշմը կը շարունակէ ֆա - լել մեզի հետ:

Ոչ միայն երգով, ձայնալարով կամ խօսակցութեամբ, այլեւ մամուլով կամ նոյնիսկ գրականութեամբ :

Լեզուականը այլեւս պէտք է դադ - րի, անշուշտ :

Կ'ակնարկեմ այն բացատրութիւնե - րուն, որոնք քրէական են, եւ զորս, բառ առ բառ թարգմանած ըլլալով, մինչեւ այսօր կը շարունակենք գոր - ծածել : Ցիշեցնենք մէկ բանի, Տա - րազի արտօնութեամբ ...:

Այսպէս, հազուագէպ չէ հանդիպիլ, լուացոյն հայերէնով մը գրողներու ձով իսկ, «միտքս ինկաւ» բացատրու - թեան: Թուրքերէն *aklıma* տիւշաւն է: Մենք ունինք «յիշեցի»ն, այնքան գեղեցիկ ու այնքան ծանօթ, որ թե - րեւս աւելորդ էր... յիշեցնելն իսկ :

Մարդ կը զարմանայ՝ խորհելով թէ ինչ կրնայ... ինկած ըլլալ միտքի մը մէջ:

Նուազ ծիծաղելի չէ «միտքէս աս - ցաւ»ը: Ոչ միայն քրէական է, այլեւ, որպէս պատկեր ալ՝ տգեղ ու անըմ - բռնելի: Մասամբ, կամ թերեւս ամ - բողջովին հասկնալի է «խելքէ - մտքէ չանցնիր»ը, որ իմաստը կը շեշտէ, հայկական է եւ անակնկալի մը, նոյն - իսկ ապշանքի մը պարագան կը բնորո - շէ յաջող կերպով :

Ցաճախ կը գործածենք նաեւ «ոտ - քերնին», «գլուխներնին» եւայլն : Դարձեալ քրէաբանութիւն: Բայց, երբ կ'անդրադառնանք, կը ծիծաղինք, անշուշտ: Այդ ո՞ր գլուխներն են որ այդման շատ... տէր ունին: Կամ՝ ո՞ր ոտքերը, որոնք... հասարակաց են: Նոյնիսկ այն պարագային, երբ ենթական մէկէ աւելի անձերու պատ - կանի, ինչո՞ւ քրէական ձեւով ըսել «դատերնին» կամ «տուներնին», երբ հայերէնը որոշ կերպով կը պահանջէ ըսել «իրենց դատը», «իրենց տունը»: Հետեւապէս եւ՝ «իրենց գլուխները» կամ «իրենց ոտքերը»:

Կը գործածենք նաեւ «մինչեւ շուկայ երկարիլ», «տակն ու վրայ ընել» (ըսէ՝ վերի վայր շրջել), «համբ նա - յիլ» (համեմել), «ծեծ մը խաշեցի » (Ծեծեցի, ըսէ՝ տփեցի՛, եթէ զորս դու պատուիրեցիր էր...) : Ու մանաւանդ «ծեծ կերայ»ն: Աշխարհի մէջ ո՞ր յի - մարն է որ այդպիսի անախորժ բան մը պիտի ուզէր ... ուտել :

Կարելի է ամբողջ բառարան մը կազմել, — ա՛յնքան շատ են անոնք:

Արեւելահայերէնը ես նման «փո - խառութիւններ» ունի: Ցիշեցնենք, օ - րինակ, «հետ»ը:

— « Չեխոսլովաքիոյ հետ պատա - հածը դաս մը պիտի ըլլայ ուրիշներու համար»:

Այս նախադասութեան մէջ գտնուող «հետ»ը ռուսերէնի «սըս»ն է, (հետ) : «Ինծի հետ պատահածը»,կ'ըսեն քոյոր Այաւները: Իսկ մենք այդ «հետ»ին բը - նաւ պէտք չունինք, ու կ'ըսենք պարզ կերպով ,— «ինծի պատահածը»:

Կրնանք, կը խորհիմ, խնայել՝ մեր առարագիր լեզուին՝ այս օտարոտի թափթփուքներու բեռը: Բացատրու - թիւններու տեսակէտէն հայերէնը շատ հարուստ է: Չնմանինք այն կնոջ որ իր գոհարեղէնները գանձարկղն է դրած ու դրացիին մատանին կը գործածէ...

Մատանի, ըսի ու յիշեցի հատ մը,— «մատս մէջն է»:

Կամ՝ «մազ մնաց որ...»: Նոյնիսկ մէկ հատիկ բառով՝ յայն պատկեր մը, — պատ - ս - պարէ... ի՞նչ պերճա - բարբա՞ռ ես դուն, լեզուդ իմ մեծա - սքա՞նչ ...

ՍՈՍԵԱՆ ՏՂԱՆ

ռավարութիւնը պաշտպանէ աշխարհի խաղաղութիւնը եւ երկրին պատիւը, չեն եղեր հրապարակաւ մերժեր անոր գործելու ազա - տութիւնը, չեն եղեր յայտարեր թէ երկիրը անկարող է դիմա - դրելու :

Մենք փրկեցինք խաղաղութիւնը եւ պաշտպանեցինք մեր պա - տիւը: Պիտի յարատեւենք այս քաղաքականութեան մէջ, որ կը համապատասխանէ Ֆրանսայի հիմնական չահերուն:

Ֆրանսայի հիմնական չահերուն պաշտպանութիւնը կը կայա - նայ այն ապահովութեան մէջ, որով կը պաշտպանուին ոչ միայն մայր հայրենիքին սահմանները, այլեւ հաղորդակցութիւնը մայր - հայրենիքին եւ իր գաղութներուն միջեւ: Մարսէյլ, այդ տեսակէ - տով, կը գտնուի մայր – հայրենիքին սրտին վրայ, այստեղ է որ կը բաբախէ Ֆրանսայի եւ իր գաղութներուն միութեան երակը:

Ֆրանսա ունի ընդարձակ գաղութներ ամէն կողմ :Եւ Ֆրան - սայի գոյութիւնը պէտք է որ յայտնուի ամենուրեք, առանց մեր - ժելու միացնել իր ճիգերը ամէն անոնց, որոնք կ'աշխատին ար - դարութեան եւ խաղաղութեան համար: Ֆրանսա պիտի աշխատի իր հին բարեկամներուն կողքին գտնել նոր բարեկամներ: Գերմա - նիոյ եւ Իտալիոյ մասին խօսելով, կրնանք ըսել թէ ազգային չա - հերու պաշտպանութեան գետնին վրայ դժուար չէ գտնել համա - ձայնութեան եղերը, որոնք պիտի ամրացնեն խաղաղութիւնը »:

Ֆրանսայի երմտական խաղախականութիւնը

— oo —

Տալատիէ յետոյ անցաւ Ֆրանսայի երմտական կացութեան : Պետութեան սովորական պիւտճէն է 64 միլիար, արտակարգ պիւտճէն՝ 30 միլիար, կան դեռ Ֆրանքի պաշտպանութեան սըն - տուկին ծախքերը, որով պետութեան ընդհ. ծախքը 1939ին կը հասնի 102 միլիարի: Ասոր դէմ պետութիւնը ունի 66 միլիար հա - սոյթ միայն: Կարելի՞ բան է որ Թոյլ տրուի չարունակել այս վիճակը :

Անհրաժեշտ է առաջին առթիւ աշխատիլ որ աւելնայ երկրին արտադրութիւնը: Գերմանիոյ մէջ 1929 – 1937 արտադրութիւնը աւելցաւ 17 առ հարիւր, Անգլիոյ մէջ ՝ 24 առ հարիւր, սկանտ - նաւեան երկիրներու մէջ՝ 30 առ հարիւր , իսկ Ֆրանսայի մէջ պակսեցաւ 25 առ հարիւր: Կա՞յ Ֆրանսացի մը, որ անտարբեր մնայ ի տես այս փլուզումին: Երբ կը տկարանայ Ֆրանսա, կը ծա - գին ներքին կռիւներ: Դաւաճանե՞լ է բանուորներուն՝ երբ կ'աշ - խատինք ամուր պահել ազատութիւնը: Երբ կը տկարանայ Ֆրան - սա, կ'ենթարկուի յարձակման: Դաւաճանե՞լ է բանուորներուն՝ երբ կ'աշխատինք պաշտպանել խաղաղութիւնը: Երբ կը տկարա - նայ Ֆրանսա, կը պարտուի: Դաւաճանե՞լ է բանուորներուն, երբ կ'աշխատինք արգիլել գերութիւնը:

Երբ Ֆրանսա կը փորձէ զօրանալ անտեսապէս, մարդիկ կան որ կ'անուանեն մեզ՝ ատոր համար՝ ազգային եւ միջազգային դրա - մատիրութեան գործակալ, դաւաճանող բանուոր դասակարգին, ֆաչիստ ճառախօս :

Եւ դեռ համայնավարները այնպիսի աշխատանքներ կը կատա -

(Յաւարտը շարունակութիւնը կարդա Գ. Էջ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍ

ՀԵՌԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

— oo —

Կեդրոնական Եւրոպայի քաղաքական սուր տագնապը, որ մազ մնաց պատերազմի հրդեհին մէջ նետէր բոլոր մարդկութիւնը, վերացած է արդէն:

Զեխոսլովաքիոյ անդամատումը մոլ մասամբ զոհացում տացած է լիժտոհ Գերմանիան, որ այժմ զբաղուած է մէկ կողմէ նորանուաճ հողամասերը ձուլելու, արեւմտեան ճակատի վրայ ամրութիւններու նորանոր շղթաներ կառուցանելու, և միւս կողմէ դէպի արեւելեան հորիզոնները անտեսական ու քաղաքական նոր աշխարհակալութեան ճամբաներ բանալու մտահոգութիւններով:

Հաղիւ մէջին Եւրոպայի տագնապը վարտած, ահա՛ հեռուր Արեւելքի մէջ դէպքերը կը ստանան զահավիժեցուք: Ճափոնական բանակներ արդէն զբաւած են չինական Քանթոնը, հուր ու սուրի մատնելով անպաշտպան եւ անկազմակերպ ամբոխը՝ որ չին կը կոչուի: Եւ յաղթականները անարգել, արագ ու սրընթաց վազքով յառաջացած են դէպի Հանքէու, որ մայրաքաղաքն էր չին կառավարութեան եւ կեդրոնը չինական բանակին:

Ճափոնական բանակներու այս չըռնդալից յաղթանակը կարելի չէ դասել պատերազմական գործողութեանց մէջ պարզ ու պատահական յաջողութիւն մը միայն: Ամէկ աւելին է այս յաղթանակը:

Քանթոնի գրաւումով՝ այլեւս ամէն կասկած կը փարատի, թէ Ճափոն ուեւէ ձեւով սխալած կամ ձախողած ըլլայ իր վարած յարձակողական, աշխարհակալական քաղաքականութեան մէջ:

Տարիներ առաջ երբ Արեւելքի արեւելեայրութեան ռազմատենչ դէկավարները, ներքին ամէն դժգոհութիւն, դժկամակութիւն կամ ընդդիմութիւն յաղթահարելէ ետք, զբոհ տուին դէպի այժմեան Մանչուքուօն, Հին ու Նոր Աշխարհներու պետական վարիչները իրար անցան, Ազգաժողովի բեմերէն ճառեր արտասանեցին, թուղթէ ապառնալիքներ տեղացին՝ սանձելու այն ուժական զօրութիւնը, որ դուրս կը պոթկար, հեղեղի նման կը ժայթքէր Ճափոնի ափունքներէն: Զայրոյթցան:

Թոքիօ հասաւ իր հետապնդած նպատակակէտին: Ան զբաւեց հսկայական հողամաս եւ կանգնեցուց այն ուեղ, Որհրդային Միութեան ու Ճափոնի միջեւ, թումբ պետութիւն մը՝ որ Մանչուքուօ կը կոչուի այսօր:

Այս խոշոր պատուր անբաւական եկաւ Ազգայնականի թագուհիին անյագուրդ ախորժակին:

Եւ ահա, աւելի քան տարիէ մը ի վեր, Ազգաժողովէն քաշուելէ ու եւրոպական կնճիռները անտարբեր աչքով դիտելու դիրք բռնելէ ետք, Ճափոն վճռեց ձեռնարկել հսկայական Չինաստանի « խաղաղեցման » հերկաքարկիչ աշխատանքին: Ան ինկաւ Զանկ Քայ Շէքի վրայ իր ահաւոր, անդիմադրելի, պողպատեայ կարգապահութեամբ ոգեւոր ուժերու ամբողջական թափով, եւ իրարու եւեւէ նուաճեց, հուր ու ծուխով, անինայ ու անկարեկիր, Փէքինը, Շանկայը, Նանքինը, եւ այժմ ալ՝ Քանթոնը, Հանքէուն:

Գրաւեալ բոլոր վայրերու մէջ Թոքիօ կազմակերպեց տեղական չինական կառավարական մեքենաները, այն հիմնական նպատակով որ Չինաստանի անհատնում, անհամար զանգուածները վերջ տան հակաճապոն տրամադրութիւններուն, հաշտուին այն տեսակէտին հետ թէ ի լինէ, կամայ ակամայ, կենցաղ պէտք է սահմանեն Արեւելքի հզօր կայսրութեան հետ, վերջ տան ճափոն-վաճառականութեան դէմ մղուած յամառ ու սեւեռուն պոյքոթներուն եւ դառնան, փոխանակ եւրոպական պետութիւններու, Ճափոնի զաղթավայրերը կամ ազդեցութեան գօտիները:

